2506

Գիրք
Սաղմոսաց
Դաւթի

243
Ա-16

Ա[illegible]
1865

2010

1100

243
16
43

ԳԻՐՔ

ՍԱՂՄՈՍԱՑ

ԴԱՒԹԻ

Ի ՎԻԵՆՆԱ

Ի ՎԱՆՍ ՊԱՏՇՏ. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1865

4103 Зиак

24763-61

ԳԻՐՔ
ՍԱՂՄՈՍԱՑ
ԳԱԽԹԻ

Ա.

1. Երանեալ է այր՝ որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց. ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց. եւ յաթոռս ժանտից նա ոչ նստաւ:

2. Այլ յօրէնս Տեառն են կամք նորա. եւ յօրէնս նորա խորհեսցի նա ի տուէ եւ ի գիշերի. եւ եղեսցի նա որպէս ծառ՝ որ անկեալ է ի գնացս ջուրց:

3. Որ զպտուղ իւր ի ժամու տացէ. եւ տերեւ նորա մի թափեսցի. եւ զամենայն զոր ինչ ապատցէ՝ յաջողեսցի նմա:

4. Ոչ այսպէս են ամբարիշտք, եւ ոչ այսպէս. այլ որպէս զփոշի՝ զոր հոսէ հողմ ի վերայ երեսաց երկրի:

5. Վասն այսորիկ ոչ յարիցեն ամբա-

լինիցի ի դատաստան, եւ ոչ մեղաւորքն ի խորհուրդս արդարոց:

6. Քանզի ճանաչէ Տէր զճանապարհս արդարոց. ճանապարհք ամբարշտաց կորիցեն:

Անվերնագիր է հեբերայեցւոց. եւ էին սոքա ընդ ամ համաք են. Ր:

1. Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. եւ ժողովուրդք խորհեցան ի սնոտիս:

2. Յանդիման եղեն թագաւորք երկրի. եւ իշխանք ժողովեցան ի միասին, վասն Տեառն եւ վասն օծելոյ նորա:

3. Խզեսցուք զկապանս նոցա. եւ ընկեսցուք ի մէնջ զլուծ նոցա:

4. Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք, եւ Տէր արհամարհեսցէ զնոսա:

5. Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութեամբ իւրով. եւ սրտմտութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա:

6. Եա կացի թագաւոր ի նմանէ, ի վերայ Սիոնի լերին սրբոյ նորա. ի պատմել ինձ զհրամանս Տեառն:

7. Տէր ասաց ցիս, որդի իմ ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ:

8. Խնդրեա յինէն. եւ տացի քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն, եւ իշխանութիւն քեզ զամենայն ծագս երկրի:

9. Հովուեցեալ ինն զաւազանաւ երկաթեաւ. ոչ զանօթ բրտի փշրեցեալ ինն:

10. Ընդ՝ թագաւորք զայս ի միտ առէք. խրատեցարուք ամենեքեան՝ որք դատիք զերկիր:

11. Ծառայեցէք Տեառն երկիւղիւ. եւ ցնծացէք առաջի նորա դողութեամբ:

12. Ընկալարուք զխրատ նորա, զի մի բարկասցի Տէր. եւ կորնչիցիք ի ճանապարհացն արդարութեան:

13. Ի ժամանակի, որպէս բորբոքեսցի բարկութիւն նորա:

14. Երանի ամենեցուն՝ որք յուսացեալ են ի Տէր:

1. Սաղմոս Դաւթի Գ. ի ժամանակի երբեք փախոյցեալ էր յերեսաց Աբեսողոմայ որդւոյ իւրոյ:

2. Տէր, զի բազում եղեն նեղիչք իմ. բազումք յարեան ի վերայ իմ:

3. Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չէք փրկութիւն նորա առ Աստուած իւր:

4. Եւ դու Տէր օգնական իմ ես, փառք իմ եւ բարձրացուցիչ գլխոյ իմոյ:

5. Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի, լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ:

6. Ես ննջեցի եւ ի քուն եղէ. զարթեայ, եւ Տէր ընդունելի իմ է:

7. Ձէ երկեայց ես ի բիւրուց զօրաց նո-
ցա, որ շուրջանակի պատեալ պահեալ
պաշարէին զիս:

8. Ելի Տէր, եւ փրկեա զիս Ստուած
իմ. զի դու հարեր զամենեսեան՝ որք էին
ընդ իս թշնամութեամբ ի տարտարո-
ւոյ, զատամունս մեղաւորաց փշրեացես:

9. Տեառնդ է փրկութիւն ի վերայ ժո-
ղովրդեան քոյ՝ օրհնութիւն քո:

1. Ի կատարած ընդ օրհնութեան: Սաղմոս Դաւթ. Ա:

2. Ի կարդալ իմում լսեալ ինձ Ստ-
ուած ըստ արդարութեան. ի նեղու-
թենէ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ,
եւ լուր աղօթից իմոց:

3. Արդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք
խստասիրտք, ընդէ՞ր սիրէք զնանրութիւն,
եւ խնդրէք զստութիւն:

4. Գիտերուք զի սքանչելիս արար Տէր
սրբոյ իւրում. եւ Տէր լսէցէ ինձ ի կար-
դալ իմում առ նա:

5. Բարկանայք եւ մի մեղանչէք. զոր
ինչ ասէք ի սիրտս ձեր, յանկողինս ձեր
զղջացարուք:

6. Զտաուցէք պատարագս արդարու-
թեան. եւ յուսացարուք ի Տէր:

7. Խազուածք ասէին, թէ ո՛ ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. եւ եառուր ուրախութիւն սրտից մերոց:

8. Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ, ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

9. Խաղաղութիւն յայս եւ ի սոյն ննջեցուք եւ զարթիցուք. զի դու Տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ:

1. Ի հոտոտիս վասն ձեռնադրութեան: Սաղմոս Դաւիթ. Ն:

2. ԱՆՆԻՑ իմոց ունկն դիր Տէր, եւ ի միտ առ զաղաղակ իմ:

3. Լայեաց ի ձայն աղօթից իմոց, թագաւոր իմ եւ Աստուած իմ:

4. Զի զքեզ աղաչեմ Տէր՝ ընդ առաւօտս լսիցես ձայնի իմում. ընդ առաւօտս պատրաստեցայ յանդիման լինել քեզ Աստ:

5. Ա՛չ եթէ դու Աստ կամիս զանօրէնութիւն. եւ ոչ բնակիցէ առ քեզ չարք, մի անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց:

6. Ատեցեր զայնոսիկ որ գործեն զանօրէնութիւն. կորուսանես զամենեսեան որ խօսին սուտ:

7. Օձայր արիւնահեղ եւ զնենգաւոր պիղծ առնես դու Տէր. այլ ես քաւ բա-

զում ողորմութիւն զում մսից ի տուն զո. երկիրպադից ի տաճար սբ զո երկիւղիս զո:

8. Տէր առաջնորդեա ինձ յարդարութեան զում վասն թշնամեաց իմոց. ուղիղ արա առաջի իմ զճանապարհս զո:

9. Ոչ ի բերանս նոցա ճշմարտութիւն. եւ սիրտք նոցա նանրեալք են:

10. Պատիս դերեզման բաց են կոկորդք նց. եւ լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն:

11. Դատեա զնոսա Աստուած զի անկցին ի խորհրդոց իւրեանց. ըստ բազում ամբարշտութեան նոցա մերժեա զնոսա, զի զառնացուցին զքեզ:

12. Ուրախ լցին ամենեքեան՝ որք յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցնծացցեն, եւ բնակեսցես դու ի նոսա:

13. Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ, զի օրհնեսցես դու զարդարն. Տէր ոպէս զինու հաճութիւն քով պսակեսցես զնս:

1. Ի հոգեւոր ընդ օրհնութիւնն վասն ուխտաւորացն: Սաղմոս Դաւթի. Ը:

2. Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի բարկութեամբ քով խրատեր զիս:

3. Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ:

4. Ընձն իմ յոյժ խռովեցաւ. եւ դու Տէր մինչեւ յերկբ:

5. Դարձ Տէր եւ փրկեա զանձն իմ, կեցո զիս Տէր վասն ողորմութեան քումդ:

6. Զի ոչ ոք է որ ի մահու յիշէ զքեզ. կամ ի դժոխս խոստովանի առնի առ քեզ:

7. Վաստակեցի ես ի հեծութիւն իմում. լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ. եւ արտասուօք իմովք զանկողինս իմ թացի:

8. Խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ. մաշեցայ ես ի վերայ ամենայն թշնամեաց իմոց:

9. Ի բաց կայէք յինէն ամենեքեան՝ որք գործէք զանօրէնութիւն:

10. Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ. լուաւ Տէր աղաչից իմոց. եւ Տէր զինդրուածս իմ ընկալաւ:

11. Ամաչեսցեն եւ խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ. դարձցին յետս եւ ամաչեսցեն յոյժ վաղվաղակի եւ խռովեսցին:

1. Սաղմոս Դաւթի. Ի: Զոր ասաց Տեառն վասն բանից Քուշեայ որդւոյ Յեմինայ:

2. Տէր Աստուած իմ ի քեզ յուսացայ. փրկեա զիս. յամենայն հալածչաց իմոց ապրեցո զիս:

3. Դուք երբէք յանիշատակի տալէս առիւծ զանձն իմ. ոչ ոք կայ որ փրկիցէ. եւ ոչ այն որ ապրեցուցանիցէ:

4. Տէր Աստուած իմ թէ արարի զայս. թէ կայեն անօրէնութիւնք ի ձեռս իմ:

5. Թէ հատուցի երբէք այնոցիկ որք հատուցին ինձ չար. անկայց եւս ի թըշնամեաց իմոց ընդունայն:

6. Հալածեսցէ ապա թշնամին զանձն իմ. հասցէ եւ կոխեսցէ յերկիր զկեանս. եւ զփառս իմ ի հող բնակեցուսցէ:

7. Արի Տէր բարկութեամբ քով. եւ բարձր լեր ի սահմանս թշնամեաց իմոց:

8. Յարիր Տէր Աստուած իմ ի հրամանս քո զոր պատուիրեցեր. եւ ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ:

9. Վասն այսորիկ ի բարձունս դարձ Տէր, եւ Տէր դատի զժողովուրդս իւր:

10. Դատ արա ինձ Տէր ըստ արդարութեան իմում. ըստ ամբծութեան իմում որ յիս:

11. Կատարեսցին չարիք ի վերայ մեղաւորաց. եւ յաջողեսցես դու արդարոյն:

12. Որ քննէ զսիրտս եւ զերիկամունս Աստուած արդար. յիրաւի է օգնութիւն ինձ Աստուծոյ՝ որ ապրեցուցանէ զյնդտսիկ, որ ուղիղ են սրտիւք:

13. Աստուած դատաւոր արդար հզօր

եւ երկայնամիտ, որ ոչ ածէ զբարկութիւն իւր զօրհանդուպատ։

14. *Ասա թէ ոչ գառնայք առ նա՝ զսուր իւր սրեալ է եւ զաղեղն իւր լարեալ. ի նմա պատրաստեալ է զանօթս մահու. եւ զնետս իւր այրեցելովք է գործեալ։*

15. *Հաւասարիկ երկնեաց զանօրէնութիւն. յղացաւ զցաւս եւ ծնաւ զանիրաւութիւն։*

16. *Գուբն՝ զոր փորեաց եւ պեղեաց, ի նոյն անկցի ի խորխորատ՝ զոր եւ գործեաց։*

17. *Դարձցին ցաւք ի գլուխ նորա. ի վերայ գագաթան նորա անօրէնութիւնք իւր իջցեն։*

18. *Խոստովան եղէց Տեառն ըստ արդարութեան նորա. սաղմոս ասացից անուան Տեառն բարձրելոյ։*

1. *Ի կատարած ի վերայ հնձանացն։ Սաղմոս Դաւիթ. Ա՛։*

2. *Տէր Տէր մեր՝ զի՞ սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի։*

3. *Զամբարձաւ մեծվայելչութիւն քո ի վերոյ քան զերկինս. ի բերանոյ մանկանց տղայոց անդիւեցաց հաստատեցեր զօրհնութիւն քո։*

4. *Վա՛ն թշնամեաց քոց Տէր, զի եղծցի թշնամին եւ հակառակորդն։*

5. Տեսից զերկինս՝ զգործս մատանց քոց. զլուսին եւ զաստեղս՝ զոր դու հաստատեցեր:

6. Ով է մարդ զի յիշես դու զնա. կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես դու նմա:

7. Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո. փառօք եւ պատուով պսակեցեր զնա. եւ կացուցեր ի վերայ առնեան ձեռակերտաց քոց:

8. Ամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա. զխաշն եւ զարջառ եւ զամենայն ինչ:

9. Նա եւ զերկ վայրի, զթռչունս երկնից. զձկունս ծովու, որ շրջին ընդ շաւիղս ծովու:

10. Տէր Տէր մեր՝ զի՞ պանծալի է անուն քո յամենայն երկրի:

1. Ի հոգեւոր վան գալստեան տպաւոյն. Սաղմոս Դաւիթ. ՃԺ:

2. Պոհաձաձ զքէն Տի՝ բոլորով սրտիւ իմով պատմեցից զամենայն պանծալիս քո:

3. Ուրախ եղէց եւ ցնծացայց ի քեզ. սաղմոս ասացից անուան Տն բարձրելոյ:

4. Ի դառնալ յետս թշնամեաց իմոց, ակարասցին եւ կորիցեն յերեսաց քոց:

5. Աղաչեր զդատաստանիմ, եւ զերաւունս. նստար յաթոռ դատաւոր արդարութեան:

6. Սաստեցեր ի հեթանոսս, եւ կորեաւ ամբարիշան. զանուանս նոցա ջնջեցեր յաւիտեան յաւիտենից. եւ թշնամեացն պակասեաց մինչեւ իսպառ:

7. Օձքաղաքս աւերեցեր. եւ կորեաւ յիշատակ նոցա աղաղակաւ:

8. Եւ կայ եւ ճնայ յաւիտեան. պատրաստ արար զաթոռ իւր ի դատաստանի:

9. Ինքն դատի զաշխարհս արդարութեամբ. եւ զժողովուրդս իւր ուղղութեամբ:

10. Եղեւ Տէր ապաւէն անանկի. օգնական ի նեղութեան ի դէպ ժամանակի:

11. Յուսասցին ի քեզ ամենեքեան որք գիտեն զանուն քո. զի ոչ թողցես զայնոսիկ՝ որք խնդրեն զքեզ Տէր:

12. Պաղմոս ասացէք Տեառն որ բնակեալն է ի Սիովն. պատմեցէք ի հեթանոսս զգործս նորա:

13. Ի խնդրել զարիւն նոցա յիշեաց. եւ ոչ մոռացաւ զաղաղակ անանկաց:

14. Ողորմեաց ինձ Տէր՝ եւ տես զխո-

նարհուԹիւն իմ ի Թշնամեաց իմոց. ո բարձր արասցես զիս ի դիմանց ի մահուանէ:

15. Ուրախ պատմեցից զամենայն օրհնուԹիւնս քո ի դրունս դստեր Սիովն. ցնծացայց ի փրկուԹեան քումմ:

16. Ընկղան հեԹանոսք յապականուԹեան իւրեանց՝ զոր արարին. որոգայԹ՝ զոր Թագուցին առցէ զոտս նոցա:

17. Ճանաչի Տէր յառնել զդատաստանս իւր. եւ ի գործս ձեռաց իւրեանց կապեացին մեղաւորք:

18. Դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս. եւ ամենայն հեԹանոսք որք մոռացան զԱստուած:

19. Ոչ իսպառ մոռանայ Տէր զաղքատն. համբերուԹիւն անանկաց մի կորիցէ իսպառ:

20. Ելի Տէր՝ եւ մի զօրասցի մարդ. դատեսցին հեԹանոսք առաջի քոյ:

21. Կացո Տէր օրէնադիր ի վերայ նոցա. ծանիցեն հեԹանոսք՝ ԹէԷ մարդիկ են:

22. Ընդէր Տէր կացեր ի հեռաստանէ. անտես արարեր ի դէպ նեղուԹեան ժամանակի:

23. Յամբարտաւանել ամբարշտին այրի աղքատ. արդելցին ի խորհուրդս իւրեանց, զոր խորհեցան:

24. Գովի մեզաւոր ի ցանկութիւնանձին իւրոյ. որ զկին, եւ նա գովի:

25. Խակ ընդէր բարկացոյց մեզաւորն զՅաւուաճ ըստ բազում բարկութեան իւրում թէ ոչ խնդրի:

26. Ոչ է Յաւուաճ առաջի աչաց նորա, պիղծ են ճանապարհք նորա յամ ժամ:

27. Օձ բարձեալ են իրաւունք յերեսաց նորա. ի վերոյ ամենայն թշնամեաց իւրոց տիրեացէ:

28. Յաց ի սրտի իւրում, թէ ոչ սահանեցայց, յազգէ յազգ առանց չարի:

29. Ընդիծիւք եւ դառնութեամբ եւ նենգութեամբ լի է բերան նորա, ի նեղոյ լեզուի նորա ցաւք եւ վաստակք:

30. Նստի դարանեալ ընդ մեծամեծս ի դաղանիս, սպանանել զամբիծն:

31. Աչք նր ի տնանկս հային. դարանի ի դաղանիս, ոյզ զառիւծ ի մրուջ իւրում:

32. Դարանի յափշտակել զաղքատն, յափշտակել զաղքատն եւ ձգել զնա:

33. Յորոգայթ իւր խոնարհեցուսցէ զնա. խոնարհեսցի եւ անկցի ի տիրել իւրում ի վերոյ ոմանցայց:

34. Օձ ասաց ի սրտի իւրում թէ մոռացաւ Յաւուաճ. դարձոյց զերեսս իւր, զի մի տեսցէ խապար:

35. Արի Տէր Աստուած իմ. բարձր եղեցի ձեռն քո. եւ մի մոռանար զանանկս:

36. Իակ ընդէր բարկացոյց ամբարիշտն զԱստուած. զի ասաց ի սրտի իւրում թէ ոչ քննի:

37. Տեսանես զու զնա. ի ցաւս եւ ի սրտմտութիւնս հայիս. մատնել զնոսա ի ձեռս քո. ի քեզ թողեալ է աղքատն, եւ որբոյն զու ես օգնական:

38. Խորտակեացին բազուկք մեղաւորի եւ չարի. խնդրեացին մեղք նորա՝ եւ նա մի գտցի:

39. Տէր թագաւոր յաւիտեան յաւիտենից. կորիցեն հեթանոսք յերկրէ նորա:

40. Ցանկութիւն անանկաց լուաւ Տէր, ի պատրաստութիւն սրտից նոցա հայեցաւ ունկն քո:

41. Դատ առնել որբոյն եւ անանկի. զի մի եւս յաւելցի մարդ ի մեծաբանելն իւրում ի վերայ երեսաց երկրի:

Ի հոգւոյն: Սաղմոս Դաւթի. ժ:

1. Ի Տէր յուսացայ. ոնց ասիցէք ցանձն իմ. փոխեսցայ ի լերինս ոնց ճնճղուկ:

2. Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց. պատրաստ արարին

զնեաս ի կապարճս, ձգել ընդ խաւար այնոցիկ՝ զոք ուղեղ են սրտիւք:

3. Օվ զոր զու շինեցեր՝ աւերեցին. իսկ արդարն զի՞ արար:

4. Տէր ի տաճար սուրբ իւրում. Տէր յերկինս յաթոռ իւրում:

5. Աչք նորա ի տնանկս հայեին. արտեւանունք նորա քննեն զորդիս մարդկան:

6. Տէր քննէ զարդարն եւ զամբարիշտն. որ սիրէ զանեղս,ատեայ զանձն իւր:

7. Տեղացէ ի վերայ մեղաւորաց որոգայթ, հուր եւ ծծումբ. այս մրրիկ՝ բաժին բաժակի նոցա:

8. Արդար է Տէր՝ զարդարութիւն սիրէ. զուղղութիւն տեսանեն երեսք նորա:

1. Ի կատարած է վերայ ողբերգացն: Սաղմոս Դաւիթ. ԺԲ:

2. Զպրեցո զիս Տէր՝ զի նուազեաց սուրբ. նուազեցին ճշմարտութիւնք յորդւոց մարդկանէ:

3. Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում. շրթամբք նենգաւորօք, սրտէ ի սիրտ խօսեցաւ:

4. Սատակէ Տէր զամենայն շրթունս նենգաւորս. եւ զլեզուս մեծաբանս:

5. Որք ասացին, զլեզուս մեր մեծա-

ՊԵՏԱԿԱՆ ՓՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗСՍՌ- рш.ССР
им. А. Мясникяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Ա 4463 - 61

*արարչութ. շրմունք մեր առ մեզ են, եւ ար-
դէ մեր ինչ է Տէր:*

6. *Վ ան առաւարանաց աղքատին եւ հեծումեան տնանկի, այժմ յարեայց առ Տէր. եղից զկիրկումեան իմ եւ համարձակեցայց ի նոսա:*

7. *Բանք Տ՚ն բանք սուրբ են ոչ զարծաթ. ընտրեալ եւ փորձեալ յերկրէ. արեալ եւ արտեալ եօթնապատիկ ի հողոյ:*

8. *Դու Տէր պահեացես զմեզ. ապրեցուսցես զմեզ յարգէ յայսմանէ մինչեւ յաւիտեան:*

9. *Շ ուրջանակի ամբարիշտք շրջին. ըստ բարձրութեան քումմ մեծա արարացես դու զորից մարդկան:*

Ի կատարած: Սաղմոս Դաւիթ. ԺԲ:

1. *Ա՚նշեի ի՞նչ Տէր մոռանաս զիս ի ապառ. մինչեւ ի՞նչ դարձուցանես զերեսս քո ինէն:*

2. *Մինչեւ ի՞նչ պնեմ զխորհուրդս յանձն իմ. եւ ցաւք սրտի իմոյ զաւուրս:*

3. *Մինչեւ ի՞նչ բարձրանայ թշնամին ի վերայ իմ. նայեա եւ լուր ինձ Տ՚ր Ած իմ:*

4. *Լ ոյս տուր Տէր աչաց իմոց. զի մի երբէք ննջեցից ի մահ:*

5. *Մի ասասցէ թշնամին իմ, թէ*

յաղթեցի նմա. կամ նեղէք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց:

6. Եւ յոյսմուխիւնս քո Տէր յուսացայ, ցնծացաւ սիրտ իմ ի փրկութեան քումդ. օրհնեցից զՏէր զբարերարդ իմ:

Ի կատարած: Սաղմոս Դաւիթ. ԺԹ:

1. Ընդ անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Ընաուած:

2. Պարկանեցան եւ պղծեցան յանօրէնութեան իւրեանց. եւ ոչ ոք է որ առնէ զբարի:

3. Տէր յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան. տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն որ խնդրիցէ զԸնաուած:

4. Ամենեքեան խոտորեցան ի միասին, եւ անպիտանացան:

5. Ոչ ոք է որ առնէ զբարի, եւ չէ ոք մինչեւ ի մի:

6. Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որք գործեն զանօրէնութիւն:

7. Որք ուտեն զժողովուրդ իմ ոպէ կերակուր հացի. եւ առ Տէր ոչ կարդացին:

8. Ընդ երկիցեն զերկիւղ ուր ոչ իցէ երկիւղ, զի Տէր է յազգս արդարոց:

9. Զօխտհուդ ազքատին յամօթ առարէն. զի Տէր է յոյս նորա:

10. Ո ասացէ ի Միոնէ զիրկութիւն խաւսայելն. և ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ. ցնծասցէ Յակոբ եւ ուրախ եղիցի Խրայէլ:

Սաղմոս Դաւթի. ԺԶ:

1. Տէր ով կացցէ ի խորանի քում. կամ ով բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

2. Որ գնայ ամբիծ, գործէ զարդարութիւն. խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում:

3. Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով. եւ չար ընկերի իւրում ոչ արար:

4. Նախատինս ի մերձաւորաց ոչ առնու. արհամարհեալ է առաջի նր չարագործն:

5. Զերկիւղածս Տն փառաւոր առնէ. որ երդնու ընկերի իւրում եւ ոչ սուտ:

6. Զարծաթ իւր ի վարձու ոչ տայ. կաշառս ի վերայ իրաւանց ոչ առնու. որ զայս արասցէ, նա մի սասանեսցի յաւիտեան:

1. Աւետարան Դաւթի. ԺԱ:

2. Պահեա զիս Աստուած, զի ես ի քեզ յուսացայ. ասացի Տեառն, Տէր իմ ես դու, եւ բարիք իմ քեզ չեն ինչ պիտոյ:

3. Սրբոց քոց որ են յերկրի քում. սքանչելի արարեր զամենայն կամս իմ ի նոսա:

4. Յաճախեսցին հիւանդութիւնք նո-
ցա. յետ այսորիկ ապա վաղվաղեսցին:
5. Ոչ ժողովեցայց ես ի ժողովս նոցա
յարեան. եւ ոչ յիշեցից զանուանս նոցա
ի շրթունս իմ:
6. Տէր բաժին ժառանգութեան իմոյ՝
եւ բաժակի իմոյ դու ես, որ այսպէն դար-
ձուցանես զժառանգութիւն իմ յիս:
7. Պ նշաւակք եղեն ինձ ընդ ընտիրս. եւ
ժառանգութիւն իմ հաճոյ եղեւ ինձ:
8. Օրհնեցից զՏէր՝ որ խրատուն ա-
րար զիս. մինչ զի ի գիշերի եւս խրատեցին
զիս երիկամունք իմ:
9. Յառաջագոյն տեսանէի զՏէր ա-
ռաջի իմ յամենայն ժամ. զի է ընդ աջմէ
իմմէ, զի մի սասանեցայց:
10. Պ ան այսորիկ ուրախ եղեւ սիրտ
իմ. եւ ցնծացաւ լեզու իմ. եւս եւ մար-
մին իմ բնակեսցէ յուսով:
11. Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս
եւ ոչ տացես սրբոյ քումմ տեսանել զա-
պականութիւն:
12. Յուցեր ինձ զճանապարհս քո կե-
նաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց
քոց ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ
քո մինչեւ յապառ:

1. Լու՛ր Տէր արդարութեան. եւ նայեա՛ ի խնդրուածս իմ. ունկնդի՛ր ա՛ղօթից իմոց՝ զի ոչ շրթամբք նենգաւորաց:

2. Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն. եւ աչք իմ տեսցեն զուղղութիւն:

3. Փորձեցեր զիս՛ւտ իմ, եւ քննեցեր ի դիշերի. փորձեցեր զիս, եւ ոչ գտաւ յիս անիրաւութիւն:

4. Ա՛ի խօսեցայ բերան իմ զգործս մարդոյ մարդկան. վասն բանից շրթանց քոց ես պահեցից զճանապարհս խիստս:

5. Յաստատեա զշաւիղս իմ ի ճանապարհի քում. զի ա՛ի դայթակղեսցին գնացք իմ:

6. Ես սա՛ք քեզ Տէր կարդացի զի լսեր ինձ Աստուած. խոնարհեցո սա՛ւ ինձ զունկն քո, եւ լսե՛ր բանից իմոց:

7. Սքանչելի ա՛րարեր զողորմութիւնս քո, ո՛վ փրկեա՛ զայնոսիկ որ յուսացեալ են ի քեզ. յայնցանէ, որք հակառակ կան աջոյ քո:

8. Պահեա զիս որպէս բիբ ականի. ընդ հովանեաւ թեւոց քոց ծածկեացես զիս յերեսաց ամբարշտաց, որք ատապեցուցին զիս:

9. Ծնեալդ զանձն իմ պաշտեցին. ի ձարպս իւրեանց սրտին. եւ բերանք նո-ցա խօսեցան զամբարտաւանութիւն:

10. Մերժեցին զիս, եւ այժմ դար-ձեալ պատեցան զինեւ. ուշ եդին խոնար-հեցուցանել զիս յերկիր:

11. Հանդրեցան ինձ որպէս առիւծ զի պատրաստի յորս. որպէս կորիւն առիւծու զի նստի դարանեալ:

12. Արի Տէր ժամանեա նոցա. եւ խա-փանեա զնոսա. փրկեա զանձն իմ յամբարշտացդ. ի սրոյ եւ ի ձեռաց թշնամեացն:

13. Տէր կորո զնոսա յերկրէ. բաժա-նեա եւ խափանեա զնոսա ի կեանս իւ-րեանց:

14. Գաղանեօք քովք լցան որովայնք նոցա, յագեցան կերակրովք, եւ թողին զմնացուածս տղայոց իւրեանց:

15. Եւ արդարութիւն երեսացդ երեսաց քոց. յագեցայց յերեւել փառաց քոց:

1. Ի կատարած է վերոյ պատերազմող նահապահին, Ձաւայն Տեառն Դաւիթ. ոչ խօսեցաւ ընդ Տեառն զբանս օրհնութեան յաւուրն յորում փըրկեաց զնա Տէր ի ձեռաց ամենայն ընդդիմադիր նորա, և ի ձեռաց Սաւուղայ: Սաղմոս ՀԻ:

2. Սիրեցից զքեզ Տէր զօրութի՛ իմ. Տէր հաստատիչ իմ. ապաւէն իմ եւ փրկիչ իմ:

3. Աստուած օգնական իմ, եւ ես յուսամ ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի իմ է:

4. Օրհնելով կարդացից զտէր. եւ ի թշնամեաց իմոց ապրեցայց:

5. Շուրջ եղեն զիս եղկունք մահու. եւ ուղիք անօրէնութե՛ խռովեցուցին զիս:

6. Վիշտք դժոխոց պաշարեցին զիս. ժամանեցին ինձ որոգայթք մահու:

7. Ի նեղութեան իմում ես զտէր կարդացի. եւ զԱստուած իմ աղաղակեցի:

8. Լուաւ ինձ ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց. եւ աղաղակ իմ առաջի նորա մտից յականջս նորա:

9. Խռովեցաւ եւ դողաց երկիր, եւ հիմունք լերանց տատանեցան եւ խռովեցան, զի բարկացաւ ի վերայ նոցա Աստուած:

10. Ել ծուխ ի բարկութենէ նորա.

եւ հուր յերեսաց նորա բորբոքեցաւ, եւ փայլատակունք հատան ի նմանէ:

11. *Խոնարհեցոյց զերկինս եւ էջ. եւ մէգ ի ներքոյ ոտից նորա:*

12. *Եւ ի քրովբէս եւ թռեաւ. սլացաւ նա ի թեւս հողմոյ:*

13. *Եդ զխաւար ի ծածկոյթ իւր, եւ շուրջ զնովաւ են յարկք իւր. եւ խաւար ջրային ջուրք միւնեւ յամպս օդոյ:*

14. *Ի փայլատակել նորա առաջի նորա, ամպք անցուցին զկարկուտս եւ զկայծակունս հուր:*

15. *Որոտաց Տէր յերկինից, եւ բարձրեաւն եւս զձայն իւր ի կարկուտս եւ ի կայծակունս հուր:*

16. *Առաքեաց զնետս իւր եւ ցրուեաց զնոսա. յաճախեաց զփայլատակունս իւր, եւ խռովեցոյց զնոսա:*

17. *Երեւեցան աղբերք ջուրց. եւ յայտնեցան հիմունք աշխարհի:*

18. *Ի սաստէ քումմէ Տէր, եւ ի շնչել հոգւոյ բարկութեան քոյ:*

19. *Առաքեաց ի բարձանց եւ ընկալաւ զիս. ընկալաւ զիս ի ջուրց բազմաց:*

20. *Փրկեաց զիս Տէր ի թշնամեաց իմոց հզօրաց եւ յատելեաց իմոց, զի հզօր եղեն քան զիս:*

21. Յամանեցին ինձ յաւուր չարչարանաց իմոց. եթէ Տէր հզօրիչ իմ. եւ եհան զիս յանդորր եւ փրկեաց զիս Տէր, զի կամեցաւ զիս:

22. Հաւատացէ ինձ Տէր ըստ արդարութեան իմում. ըստ ամբծութեան իմում հատուսցէ ինձ:

23. Զի պահեցից զճանապարհս Տեառն, եւ ոչ ամբարշտեցայց ՅԱստուծոյ իմմէ:

24. Ամենայն իրաւունք նորա առաջի իմ են. զարդարութիւն իւր ոչ ի բացեայ արար յինէն:

25. Եղէց եւ ես անբիծ ընդ նմա. զգուշացայց յանօրէնութենէ իմմէ:

26. Հատուսցէ ինձ Տէր ըստ արդարութեան իմում. ըստ սրբութեան ձեռաց իմոց՝ առաջի աչաց իւրոց:

27. Ընդ սրբոյն սուրբ եղիցես. ընդ առն ամբծի անբիծ եղիցես. ընդ ընտրեալն, ընտրեալ եղիցես. եւ զթիւրսն կործանեսցես:

28. Զոմ ժողովուրդս խոնարհս կեացուցանես, եւ զաչս ամբարտաւանից զոմ խոնարհեցուցանես:

29. Զոմ լուսաւոր առնես զմշակ իմ, Տէր Աստուած իմ, լոյս առնես ինձ ի խաւարի:

30. Զի ձեր փրկեցայց ի փորձութենէ. Աստուծով իմով անցից ընդ պարիսպս:

31. Ստուած իմ, անբիծ են ճանապարհք նորա. եւ բանք Տեառն ընտրեալ են. եւ ապաւէն ամենեցուն որ յուսան ի նա:

32. Վասն զի ո՞վ է Աստուած բայց ի Տեառնէ. կամ ո՞վ է Աստուած բայց ՅԱյ մերմէ:

33. Աստուած, որ զգեցուցեր ինձ զօրութիւն. եւ եդեր յարթուածս զճանապարհս իմ:

34. Հաստատեցեր զոտս իմ որպէս զեղջերուի. եւ իվերայ բարձանց կացուցեր զիս:

35. Ուսուցեր զձեռս իմ ի պատերազմ. եւ ապարեր զբազուկ իմ ոչ զաղեղն հասատ. եւ եղեւ ինձ զպաշտպանութիւն փրկութեան քոյ:

36. Աջ քո ընկալաւ զիս եւ խրատ քո կանդնեաց զիս ի սպաս. եւ խրատ քո ուսուցանէ զիս:

37. Ընդարձակեցեր զգնացս իմ ի տակ իմէ իմմէ. եւ ոչ սկարտացան շաւղք իմ:

38. Հալածեցից զթշնամիսն իմ եւ հասից նոցա. եւ ոչ դարձայց ի նոցանէ՝ մինչեւ սպառեցից զնոսա:

39. Նեղեցից զնա, եւ այլ մի կարասցեն կեալ. եւ անկցին ի ներքոյ ոտից իմոց:

40. Ո զգեցուցեր ինձ զզօրութիւնն ի պատերազմի. զյարուցեալսն ի վերայ իմ, ներքոյ իմ արարեր:

41. Զթշնամիս իմ հալածական արարեր եւ զատելիս իմ սատակեցեր:

42. Ընդդակեցին եւ ոչ ոք էր որ փրկէր զնա. կարծացին առ Տէր, եւ ոչ լուաւ նոցա:

43. Ապրեցից զնա ոսկի փոշի առաջի հողմոյ. եւ ոսկի կաւ դռեհացի կոխեցից զնա:

44. Փրկեսցէ զիս Տէր ի հակառակութենէ ժողովրդոյ. եւ կացուսցէ զիս գլուխ հեթանոսաց:

45. Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի ծառայեաց ինձ, եւ ի լուր ականջաց լուաւ ինձ:

46. Որդիք օտարոյց սուտացին ինձ. որդիք օտարոյց մաշեցան եւ կաղացան ի շաւղաց իւրեանց:

47. Կենդանի է Տէր եւ օրհնեալ է Աստ. եւ բարձր եղիցի Աստ փրկութիւն իմոյ:

48. Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ, եւ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:

49. Փրկիչ իմ ի թշնամեաց իմոց բարձրացուցանէ. յայնցանէ՝ որ յարուցեալ են ի վերայ իմ, բարձր արարեր զիս. եւ յառնէ անիրաւէ փրկեցեր զիս:

50. Վասն այսորիկ խոստովան եղէց քեզ ի հեթանոսս. եւ անուան քում սաղմոս ասացից:

51. Աստ արարեր զփրկութիւն թագաւորի նորա. առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա ընդ Դաւթի. եւ ընդ զաւակի նորա աղէ մինչեւ յաղգ:

Օրհնութիւն Մովսէսի ընդ որդոցն Իսրայէլի:
Եւէտ. 15:

1. Որհնեցցուք զՏէր, զի փառաւք է փառաւորեալ:

2. Ձիերիվարս եւ զհեծեալս նոցա ընկէց ի ծով. օգնական ընդունելի իմ Տէր, եւ եղեւ ինձ ի փրկութիւն:

3. Սա է իմ Աստուած եւ փառաւոր արարից զսա. Աստուած հօր իմոյ եւ բարձր արարից զսա:

4. Տէր խորտակէ զպատերազմունս. Տէր անուն նորա:

5. Զկնտիրս արանց եւ զընտիրս սպառազինից. զկառս եւ զերիվարս, եւ զամենայն զօրութիւնս փարաւոնի ընկէց ի ծով:

6. Ընտիր ծառիցս զնոսա. ընկղմեան յանդունդս խորոց իբրեւ զվէմս:

7. Աջ քո Տէր փառաւորեալ է զօրութիւնք. աջ քո Տէր խորտակեաց զթշնամիս քո:

8. Եւ մեծութիւն փառաց քոց մանրեցեր զհակառակորդս. առաքեցեր զբարկութիւն սրտմտութեան քոյ. եւ եկեր զնոսա ոսկի զեղէգն:

9. Հոգւով զօրութեան սրտմտութեան քո պատառեցան ջուրք. դիպան, կացին որպէս պատիսպ քարեայ ջուրք ծովուն. եւ պաղեցան ալիք ջուրցն ի մէջ ծովուն:

10. Ասաց Թէնաւին. ասէ Տալաճեցիք Տարից. բաժանեցիք զաւարն եւ լցուցիք ի նոցանէ զանձն իմ:

11. Ի սուր իմ արկից զնոսա. սիրեսցէ, եւ բարձրասցի ի վերայ նոցա աջ իմ:

12. Ասաքեցեր զՏողմն քո, եւ ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան, եւ խղեն որպէս կապար ի Ջուրս առատիկս:

13. Ո՞ նմանի քեզ Աստուածս Տէր. կամ ո՞վ նմանիցի քեզ՝ փառաւորեալ ի սուրբս:

14. Ածանչելի փառաւորեալ՝ որ առնես զնշանս եւ զարուեստս. ձգեցեր զձեռն քո եւ եկուլ զնոսա երկիր:

15. Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քո այամ, զոր եւ փրկեցեր:

16. Մխիթարեցեր զօրութեամբ քով ի բանակեւոյ սրբութեան քոյ. լսան ազգք եւ բարկացան, երկունք կալան զբնակիչս Փղշատացւոց:

17. Յայնժամ փութացան դառաւորք Եդովմայ եւ իշխանք Մովաբացւոց:

18. Կալաւ զնոսա դողումն. հալեցան ամենայն բնակիչք Քանանացւոց:

19. Ընկցի ի վերայ նց ահ եւ դողումն. եւ ի զօրութենէ բազկի քոյ քարացին:

20. Մինչեւ անցցէ ժողովուրդ քո Տէր.

վինչեւ անցցի ժողովուրդ քո այս՝ զոր ստացար:

21. *Տալեալ անկեացես զնոսա ի լեառն ժառանգութեան քոյ. ի պատրաստութեան բնակութեան ժառանգութեան քո:*

22. *Օր ստացար ի սկզբանէ Տէր, ստացար սրբութեամբ, եւ զոր պատրաստեցին ձեռք քո. Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից, եւ եւս:*

23. *Օվ եմուտ փարաւոն կառօք եւ երիվարօք. եւ բնակիր ապառաղինօք ի միջ ծովուն:*

24. *Եւ աճ ի վերայ նոցա Տէր զջուրս ծովուն. եւ որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ի միջ ծովուն:*

Վրխառս է իմ Աստուած, եւ փառաւոր առնեմ զսա. Աստուած հօր իմոյ, եւ բարձր արարից զսա: Մարդասէր Տէր՝ վասն սրբութեան անարատ մօր քոյ եւ կուսի, եւ վասն խաչի քոյ պատուականի, ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Քոյոյ ելեանելին ես- Ի քեզ-ին:

Ա ասն ի վերուստ խաղաղութիւն եւ փրկութիւն անձանց մերոց՝ զՏէր աղաչեսցուք:

Վ՚ասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ ՂՏԷ։

Վ՚ասն քաւիչ եւ ներող լինելոյ Աստուծոյ ի վերայ մեղաց մերոց՝ ՂՏԷ։

Վ՚ասն Թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր զկամաց եւ զակամայ՝ ՂՏԷ։

Վ՚ասն զի մի ընդ խոտանս զամենիցիմք յաւուրն պատուհասուցման՝ ՂՏԷ։

Վ՚ասն հոգւոյն հանդուցելոյ՝ որ ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին՝ ՂՏԷ։

Եւ եւս եւ վասն միաբանութեան ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ՝ ՂՏԷ։

Օգնական մեր եւ զինուանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր քանի մեծի ողորմութեան քումմ. ասացուք ամենեքեան միաբանութեամբ. Տէր ողորմ։

Աղօթ։

Տէր տուընջեան եւ գոյացուցիչ գիշերոյս որ արարեր զմիս ի զբօսանս բարեգործութեան, ի փրկութիւն անձանց մերոց. եւ զգիշեր ի հանգիստ քնոյ՝ ակարացեալ բնութեանս մերոյ. իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր յօրհնաբանութիւն սհաւոր եւ փառաւորեալ անուանդ քումմ

սրբոյ: Ընկալ եւ այժմ զաղաչանս մեր. եւ յաջողեա մեզ ուղիղ հաւատով եւ առաքինասէր վարուք ի նոյն պաշտօն քո կանխել միշտ. եւ նովին կանոնիւ՝ անդադար փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգի. այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից:

Խոստովանութիւն ամենեցուն:

Օ՜ք, որ յամի զԹաճ եւ մարդասէր Տէր ես, աղաչեմք հանապազ, զի զօրացուցես զմեզ օրըստօրէ, կալ ի կարգի կրօնաւորութեան մերում: Թեմեւացո Տէր զքաղցր լուծ քո, զոր եդիր ի վերայ մեր՝ զի կարասցուք կալ ի պաւուխանի քում. եւ զհաճոյն առնել առաջի քոյ յամ ժամ, ի տուէ եւ ի գիշերի. հրեշտակային եղբակցութիւբ զքեզ օրհնել, զքեզ գովել. գոհութիւն եւ փառս մատուցանել ամենազօր սէրութեդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից. ամէն:

Սաղմոսիւք եւ օրհնութիւբ եւ երգօք հոգեւորօք անդադար փառաւորումբ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի. այժմ եւ միշտ:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն: Հայր մեր՝ որ:

1. Ի հոգւոջ: Սաղմ. Դաւիթ. Ամէն:

2. Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

3. Օր աւուր բղխէ զբան. եւ գիշեր գիշերի յուցանէ զգիտութիւն:

4. Ոչ են բանք եւ ոչ են խօսք՝ զորոց ոչ լսին ձայնք նոցա:

5. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոց. մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

6. Յարեւս եհար զխորան իւր. եւ ինքն որպէս փեսայ ել ելանէ յառագաստէ. եւ ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս իւր:

7. Ի ծագաց երկնից են ելք նորա. հանդիսա նորա մինչեւ ի ծագս նորուն. եւ ոչ ոք լցէ, որ թագիցէ ի տապոյ նորա:

8. Օրէնք Տեառն ամբիծ են եւ դարձուցանեն զհոգիս. վկայութիւն Տեառն հաւատարիմ եւ իմաստուն առնէ զտղայս:

9. Ուղղութիւնք Տեառն ուղիղ են եւ ուրախ առնեն զսիրտս. պատուիրանք Տեառն լոյս են, եւ լոյս տան աչաց. երկիւղ Տեառն սուրբ է, եւ մնայ յաւիտեան:



Խնկեցեր գիս, Տէր Աստուած, ձրիապատմեալ աւուրք քոյ:

ՍԱՂՄ. Ի:

10. Պատասխանեաց Տէառն ճշմարիտ են, եւ արդար է նոյն:

11. Յանկալի է նա քան զոսկի, եւ քան զականս պատուականս բազում. քաղցր է նա քան զմեղու խորիսխ:

12. Վասն զի ծառայ քո պահեսցէ զայս. ի պահել նմա վճառումն բազում:

13. Ո՞վ յանցուածս իւր ո՞ կարէ առնուլ ի միտ. ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս. եւ յօտարէն պահեա զծառայս քո:

14. Ապա թէ ոչ տիրեսցեն ինձ, յայնժամ անբիծ եղէց՝ սուրբ եղէց ի մեղաց մեծաց:

15. Եղիցին քեզ հաճոյ բանք բերանոյ իմոյ, եւ խորհուրդ սրտի իմոյ առաջի քոյ են յամենայն ժամ. Տէր օգնական իմ եւ փրկիչ իմ:

1. Ի կատարած: Սաղմոս Դաւիթ. ժէ:

2. Լուիցէ քեզ Տէր յաւուր անձկութեան. օգնական եղիցի քեզ անուն Աստուծոյ Յակոբայ:

3. Առաքեսցէ քեզ Տէր զօրութիւն ի սրբութենէ իւրմէ. եւ ի Սիոնէ ընկալցի զքեզ:

4. Յիշեսցէ Տէր զամենայն պատարագս քո. եւ զուխտս քո ընդունելի արասցէ:

5. Տայէ քեզ Տէր ըստ սրտի քում. եւ զամենայն խնդրուածս քո կատարեսցէ:
6. Ցնծասցուք մեք ի փրկութե՛ քում. եւ յանուն Ա՛յ մերոյ մեք մե՛ծ եղիցուք:
7. Լցուսցէ Տէր զա՛մ խնդրուածս քո. այժմ ծանեաք զի կեցոյց Տէր զօծեալ իւր:
8. Լուաւ սմա յերկնից ի սրբութենէ իւմէ, ի զօրութիւն փրկութե՛ աջոյ իւրոյ:
9. Սոքա կառօք եւ սո՛ք երիվարօք. այլ մեք զանուն Տե՛ն Ա՛յ մերոյ կարդասցուք:
10. Սոքա խափանեցան եւ անկան. մեք յարեաք եւ ուղիղ եղաք:
11. Տէր կեցո զթագաւորն, եւ լուր մեզ. յաւուր՝ յորում կարդասցուք առ քեզ:

1. Ի հպատակ: Սաղմոս Դաւիթ. Ի:

2. Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:
3. Ցանկութի՛ սրտի նո՛ր եւաւր նմա. եւ զկամս շրթանցն նո՛ր ոչ արգելեր ինձանէ:
4. Զի առաջի օրհնութեան քաղցրութեան քոյ. եւ եդիր ի գլուխ նո՛ր պսակ ի քարէ պատուականէ:
5. Կեանս խնդրեաց ի քէն. եւ եաւր նմա երկայնաւուրս՝ յաւիտեան յաւիտենից:

6. Արձ են փառք նորա ի փրկութեան քում. զփառս եւ զմեծվայելչութիւն դիցես ի վերայ նորա:

7. Տացես զնա յօրհնութիւնս յաւիտեան յաւիտենից. ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց:

8. Թագաւոր յուսայցաւ ի Տէր. եւ յողորմութիւնս բարձրելոյն նա մի սասանեսցի յաւիտեան:

9. Գտցի ձեռն քո ի վերայ թշնամեաց քոց, եւ աջ քո գտցէ զամենայնատելիս քո:

10. Դիցես զնոսա որպէս հնոց հրոյ. ի ժամանակի երեսաց քոց:

11. Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա. եւ հուր կերիցէ զնոսա:

12. Պտուղ նոցա յերկրէ կորիցէ. եւ զաւակ նոցա յորդւոց ի մարդկանէ:

13. Խոտորեցան ի քէն չարութեամբ. խորհեցան խորհուրդ, զոր ոչ կարացեն հաստատել:

14. Արացես զնոսա հալածեալս. ի ծնօթս քո պատրաստեցես զերեսս նոցա:

15. Խարձր լեր Տէր ի զօրութեան քում. օրհնեսցուք եւ սաղմոս ասասցուք զօրութեան քում:

1. Ի կատարած. վասն առաւօտուան օգնականութեան:
Սաղմոս Դաւթի. ԻԸ:

2. Ընտուն Ընառաջ իմ, նայեա առ իս. ընդէր թողեր զիս. հեռի եղէ ի փրկութենէ իմմէ, վասն բանից յանցանաց իմոց:

3. Ընառաջ իմ ի տուէ կարդացի առ քեզ, եւ ինձ ոչ լսեար. ի գիշերի, եւ ինձ ոչ անսացեր:

4. Դու ի տուրս բնակեալ ես, եւ գովեալ Իսրայելի:

5. Ի քեզ յուսացան հարքն մեր. յուսացան ի քեզ եւ փրկեցեր զնոսա:

6. Ընդ քեզ աղաղակեցին, եւ կեցին. ի քեզ յուսացան, եւ ոչ ամաչեցին:

7. Ընդ ես որդն եմ, ոչ եմ մարդ. նախատինք մարդկան՝ եւ արհամարհանք ժողովրդոց:

8. Ընծաղեան որք տեսանէին զիս՝ արհամարհէին զինեւ. խօսէին շրթամբք եւ շարժէին զգլուխս իւրեանց:

9. Յուսացաւ ի Տէր եւ փրկեացէ զնա. կեցուսցէ զնա՝ զի կամի զնա:

10. Դու ես՝ որ հանար զիս յարգանդէ. յոյս իմ ի տեսանց մօր իմոյ:

11. Ի քեզ անկայ ես յարդանդէ. յո-
րովայնէ մօր իմոյ. դու ես Աստուած իմ:
12. Մի ի բացեայ առնիր լինէն. զի
նեղութիւնք մերձեալ են. եւ ոչ ոք է որ
օգնէ ինձ:
13. Երկուղ եղեն զինեւ զուարակք բա-
զումք. եւ ցուլք գէրք պաշարեցին զիս:
14. Բացին ի վերայ իմ զբերանս իւ-
րեանց որպէս առիւծ. զի մռնչէ եւ յա-
փշտակէ:
15. Ես որպէս զջուր հեղայ եւ ցրուե-
ցան ամ ոսկերք իմ. եւ եղեւ սիրտ իմ
ոպ մոմ հալեալ ի մէջ որովայնի իմում:
16. Չորացաւ որպէս խեցի զօրութիւն
իմ. լեզու իմ ի քիմն իմ կցեցաւ. եւ ի
հող մահու իջուցին զիս:
17. Երկուղ եղեն զինեւ շունք բազումք.
եւ ժողովք չարաց պաշարեցին զիս:
18. Ծակեցին զձեռս իմ եւ զոտս իմ
եւ թուեցին զամենայն ոսկերս իմ, եւնո-
քա հայեցան եւ տեսին զիս:
19. Բաժանեցան զհանդերձս իմ ի մէջ
իրեանց. եւ ի վերայ պատմուճանի իմոյ
վիճակս արկանէին:
20. Դու Տէր՝ մի հեռի առներ զօգ-
նութիւնս քո յինէն. եւ Տէր յօգնել ինձ
նայեաց:

21. Փրկեա ի սրոյ զանձն իմ. եւ ի ձեռաց շանց զմիամօրուքիւն իմ:

22. Փրկեա զիս ի բերանոյ առիւծու, յեղջերւոյ միեղջերուաւ զմտութիւնիմ:

23. Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ:

24. Երկիւղածք Տեառն օրհնեցէք զՏէր. ամենայն զաւակն Յակոբեան փառաւորեցէք զնա:

25. Երկիցէ ի Տեառնէ ամենայն զաւակն Իսրայելի. զի ոչ արհամարհեաց եւ ոչ անարգեաց զաղօթս աղքատի. եւ ոչ դարձոյց զերեսս իւր յինէն. այլ ի կարդալ իմում առ նա՝ լուաւ ինձ:

26. Ի քէն է գովութիւն իմ, յեկեղեցիս մեծ օրհնեցից զքեզ:

27. Ձուխտս իմ կատարեցից առաջի ամենայն երկիւղածաց նորա:

28. Ուտիցեն տնանկք եւ յագեսցին. օրհնեսցեն զՏէր՝ որ խնդրեն զնա:

29. Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յաւիտենից. յիշեսցեն, եւ դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի:

30. Երկիր պագցեն նմա ամ տոհմք ազգաց. զի Տեառն է արքայութիւն. եւ նա տիրէ ի վերայ ամենայն հեթանոսաց:

31. Կերան եւ երկիրպագին նմա ամե-

նայն պատարագք երկրի. առաջի նորա անկցին ամենեքեան՝ որ իջանեն ի հող:

32. Ընձն իմ նովաւ կեայ. եւ զաւակ իմ ծառայեսցէ նմա:

33. պատմեսցի Տեառն ազգ՝ որ գալոց է. պատմեսցեն զարդարութիւն նորա ժողովրդեան, որ ծնանելոց էին՝ զոր արար Տէր:

Սաղմոս Դաւթի. ԽԱ:

1. Տէր հովուեսցէ զիս. եւ ինձ ինչ ոչ պակասեսցի:

2. Ի վայրի դալարուղ՝ անդ բնակեցոյց զիս. եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

3. Դարձոյց զանձն իմ առ իս. եւ առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան, վասն անուան իւրոյ:

4. Թէպէտ եւ գնացից ես ի մէջ սուերաց մահու. ոչ երկեայց ի չարէ, զի դու Տէր ընդ իս ես:

5. Յուպ քո եւ գաւազան, նոքա մխիթարեսցեն զիս:

6. Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց:

7. Օծեր իւղով զգլուխս իմ. բաժակ քո որպէս անուպակ արբեցոյց զիս:

8. Ողորմութիւն քո Տէր զկեաս իմ եւկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց.

բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս:

Սաղմոս Դաւթեան. ԻԶ:

1. Տեառն է երկիր լիւ իւրով, աշխարհ եւ ամենայն բնակիչք նորա:

2. Նա ինքն ի վերայ ծովու հիմնադրեաց նմա, եւ ի վերայ գետոց պատրաստեաց զնա:

3. Ո՞վ ելցէ ի լեառն Տեառն. կամ ո՞վ կացցէ ի տեղւոջ սրբութեան նորա:

4. Որ սուրբ է ձեռօք եւ ամբիծ սրտիւ, որ ոչ առ զանպարտութիւն յանձն իւր, եւ ոչ երդուաւ նենգութիւր ընդ ընկերի իւրում:

5. Սա առցէ զօրհնութիւն ի Տեառնէ. զթղթմութիւն Աստուծոյ փրկչէ իւրմէ:

6. Այս ազգ է որ խնդրէ զՏէր. խնդրէ տեսանել զերեսս Աստուծոյ Յակոբայ:

7. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձարին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:

8. Ո՞վ է սա Թագաւոր փառաց. Տէր հզօր զօրութեամբ իւրով. Տէր կարող ի պատերազմի:

9. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձարին դրունք յաւիտենից. եւ մտցէ Թագաւոր փառաց:

10. Ո՞վ է սա թագաւոր փառաց, Տէր զօրութե՛ան՝ սա ինքն է թագաւոր փառաց:

1. Սաղմոս դաւ. Ի Կ:

2. Ընդ քեզ Տէր համբարձի զանձն իմ. Ընտուաձ իմ ի քեզ յուսացայ. մի ա՜ մաչեցից, եւ մի ծիծաղեսցին զինեւ թըշնամիք իմ:

3. Ընդեւքեան՝ ոչ քո համբերին քեզ, մի ամաչեսցեն. այլ ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իւրեանց:

4. Ճանապարհս քո Տէր ցոյց ինձ. եւ շաւիղս քո ուս ինձ:

5. Ընաւջնորդեա ինձ ի ճշմարտութեան քում, եւ ուս զիս. զի դու ես Ընտուած փրկիչ իմ. եւ ես քեզ համբերեմ զօրհանապազ:

6. Յիշեա Տէր զգթութիւնս քո եւ զողորմութիւն քո՝ որ են յաւիտենից:

7. Ոչ վասն մանկութեան եւ զանգիտութեան իմոյ մի յիշեր. այլ յիշեա զիս Տէր ըստ ողորմութեան քում, վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր եւ ուղիղ ես Տէր:

8. Վասն այսորիկ օրէնսդիր առնես զմեղաւորս ի ճանապարհի. առաջնորդես հե-

զոց ի գառաստանի. եւ ուսուցանես հեզոց զճանապարհս քո:

9. Ընթացայ ճանապարհք Տեառն ողորմութեամբ եւ ճշմարտութեամբ են այնոցիկ, որք խնդրեն զուխաս եւ զվկայութիւն նորա:

10. Վասն անուան քո Տէր քաւեա զմեղս իմ, զի բազում եղեն, ով է մարդ որ երկնչի ի Տեառնէ. օրէնադիտ առնէ զնա ի ճանապարհի՝ յոր եւ հաճեցաւ:

11. Ընձն նորա ի բարութեան հանգիցէ. եւ զաւակ նորա ժառանգեսցէ զերկիր:

12. Ծածուկ է Տէր երկիւղածաց իւրոց. եւ զկտակարանն իւր ուսուցանէ նոցա:

13. Աչք իմ յաւէնայն ժամ առ Տէր. եւ նա հանէ յորոգայթէ զոտս իմ:

14. Նայեաց առ իս, եւ ողորմեաւ ինձ. զի միամօր եւ աղքատ եմ ես:

15. Նեղութիւն սրտի իմոյ բազում եղեն յոյժ. եւ ի վշաց իմոց հան զիս:

16. Տես զխոնարհութիւն իմ եւ զվաստակ իմ. եւ թող ինձ զամենայն մեղս իմ:

17. Տես զթշնամիան զի բազում եղեն, ատելութիւն՝ զոր ի նանիր ատեցին զիս:

18. Պահեա զանձն իմ, եւ փրկեա զիս. եւ մի յամօթ եղէց՝ զի յուսացայ ի քեզ:

19. Ամբիծք եւ ուղիղք կցորդք եղեն

ինձ. եւ ես քեզ համբերի զօրհանապազ. վրկեա Ընտուած զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա:

Սաղմոս Դաւթի. ԻԱ:

1. Վաս արա ինձ Տէր՝ զի ես յամբ բծութեան իմում գնացի. ի Տէր յուսացայ, մի եղէց հիւանդ:

2. Փորձեա զիս Տէր եւ քննեա զիս. փորձեա զերիկամունս իմ եւ զսիրտ իմ:

3. Ողորմութիւն քո Տէր առաջի աչաց իմոց. եւ հաճոյ եղէց ճշմարտութե՛ քում:

4. Ոչ նստայ ես յամբոյս նանրոյց. եւ ընդ անօրէնս ես ոչ մտից:

5. Ատեցի ես զժողով չարաց. ընդ ամբարիշտան բարիշտան ես ոչ նստայց:

6. Լուացայց սրբութեամբ զձեռս իմ. եւ շուրջ եղէց զսեղանով քով Տէր:

7. Լսել ինձ զձայն օրհնութեան քո, եւ պատմել զամենայն սքանչելիս քո:

8. Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ եւ զտեղի յարկի փառաց քոց:

9. Մի կորուսանես ընդ ամբարիշտան զանձս իմ. եւ մի ընդ արիւնահեղս զկեանս իմ:

10. Որոց ձեռք յանօրէնութեան են, եւ աջ նոցա լի է կաշառօք:

11. Եւ յամբծութեան իմում դնացի, տրկեա զիս Տէր եւ ողորմեաց ինձ:
12. Ոտն իմ կացցէ յուղղութիւն. յե- կեղեցիս մեծս օրհնեցից զքեզ:

Սաղմոս Դաւթի՝ ձենգէ- օձեալ էր. ԻՕ:

1. Տէր լոյս իմ եւ կեանք իմ, եւ զոմէ երկեայց. Տէր ապաւէն կենաց ի- մոց՝ եւ զոմէ դողայց:
2. Ի մերձենալ առ իս չարսդ ուտել զմարմին իմ. նեղիչք իմ եւ թշնամիք իմ, նոքա տկարացան եւ անկան:
3. Ող պատրաստեցի ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. եւ թէ յարիցէ ի վերայ իմ ճակատամարտ, ա- կայն եւ յայսմիկ ի քեզ Տէր յուսացայ:
4. Զմի խնդրեցի ի Տեառնէ, եւ զայն ազաչեմ բնակել ինձ ի տան Տեառն զա- մենայն աւուրս կենաց իմոց:
5. Տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն, եւ հրամայել ի տաճարի նորա:
6. Ծածկեաց զիս ի խորանի իւրում յաւուր չարի. ընդ յարկաւ վրան զիս ի ծածկոյթ խորանի իւրում:
7. Ի վեմէ բարձր արարեր զիս. եւ այժմ բարձր արա զգլուխ իմ ի վերայ թշնա- մեաց իմոց:

8. Երկուրկ եղեց եւ մառուցից ի խոտանի նորա պատարագ օրհնութեան. օրհնեցից եւ սաղմոս ասացից Տեառն:

9. Լուր Տէր ձայնի իմում, զի կարդացի առ քեզ. ողորմեա եւ լուր ինձ, զի քեզ ասաց սիրտ իմ. եւ խնդրեցին եւ րեաք իմ, զերեսս քո Տէր խնդրեցին:

10. Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. եւ մի խոտորիր բարկութեամբ ի ծառայէ քումէ:

11. Օգնական իմ լեր Տէր, եւ մի անարգեր զիս. եւ մի թողուր զիս Աստուած փրկիչ իմ:

12. Հայր իմ եւ մայր իմ թողին զիս. եւ Տէր ընկալաւ զիս:

13. Օրէնադիր ասա զիս Տէր ի ճանապարհի քումէ. եւ առաջնորդեա ինձ ի շաւիղս քո ուղիղս:

14. Վասն թշնամեաց իմոց՝ մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց:

15. Յարեան ի վերայ իմ վկայք մեղաց. եւ ստեցին ինձ յանօրէնութեան իւրեանց:

16. Հաւատացի տեսանել զբարութիւն Տեառն յերկրին կենդանեաց. Համբեր Տեառն, եւ քաջալերեաց. զօրացի սիրտ քո եւ համբեր Տեառն:

1. Ընդ քեզ Տէր կարդացի, ընծ իմ, մի լռեր յինէն. մի երբեք լռեցես յինէն. նմանեցայ ամոցիկ, որ իջանեն ի գուբ:

2. Լուր Տէր ձայնի խնդրուածոյ իմոյ՝ յաղաչել ինձ առ քեզ ի համբառնալ ձեռաց իմոց ի տաճար սուրբ քո:

3. Մի հասանիր ընդ ամբարիշտս քանձն իմ, եւ մի ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն, կորուսաներ զիս:

4. Որք խօսէին զխաղաղութի ընդ ընկեր իւրեանց. եւ չարութի է ի սիրտս նց:

5. Տուր նոցա Տէր ըստ գործս նոցա. ըստ անօրէնութե գնացից նց հատո նց:

6. Ըստ գործոց ձեռաց նոցա հատո նոցա, զհատուցումն նոցա նոցին:

7. Ոչ իմացան նոքա զգործս Տեառն. եւ ոչ ի գործս ձեռաց նորա հայեցան. կործանեսցես զնոսա, եւ այլ մի շինեսցին:

8. Օրհնեալ է Տէր, զի լուաւ ձայնի աղօթից իմոց. Տէր օգնական իմ եւ պաշտպան իմ:

9. Ի նա յուսացաւ սիրտ իմ. օգնեցաւ եւ զուարճացաւ մարմին իմ. եւ ես կամօք իմովք խոստովան եղէց նմա:

10. Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ. ապաւէն փրկութեան օծելոյ իւրոյ:

11. Փրկեա զժողովուրդս քո. եւ օրհնեա զժառանգութիւն քո. հովուեա եւ բարձրացո զնոսա մինչեւ յաւիտեան:

Սաղմոս Դաւթի Ի:

1. Ա՛ստուծէ՛ Տեառն որդիք Ա-
ստուծոյ. մատուցէք Տն զորդիս խոյոց:

2. Մատուցէք Տն զփառս եւ զպատիւ. մատուցէք Տն զփառս անուան նր. եւ երկիր պագէք Տն ի սրահ սրբութեան նր:

3. Ձայն Տեառն ի վերայ ջրոց եւ Աստուած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վերայ ջրոց բազմաց:

4. Ձայն Տեառն զօրութեանց, եւ ձայն Տեառն մեծվայելչութեանց:

5. Ձայն Տեառն փշրէ զմայրս. եւ մանրեսցէ Տէր զմայրսն Լիբանանու:

6. Մանրեսցէ զնոսա որպէս զմատաղա-
տունկն Լիբանանու. որ սիրելին է որպէս զորդիս միեղջերուի:

7. Ձայն Տեառն հատանէ զբոց ի հրոյ. ձայն Տեառն շարժէ զանապատն. եւ խռովեցուցանէ Տէր զանապատն Կադէս:

8. Ձայն Տեառն հատուսանէ զեղջերուս. եւ յայտնի առնէ զանտառս:

9. Ի տաճարի նորա ամենեքեան ասասցեն զփառս նմա:

10. Տէր զջրհեղեղս զնաուցանէ եւ յաւիտեան:

11. Տէր զօրութիւն ժողովրդեան իւրում տացէ. եւ օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղութիւն:

1. Սաղմոս օրհնութեան նաւակատեաց տաճարին Դաւիթ. Ի՛Ա:

2. ԲԱՐՁՐ առնեմ զքեզ Տէր, զի ընկալար զիս. եւ ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս:

3. Տէր Ած իմ կարդացի առ քեզ՝ եւ բժշկեցեր զիս. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որ իջանեն ի գուբ:

4. Սաղմոս ասացէք Տի՛ն սրբք նորա, խոստովան եղերուք յիշատակի սրբութե՛ն նորա:

5. Սրտմտութիւն է ի բարկութեան նորա. եւ կեանք են ի կամաց նորա:

6. Ընդ երեկոյս հանդիցեն լալք. առաւօտու եղիցի ուրախութիւն:

7. Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան:

8. Տէր ի կամս քո եռուր զերդ լեռն զօրութիւն. դարձուցեր զերեսս քո յինէն, եւ ես եղէ խռովեալ:

9. Նա առ քեզ Տէր կարդացի. առ Ընծ
իմ աղաղակեցի. զինչ օգուտ է քեզ յա-
րենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութի՞ն:
10. Արդեօ՞ հող խոսասվան առնիցի առ
քեզ. կամ պատմեսցէ զճշմարտութիւնս քո:
11. Լուաւ ինձ Տէր եւ ողորմեցաւ. եւ
Տէր եղեւ ինձ օգնական:
12. Դարձոյց զսուգ իմ յուրախու-
թիւն, զերծ յինէն զքուրձ, եւ ինձ զգե-
ցոյց զուրախութիւն:
13. Որպէս սարմոս առասցեն քեզ փառք
իմ. եւ այլ ոչ եւս զղջացայց, Տէր Ընծ
իմ, յաւիտեան խոսասվան եղէց քեզ:

1. Ի հատորած: Սաղմոս Դաւիթ: Օրհնու-
նահատակութեան. Լ:

2. Ի քեզ Տէր յուսացայ. ոչ ամաչեցից
յաւիտեան. յարդարութեան քում փրկե-
կեա զիս եւ ապրեցո զիս:
3. Խոնարհեցո առ իս զունկն քո, վաղ-
վաղեա կեցուցանել զիս:
4. Լեր իմ Ստուած պաշտպան եւ
տուն ապաւինի՝ ապրեցուցանել զիս. զի
հզօրիչ իմ եւ ապաւէն իմ դու ես:
5. Այո՛ անուան քոյ Տէր առաջնորդես-

ցես ինձ եւ անուացես զիս. եւ հանցես զիս յորոգայթէ յայսմանէ՝ որ թաղուցաւ ինձ:

6. Դու ես պաշտպան իմ Տէր. եւ ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ:

7. Փրկեցեր զիս Տէր Աստուած ճշմարտութեամբ քով.ատեցեր զայնոսիկ որք պահեն զերկիւղ ի սնոտիս:

8. Եւ ի Տէր յուսացայ. ցնծացայց եւ ուրախ եղէց ի փրկութեան քումմ:

9. Զի հայեցար ի խոնարհութիւն իմ եւ փրկեցեր ի վշտաց զանձն իմ. ոչ մատնեցեր զիս ի ձեռս նեղչաց իմոց եւ կացուցեր յանդորրու զոտս իմ:

10. Ողորմեաց ինձ Տէր, զի նեղեալ եմ ես. խռովեցաւ ի սրտմտութենէ աչն իմ, անձն իմ եւ փոր իմ:

11. Պակասեցին ի ցաւոց կեանք իմ, եւ ամք իմ յոգւոց ելանելոյ:

12. Ընդքաւացաւ ի տկարութենէ զօրութիւն իմ. եւ ոսկերք իմ խռովեցան:

13. Ուրանզամենայն թշնամիս իմ եղէ ես նախատ դրացեաց իմոց յոյժ. ահ եւ երկիւղ ծանօթից իմոց:

14. Ընդ ենթեքեան որք տեսանէին զիս, արտաքս փախչէին ինէն:

15. Մոռացեալ եղէ ես՝ ոյք մեռեալ ի սրտէ. եւ եղէ ես ոյք զանօթ կորուսեալ:

16. Ոչ լուայ ես զբամբասանս բազմաց, որք շուրջ էին զինեւ. ի ժողովել նոցա ի միասին, առնուլ զանձն իմ խորհեցան. այլ ես ի քեզ Տէր յուսացայ:
17. Ասացի դու ես Աստուած իմ. եւ ի ձեռս քո է ժառանգութիւն իմ:
18. Փրկեա զիս ի ձեռաց թշնամեաց իմոց. եւ ի հալածչաց իմոց:
19. Երեսեցո զերեսս քո ի ծառայս քո. ապրեցո զիս Տէր ըստ ողորմութեան քումմ. Տէր մի յամօթ եղէց՝ զի կարդացի առ քեզ:
20. Ամաչեսցեն ամբարիշտք եւ իջցեն ի դժոխս. համր եղիցին շրթունք նենգաւորք՝ որք խօսին զարդարոյ զանիրաւութիւն, յամբարտաւանել եւ յանդոգնել ի նոսա:
21. Որ զի բազում է ողորմութի՛ քաղցրութիւն քո Տէր. զոր պահեցեր երկիւղածաց քոց:
22. Արարեր դու այնոցիկ՝ որք յուսացեալ են ի քեզ, առաջի որդւոց մարդկան:
23. Ամրացուսցես զնոսա ի ծածկոյթ երեսաց քոց, ի խռովութենէ մարդկան:
24. Ծածկեսցես զնոսա ի խորանի քում, ի հակառակութենէ լեզուաց:
25. Օրհնեալ է Տէր՝ զի սքանչելիս արար զողորմութիւն իւր ի քաղաք ամուր:
26. Ես ասացի ի զարմանալ իմում թէ ընկեցեալ ուրեմն յերեսաց աչաց քոց:

27. Վ՚ան այտրիկ լուալ ձայնի աղօթից իմոց. յաղաղակել իմում առ քեզ:

28. Ախեցէք զՏէր ամ սէք նէր, զի զաուրթի խնդրէցէ. և հաւուցանէ այնոցիկ՝ որք առաւել առնեն զամբարտաւանութի:

29. Ռաջաւորեցարուք և զօրացին սիրտք ձեր. ամենեքեան՝ որք յուսացեալ էք ի Տէր:

Խոսափոխեան Սաղմոս Դաւթի. ԼՀ:

1. Ձրանն ամ թողութիւն եղեւ վերաց. և ծածկեցան ամ յանցանք նէր:

2. Ձրանի առն՝ որում ոչ համարի Տէր զվեղս նէր. և ոչ զոյ նենգութի ի բերան նէր:

3. Ռուեցի ես և մաշեցան ամենայն ոսկերք իմ. առ աղաղակել ինձ առ Տէր զօրհանաւագ՝ ի առէ և ի գիշերի:

4. Ծանրեաց ձեռն քո ի վերայ իմ. և դարձայ ի թշուառութիւն, զի հարան ինձ փուշք:

5. Ցվեղս իմ ցուցից քեզ. և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցի ի քէն:

6. Ասացի, թէ պատմեցից ինձէն վեղս իմ. և դու թողեաս զամենայն անպարտութիւնս վեղաց իմոց:

7. Վ՚ան այտրիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք, ի ժամ ընդունելի:

8. Բայց վիայն ի ջուրցն հեղեղաց բազմաց, որ առ նոսա ինչ ոչ մերձեսցին:
9. Դու ես ապաւէն իմ ի նեղութենէ յայսմանէ, որ շուրջ եղեւ զինեւ:
10. Ցնծութիւն իմ, փրկեա զիս յայնցանէ՝ որ պաշարեցին զիս:
11. Խնամասուն ապարիչ զքեզ, եւ խեղճամուտ ի ձանապարհի, յոր եւ գնասցես. եւ հաստատեցից ի վերայ քո զաչս իմ:
12. Մի լինիք որպէս զձիս եւ զջորիս, զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. ի սանձս եւ ի դանդանաւանդս ծնկեացես զկզակս նոցա, որ առ քեզ ինչ ոչ մերձենան:
13. Բազում տանջանք են մեղաւորաց. բայց որք յուսան ի Տէր, ողորմութիւն Տեառն շուրջ եղիցի զնոքօք:
14. Ուրախ եղերուք եւ ցնծայէք արդարք ի Տէր. պարծեցարուք ամենեքեան, որք ուղիղ էք սրտիւք:

Անվերնագիր ի հեբերայեցւոց. ԼՂ:

1. Ցնծացէք արդարք ի Տէր. ուղղոց վայելէ օրհնութիւն. խոստովան եղերուք Տեառն օրհնութեամբ, տաւնադրեա առմոսապանաւ սաղմոս առասցէք նմա:

2. Որ՝ նեցէք զՏէր յորհնութիւն նոր՝ զի բարի է. սաղմոս ասացէք նմա օրհնութիւն:

3. Ուղիղ են պատգամք Տեառն եւ ամենայն գործք նորա հաւատով են. եւ սիրէ ողորմութիւն եւ զկրաւնս Տէր:

4. Ողորմութիւն Տեն լի եղեւ երկիր եւ բանիւ Տեն երկինք հաստատեցան, եւ հոգւով բերանոյ նորա՝ ամ զօրութիւնք նոցա:

5. Ժողովեաց որպէս ի մխիս զջուրս ծովու. եւ դնէ ի խորս զգանձս իւր:

6. Երկիւղ է Տեառնէ ամ երկիր. եւ ի նմանէ զողայցին ամ բնակիչք աշխարհի:

7. Զի նա ասաց՝ եւ եղեն. ինքն հրամայեաց՝ եւ հաստատեցան:

8. Տէր յուզէ զխորհուրդս հեթանոսաց. անարգէ Տէր զխորհուրդս ժողովրդոց. եւ արհամարհէ Տէր զխորհուրդս իշխանաց:

9. Խորհուրդ Տեառն յաւիտեան մնայ. խորհուրդ սրտի նորա յազգէ մինչեւ յազգ:

10. Երանի ազգի՝ որոյ Տէր Աստուած օգնական է նմա. ժողովուրդ՝ զոր ընտրեաց ի ժառանգութիւն իւր:

11. Յերկնից նայեցաւ Տէր յամենայն որդիս մարդկան. ի պատրաստ բնակութենէ իւրմէ հայեցաւ յամ բնակիչս աշխարհի:

12. Ո՞ ստեղծ առանձին զսիրտս նոցա, ի միտ առնու զամենայն գործս նոցա:

13. Ոչ թէ ի բազում զօրս իւր ապրեցցէ թագաւոր, եւ ոչ հսկայ ի բազում զօրութեան իւրում:

14. Սուտ է ձի ի փրկութեան իւրում. ի բազում զօրութեան իւրում ոչ ապրեցուցանէ զՀեծեալն:

15. Աչք Տեառն ի վերայ երկիւղածից իւրոց. եւ ոչք յուսան յողորմութիւնն նորա:

16. Փրկել ի մահուանէ զանձինս նոցա. կերակրել զնոսա ի սովու:

17. Ընձինք մեր համբերեցաք Տեառն. զի օգնական եւ պաշտպան մեր է:

18. Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր, եւ յանուն սուրբ նորա յուսացաք:

19. Եղիցի ողորմութիւն քո Տէր ի վերայ մեր որպէս յուսացաք ի քեզ:

1. Ի Քաղաքէն զի այլափոխեաց զբնութիւն իւր առաջի Աբիմելեքայ. եւ ապա արձակեաց զնա եւ գնաց: Սաղմոս Դաւիթ. Լ_Գ:

2. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

3. Ի Տէր պարծեսցի անձն իմ. լուիցեն հեզք, եւ ուրախ եղիցին:

4. Մեծ արարէք զՏէր ինձ. եւ բարձր արասցուք զանուն նորա ի միասին:

5. Խնդրեցի ի Տեառնէ, եւ լուաւ ինձ. եւ յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս:

6. Մատիք առ Տէր եւ առէք լոյս. եւ երեսք ձեր մի ամաչեսցեն:

7. Այս աղքատ կարդաց առ Տէր, եւ Տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա:

8. Բանակ հրեշտակաց Տեառն շուրջ է զերկիւղածսն իւրովք եւ պահէ զնոսա:

9. Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր. երանեալ է այր՝ որ յուսայ ի նա:

10. Երկերուք ի Տեառնէ սո՛ւրք նորա. զի ոչինչ է պակասութի երկիւղածաց նորա:

11. Մեծամեծք աղքատացան եւ քաղցեան. բայց որք խնդրեն զՏէր մի պակասեսցի ի նոցանէ ամենայն բարութիւն:

12. Եկայք որդեակք իմ, եւ լուարուք ինձ. եւ զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ:

13. Ո՞վ է մարդ՝ որ կամի կեանս. սիրէ զաւուրս իւր տեսանել ի բարութեան:

14. Լեզու զկեղծ քո ի չարութենէ. եւ շրթունք քո մի խօսեսցին զնենգութիւն:

15. Խոտորեա ի չարէ եւ արա զբարի. խնդրեա զխաղաղութիւն, եւ երթ զհետ նորա:

16. Աչք Տեառն ի վերայ արդարոց. եւ ականջք նորա յաղօթս նոցա:

17. Երեք Տեառն ի վերայ հարատարծայ. սատակել յերկրէ զհիշատակն նոցա:
18. Կարդացին արդարքն առ Տէր, եւ Տէր լուաւ նոցա. եւ յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:
19. Մերձ է Տէր առ այնոսիկ՝ որ մաշեալ են սրտիւք. եւ զխոնարհս հոգւով կեցուցանէ:
20. Բազում նեղութիւնք են արդարոյ. յամէ փրկէ զնոսա Տէր. եւ պահէ զամ ոսկերս նոյ. եւ մի ի նոցանէ մի փշրեսցի:
21. Մահ մեղաւորն չար է. բայց որ առեալ զարդարն, զղջասցի:
22. Փրկէ Տէր զանձինս ծառայից իւրոց. մի զղջասցին ամենեքեան՝ որք յուսացեալ են ի Տէր:

Սաղմոս Դաւթի. Ի՚:

1. Դատեա Տէր զայնոսիկ՝ որք դատին զիս. մարտիր ընդ այնոսիկ՝ որ մարտնչին ընդ իս:
2. Առ զզէն եւ զասպար քո, եւ արի յօգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց. ասել զնոսա, եւ ասա զուցանձն իմ, թէ փրկութիւն քո ես եմ:

3. Ամաչեսցեն եւ յամօթ լինիցին՝ որք խնդրեն զանձն իմ. դարձցին յետս եւ ամաչեսցեն՝ որք խորհէին ինձ չար:

4. Անցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ. եւ հրեշտակ Տ՚ն նեղեսցէ զնա:

5. Անցին ճանապարհք նոցա ի խաւար եւ ի դայթակղութիւն. եւ հրեշտակ Ա՚ստուծոյ հալածեսցէ զնոսա:

6. Ի նանիր թաղուցին ինձ որոգայթ յապականութեան իւրեանց. եւ ի նանիր նախատեցին զանձն իմ:

7. Հասցէ ի վերայ նոցա որոգայթ, զոր ոչ գիտացին. եւ որս զոր թաղուցին, առցէ զոտս նոցա. եւ յորոգայթ ի նոյն անկցին:

8. Ուրախ անձն իմ ցնծասցէ ի Տէր. ուրախ եղիցի ի փրկութեան նորա. եւ ամենայն ոսկերք իմ ասասցեն, Տէր ո՞ նմանէ քեզ:

9. Ո՞վ փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրին. զաղքատն եւ զանանկ յայնցանէ՝ որ յափշտակեն զնա:

10. Յարեան ի վերայ իմ վկայք չարեաց. զոր ինչ ոչ գիտէի հարցանէին ցիս:

11. Հատուցին ինձ չար՝ փոխանակ ընդ բարւոյ. անժառանգել զանձն իմ խորհեցան յորդւոյ ի մարդկանէ:

12. Նա ի նեղել նոցա քուրձ զգենուի.

խոնարհ առնէի պահօք զանձն իմ, եւ աղօթք իմ ի ծոց իմ դարձցին:

13. Որպէս զեղբայր եւ զընկեր՝ այնպէս հաճոյ լինէի. որպէս սգաւոր եւ տրտում, այնպէս խոնարհ առնէի:

14. Ի վերայ իմ ուրախ եղեն եւ ժողովեցան. ժողովեցան ինս տանջանք, եւ ես ոչ ծանեայ. յրուեցան, եւ ոչ զղջացան:

15. Փորձեցին զիս եւ արհամարհեցին արհամարհանօք. կրճտեցին ի վերայ իմ զատամունս իւրեանց. Տէր ե՞րբ տեսցես:

16. Ի բաց արա զանձն իմ ի խորամանկութենէ նոցա. եւ յառիւծուց զմիամօրութիւն իմ:

17. Խոստովան եղէց քեզ Տէր՝ յեկեղեցի մեծի. եւ ի ժողովս բազմաց օրհնեցից զքեզ:

18. Մի ուրախ եղիցին ինձ թշնամիք իմ՝ ոք առանց զիս ի տարտարոսս. ակնարկի առնէին զիս աչօք իւրեանց:

19. Ընդ իս զխաղաղութիւն խօսէին. եւ ինքեանք բարկութիւք զնեցդութիւն խորհէին:

20. Բացին ի վէր իմ զբերան իւրեանց եւ ասացին. այո այո տեսին աչք մեր:

21. Տեսեր Տէր՝ եւ մի լռեր. Տէր մի ի բացեայ առնիր լինէին:

22. Զարթիր եւ հայեաց Տէր՝ յիրա-

ունն իմ. Ընտուած իմ եւ տէր իմ ի դատաստանն իմ. եւ իրաւ արա ինձ ըստ արդարութեան քում տէր Ընտուած իմ:

23. *Մի ուրախ եղիցեն յիս թշնամիք իմ. եւ մի ասասցեն ի սիրտս իւրեանց. թէ վաշ վաշ անձանց մերոց, զի ընկլուզաք զնա:*

24. *Ամաչեսցեն եւ յամօթ լիցին՝ որք խնդային ընդ չար իմ. զգեցցին զամօթ եւ զանարգանս՝ որք մեծաբանէին ի վերայ իմ:*

25. *Ցնծասցեն եւ ուրախ լիցին ի քեզ ամենեքեան, որք կամին ընդ արդարութիւն իմ:*

26. *Ընտցեն յամենայն ժամ մեծ է Ընտուած. եւ որ կամին զխաղաղութիւն ծառայի քոյ:*

27. *Լեզու իմ խօսեսցի զարդարութիւնս քո. զօրհնութիւնս զգուլութիւնս քո:*

Ի

1. *Ընդ անօրէնն ի մեղանչել ընդ միտս, թէ չիք երկիւղ Աստուծոյ աչաց նորա:*

2. *Նենգեաց առաջի նորա. գտանել զանօրէնութիւն, եւ ատել զնա:*

3. *Բանք բերանոյ նորա անօրէնութիւն եւ նենգութիւն են:*

4. Ա՛չ կամեցաւնա իմանալ զբարի. զանօրէնութիւն խորհեցաւ յանկողնի իւրում:
5. Նկաց նա յամենայն ճանապարհի, որ ոչ է բարի. եւ ի չարէ նա ոչ ձանձրացաւ:
6. Տէր յերկինս է ողորմութիւն քո. ճշմարտութիւն քո մինչեւ յամպս:
7. Արդարութիւն քո որպէս լերինք Աստուած. իրաւունք քո որպէս վիհս բազում. զմարդիկ եւ զանասուն կեցուցանես դու Տէր:
8. Որպէս զի բազում արարեր զողորմութիւն քո Աստուած. այլ որդիք մարդկան ի հովանի թեւուց քոց յուսացին:
9. Արբեսցին նոքա ի պարարտութենէ տան քոյ. եւ զուարճս փափկութեան քո տացես ըմպել նոցա:
10. Ի քէն է Տէր աղբիւր կենաց, եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս:
11. Ծաւալեա զողորմութիւնս քո, որ ճանաչեն զքեզ. զարդարութիւնս քո, որ ուղիղ են սրտիւք:
12. Մի եկեսցէ ի վերայ մեր ոտն ամբարտաւանից. եւ ձեռք մեղաւորաց մի դողացուսցեն զմեզ:
13. Անդ անկցին ամենեքեան գործք դործեն զանօրէնութիւն. մերժեսցին եւ այլ մի կարասցեն հաստատել:

Օրհնութիւն ոմանք Մովսէսի ասացեալս ամբողջութիւն: Եբէրէտ օբինաց. Լ՚:

1. ՚Կանցեցարուք երկինք եւ խօսեցայց. եւ լսէցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ:
2. Ընդունելի լիցի որպէս անձրեւ բարբառ իմ. եւ իջցէ ոսկ ցօղ պատգամք իմ:
3. Որպէս զանձրեւ ի վերայ սիզոյ, եւ որպէս ասրտի ի վերայ խոտոյ. զի զանուն Տեառն կարդացուք, եւ տուք զօրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:
4. Աստուած որոյ ճշմարտութեամբ են գործք նորա, եւ ամենայն ճանապարհք նորա իրաւամբք են:
5. Ընծ հաւատարիմ է, եւ ոչ զոյ ի նմա անիրաւութիւն. արդար եւ ճշմարիտ է Տէր:
6. Մեղան, եւ ոչ նմա՝ որդիքն արատոյ. ծնունդք խոտորեալք եւ թիւրեալք:
7. Մի՞ այդ այն է՝ զոր Տեառն հատուցանէիք դուք՝ ժողովուրդք յիմարք եւ ոչ իմաստունք:
8. Մի՞ ասա ինքն է հայր քո՝ որ ստացաւ զքեզ, արար զքեզ, եւ ստեղծ զքեզ:
9. Յուշ լիցին քեզ աւուրքն յաւիտենից. իմացարուք զամն յազգաց մինչեւ յազգս:

10. Հայցէր դու զհարս քո, եւ պատմեսցեն քեզ. ցծերս քո՝ եւասացեն քեզ:
11. Ի ժամանակի, յորժամ բաժանեաց բարձրեալն զազգս ամենայն եւ որպէս սփռեաց նա զորդիսն Ադամայ:
12. Կացոյց զսահմանս հեթանոսաց, ըստ թուոյ հրեշտակաց Աստուծոյ:
13. Եղեւ բաժին Տեառն ժողովուրդ իւր Յակոբ. եւ վիճակ ժառանգութեան իւրոյ Իսրայէլ:
14. Գտաւական եղեւ նմա յանապատի. ի ծարաւ տօթոյ, յանջրդուպ պաշտպանեաց զնա:
15. Խրատեաց զնա, եւ պահեաց որպէս զբիբ ականն. որպէս զարծուի ի թեւս իւր ընկալաւ զնա. եւ որպէս ի վերայ ձագուց իւրոց զմացաւ:
16. Տարածեաց զթեւս իւր, եւ ընկալաւ զնա. եւ բարձեալ բերէր զնա ի վերայ միջնոցաց իւրոց:
17. Տէր միայն առաջի զնոսա. եւ ոչ օդայր ընդ նոսա Աստուած օտար:
18. Նաւ եհան զնոսա ի զօրութիւնս երկրի. եւ կերակրեաց զնոսա արդեամբք անդաստանաց:
19. Վիեցայց նոցա մեղր ի վեմէ. եւ իւղ յապառաժ վեմէ:

20. Ել կովուց եւ կաթն մաքեաց ձարպով հանդերձ խոյոց, որթուց, ցուց եւ նոխազաց:

21. Ի պատարաւթեան երիկամանց ցորենոյ. եւ զարիւն խաղողոյ էալը զգինի:

22. Ուերը Յակոբ, եւ յապեցաւ. եւ անդուշեաց զսիրելին:

23. Վիրացաւ, աուազրացաւ, լայնացաւ, եթող զՏէր Ասուած զարարիչ իւր. եւ յետս եկաց Ասուծոյ փրկչէ իւրմէ:

24. Բարկացուցին զնա օտարոտիք, եւ կռովք իւրեանց դառնացուցին զնա:

25. Ի հեղին դիւաց. եւ ոչ Այ. զհին զորս ոչ գիտէին. նորք եւ առժամայնք. զորս բնաւ ոչ ճանաչէին հարք նոցա:

26. Ի՞ոդէն զՏէր որ ծնաւ զնոսա, մոռացան զԱսուած որ կերակրեաց զնոսա:

27. Տեսեալ Տէր եւ նախանձեցաւ. եւ սրտմտեցաւ ի վերայ ուսերից եւ դստերաց նոցա, եւ ասէ:

28. Դարձուցից զերեսս իմ ի նոցանէ. եւ ցուցից նոցա զինչ լինելոց իցէ յաւրայ ժամանակի:

29. Ի՞ ազգ մի թիւր են նոքա եւ որդիք անհաւանք. նոքա նախանձեցուցին զիս ի չաստուածս իւրեանց, եւ դառնացուցին զիս ի կուռս իւրեանց:

30. Եւ ես նախանձեցուցից զնոսա յազգ անպիտան. եւ անմիտ ազգաւ զկծեցուցից զնոսա:

Տուք փառս Ա՛յ. տուք օրհնութի՛ւն մարդասիրին, թագաւորին յաւիտենից, որ փրկէ զծառայս իւր եւ կեցուցանէ: Արարդասէր Տէր, վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ եւհուսի եւ վասն խաչի քո պատուական՝ նի Տէր ընկալ զաղաչանս մեր, եւ կեցո զմեզ:

Քաղցր եղիցի պատճառն եւ Տէր պատճառն:

Վա՛ան ի գիշերի եւ ի տուընջեան, եւ յամենայն ժամու խօսել մեզ զբան Տեառն, զՏէր աղաչեացուք:

Վա՛ան չանկանելոյ մեզ ի փորձութիւն որում՝ ոչ կարեմք հանդուրժել՝ զՏէր:

Վա՛ան ամբիծ եւ անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ աթոռին Քրիստոսի՝ զՏէր աղ:

Վա՛ան առաջնորդելոյ մեզ ի նաւահանգիստն կենաց անվախճանից՝ զՏէր:

Վա՛ան արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն եւ երկնից արքայութեան՝ զՏէր:

Վա՛ան հոգւոցն: Եւ եւս եւ վասն միաբան: Ողորմեաց:

Աղօթք։

Ի դիշերի եւ ի տուընջեան եւ յամ ժամու զքեզ աղաչեմք, եւ ի քէն խընդրեմք մարդասէր Տէր։ Լուր մեզ Ընտուած վրկիչ մեր. խոնարհեցի ունկն քո ի նանդրուածս մեր. զի մի ունայն լցցին վաստակք ծառայից քոց։ Ընդ համարեա զաշխատութիւնս մեր ի գործ արդարութեան եւ ի պատուղ աստուածպաշտութեան։ Ընկալ Տէր զաղօթս եւ զերկրպադութիւնս մեր. եւ հաստ մեզ զողորմութիւն քո առատապէս։ Ծածկեա զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ քո։ Ծօ՛ բացո զմեզ Տէր՝ զօրութիւք սուրբ Հոգւոյդ. պահեա զմեզ ոյժ բիբ ականի։ Եւ արա առ մեզ նշան բարի. ի գովեաստ եւ ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ։ Ծո՛վ ի քո փառս կատարի ամ արարածոց միաբնակ ջենաւոր փառաբանութիւն ի բարձունս՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից. Ամէն։

Խոստովանութեան ածենեցուած։

Հովիւ քաջ, հովիւ բարի եւ յաւիտենական, նայեաց եւ այց զայս բանաւոր հօտի քո՝ զոր ժողովեցեր առ քեզ զմեծ

թեամբ քով : Օ՛ի քո առաջի կամք ՏԷր, եւ առ ի քէն ողորմութեանդ եւ զթութեանդ ակն ունիմք : Օ՛ամենեսեան օրհնեա, զամենեսեան խնամածոյդ, զամենեսեան լուսաւորեա, եւ ամենեցուն պարգեւեա զերկնից ալքայութիւնդ : Վ՛ասն զի դու ես աէր կենաց, եւ Ը՛ստուածծ ողորմութեանց. եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ը՛մէն :

Ի գիշերի եւ ի տուընջեան եւ յամ ժամու անդադար փառաւորեմք զ՛այր եւ զՎրդի եւ զսուրբ Հ՛ոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ը՛մէն :

Սաղմոս Դաւթի. Լ՚Օ՚:

1. Ա՛ւ նախանձիր ընդ չարս. մի՛ ընդ այնոսիկ՝ որ գործեն զանօրէնութիւն:
2. Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին. որպէս դալարի խոտոյ վաղվաղակի անցցեն:
3. Յոյս ի Տէր եւ արա զբարութիւն. բնակեա յերկրի, եւ հովուեսցես ի հարստութեան նորա:
4. Յո՛յս ի Տէր, եւ նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քոյ. յայտնեա առաջի Տեառն զճանապարհս քոյ. եւ յոյս ի նա:
5. Նա արասցէ եւ հանցէ որպէս լոյս զարդարութիւն քո, եւ զիրաւունս քո որպէս զկիսատարակ:
6. Ընդունի՛ր քեր Տեառն եւ ծառայեա նմա. եւ մի նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց անառակեալ հոգին ճանապարհք իւրեանց. ընդ մարդոյ՝ որ գործէ զանօրէնութիւն:
7. Դադար ի բարկութենէ եւ հանդիր ի սրտմտութենէ. եւ մի նախանձիր ընդ չարս:
8. Զի՛ւղք վաղվաղակի աւարակեսցին. բայց որք հաստիրեն Տեառն՝ նոքա ժառանգեսցեն զերկիր:

Quliopkünsfd pnün pvl' ku pläkli qpmkvl':

ugw. ⁂:

9. Փոքր մի՝ եւ այլ ոչ եւս լցէ ամբարիշն. խնդրեացես զտեղի նորա, եւ ոչ գտցես:

10. Եւ որ հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն զերկիր. եւ փափկացին ի բազում խաղաղութեան իւրեանց:

11. Սպասէ մեղաւոր արդարոյ եւ կըրճտէ ի վերայ նորա զատամունս իւր. այլ Տէր ծիծաղեսցի զնովաւ:

12. Սրանզի յառաջագոյն տեսանէ, զի հասեալ է օր նորա:

13. Սուր հանին մեղաւորք, եւ լարեցին զաղեղունս իւրեանց, հարկանել զաղքատն եւ զտնանկն. սպանանել զայն՝ որ խոնարհ է սրտիւ:

14. Օ՛ի սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա, եւ աղեղունք նոցա վիշտացին:

15. Լաւ է սակաւ ինչ արդարոյ, քան զբազում մեծութիւն մեղաւորաց. եւ բազուկք ամբարտաւանից խորտակեսցին:

16. Հաստատէ Տէր զարդարն եւ ճանաչէ զաւուրս ամբծից. ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի:

17. Մի ամաչեսցեն նք ի ժամանակս չարութեան. այլ յաւուրս սովու յագեսցին:

18. Եհա մեղաւորք կորիցեն. այլ թշնամիք Տեառն ի փառաւորել եւ ի բար-

ձրանալն իբրեւ պակասեցին՝ ոչ ծուխ ել պակասէ:

19. Փոխ առնու մեղաւորն՝ եւ ոչ հաստուցանէ. այլ որ արդարն է՝ ողորմի եւ տայ:

20. Որք օրհնեն զՏէր՝ ժառանգեսցեն զերկիր. եւ որք անիծանեն, սատակեսցին իսպառ:

21. Ի Տեառնէ ուղղին գնացք առն. եւ զճանապարհս նորա նա կամի յոյժ:

22. Թէպէտ եւ գայթակղեսցի, նա ի կործանեսցի, զի Տէր ձեռնկալու է նորա:

23. Պատուական էր ես եւ ծերացայ. եւ ոչ տեսի զարդար արհամարհեալ եւ ոչ զզաւակ նորա թէ մուրանայ հաց:

24. Ողորմանալով ողորմի եւ տայ փոխ. զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեան:

25. Խոտորեա ի չարէ եւ արա զբարի. բնակեսցես յաւիտեան յաւիտենից ի նմա:

26. Տէր սիրէ զիրաւունս եւ ոչ ընկալ վայր հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա:

27. Ընծրէնք հալածեսցին ի միասին. եւ զաւակ ամբարշտաց սատակեսցի:

28. Եւ արդարք ժառանգեսցեն զերկիր. եւ բնակեսցեն յաւիտեան յաւիտենից ի նմա:

29. Ներան արդարոյ խորհի զնմանութիւն. եւ լեզու նորա խօսեցի զկրաւունս:
30. Օրէնք Աւյ իւրոյ են ի սրտի իւրում. եւ ոչ դայթակղեսցին գնացք նորա:
31. Ձայն մեղաւոր ընդ արդար, եւ խնդրէ սպանանել զնա. այլ Տէր ոչ թողու զնա ի ձեռս նորա. եւ ոչ դատապարտէ յորժամ դատի զնա:
32. Համբեր Տեառն եւ պահեա զճանապարհս նորա. եւ բարձր արասցէ զքեզ ի ժառանգել զերկիր, եւ զաւրակումն մեղաւորացդ տեսցես:
33. Տեսի զամբարիշան վերացեալ, բարձրացեալ որպէս զմայրսն Լիբանանու:
34. Ընդի՝ եւ սկա ոչ էր. խնդրեցի՝ եւ ոչ գտաւ տեղի նորա:
35. պահեա զանբծութիւն, եւ տես զուղղութիւն. զի դոն ժնացուածք առն խաղաղարարի:
36. Ընդէնք հալածեցին ի միասին. եւ զաւակ ամբարշտաց կորիցէ:
37. Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է. վերակացու է նոցա ի ժամանակի նեղութեան:
38. Օգնեսցէ նոցա Տէր եւ փրկեսցէ զնոսա. ապրեցուսցէ ի մեղաւորաց եւ կեցուսցէ զնոսա, զի յուսացան ի նա:

1. Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմանես զիս. եւ մի բարկութեամբ քո խրատես զիս:
2. Ող ինեայք քո հարան յիս. եւ յիս հաստատեցար ձեռն քո:
3. Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ, յերեսաց բարկութեան քոյ:
4. Ոչ ի խաղաղութիւն ոսկերաց իմոց, յերեսաց մեղաց իմոց:
5. Ընդէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխս իմ. որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ:
6. Դեհեցան եւ փտեցան վէրք իմ, յերեսաց անզգամութեան իմոյ:
7. Տառապեցայ եւ խոնարհ եղէ յոյժ. զօրհանապազ սրտում գնայի, զի անձն իմ լի եղեւ ջարշապանօք. եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:
8. Ջարշապեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ. մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ:
9. Տէր առաջի քո են ամ ցանկութիւնք իմ. եւ հեծութիւն իմ ի քէն ոչ ծածկեցաւ:
10. Սիրտ իմ խռովեցաւ յիս, եւ եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց, եւ այս ոչ եղեւ ընդ իս:

11. Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան եւ կացին. եւ մերձաւորք իմ հեռի եղեն յինէն:

12. Բռնադատէին զիս եւ խնդրէին զանձն իմ որք խորհէին չար ի վերայ իմ. խօսեցան զանօրէնութիւն եւ զնենգութիւն զօրհանապազ խորհեցան:

13. Եւ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ. որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր:

14. Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ. եւ ոչ դոն խօսք ի բերան նորա:

15. Զի ի քեզ Տէր յուսացայ եւ դու լուիցես ինձ Տէր Աստուած իմ:

16. Զասացի թէ մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. ի սասանել ոտից իմոց ի վերայ իմ մեծամեծս խօսեցան:

17. Զի ի տանջանս պատրաստ եմ. եւ ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

18. Զանօրէնութիւնս իմ պատմեցից. եւ հոգայցեմ վասն մեղաց իմոց:

19. Իսկ արք՝ թշնամիք իմ կենդանի են, զօրացեալ են քան զիս. եւ բազում էին որք ատէին զիս ի տարապարտուց:

20. Որք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան:

21. Մի թողուր զիս Տէր Աստուած

իմ. եւ մի ի բացեայ առնիր յինէն. հայեաց յօգնել ինձ Տէր վրկութեան իմոյ:

1. Ի հպարտս խրճիռատոյ: Սաղմոս Դաւիթ. ՀՂ:

2. Ընծայ թէ պահեցից զձանապարհս իմ. զի մի մեղայց լեզուաւ իմով:

3. Եդի պահապան բերանոյ իմոյ ի հաւատալ մեղաւորին առաջի իմ:

4. Մի՛ եղիր եւ խոնարհեցայ. ընդի ի բարութէ. եւ ցաւք իմ նորոգեցան յիս:

5. Ջնեաւ սիրտ իմ ի փորի իմում. եւ ի խորհուրդս իմ վաւեցաւ հուր:

6. Խօսեցայ լեզուաւ իմով եւ ասացի. ցոյց ինձ Տէր վախճան իմ, եւ զթիւ աւուրց իմոց, քանիօն է՝ զի գիտացից թէ ո՛րչափ ինչ պակասեալ է յինէն:

7. Ահա չափով եղեր զաւուրս իմ. եւ կար զօրութիւն իմոյ ոչինչ է առաջի իմ. սակայն ամենեւին ընդունայն է ամմարդ մեղք:

8. Ապաքէն որպէս ի պատկերի շրջի մարդ. սակայն ի զուր խռովի, զանձէ՝ եւ ոչ գիտէ ո՛ւմ ժողովէ:

9. Ակ արդ ով է համբերութիւն իմ, թէ ոչ դու Տէր. կամ կար զօրութեան իմոյ՝ թէ ոչ ի քէն է:

10. Յամ անօրէնութիւն իմոյ փրկեցեր զիս. նախատինս անզգամոյ արարեր զիս:

11. Լուռ եղէ, եւ ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր:
12. Ի բաց ա՛րա յինէն զտանջանս իմ. զի ի զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ:
13. Կշտամբութեամբ վն մեղաց խրատ ես եցեր զմարդ. մաշեցեր ոպ սարդի ոստայն զանձն նո՛ւ. սակայն ընդունայն է ամ մարդ:
14. Լուր Տէր աղօթից իմոց. ունկնդիր խնդրուածոց իմոց. արտասուաց իմոց մի լռեր:
15. Պանդուխտ եմ ես առաջի քո. նըժդեհ եւ անցաւոր, որպէս ամ հարք իմ:
16. Ծո՛յլ ա՛րա ինձ զի հանգեայց. մինչ չես երթեալ յերեմ. ոստի ոչ գտանիցիմ:

1. Ի խոտորած Սոլմոս դա՛ռն. Լ՚Ծ:

2. ՚ԱՄԲԵՐԵԼՈՎ համբերի Տեառն, նայեցաւ առ իս եւ լուաւ աղօթից իմոց:
3. Եհան զիս ի գրոյ տառապանաց, ի կաւոյ եւ ի տղմոյ:
4. Հաստատեաց ի վէրայ վէմի զոտս իմ եւ ուղղեաց զգնացս իմ:
5. Ընկ ի բերան իմ օրհնութիւն նո՛ր. օրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:
6. Տեսցեն բազումք եւ երկիցեն, եւ յուսացին ի Տէր. երանեալ է այր՝ որոյ անուն Տեառն յոյս է նորա:

7. Ոչ հայեցաւ նա ի նանրութիւն. եւ ոչ ի մոլութիւն սուտ:

8. Խաղում արարեր դու Տէր Աստուած իմ զպանչելիս. խորհրդոյ քոյ ոչ ոք է որ նմանէ քեզ:

9. Պատմեցի եւ խօսեցայ եւ բազում եղեն քան զթիւ, ընդ զոհս եւ ընդ պատարագս ոչ հաճեցար. մարմին հատուցեր ինձ. զողջակէզս եւ զվասն մեղացն ոչ խնդրեցեր:

10. Յայնժամ ասացի թէ ահաւասիկ գամ ես. ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ:

11. Առնել զկամն քո Աստուած իմ կամեցայ եւ զօրէնս քո ի մէջ որովայնի իմոյ:

12. Եւ ետարանեցից զարդարութիւնս քո յեկեղեցիս մեծս. ահա զշրթունս իմ ոչ արգելից ի քէն:

13. Տէր դու գիտացեր զի զարդարութիւն քո ոչ ծածկեցի ի սրտի իմում. զճշմարտութիւն քո եւ զփրկութիւն քո:

14. Ասացի եւ ոչ թագուցի զողորմութիւնս քո. եւ զճշմարտութիւնս քո ի ժողովրդենէ մեծէ:

15. Դու Տէր՝ մի հեռի առներ զգթութիւնս քո ինձանէ. զի ողորմութի եւ ճշմարտութի քո յաւէտ ընկալցին զիս:

16. Շուրջ եղեն զինեւ չարք՝ որոյ ոչ

զոյր Թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, եւ ես ոչ կարացի տեսանել:

17. Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ. եւ սիրտ իմ եթող զիս:

18. Կամեաց Տէր փրկել զիս. եւ Տէր յօգնել ինձ նայեաց:

19. Ամաչեսցեն եւ յամօթ լինիցին ոյք խնդրեն զանձն իմ, բառնալ զաս. դարձցին յետս եւ ամաչեսցեն՝ ոյք խորհէին ինձ չար:

20. Արեսցեն զամօթ առժամայն վաղվաղակի՝ ոյք ասէին ինձ վաշ վաշ:

21. Յնծասցեն եւ ուրախ լինիցին ի քեզ ամենեքեան, որ խնդրեն զքեզ Տէր: Ասասցեն յամենայն ժամ մեծ է Աստուած. եւ ոյք սիրեն զփրկութիւնս քո:

22. Եւ աղքատ եւ տնանկ եմ Աստուած, խորհեա զիս. օգնական եւ պաշտպան իմ ես, եւ դու Տէր իմ մի յամենայն:

1. Ի կատարած: Սաղմոս Դաւթի. Ժ:

2. Երանի որ խորհի զաղքատն եւ զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր:

3. Տէր փրկէ զնա եւ կեցուցանէ. եւ բանեալ առնէ ի վերայ երկրի, եւ ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց:

4. Տր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց. զամենայն անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութենէ նորա:

5. Ես ասացի Տէր ողորմեա ինձ. բժըշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ:

6. Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ իցէ զի մեռցի եւ կորիցէ անուն նորա:

7. Մտանէր տեսանել զնութիւն. խօսէր ի սրտի իւրում. ժողովէր զանօրէնութիւնս յանձն իւր:

8. Ելսրսքս ելանէր եւ զնոյն խօսէր. զինէն շընջէին ամենայն թշնամիք իմ:

9. Խորհեցան չար ի վերայ իմ. բան անօրէնութեան եդին ի վերայ իմ:

10. Միթէ որ ննջեցէն ոչ եւս յաւելցու յառնել. քանզի եւ այրն խաղաղութեան իմոյ՝ յոր եւ եհան յուսացայ:

11. Որ ուտէր ընդ իս հաց, յարձակեաց առնել ինձ խարէութիւն:

12. Եւ դու Տէր ողորմեա ինձ. հանդեր նեա զիս, եւ հատուցից նոցա:

13. Այսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս. զի մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ:

14. Եւ զիս յարդարութեանս իմում ընկալար, հաստատեցեր զիս առաջի քոյ յաւիտեան:

15. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլ յաւիտեանս յաւիտենից, եղիցի եղիցի:

1. Ի կատարած վասն նմանութեան սրբոցն կոչեսայ: Դատ. ԻԶ:

2. Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած:

3. Ծարաւեալ է անձն իմ առ քեզ Աստուած հզօր եւ կենդանի. երբ եկից եւ երեւեցայց երեսացդ Աստուծոյ:

4. Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ եւ ի գիշերի. եւ այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ Թէ ուր է Ած քո:

5. Զայս որպէս յիշէի, տառապէր յիս անձն իմ. քաջալերէի, զի մինչ ընդ յարկաւ սքանչելեաց տան Աստուծոյ:

6. Ի ձայն ցնծութեան խոստովանութեան. եւ ի ձայն բարեկենդանութեան:

7. Ընդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ Ած, խոստովանեացուս. փրկիչ երեսաց իմոց Ած է:

8. Ընձն իմ յոյժ խռովեցաւ, վասն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն Յորդանանու, Հերմոնէ լեռնէ փոքուէ:

9. Խորք խորոց կարդային առ քեզ ի ձայն սահանաց քոց:

10. Ամենայն զբօսանք քո եւ ալիք քո անցին ի վերայ իմ:

11. Ի տուէ պատուիրեաց Տէր զողոր-

մութի իւր. պիշերի զօրհնութի նոր. եւ աղօթք իմ առ Ած վան կենաց իմոյ:

12. Ասացի Աստուծոյ ընդունելի իմ ես. ընդէր մերժեցեր զիս, ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

13. Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ. յասել ցիս զօրհաւնապատ, թէ ուր է Աստուած քո:

14. Ելո՛ ընդէր տրտում ես անձն իմ. եւ ընդէր խռովես զիս. յուսա առ Ած. խոստովանեա նմա. փրկիչ երեսաց իմոց Ած է:

Սաղմոս Դաւթի. ԽԱ:

1. Դատ արա ինձ Աստուած. եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

2. Զարդէ որ ոչ է սուրբ. ի մարդոյ մեղաւորէ նենդաւորէ փրկեա զիս:

3. Դու Աստուած հզօրիչ իմ ես. ընդէր մոռացար զիս, ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

4. Առաքեա Տէր զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեացեն ինձ, հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

5. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Ած՝ որ ուրախ առնէ զմանկութի իմ:

6. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած Աստուած իմ:

7. Ելո՛ ընդէ՛ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՛ր խռովես զիս. յուսա առ Ած տուած, խոստովանեա նմա. փրկիչ երեսաց իմոց Ած տուած է:

1. Ի հատարած որդւոցն Կորխայ. սաղմոս երգոց պատշնեան: Սաղմոս. Ով:

2. Ածուած ականջք մերով լսաք, զոր հայրքն մեր պատմեցին մեզ:

3. Ոչ զործն՝ զոր զործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս:

4. Ձեռն քո խլեաց զհեթանոսս, եւ զնոսա տնկեցեր. չարչարեցեր զժողովուրդս, եւ հաներ զնոսա:

5. Ոչ թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր, եւ ոչ բազուկ նոցա թէ փրկեաց զնոսա:

6. Այլ աջ քո եւ բազուկ քո եւ լոյս երեսաց քոց, զի հաճեցար դու ընդ նոսա:

7. Դու ինքն ես թագաւոր իմ եւ Ածուած իմ. որ հրամայեցեր զփրկութեանց Յակովբայ:

8. Վասն զի զքեզ ատեին մեր հալցուք, եւ անուամբ քով արհամարհեսցուք զյարուցեալսն ի վերայ մեր:

9. Ոչ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ. եւ ոչ սուր իմ կեցուցանէ զիս:

10. Քանզի դու փրկեցեր զմեզ ի թըշնամեաց մերոց. եւ զաւեալս մեր յամօթ արարեր:

11. Ընտուծով պարծեսցուք զօրհնեալդ. եւ անուան նորա խոստովան եղեսուք յաւիտեան:

12. Բայց արդ մերժեցեր եւ անարգեցեր զմեզ. եւ ոչ ելեր Աստ ընդ զօրս մեր:

13. Դարձուցեր զմեզ յետս քան զըզթշնամիս մեր. եւ առեալք մեր յափշտակեցին զմեզ:

14. Տուր զմեզ որպէս զոչխար ի կերակուր. եւ ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ:

15. Վաճառեցեր զժողովուրդս քո առանց գնոյ. եւ ոչ դոյ թիւ ազատակի մերում:

16. Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց, ծաղր եւ այպն կատականաց այնոցիկ որ շուրջ են զմեզ:

17. Արարեր զմեզ առակս հեթանոսաց. ի շարժել զգլուխս ժողովրդոց:

18. Ցօր ամ նախատինք իմ առաջի իմ են. եւ ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս:

19. Ի ձայնէ նախատողին եւ չարախօսի, յերեսաց թշնամւոյն եւ հալածչի:

20. Եւ ասեն ամենայն ելն ի վերայ մեր՝ եւ մեք գքեզ ոչ մոռացաք. եւ ոչ սուտեցաք ուխտի քումմ, եւ ոչ դարձաք յետս սրտի մերով:

21. Դարձուցեր զշաւիղս մեր ի ճանապարհից քոց. խոնարհ արարեր զմեզ ի տեղի չարչարանաց. եւ ծածկեցին զմեզ ստուերք մահու:

22. Թէ մոռացեալ էիմ մեր զանուն Աստուծոյ մերոյ. կամ ձգեալ էիմ զձեռս մեր Աստուածս օտարս:

23. Սակայն Աստուած խնդրէ զայս. զի նա գիտէ զգաղտնիս սրտից մերոց:

24. Վասն քոյ մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի ջեներումն:

25. Զարթիր ընդէր նինջես Տէր. արի եւ մի մերժեր զմեզ յաւար:

26. Զիմէ դարձուցանես զերեսս քո ի միջ. մոռանաս զաղքատութիւն եւ զնեղութիւնս մեր:

27. Խոնարհ եղեն մինչեւ ի հող անձինք մեր. եւ յերկիր կցեցան միջք մեր:

28. Արի Տէր օգնեա մեզ. եւ փրկեա զմեզ վասն անուան քոյ:

1. Ի հարցած. զատանցելոց ժամանակաց, որպասցի պոլխոյ ճմատարանեան. երջ վասն սէրելոցն:
Սաղմոս. ԽԹ՝Ի:

2. ՃՂԽԵԱՑ սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի:

3. Լեզու իմոյ զրիչ եւրագագրի դպրի, զեղեալ առելեամբ քան զամ որդիս մարդկան:

4. Պատեցան շնորհք ի շրթանց քոց. վասն այսորիկ օրհնեաց զքեզ Ած յաւիտեան:

5. Ած սուր ընդ մէջ քո հզօր. վայելչութեան եւ գեղոյ քոյ:

6. Լարեա, ուղեա եւ թագաւորեա վասն ճշմարտութեան, հեզութեան եւ արդարութեան. եւ առաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո:

7. Նետք քո սրեալ են հզօր. եւ ժողովուրդք ի ներքոյ անկցին ի սիրտս թշնամեաց թագաւորի:

8. Աթոռ քո Ած յաւիտեան յաւիտենից. գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քո:

9. Սիրեցեր զարդարութիւն, եւատեցեր զանիրաւութիւն:

10. Վասն այսորիկ օծ զքեզ Ած, Ած քո իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո:

11. Զմուռս եւ առուշին եւ կասիա ի

զգեսուկ քումկ. ի տաճարսյ վղոսկրէկյ, ուսոկ ուրախ ալարկին գքեզ զսոեղք Թագաւորացյ ի պատիւ:

12. Կացցկ գշխոյ ընդ աջմկ քումկ, ի հանդերձս ոսկեհուռն զարդարեալ եւ պաճուճեալ:

13. Լուր դուստր եւ տես՝ խոնարհեցո զունկն քո. մոռա զժողովուրդ քո եւ զտուն հօր քոյ, զի ցանկացաւ Թագաւոր գեղցյ քոյ:

14. Ա՛ա ինքն է տէր քո՝ երկրպագես սմա, եւ դուստր Տ՛ուրայ երկրպագէ սմա. եւ պատարագօք գերեսս սորա պաշտեսցեն մեծամեծք ի ժողովրդոց:

15. Ամենայն փառք դստեր Թագաւորի ի ներքոյ. ի վերջաւորս ոսկեհուռն զարդարեալ եւ պաճուճեալ:

16. Տարցին Թագաւորի կուսանք զհետ նորա, եւ զընկերս նորա տարցին նմա:

17. Ընծեն ցնծութիք եւ ուրախութիք. եւ տարցին ի տաճար Թագաւորի. եւ փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո:

18. Կացուսցես զնս իշխանս ընդ ամ երկիր. յիշեսցի անուն քո ընդ ամ ազգս ազգաց:

19. Վասն այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ յաւիտեան, եւ յաւիտեանս յաւիտենից:

1. Ի հարաւոյ ոտիցն կողմէ. է վերոյ գոգ-
գնեաց: Սաղմոս դաւթի. Լուծ:

2. Ընտուն՝ մեր ապաւէն եւ զօրու-
թիւն, օգնական ի վերայ նեղութեանց՝
որ գտին զմեզ յոյժ:

3. Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք ի
խառնել երկրի. ի փոխիլ լերանց ի
սիրտ ծովու:

4. Ոչեցին եւ խռովեցան ջուրք նոցա.
խռովեցան լերինք ի զօրութենէ նորա:

5. Գնայք գետոց ուրախ առնեն զքա-
ղաքն Աստուծոյ. եւ սուրբ արար զյարկս
իւր բարձրեալն:

6. Աստուած ի մէջ նոցա, եւ նոքա մի
սասանեսցին. օգնեսցէ նոցա Աստուած
ի վաղորդեան մինչեւ ի վաղորդեան:

7. Խռովեցան հեթանոսք, եւ խոնար-
հեցան թագաւորութիւնք, եւ ետ զձայն իւր
բարձրեալն՝ եւ խռովեցաւ երկիր:

8. Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդ-
ունելի է մեր Աստուած Յակոբայ:

9. Գնայք եւ տեսէք զգործս Աւյ, որ ա-
րար ինչ անապատս յերկրի:

10. Գհար զպատերազմս ի ծագաց մին-
չեւ ի ծագս երկրի. զաղեղունս փշրեաց,
զինս խորտակեաց, եւ զասպարս այրեաց
հրով:

11. Կանխեցէք եւ ծաներտուք զի ես եմ Աստուած. բարձր եղէց ի հեթանոսս, եւ բարձրացայց ի վերայ ամենայն երկրի:

12. Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր Աստուած Յակոբայ:

1. Ի կատարած վասն որդւոցն Կորխեայ: Սաղմոս Դաւիթ. ՀԽԷ:

2. Ծափս հարէք ամ հեթանոսք. աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան:

3. Տէր բարձրեալ եւ ահարկու, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի:

4. Հնազանդ արար զժողովուրդս մեզ. եւ զհեթանոսս ի ներքոյ ոտից մերոց:

5. Ընտրեաց զմեզ իւր ի ժառանգութիւն, զեղեցկութիւն Յակոբայ, զոր եւ սիրեաց:

6. Համբարձաւ Աստուած օրհնութիւն, եւ Տէր ձայնիւ փողոյ:

7. Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք. թագաւորին մերոյ սաղմոս ասացէք:

8. Թագաւոր մեծ ի վերայ ամ երկրի Աստուծ է, սաղմոս ասացէք նմա իմաստութիւն:

9. Թագաւորեաց Աստուծ ի վերայ հեթանոսաց. Աստուծ նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ:

10. Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ Ասուածն Աբրահամու. զի Ասուծոյ զօրութիւնք յերկրէ յոյժ հանբարձան:

1. Սաղմոս օրհնութեան որդւոցն Կորխոյ. երգել շաբաթու. Ալէ:

2. Ած է տէր եւ օրհնեալ է յոյժ ի քաղաք Այ ուրոյ ի լեառն սբ նորա:

3. Հաստատուն ցնծասցէ ցնծութեամբ ամենայն երկիր. լերինք Սիոնի, կողմանք հիւսիսի՝ քաղաք թագաւորի մեծի:

4. Ած ի տաճարի իւրում յայտնի. ի ժամանակի, որպէս օգնական լինէր նմա:

5. Ահաւասիկ թագաւորութիւնք երկրի ժողովեցան. եւ անկցին ի միասին:

6. Ընդեանք տեսին այսպէս եւ զարմացան. խռովեցան, սասանեցան, եւ դողութիւն կալաւ զնոսա:

7. Անդ երկունք որպէս ի ծննդեան. ի հողմն սաստիկ, փշրեսցէ զնաւս ի Թարսիս:

8. Որպէս լուաք, այնպէս եւ տեսաք ի քաղաք Տեառն զօրութեանց՝ ի քաղաք Ասուծոյ մերոյ:

9. Ասուած հիմնեաց զսմ նմա յաւիտեան. ընկալաք Ասուած՝ զողորմութիւն քո ի մէջ ժողովրդեան քոյ:

10. Ըստ անուան քում՝ այնպէս եւ

օրհնութիւն քո ընդ ամենայն տիեզերս. արդարութեամբ լի է աջ քո:

11. *Ուրախ եղիցի լեառն Սիոն. եւ ցնծասցեն դստերք Յուդայ, վասն էրաւանց քոց Տէր:*

12. *Է ընդեցարուք զՍիոնիս, պաշտապանեցէք նմա. եւ պատմեցէք յաշտարակս նորա:*

13. *Դնիք զսիրտս ձեր ի վերայ զօրութեանց նորա. բաժանեցէք զամուրս նորա. զի պատմել կարասջիք յազգ յայլ:*

14. *Այս է Աստուած, Աստուած մեր յաւիտեան յաւիտենից. եւ սա հովուեսցէ զմեզ մինչեւ յաւիտեան:*

1. *Ի հոգւոյն սրբոյն կոչեսցի: Սաղմոս Դաւիթ ընդ. խոլ:*

2. *ԼՈՒԱՐՈՒՔ զայս ամենայն ազգք, ունկնդիր լերուք ամենեքեան՝ որ բնակեալ էք յաշխարհի:*

3. *Եւնուանք երկրի եւ որդիք մարդկան ի միասին, մեծամեծք եւ անանկք:*

4. *Բերան իմ պատմեսցէ զիմաստութիւն, եւ խորհուրդ սրտի զհանճար:*

5. *Առնարհեցուցից յառակուծին զունկն իմ. բացից զառակս օրհնութեամբ ի սկըզբանէ:*

6. Ընդէր բնաւ երկնչիմ ես յաւուր չարի. անօրէնութիւնք գնացից իմոց շուրջ եղեն զինեւ:

7. Յուսացեալքն ի զօրութիւս իւրեանց, ի բազմութիւն մեծութեանց պարծեսցին:

8. Եղբայր ոչ փրկէ, եւ ոչ փրկէ մարդ եւ ոչ ասց Աստուծոյ փրկանս. եւ ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ:

9. Վասնզի յաւիտեան յաւիտեան, եւ կեցցես մինչ յաւար. եւ ոչ տեսցես զապականութիւն:

10. Զօրժամ տեսցես թէ իմաստունք մեռանին ի միասին, անզգամք եւ անմիտք կորիցեն, եւ թողցեն օտարաց զմեծութիւնս իւրեանց:

11. Գերեզմանք նոցա տունք նոցա եւ զկնի յաւիտեան. եւ յարկք նոցա յազգէ մինչեւ յազգ, եւ կարդացին անուանք նոցա ի հողս իւրեանց:

12. Մարդ ի պատուի էր, եւ ոչ իմացաւ. հաւասարեաց անասնոց անբանից, եւ նմանեաց նոցա:

13. Այս ճանապարհ է գայթակղութիւն նոցա նոցին. յետ այսորիկ բերանօք իւրեանց հաճեսցին:

14. Որպէս խաշն ի դժոխս մատնեսցին, եւ մահ հովուեսցէ զնոսա. եւ տիրեսցեն նոցա ուղիղք ընդ առաւօտս:

15. Օգնութիւնք նոցա մաշեացին ի դժոխս. եւ ի փառաց իւրեանց անկցին:

16. Բայց սակայն Աստուած վրկեսցէ զանձն իմ ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդունին զիս:

17. Մի երկնչիր յորժամ մեծանայ մարդ, եւ յորժամ բազում լինին փառք տան նմա:

18. Զի ոչ թէ ի մեռանել իւրում առցէ ընդ իւր զամենայն. եւ ոչ թէ իջցեն փառք տան նորա ընդ նմա:

19. Եւլ անձն նորա ի կեանս իւրում օրհնեացի. խոստովան եղիցի քեզ յորժամ բարի արասցես դու նմա:

20. Մտցէ նա մինչեւ յազգ հարց իւրոց. մինչեւ յաւիտեան լոյս մի տեսցէ:

21. Մարդ ի պատուի էր, եւ ոչ իմացաւ. հաւասարեաց անասնոց անբանից, եւ նմանեաց նոցա:

1. Սաղմոս Դաւթի. Երգ:

2. Աստուած Աստուածոց Տէր խօսեցաւ, կոչեաց զերկիր յարեւելից մինչ ի մուտս արեւու:

3. Ի Սիովնէ մեծավայելչութիւն փրկութեան զեղոյ նորա:

4. Աստուած մեր յայտնապէս եկեսցէ, Աստուած մեր մի դադարեսցէ:

5. Հուր առաջի նորա բորբոքեսցի. եւ շուրջ զնովաւ մրրիկ յոյժ:

6. Կոչեսցէ զերկինս ի վերուստ եւ զերկիր ի դատել զժողովուրդ իւր. ժողովել առ ինքն զսուրբս իւր. եւ որք դնեն զպատարագս ուխտիւ ի վերայ սեղանոյ նորա:

7. Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա, զի Աստուած դատաւոր է:

8. Լուր ժողովուրդ իմ եւ խօսեցայց ընդ քեզ. եւ Իսրայէլ քեզ վկայեցից, զի Աստուած Աստուած քո ես եմ:

9. Ոչ թէ վասն պատարագաց քոց կշտամբեմ զքեզ, զի ողջակէզք քո առաջի իմ են յամենայն ժամ:

10. Ոչ ընդունիմ ի տանէ քումէ զուսանիս, եւ ոչ ի հօտից քոց նոխազս:

11. Իմ է ամենայն գազան անտառի, երէք լերանց եւ ամենայն անասուն:

12. Գիտեմ ես զամենայն թռչուն երկնից. գեղեցկութիւն վայրի ընդ իս է:

13. Թէ քաղցեայց, քեզ ինչ ոչ ասացից, զի իմ է աշխարհ լրիւ իւրով:

14. Ոչ ուտեմ ես զմիս զուարակաց քոց. եւ ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ:

15. Զառ Աստուծոյ պատարագ օր-

հնութեան. կատարեա բարձրելոյն զուխաս քո:

16. Պարտացես առ ինս յաւուր նեղութեան քոյ. եւ վրկեցից զքեզ եւ դու փառաւոր արասցես զիս:

17. Սակայն մեղաւորին ասէ Աստուած. իսկ դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւնս իմ, կամ առնուս զուխաս իմ ի բերան քո:

18. Ջի դու ատեցեր զկրթաս իմ, մերժեցեր եւ յետս ընկեցեր զամենայն բանս բերանոյ իմոյ:

19. Թէ տեսանէիր գողս՝ ընթանայիր ընդնոսա. եւ ընդ շունս դնէիր զբաժին քո:

20. Ի բերան քո յարձակէր զչարութիւն, եւ լեզու քո նիւթէր զնենգութիւն:

21. Նստեալ՝ զեղբօրէ քումմէ չարախօսէիր. եւ ի վերայ որդւոյ մօր քոյ դնէիր զպատճառութիւն:

22. Զայս ամենայն արարեր եւ լռեցի քեզ. կարծեցեր անօրէնդ ի մոխ քում թէ եւ ես քեզ նմանիցեմ:

23. Ընդ յանդիմանեցից եւ կացուցից զայս ամենայն առաջի քո. իմացարուք ամենեքեան որոց մոռացեալ իցէ զԱ՛ստ:

24. Զուցէ երբեք յափշտակիցիք. եւ ոչ ոք իցէ որ փրկիցէ:

25. Պատարագ օրհնութեան փառաւոր արարցէ զնա, եւ անդ է ձանապարհ ուր ցուցից նմա զփրկութիւն Աստուծոյ:

1. Ի կատարած. Սաղմոս դաւթի. Ա՛:
2. Ի ձառնանալն Քրիստոս առնու նամին տրփտալ. յորժամ տեսեալ էր նա առ Բեթսաբէէ:

3. Ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի ողորմութեանդ քումի, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ:

4. Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

5. Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, եւ մեղք իմ առաջի իմ են յաւէտ:

6. Քեզ միայն մեղայ Տէր. եւ չար առաջի քոյ արարի:

7. Արդարս արդար եղիցես ի բանս քո, եւ յաղթեացես ի դատել քեզ:

8. Ընօրէնութեամբ յղացաւ, եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

9. Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ:

10. Ցօղեա յիս մշակաւ եւ սուրբ եւ զկց. լուա եւ քան զձիւն սպիտակ եղէց:

11. Լսելի արա ինձ զցնծութիւն եւ

զուրախութիւն. եւ ցնծացեն ականջք իմ առաւակեալք:

12. Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, զամ անօրէնութիւնս իմ քաւեա լինէն:

13. Սիրտ սուրբ հաստեա յիս Ած, եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում:

14. Մի ընկենուր զիս ՏԷր յերեսաց քոց. եւ զՀոգի սուրբ քո մի հաներ լինէն:

15. Տուր ինձ ցնծութիւն փրկութեան. եւ հոգւով պետութեա քո հաստատեա զիս:

16. Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. եւ ամբարիշտք առ քեզ դարձցին:

17. Փրկեա զիս յարենէ Ասուած, Ասուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում:

18. ՏԷր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

19. Զի եթէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

20. Պատարագ Աւյ հոգի խոնարհ. զսիրտ եբ եւ զհոգի խոնարհ Ած ոչ արհամարհէ:

21. Բարի արա ՏԷր կամօք քովք Սիոն. եւ շինեսցին պարիսպք Երուսաղեմի:

22. Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս:

1. ի կատարած ծառայութեան: Սակայն դառնիկ. ՆՈՒ: 2. ի ժամանակի զի էին դովիկ եդովմացի և պատճառ Սաուղայ ինչ անառաքիկ դառնին եհալ է ի տուն Աբիմելեքայ:

3. ՚Ոչ՚ պարծի ի չարութեան հզոր զանօրէնութիւն, զօրհանապազ զանխրատութիւն խորհեցաւ ի լեզուի իւրում:

4. Ոչ զածելն սուր արեաց զնեղութիւն. արեաց զչարութիւն քան զբարութիւն. զանօրէնութիւն քան զիաօս արդարութիւն:

5. Արեաց նա զամենայն խօսս կործանման, զլեզուս նենգաւորս:

6. Ա՚ն այսորիկ Ա՚ծ կործանեացէ զնա խափան. խլեացէ և հանցէ զնա յարկաց, և զարմատս նորա յերկրէն կենդանեաց:

7. Տեսցեն արդարք և երկիցեն, զնովա ծիծաղեացին և ասացեն:

8. Ա՚յս այր է որ ոչ արար զԱ՚ստուած իւր օգնական. այլ յուսացաւ սա ի բազում զօրութիւն իւր, և զօրացաւ ի նանրութեան իւրում:

9. Ա՚յլ ես ոչ ձիթենի պտղալից ի տան Ա՚յ, յուսացայց յողորմութիւն Ա՚յ յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից:

10. Խոստովան եղէց քեզ յաւիտեան, զի արարեր. և համբերից անուանդ քում, զի քաղցր ես առաջի սրբոց քոց:

1. Ի հատարած վան Մոլորելոյ եմատուելն։
Սաղմս Դաւիթ. ՃՀ։

2. Ասաց անզգամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած. ապականեցան եւ պղծեցան յանօրէնութեան իւրեանց. եւ ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն։

3. Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ զԱստուած։

4. Ամենեքեան խոտորեցան ի միասին, եւ անպիտանացան։

5. Ոչ ոք է որ առնէ զբարի. եւ չէ ոք մինչեւ ցմի։

6. Արդեօք ոչ ծանիցեն ամենեքեան, որք գործեն զանօրէնութիւն։

7. Որք ուտէին զժողովուրդ իմ ոպէս կերակուր հացի. եւ առ Տէր ոչ կարդացին։

8. Անդ երկիցեն երկիւղ, ուր ոչ իցէ երկիւղ. զի Տէր ցրուէ զոսկերս մարդահաճոյից։

9. Ամաչեցեն եւ յամօթ լինիցին զի Աստուած անարդեաց զնոսա։

10. Ո՞ տացէ ի Սիոն զփրկութիւն Իսրայէլի. ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ, ցնծասցէ Յակոբ եւ ուրախ եղիցի Իսրայէլ։

1. Ի հոտոտել ընդ օրհնութիւնս նմանութիւն:
Սաղմոս դաւիթ. ՃՀ:
2. Ի ժամանակի պէս եկին Զէփացէից, եւ սեւն յԱ-
սորպ՝ ըէ անասունէ դաւիթն ընտրեալ նոցէ ա-
րեզ յոյժ անդ:

3. Ընտուն յանուան քում կեցո զիս, եւ ի զօրութիւն քում իրաւ ապա ինձ:
4. Ընտուած լուր աղօթից իմոց. ունկն դիր բանից բերանոյ իմոյ:
5. Օտարք յարեան ի վերայ իմ, եւ հզօրք խնդրեցին զանձն իմ, եւ ոչ համա-
րեցան զքեզ Ընտուած առաջի իւրեանց:
6. Ընդ Ընտուած օրհնական իմ. եւ տէր ընդունելի հոգւոյ իմոյ:
7. Ի դարձուցանել զչար ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա:
8. Նա կամօք իմովք պատարագս մա-
տուցից քեզ. խոստովան եղէց անուան քում տէր զի բարի է:
9. Յամենայն նեղութենէ իմմէ փրկե-
ցեր զիս. եւ ի թշնամիս իմ եւտես աչն իմ:

1. Ի հոտոտել ընդ օրհնութիւնս նմանութիւն:
Սաղմոս դաւիթ. ՃՀ:

2. Ոչնչն դիր Ընտուած աղօթից իմոց, եւ մի անտես առներ զինդրուածս իմ:
3. Եայեաց առ իս եւ լուր ինձ, զի տրտմե-
ցայ ես ի ձանձրանալ իմում եւ խռովեցայ:

4. Ի ձայնէ թշնամւոյն եւ ի նեղել մեղաւորին խոտորեցան յիս անիրաւութեամբ. բարկութեամբ ոչ պահէին ինձ:

5. Սիրտ իմ խռովեցաւ յիս, եւ երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ:

6. Ընդ եւ դողութիւն եկին ի վերայ իմ. եւ ծածկեաց զիս խաւար:

7. Ասէի, տայր ոք ինձ թեւս որպէս զաղաւնւոյ, զի թռչէի վերանայի, հեռացեալ դադարէի յանապատի:

8. Ակն ունէի Աստուծոյ, որ փրկէր զիս ի կարճմտութենէ, ի զայրանալոյ, եւ ի մրրկեալ նեղութենէ:

9. Ընկլո Տէր եւ բաժանեա զլեզուս նոցա, զի տեսի զանօրէնութիւն եւ զհակառակութիւն ի քաղաքի:

10. Ի տուէ եւ ի գիշերի շուրջ եղեն զպարսպօք նորա անօրէնութիւնք. չարիք եւ մեղք են ի մէջ նոցա, եւ ոչ պակասեաց ի հրապարակաց նոցա վաշխ եւ նենգութիւն:

11. Օ՛ի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի արդեօք, կամ առելւոյն մեծաբանեալ էր ի վերայ իմ՝ թագչէի արդեօք ի նմանէ:

12. Ապա արդ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ եւ ծանօթ իմ:

13. Ապաքէն ի նոյն քաղցրացուցեր ինձ եւ քեզ կերակուր, զի գնայաք միաբանութեամբ ի տան Աստուծոյ:

14. Նկեցէ մահ ի վերայ նոցա, եւ կենդանւոյն իջցեն ի դժոխս. զի չարութիւն է ի բնակութիւն նոցա եւ ի մէջ նոցա:

15. Նա առ Աստուած կարդացէ, եւ լաւ լինձ յերեկոյս եւ ի վաղորդայն եւ ի հասարակ աւուր:

16. Պատմեցի եւ ասացի եւ լուիցէ ձայնի իմում. փրկեացէ խաղաղութեամբ զանձն իմ ի մերձաւորաց իմոց, զի կայ բազք հասին ի վերայ իմ:

17. Լուիցէ Աստուած եւ խոնարհ արասցէ զնոսա, այն որ յառաջնի է քան զյաւիտեանս:

18. Ոչ է ոչ գոյր նոցա փոխանակ. եւ ոչ երկեան Աստուծոյ:

19. Ձգեաց զձեռն իւր ի հատուցանել նոցա, եւ նոքա պղծեցին զօրէնս նորա:

20. Խաժանեցան ի սրտմտութենէ եւ բեսաց նորա, եւ եհաս ի սիրտս նոցա:

21. Կակուղ էին բանք նոցա քան զբաժ, եւ ինքեանք որպէս սլաք.

22. Ընկեա ի տէր զհոգս քո, եւ նա կերակրէ զքեզ. եւ ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ:

23. Եւ Եսաւաճ իջուսցես զնոսա ի դուբ ապականութեան. ալք արիւնահեղք եւ նենգաւորքն մի հասարակեսցեն զաւուրս իւրեանց. այլ ես ի քեզ Տէր յուսացայ:

Օրհնութիւն ձեզին Մովսեսէ ասպետաձոփես մարգամարէ. Երէմիայ Օրինաց. Լ՚Ի:

31. Օդ հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ. այրեսցէ եւ լջցէ մինչ ի դժոխս նեղքինս:

32. Կերիցէ զերկիր եւ զամենայն բոյս երկրի նոցա. վառեսցին հրով, եւ բորբոքեսցին հիմունք լերանց նոցա:

33. Կուտեցից զչարիս ամենայն ի վերայ նոցա եւ նետիւք իմով ապառեցից զնոսա:

34. Մաշեալք եւ հիւծեալք ի սովու զազանաբեկ. զէշ անկեալ ամենայն թըռչնոց երկնից:

35. Լաս առանց բժշկութեն արձակեցից ի վերայ նոյ, եւ զգազանս անապատի՝ որք այսր եւ անդր քայլեսցեն զնս ընդ երկիր:

36. Ընտաքուսս մանկակոտորս արտացէ զնոսա սուր, եւ ի ներքուստ շուքմարտնաց նոցա անսի արհաւիրք ահից:

37. Օրիորդսդ կուսանաց հանդերձ եւ զսղայս հասասեալք ծերով հանդերձ:

38. Ասացի Թէ ցրեցից զնոսա. եւ դադարեցուցից զյիշատակս նոցա յազգաց:

39. Թէ ոչ վասն բարկութեան սրտմտութեան Թշնամւոյն, զի մի երկայնակեաց եղեցեն. եւ մի բարձրասցին հպարտացեալ Թշնամիքն, եւ ասասցեն:

40. Թէ ձեռն մեր բարձր է, եւ բազուկ մեր հզօր. եւ ոչ Տէր Ընդ ամենայն զայս առ մեզ:

41. Ոչ ազգ մի խորհրդակորոյս են նոքա. եւ ոչ գոյ ի նմա իմաստութիւն, եւ ոչ խորհեցան ի միտ առնուլ զայս ամենայն. եւ արդ՝ ընկալցին զամօթ յանձինս իւրեանց:

42. Ոչ ամենեք մի մեծ այս են. զի արդ մին զհազարս հալածեսցէ, կամ երկուք զբիւրս շարժեսցեն:

43. Թէ ոչ Տէն Ընչ մատնեալ էր զնոսա, եւ առեալ էցէ զնոսա ի ձեռս Թշնամեաց նոցա:

44. Ոչ են զի՛նք նոցա ոսկի զՈչ մեր. այլ Թշնամիք մեր վատախորհուրդք:

45. Յայտնի Սոդոմայ էր որթ նոցա, եւ տունկ նոցա ի Գոմորայ:

46. Խաղող նոցա խաղող դառնութիւն. եւ ողկոյզ նոցա դառնութեան լերդայ:

47. Սրտմտութիւն բարկութեան վիշապաց գինի նոցա, սրտմտութիւն իժից անհնարին առանց բժշկութեան:

48. Ըէ այս ամենայն ժողովեալ է առ
ի՛ս. եւ կնքեալ պահի ի գանձի իմում:
49. Յաւուր վերջին հասուցման հա-
ստուցից նոցա. ի ժամանակի յորում հար-
ցի զքարի ոտն նոցա:
50. Մերձ է օր կորստեան նոց. զի հա-
սեալ է պատրաստութիւն Տի ի վերայ նոց:
51. Դատի Տէր զժողովուրդ իւր. եւ ի
ծառայս իւր մխիթարի:
52. Ջի հառս զնոսա լքեալ եւ լու-
ծեալ, եւ մատնեալ ի գերութիւն:
53. Եւ ասիցէ Տէր, ուր են դիքն ձեր՝
յոր յուսացեալ էիք դուք ի նոսա, զո-
րոց զձայս սպանդիցն ուտէիք, եւ ըմ-
պէիք զգինի զոհիցն:
54. Ելջ՝ յարուցեալ օգնեացեն, եւ ե-
ղիցին ձեզ թիկունք:

Նոբեմ Մովսէս:

55. Ծաներուք եւ տեսէք՝ զի ես եմ.
եւ ոչ դոյ այլ Աստուած բաց յինէն:
56. Ես սպանանեմ եւ ես կեցուցանեմ.
հարկանեմ, եւ ես բժշկեմ. եւ ոչ ոք ի-
ցէ՝ որ հանիցէ զձեզ ի ձեռաց իմոց:
57. Ամբարձի յերկինս զձեռս իմ. եր-
դուայ աջով իմով եւ ասացի թէ կեն-
դանի եմ ես յաւիտեան:

58. Արեգից որպէս վայելին զառաջ իմ. եւ ի խնդիր վըհոց արձակեցից զաջ իմ:

59. Հաւուցից զհաւուցումն թշնաւոցդ իմոց. եւ առելեաց իմոց հաւուցից զհաւուցումն նոցա նոցին:

60. Ընթացուցից զնեաս իմ յարենէ նոցա. եւ սուր իմ կերիցէ միս յարենէ վըրաւորելոց, զերելոց զլխոց իշխանաց թըշնամեաց նոցա:

61. Ուրախ եղիցին երկինք նովաւ. եւ երկիր պագցեն նմա ամենայն որդիք Այ:

62. Ուրախ եղերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նորա. եւ զօրացուսցեն զնա ամենայն հրեշտակք Աստուծոյ:

63. Խնդրելով խնդրեցաւ վըհծ արեան որդւոց նոցա. եւ հաւուցումն թշնամեաց նոցա հաւուցաւ նոցա:

64. Հաւուցումն առելեաց նոցա հաւուցաւ նոցա. եւ սրբեացէ Տէր զերկիր ժողովրդեան իւրոյ:

Դու ես Տէր մեր, դու ես Աստուած վրկիչ մեր. զքեզ օրհնեն անձինք մեր: Արդարասէր Տէր, վա՛ սրբուհւոյ անարատ մարքոյ եւ կուսի, եւ վա՛ խաչի քո պատուականին, ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Վա՛ն ուղիդ զգնացս մեր ի ճանապարհն խաղաղութե՛ն զՏէր աղաչեցուք։

Վա՛ն ցրելոյ ի մէնջ զամենայն խորհուրդս չարին՝ զՏէր աղա։

Վա՛ն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս եւ առաքինի վարս՝ զՏէր աղա։

Վա՛ն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ՝ զՏէր աղա։

Վա՛ն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք՝ զՏէր։

Վա՛յ հոգւոյն հանդուցելոյ՝ որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քո՛ ննջեցին՝ զՏէր։

Եւ եւս եւ վա՛յ միաբանութե՛ն ճշմարիտ։

Ո՛չանձին։ Ողորմեաց։

Աղօթ։

Տէր երկնի եւ երկրի՝ արարիչ համ ա-բարութ, երեւելեաց եւ աներեւութից։ Ո՛ր քեզ կարդամք յամ ժամ, զի ընդ ամ տեղիս է տէրութի՛ք քո։ եւ ազգայութի՛ք քո ամենեցուն տիրէ։ Հ՝նորհեա մեզ երկիւղիւ զի՛ւ ի պաշտօն քո կանխել հանապատ։ սիրել զքեզ ի բոլոր սրտէ, ի բովանդակ մտաց, եւ յամ զօրութէ՛ մերմէ։ Պահել զպատուիրանս քո։ համբառնալ առ քեզ զձեռս մեր սրբութի՛ւ առանց բարկութե՛ւ եւ

երկմտութիւ: Եւ զաւանել ի քէն զշնորհս
եւ զողորմութիւ, եւ զառաքինաւէր գործոյն յաջողութիւ: Ա՛ւ զի դու ես աւէր կեանաց եւ Աւծ ողորմութիւ. եւ քեզ վայելեն փառք իշխանութիւ եւ պատիւ. այժմ եւ:

Խոստովանական:

Չհամ ամենայնի եւ յաղթող աչրութիւ կրկնի ամ ծունր յերկրպագութիւ. եւ փառաւորի յամենեցունց թագաւորութիւ քո: Նայեաց յերկրպագութիս մեր եւ ուսո մեզ առնել զարդարութիւ ճշմարտութիւ: Ա՛ւ զի դու ես Աւծ խաղաղութիւ, որ բարձեր զթշնամութիւ ի միջոյ. եւ առաբեր խաղաղութիւ յերկինս եւ յերկրի: Հեռաւորաց եւ մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգեւս քոյին բարեացդ: Արժան եւ զմեզ մեծի շնորհացդ արժանաւորս արասցես, զասելով ընդ ճշմարիտս երկրպագուս քո. Աւծ մեր եւ Տէր եւ փրկիչ Յս Ք: Որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ, եւ յաւիտեան յաւիտենից. Ամէն:

Յերգս օրհնութեան եւ ի ձայն սաղմոսաց անդադար փառաւորեմք զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգիդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից. Ամէն:



Սատանայ, գիրատետրը ոտքերի տար, եւ գրագրուհիներն ոտքով քաշուարին։ էջ. 22։

1. Ի հոգոցէ: Սպրաս ի դուռն: Վասն ձո-
ղովրդեանն, որ ի սքանչելիանցն հեռացեալ էին:
Յուդայանացեալ. զի հոլան զնա այլազգիւն ի գէն:
Սպրաս. Ծուռ:

2. Ողորմեա *ինձ Աստուած, զի կո-*
խեաց զիս մարդ. զօրհանապազ պատե-
րազմունք ներեցին զիս:

3. Ոխեցին զիս թշնամիք իմ զօրհա-
նապազ. բազում էին որք մարտնչէին ընդ
իս ի բարձանց:

4. *Ի տուէ ես ոչ երկեայց՝ զի ի Տէր*
յուսացայ. Աստուծով գովեցից զբանս
իմ. Աստուած յուսացայ, եւ ոչ եր-
կեայց. զի՞ արասցէ ինձ մարդ:

5. *Զօրհանապազ զբանս իմ անարգե-*
ցին, զինէն էին խորհուրդք նց ի չարութի:

6. *Պանդուխտք եղիցին, եւ թաքթա-*
քունք շրջեսցին. նոքա զարշապարի իմում
սպասեսցեն՝ որպէս եւ սպասէին անձին իմոյ:

7. *Ոչ առ ոչընչէ մերժեսցես զնս. բար-*
կութիք զժողովուրդս հնազանդեցուսցես:

8. *Աստուած զկեանս իմ պատմեցից*
քեզ. եղիցի զարտասուս իմ առաջի քոյ,
որպէս խոստացար դու ինձ:

9. Պատճին թշնամիք իմ յետս իւր լեանց, յաւուր յորում կարդացից առ քեզ:
10. Ահա ծանեայ զի Աստուած իմ ես դու. զԱծ օրհնեցից ի բանս իմ, եւ զՏէր գովեցից ի խօսս իմ, յԱծ յուսացայ եւ ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ:
11. Յինէն են ուխտք իմ. զոր տացից քեզ օրհնութեամբ Աստուած:
12. Փրկեցեր զանձն իմ ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, եւ զոտս իմ ի գայթակղութենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց:

1. Ի հոգեբոյժ. Մի ապականեր. Սաղմոս է Դաւթի. Յոբյանոփեր. ի ժամանակի՝ զի ներքոցեալ էր ի Սահուղայ յայրի անդ: Սաղմոս. ՃՀՀ:

2. Ողորմեան ինձ Աստուած, ողորմեա ինձ. զի ի քեզ յուսացաւ անձն իմ:
3. Ի հովանի թեւուց քոց յուսացայց, մինչեւ անցցէ անօրէնութիւն իմ:
4. Աղաղակեցի առ Աստուած բարձրեալ, առ Աստուած բարերար իմ:
5. Առաքեաց յերկինից եւ կեցոյց զիս. եղ ի նախատինս՝ որք կոխէին զիս:
6. Առաքեաց Ած զողորմութիւն, եւ զճշմարտութիւն, եւ փրկեաց զանձն իմ ի միջոյ զաղանաց. զի նիջէի ես խռովեալ:

7. Որպես մարդկան, առաքեսցէ իւրեանց զէն եւ նետք են. եւ լեզուք նոցա որպէս սուր սուսեր:

8. Խարձրեալ ես դու յերկինս Ամաուսած, եւ յամ երկրի են փառք քո:

9. Որպիսի պատրաստեցին ոտից իմոց. կոնարհ արարին զանձն իմ. փորեցին առաջի իմ խորխորատ, եւ անկան ինքեանք ի նոյն:

10. Պատրաստ է սիրտ իմ Ամաուսած պատրաստ է սիրտ իմ օրհնել եւ սաղմոս ասել քեզ փառօք իմովք:

11. Զարթիր փառք իմ, զարթիր սաղմոսիք եւ օրհնութեամբ. եւ ես զարթեայց առաւօտուց:

12. Խոստովան եղէց քեզ ի ժողովուրդս տէր. եւ սաղմոս ասացից քեզ յազինս:

13. Վասն եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւ քո. մինչեւ յամպս ճշմարտութիւ քո:

14. Խարձրեալ ես դու յերկինս Ամաուսած. եւ յամենայն երկրի են փառք քո:

1. Ի կատարած յոբյանաքէը մ ապիանէը:
Սաղմոս. Ծոլ:

2. Ծոէ արդարեւ զարդարութիւն խոսեիք. ուղիղս դատիք որդիք մարդկան:

3. Վասն եւ այդ իսկ ի սրտի ձերում

զանօրէնութիւն գործէք յերկրի. զանխաւսութիւն ձեռք ձեր նիւթեն:

4. Օտար եղեն մեղաւորք ի մօրէ. խաբեցան յարդանդէ եւ խօսեցան սուտ:

5. Արմատ թիւն նոցա ըստ նմանութեան օձին, որպէս խժի քարոյր՝ զի խլացեալ է զանկանջս իւր:

6. Զի մի լսիցէ նա զձայն թովչի Ճարտարի. եւ մի առցէ նա դեղ ի դեղատուէ իմաստնոյ:

7. Ընտուած փշրեսցէ զատամունս նոցա ի բերանս իւրեանց. եւ զժանիս առիւծուց խորտակեաց Տէր:

8. Ընդդէմ եղիցին նոքա որպէս ջուր զի հեղու. ի լարել աղեղան նորա տկարասցին որպէս մամ զի հալի, եւ ապառեսցին:

9. Ընկաւ հուր եւ ոչ տեսին զարեւ. մինչեւ ի միս առեալ էր զխուշս իւրեանց. որպէս դժնիկ բարկութեան կեներդանուցն կլլեսցէ զնոսա:

10. Ուրախ եղիցի արդար յորժամ տեսցէ զհատուցումն, եւ զձեռս իւր լուասցէ յարեան մեղաւորի:

11. Եւ ասասցէ մարդ, թէ արդարեւ գոյ պտուղ արդարոյ. եւ է Ընտուած՝ որ դատի զնոսա յերկրի:

1. Սպասս է Դաւիթ. Յարյանափքէր զի սպականէր: Ի ժամանակի զի սատափեաց Սաւուղ, պաշարեաց զսուտն նորա, զի սպանցէ զնա: Սպասս. ծառ:

2. Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Աստուած. յայնցանէ որ յարուցեալ են ի վերայ իմ, ապրեցո զիս:

3. Փրկեա զիս յայնցանէ՝ որ գործեն զանօրէնութիւն. յարանց արիւնահեղաց ապրեցո զիս:

4. Որսալ զանձն իմ կամեցան. եւ հասին ի վերայ իմ հզօրք:

5. Ոչ մեղք իմ՝ եւ ոչ յանցանք. առանց մեղաց ընթացայ եւ ուղիղ եղէ:

6. Զարթիր ընդ առաջ իմ եւ տես. դու Տէր զօրութեանց Աստուած Իսրայելի:

7. Հայեաց եւ այց ամենայն հեթանոսաց, մի ողորմիր ամենեցուն որ գործեն զանօրէնութիւն:

8. Դարձցին ընդ երեկոյս. սովեսցին որպէս շունք եւ շրջեսցին զքաղաքաւ:

9. Ահա զօրանջեսցեն բերանօք իւրեանց, եւ սուր է ի շրթունս նոցա:

10. Իսկ արդ ով լուաւ զայս, զի դու Տէր ծիծաղեսցիս զնոքօք եւ արհամարհեսցես զամենայն հեթանոս:

11. Ողջոյնն իմ առ քեզ պահեցից, զի Աստուած օգնական իմ է:
12. Աճ իմ, ողորմութի՛ն նո՛ր կանխեսցէ առ ի՛ս. եւ Աճ իմ ցուցցէ ինձ ի թշնամիս իմ:
13. Մի սպանանել զնոսա, զի մի մոռասցին զժողովուրդս քո:
14. Յուսա զնոսա զօրութի՛ւ քով, եւ ընկճեա զնո՛ս, զի դու ես պաշտպան իմ Տէ՛ր:
15. Մեղք բերանոյ նոցա եւ բանք շրթանց նոցա. ընկալցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց:
16. Յանէծս եւ ի սուտ մատնեսցին. ի կատարած բարկութեան սպառեսցին եւ մի գոյցին:
17. Գո՛հասցեն զի Աստուած միրէ Յակովբայ, եւ ամենայն ծագաց երկրի:
18. Գարձցին ընդ երեկոյս, սովեսցին որպէս շունք, եւ շրջեսցին զքաղաքաւ:
19. Նո՛քա սփռեսցին յուտել. ապա թէ ոչ յագեսցին, արտնջեսցեն:
20. Եւ օրհնեցից զօրհնութի՛ւն Տ՛ն. զընծայից յառաւօտուց յողորմութի՛ւ քումմ:
21. Զի եղեր իմ պաշտպան եւ տուն ապաւինի, յաւուր նեղութեան իմոյ օգնական իմ:
22. Քեզ սաղմոս ասացից Աստուած ապաւէն իմ, Աճ ողորմութեան իմոյ:

1. Ի կապտաձ ջաւանցելոց ժամանակաց յոլյանաքէք:
2. Ի ժամանակի գի հզնէք արար ՎՒԼՔԵՓՈՍ Աստ-
ծոց ես վԱսպետան ես վՅուդա, ես է պատչին
հաբկանէր Յովաբ զՅորդան Աղարկ յԵբկոպատան
հապտա: Սպմա. Ծոմ:

3. ԸՍՏՈՒԱԾ *մերժեցեր եւ աւերեցեր զմեզ, բարկացար եւ զթացիս ի մեզ:*
4. Շ*արժեցեր զերկիր, եւ խռովեցուցեր զա. բժշկեա զհարուածս սորա՝ զի սասանեցաւ:*
5. *Յուցեր ժողովրդեան քումմ խաւսուիթիւն. եւ եաուր ըմպել մեզ գինի յիմարութեան:*
6. *Նշաուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեացին յերեսաց աղեղան:*
7. *Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո աջով քո եւ լուր մեզ:*
8. *Ընծ խօսեցաւ ի սրբութէ իւրմէ. ցնծացայց, բարձր եղէց, բաժանեցայց զՍիւքէմ. եւ զհովիտս յարկաց չափեցից:*
9. *Իմ է Գաղաատ, եւ իմ է Մանասէ. Եփրեմ հզօրութէ գլխոյ իմոյ:*
10. *Յուդա թագաւոր իմ. Մովաբ աւազան յուսոյ իմոյ:*
11. *ՅԵդովմ ուղեցից զգնացս իմ. եւ ինձ այլազգիք հնազանդ եղեն:*
12. *Ո՞ տարցի զիս ի քաղաք ամուր.*

կամ ո՞ տուաջնորդեսցէ ինձ մինչեւ յԱդումէ։

13. Եթէ ոչ դու Ընծ որ մերժեցեր զմեզ, եւ ոչ ելեր Ընծ ընդ զօրս մեր։

14. Տուր մեզ օգնութիւն ի նեղութենէ, զի ընդունայն է փրկութիւն մարդոյ։

15. Ընտուծով արուացուք զօրութիւն. եւ նա արհամարհեսցէ զայնոսիկ որ նեղեն զմեզ։

1. Ի հատուած ընդ օբհնութիւնս. Սաղմոս է Դաւթի. Կ։

2. Լուր Ընտուած աղօթից իմոց, եւ նայեա Տէր յաղօթս իմ։

3. Ի ծագաց երկրէ կարդացի առ քեզ, մինչ ի վաստակել սրտի իմոյ։

4. Ի վեմէ բարձր արարեր զիս, առաջնորդեցեր ինձ. եւ իմ եղեր յոյս եւ աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց թշնամւոյն։

5. Բնակեցայց ես ի յարկս քո յաւիտեան. եւ ծածկեցայց ընդ հովանեաւ թեւոց քոց։

6. Դու Ընտուած լսեր աղօթից իմոց. եւտուր ժառանգութիւն ոչք երկնչեն յանուանէ քումէ։

7. Ետուր յաւուրս յաւելեր թագա-

տրի ամաց նորա, աւուրս յայդպց մինչեւ յայգս նորա:

8. Այլ եւ ճնայ յաւիտեան առաջի Աստուծոյ ողորմութիւն եւ ճշմարտութիւն, որք խնդրեսցեն ի նմանէ:

9. Այսպէս սաղմոս ասացից անուան քում յաւիտեան, եւ տայց քեզ զաղօթս իմ օրըստօրէ:

1. Ի կատարած սաղմոս Իդիթունայ է Դաւիթ. ԿԱ:

2. Ասացի միայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ, զի ի նմանէ է ինձ փրկութիւն:

3. Նա է Աստուած իմ եւ փրկիչ իմ, ապաւէն իմ, զի մի սասանեցայց առաւել:

4. Մինչեւ յե՞րբ յառնէք ի վերայ մարդոյ սպանանել ամենեքեան, որպէս յորմոյ թիւրելոյ եւ ի ցանգոյ մերժելոյ:

5. Այլ միայն զպատիւ իմ խորհեցան մերժել յինէն, եւ ընթացան ի ծարաւս իւրեանց:

6. Ներանօք իւրեանց օրհնէին, եւ սրտիւք անիծանէին:

7. Այլ սակայն Աստուծոյ հնազանդ լեցի անձն իմ, զի ի նմանէ է ինձ համբերութիւն:

8. Ինա է Աստուած իմ եւ փրկիչ իմ, ապաւէն իմ, զի մի սասանեցայց:

9. ՅԱյ է զօրութի՛ւն իմ, եւ փառք իմ. Աճ օգնութե՛ւն իմոյ. յոյս իմ է առ Աճ:

10. Յուսացարուք ի նա ամենայն ժողովք ժողովրդոց. սիրեցէք առաջի նորա զխրատս ձեր, զի Աստուած օգնական է մեր յաւիտեան ժամանակաց:

11. Սակայն ընդունայն են որդիք մարդկան. սուտ են որդիք մարդկան. ի կշիռս իբեանց մեղանչեն, եւ ինքեանք յունայնութեան են ի միասին:

12. Մի յուսայք յանիրաւութիւն, յափըշտակութեան մի ցանկայք. եւ մեծութիւն թէ առուիս զայցէ՝ մի յօժարեսցին սիրտք ձեր:

13. Միանգամ խօսեցաւ Աստուած. եւ երկուս զայս լուաք:

14. Աստուծոյ է զօրութիւն, եւ քո՛ էր ողորմութիւն. եւ դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս նոցա:

1. Աղօ՛թ Դաւթի մինչ էր նա յանապատի անդ Հրէաստանի. ԿԱ՛:

2. Ընտուած Աճ իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւի է առ քեզ հոգի իմ, քանիապատիկ եւս եւ մարմին իմ:

3. Արար երկիր անապատ եւ անջուր, ու՛ր ոչ գոյ ի նմա ճանապարհ:

4. Ընդարձակ ի սուրբս երեւեցայց քեզ, սեւանալ ինձ զզօրութիւն եւ զփառս քո:

5. Վա՜ան զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ, եւ շրթունք իմ գովեսցեն զքեզ:

6. Ընդարձակ օրհնեցից զքեզ ի կեանս իմ. եւ յանուն քո հանրարձից զձեռս իմ:

7. Արար ի ճարպոյ պարարտութենէ լցի անձն իմ, եւ շրթամբք ցնծութեամբ օրհնեսցէ զքեզ բերան իմ:

8. Ո՛վ թէ յիշէի զքեզ յանկողնի իմում, ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ:

9. Ո՛վ եղեր իմ օգնական, ի հովանի թեւոց քոց ցնծայցեմ:

10. Նկին զկնի քոյ անձն իմ եւ զիս ընկալաւ աջ քո. այլ նոքա ի նանիր խնդրեցին զանձն իմ:

11. Մտցեն ի նեղութ անդնդոց երկրի. մատնեսցին ի ձեռս սրոյ, եւ բաժինք աղուեսաց եղիցին:

12. Թագաւոր յուսացաւ ի Տէր. գովեսցին ամենեքեան որ երդնուն նովաւ. խցցին բերանք այնոցիկ՝ որ խօսին զանիրաւութիւն:

1. Ի կապարճ: Սպրա է դաւթի. կգ:

2. Լուր Աստուած աղօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ. եւ յերկիւղէ թշնամւոյն փրկեա զանձն իմ:

3. Ծածկեացես զնս ի ժողովոց չարաց, ի բազմութէ ոյք գործեն զանօրէնութի:

4. Ոյք սրեցին որպէս սուսեր զլեզուս իւրեանց. լարեցին զաղեղունս իւրեանց յիւրս դառնութեան:

5. Ձգել ի գաղտնիս այնոցիկ ոյք ուղիղ են սրտիւք, յանկարծակի ձգեացեն ինոսա եւ մի երկիցեն:

6. Ոյք զօրացուցին յանձինս իւրեանց զբանս չարութեան, խորհեցան թաղուցանել ինձ որոգայթ, եւ ասացին ոչ տեսանէ զայս Տէր:

7. Քննեցին զանօրէնութիւն, պարտասեցան ի քննել զքննութիւն:

8. Մատիցէ այր ի խորութիւն սրտի իւրոյ. եւ բարձր եղիցի Աստուած:

9. Նետք տղայոց եղիցին վէրք նոցա. տկարացին ի նոսա լեզուք իւրեանց. եւ խռովեացին ամենեքեան ոյք հային ընդ նոսա:

10. Երկեաւ ամ մարդ, եւ պատմեցին գործս Աւյ. զարարածս նր ի միտ առին:

11. Ուրախ եղիցի արդար ի Տէր, եւ յուսացի ի նա. նովաւ դովեսցին ամենեքեան որք ուղիղ են սրտիւք:

1. Ի կատարած սաղմոս ի դաւիթ. օրհնութիւն երեմիայ. եղեկիէլ եւ ամենայն ժողովրդեան, յորժամ է պանդխտութենէն հասնէին երուսաղէմ: Սաղմոս. կ՚ը:

2. Հեռ վայելէ օրհնութի՛ւնդ ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յերուսաղէմ:

3. Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

4. Խանգ անօրինաց զօրացան ի վերայ մեր. զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես:

5. Երանի զորս ընտրեցեր եւ ընկալար. եւ բնակեսցեն ի գաւիթս քո:

6. Լցցուք մեք ի բարութենէ տան քո. ուր է տաճար քո սքանչելի արդարութի՛ւն:

7. Լուր մեզ Ընծ փրկիչ մեր, յոյս ամ ծագաց երկրի, եւ որ ի ծով հեռի:

8. Ո պատրաստէ զլերինս զօրութեամբ իւրով՝ զգեցեալ է զօրութիւն:

9. Ո խառնեցուցանէ զվեծութիւն ծովս, եւ զձայն ալեաց նորա ցածուցանէ:

10. Խռովեսցին հեթանոսք, եւ երկիւղին բնակիչք երկրի ի նշանաց քոց:

11. Եվ առաւօտու ընդ երեկոյս զուարճացին. հայեցար յերկինս, արբեցուցեր զնա, եւ բազում արարեր զմեծութի նմ:
12. Զհան Աստուծոյ լի եղեւ ջուրբ. պատրաստ արարեր զկերակուր նորա, զի այսպէս է պատրաստութիւն:
13. Օգակօս նորա արբեցուցեր, եւ բազում արարեր զարմանս նորա:
14. Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նորա. օրհնեացի պատկ տալոյ քաղցրութեան քո:
15. Դաշտք քո լցցին պարարտութեամբ. պարարտասցին գեղեցկութիւք անապատի:
16. Լերք ցնծութիւն զգեցցին. եւ զգեցցին խոյք մատեաց:
17. Հովիտք բազում արտասցին ցորեան. աղաղակեսցեն եւ օրհնեսցեն:

1. Ի կոպտութ սաղմոս է Դաւիթի վասն յաբռնեան. ՀԱ:

2. Ընդդանիցէ առ Աստուած ամենայն երկիր. սաղմոս ասասցէք անուան նորա. եւ տուք զփառս օրհնութեան նորա:
3. Ասացէք Աստուծոյ. որպէս զի ահեղ են գործք քո. ի բազում զօրութեան քում սուտեսցին քեզ թշնամիք քո:
4. Ամենայն երկիր երկրպագցեն քեզ.

սաղմոս ասասցեն քեզ. սաղմոս ասասցեն անուան քումմ:

5. *Նկայք եւ տեսէք զգործս Աստուծոյ. որպէս զի ահեղ են խորհրդովք քան զամենայն որդիս մարդկան:*

6. *Ո դարձոյց զծովն ի ցամաք. եւ ընդ գետս անցցեն յոտանաւորս:*

7. *Ընդ ուրախ եղիցուք մեք ի նա, որ տիրէն զօրութեամբ իւրով յաւիտենից:*

8. *Աչք նորա ի հեթանոսս հային. ոչք դառնացուցին զնա, մի բարձրասցին յանձին իւրեանց:*

9. *Օրհնեցէք հեթանոսք զԱստ մեր. լսել արասէք զձայն օրհնութեան նորա:*

10. *Ընդ որ եւս զանձն իմ ի կեանս. եւ ոչ եւս դողութիւն ոտից իմոց:*

11. *Փորձեցեր զմեզ Աստուած, եւ քննեցեր որպէս եւ քննի արծաթ:*

12. *Ածուցեր զմեզ յորոգայթ, եդեր նեղութիւն ի թիկունս մեր. եւ անցուցեր զմարդիկ ի վերայ գլխոց մերոց:*

13. *Ընցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր եւ հաներ զմեզ ի հանդիստ:*

14. *Մտից ի տուն քո պատարագօք, եւ տացց քեզ զուխտ իմ. զոր խոստացան քեզ շրթունք իմ, զոր բերան իմ խօսեցաւ ի նեղութեան:*

15. Ողջակէզս ուղղեցից մատուցից քեզ խոյովք եւ նուիրօք. եւ քեզ մատուցից զուարակս եւ նոխազս:

16. Նկայք լուարուք ինձ, եւ պատմեցից ձեզ ամենեքեան որք երկնչիք Աստուծոյ զոր ինչ արար անձին իմոյ:

17. Ընդ նա բերանով իմով կարդացի. եւ բարձր արարից զնա լեզուաւ իմով:

18. Մեղս թէ տեսանէի ի սրտի իմում. մի լուիցէ ինձ Տէր:

19. Այլ ականջիկ լուաւ Աստուած, եւ նայեցաւ ի ձայն խնդրուածոյ իմոց:

20. Օրհնեալ է Աստուած, որ ոչ ի բացեայ արար զաղօթս. եւ ոչ զողորմութիւն իւր յինէն:

1. Ի կատարած սաղմոս է Դաւիթ. ԿԱ:

2. Աստուած ողորմեա մեզ եւ օրհնեա զմեզ. երեւեցո զերեսս քո ի մեզ, եւ ողորմեա մեզ:

3. Ճանաչել յերկրի զճանապարհս քո. յազգին ամենայն զփրկութիւնս քո:

4. Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած. խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն:

5. Ուրախ եղիցին եւ ցնծացեն ազգք. զի դու դատիս զժողովուրդս յուղղութիւն, եւ ազգաց երկրի դու առաջնորդես:

6. Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ասուած. դոհասցին գքէն ժողովուրդք ամենայն:

7. Երկիր ետ պտուղ իւր. եւ օրհնեաց զմեզ Ասուած Ասուած մեր:

8. Ասուած մեր օրհնեսցէ զմեզ, եւ ի նմանէ երկիցեն ամենայն ազգք երկրի:

1. Ի կոպտութ սպրմա ի դաւիթ. ՃԼ:

2. Յարիցէ Ասուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն առելիք նորա յերեսաց նորա:

3. Որպէս պակասէ ծուխ պակասեսցին. որպէս հալի մոմ առաջի հրոյ, այնպէս կորիցեն մեղաւորք յերեսաց Ասուծոյ:

4. Արդարք ուրախ եղիցին եւ ցնծասցեն առաջի նորա, եւ զուարճասցին յուրախութեան իւրեանց:

5. Օրհնեցէք զԱսուած եւ սաղմոս ասացէք անուան նորա. ճանապարհ արարէք այնմիկ որ նստի ընդ արեւմուտս, եւ տէր է անուն նորա:

6. Ցնծասցեն առաջի նորա. եւ խռովեսցին յերեսաց նորա:

7. Որ հայրն է որբոց եւ դատաւոր այ-

բեաց Աստուած, ի տեղւոջ սրբութեան իւրում:

8. Աստուած բնակեցուցանէ զմիակրօնս ի տան, եւ հանէ զկապեալսն քաջութեամբ իւրով. սոյնպէս եւ զդառնացողսն՝ որ բնակեալ են ի գերեզմանս:

9. Աստուած ընդ ելանել քեզ առաջի ժողովրդեան քո, եւ ընդ անցանել քեզ ընդ անապատ երկիր շարժեցաւ:

10. Վանգէ եւ երկինք եւս ցօղեցին յերեսաց Աւյ ի Սինէ առաջի Աւյ Իսրայելի:

11. Ընձրեւ կամաց պատրաստեցեր Աստ ժառանգութիւն քում. թէպէտեւ հիւանդացաւ, սակայն դու հաստատեցեր զնա, եւ զաղանք քո բնակեացեն ի նմա:

12. Պատրաստ արարեր քաղցրութեամբ քով աղքատի Աստ. Տէր տացէ զբան ոյք աւետարանեն զօրութեամբ բազմաւ:

13. Թագաւոր զօրութեանց սիրելոյ. զգեղեցկութիւն տան քո բաժանեալ յաւարի, թէպէտ եւ ննջեսջիք ի մէջ վիճակաց:

14. Թեւք աղաւնւոյ արծաթապատ եւ թիւնամէջ նորա ի գոյն ոսկւոյ:

15. Ի գումարել երկնաւորին զթագաւորս ի վերայ նմ, ձիւնասցին ի Սաղմոն:

16. Լեառն Աստուծոյ լեառն պարարտ.

լեառն մածեալ եւ լեառն պարտու. եւ զինչ կարծէք լերինք հպարտացեալք:

17. Լեառն ընդ որ հաճեցաւ Աստուած բնակել ի նա. քանզի եւ Տէր իսկ բնակեսցէ ի նմա յապաւս:

18. Կառք Աստուծոյ բիւրապատիկք, հազարք ուղղիչք, եւ Տէր ի նոսա ի Սինէ սրբութիւնն իւրում:

19. Եւ ի բարձունս, գերեաց զգերութիւն. առ ասաւ, բաշխեաց պարգեւս եւ ետ որդւոց մարդկան, քանզի եւ թերահաւատից եւս բնակեալ եղիցին ի նմա:

20. Տէր Աստուած օրհնեալ, օրհնեալ Տէր զօրհանապազ. առաջնորդեսցէ մեզ Աստուած փրկիչ մեր:

21. Աստուած մեր, Աստուած կենարար. եւ ի Տեառնէ են ելք մահու:

22. Բայց սակայն Ած փշրեսցէ զգլուխս թշնամեաց մերոց. եւ զհերան կարծնովքն, որ գնան յանօրէնութեան իւրեանց:

23. Ասաց Տէր. ի խորոց անդնդոց դարձուսցից, եւ ի միջոց ծանեաց զինն ի դուրս կորզեցից:

24. Որպէս թացցի ոտն քո յարեան, եւ լեզուք շանց քոց յարենէ թշնամեաց քոց:

25. Դիմեւեցան գնացք քո Աստուած, գնացք Աստուծոյ թագաւորին մերոյ սրբոյ:

26. Պանխեցին իշխանք հանել զօրհնութիւն ի վեր դուանաց եւ դռվէրաց:
27. Յեկեղեցիս օրհնեցէք զՅաուաճ, եւ զՏէր յաղթեցան Խրայելն:
28. Ընդ Լենիամին ի տղայութեան զարմանալն. իշխանք Յուդայ առաջնորդք նորա, իշխանք Զաբուղոնի եւ իշխանք Նեփթաղիմայ:
29. Հրամայեա Ած զօրութիւն քով. զօրացս զայս զոր հաստատեցեր ի մեզ:
30. Ի տաճարէ քումէ Յերուսաղեմ, քեզ մատուցեն թագաւորք զպատարագս:
31. Սատեա ի գազան եղեգան. ի ժողովս զուարակաց եւ ի դաս երնջոց:
32. Խոտեցին այնոքիկ, որ ընտրեալ են արծաթով. ցրուեա զՀեթանոս, եւ զոք կամին ընդ պատերազմ:
33. Եկեցեն հրեշտակք Յեգիպտոսէ, Հնդիկք յառաջապոյն ձեռնտու լցին առ Յաուաճ:
34. Թագաւորութիւն երկրի օրհնեցէք զՅաուաճ, եւ սաղմոս ասացէք Տեառն:
35. Հանապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս:
36. Ահա տացէ զձայն իւր ի ձայն զօրութեան, եւ տուք փառս Յաուաճոյ:
37. Ի վերայ Խրայելի վեճվայելչու-

թիւն նորա. զօրութիւն նորա մինչեւ յաւիտեան երկնից:

38. Աքանչելի է Աստուած ի վերայ սրբոց իւրոց՝ Աստուած Իսրայելի:

39. Նա տայ զօրութիւն հաստատութիւն ժողովրդեան իւրոյ. օրհնեալ է Աստուած:

1. Ի կատարած վասն ղատանցելոց սաղմոս վասն փոփոխման. ԿԱ՚:

2. Ածո զիս Աստուած, զի հասին ջուխք յանձն իմ. ընկղայ ես ի խորս անդընդոց, ուր ոչ զոյ հնձ հանդիսաւ:

3. Անկի ես ի խորս ծովու, եւ շրջանք ընկղմեցին զիս:

4. Վ աւաւակեցի ես առ աղաղակել. եւ կերկերեցաւ կոկորդ իմ:

5. Նուազեցին աչք իմ առ յուսալ հնձ առ Տէր Աստուած իմ:

6. Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ որք ատէին զիս ի տարտարոսոց:

7. Զօրացան յիս թշնամիք իմ եւ աւանիք իմ ի նանիր. ինչ զոր ոչ յափշտակեան էի՝ տուժէի նոցա:

8. Աստ դու ծանեար զանզգամութիւն իմ, եւ յանցանք իմ ի քէն ոչ ծածկեցան:

9. Մի առաչեսցեն վան իմ ոչք համբերեն քեզ Տէր՝ Տէր զօրութեանց. մի պատկառեսցին վան իմ, ոչք խնդրեն զքեզ Ըստուած Իսրայէլի:

10. Վ ան քո համբերի նախատանաց, եւ ծածկեաց ամօթ զերեսս իմ:

11. Օտար եղէ ես եղբարց իմոց. եւ հիւր որդւոց մօր իմոյ:

12. Նախանձ տան քո եկեր զիս. նախատինք նախատողաց քոց անկան ի վերայ իմ:

13. Խոնարհեցուցի պահօք զանձն իմ, եւ եղեն ինձ այս նախատինք. արարի զհանդերձ իմ քուրձ, եւ եղէ յառակ նոցա:

14. Ոմինքն խորհէին, որ նստէին առ դրունս. զիս այսպն առնէին ոչք ըմպէին գինի:

15. Ես յաղօթս կայի առ քեզ Տէր, ի ժամանակ ընդունելի:

16. Ընծ ի բազում ողորմութիւն քում լուր ինձ. ի ճշմարտութիւն փրկութիւն քոյ:

17. Ապրեցո զիս ի կաւոյ զի մի ընկլայց. ապրեցայց ես յատելեաց իմոց, եւ ի խորոց ջուրց բազմաց:

18. Մի ընկղցեն զիս պոյտք ջրոյց, եւ մի ընկղմեսցեն զիս անդունդք խորոց. եւ ջրհոր մի կափուսցէ զբերան իւր ի վր իմ:

19. Լուր ինձ Տէր, զի քաղցր է ողոր-

մութիւն քո. լսա բազում զթութեան քում հայեաց յիս. եւ մի դարձուցաներ զերեսս քո ի ծառայէ քումէ. զի նեղեալ եմ եւ վաղվաղակի լուր ինձ:

20. Հայեաց յանձն իմ, փրկեա զիս. եւ ի քէն թշնամեաց իմոց ապրեցո զիս:

21. Ի քե զիս պահես զնախատինս իմ, զամօթ իմ եւ զպատկառանս իմ:

22. Ընդ քո են ամենայն նեղչաք անձին իմոյ, նախատանաց հարիր սիրտ իմ եւ թշուառութեան:

23. Սպասի թէ ո՛ տրտմեսցի ընդ իս, եւ ոչ ոք էր. եւ մխիթարիչ ոք ոչ գտաւ:

24. Եւտուն ի կերակուր ինձ լեղի. եւ ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ:

25. Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, ի հատուցումն եւ ի գայթակղութի:

26. Խաւարեսցին աչք նոցա, զի մի տեսցեն. եւ զթիկունս նոցա հանապազ կորացո:

27. Եղիցես ի վերայ նոցա զբարկութիւն քո. սրտմտութիւն բարկութեան քո հասցէ ի վերայ նոցա:

28. Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ, եւ ի յարկս նոցա մի ոք լիցէ որ բնակիցէ:

29. Զի զոր դու հարեր, հալածեցին. եւ ի վէրս ցաւոց իմոց յաւելին:

30. Դէր մեղս ի վերայ մեղաց նոցա, զի մի մոցեն յաղաւթիւն քո:
31. Ջնջեացին նոքա ի գպրութենէ քումէ կենաց. եւ ընդ արդարս քո մի գրեացին:
32. Ողքաւ եւ ցաւած եմ ես. փրկութիւն քո Աստուած՝ ընկալցի զիս:
33. Օրհնեցից զանուն Աստուծոյ ի մոյ օրհնութեամբ, եւ բարձր ասասցից զնա գովութեամբ:
34. Հաճոյ եղիցի Աստուծոյ քան զորթ մատաղ, որ բերէ եղջիւրս եւ կճղակս:
35. Տեսցեն աղքատք եւ ուրախ եղիցին. խնդրեցէք զԱստուած եւ կեցցեն անձինք ձեր:
36. Զի լուաւ Տէր մնանկաց, եւ զկապեալս իւր ոչ արհամարհեաց:
37. Օրհնեացեն զնա երկինք եւ երկիր, ծով եւ ամենայն որ շարժի ի նոսա:
38. Աստուած փրկէ զՍիոն, եւ շինեացին քաղաքք Հրէաստանի. շինեացեն, բնակեացեն եւ ժառանգեացեն ի նմա:
39. Զաւակ ծառայից քոց հաստատեացի անդ. եւ որք սիրեն զանուն քո բնակեացեն ի նմա:

1. Ի կոպտութ սաղմոս է Դաւիթ. է սկզբոյկ փըկըլոյն ընա Տեառն. ԿՀԹ:

2. Ընտուած յօդնել ինձ նայեա. եւ Տէր յընկերել ինձ փութա:

3. Ամաչեացեն եւ յամօթ լինիլն ամենեքեան որ խնդրեն զանձն իմ. դարձցին յետս եւ ամաչեացեն, որ խորհէին ինձ չար:

4. Դարձցին առժամայն ամաչեցեալ, որ ասէին ինձ վաշ վաշ:

5. Ցնծասցեն եւ ուրախ լինիլն ի քեզ ամենեքեան, որ խնդրեն զքեզ Տէր:

6. Ընասցեն յամենայն ժամ մեծ է Ընտուած, որք սիրեն զփրկութիւնս քո:

7. Եւ աղքատ եւ անանկ եմ. Ընտուած օգնեա ինձ. օգնական եւ փրկիչ իմ ես, եւ դու Տէր իմ մի յամենար:

1. Ի կոպտութ սաղմոս է Դաւիթ, որ ըսաւ Յովնադաբայ. եւ սուտկին գերուելեանն անվընասելէ:

2. Ի բեզ Տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան. յարդարութեան քում փրկեա եւ ապրեցո զիս:

3. Խոնարհեցո առ իս զունկն քո, եւ կեցո զիս:

4. Լեր իմ Ընտուած ապաւէն, եւ

աեղի ամուր կեցուցանել զիս, զի հաս-
տութիւն իմ եւ ապաւէն իմ դու ես:

5. Ընծ իմ, փրկեա զիս ի ձեռաց ա-
զաւորի. ի ձեռաց անօրինի եւ անիրաւի:

6. Դու ես համբերութիւն իմ Տէր,
Տէր յոյս իմ ի մանկութենէ իմմէ:

7. Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ.
յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ,
եւ առ ի քէն է օգնութի՛ իմ յամ ժամ:

8. Որպէս զի նշաւակ եղէ ես բազմաց,
եւ դու օգնական իմ եւ հզօրիչ իմ:

9. Լցի բերան իմ գովութեամբ. որ-
պէս օրհնեցից զքառս քո, զօրհանապատ
զվեճվայելչութիւնս քո:

10. Մի ընկենուր զիս Տէր ի ժամանա-
կի ծերութեան. ի պակասել զօրութեան
իմոյ մի թողուր զիս:

11. Ասացին թշնամիք իմ ինձ, եւ ոչք
պաշարեցին զանձն իմ՝ խորհեցան ի մի-
սին եւ ասացին:

12. Աստուած եթող զնա, հալածեա-
ցուք եւ հասցուք նմա. զի ոչ ոք է որ
փրկէ զնա:

13. Աստուած իմ մի հեռի առնիր յի-
նէն. եւ Աստուած յօգնել ինձ նայեաց:

14. Ամաչեսցեն եւ պակասեսցին ոչք
չարախօս կացին զանձնէ իմմէ. զգեցցին

զամօթ եւ զպատկառանս ոչք խնդրէին ինձ զչար:

15. Եւ յամենայն ժամ յուսացայց. եւ յաւելից յօրհնութիւնս քո:

16. Բերան իմ պատմեսցէ զարդարութիւն քո, զօրհանապատ զգովութիւն քո:

17. Սրպէս ոչ թէ խարդախութիւն ինչ գիտէի ես գպրութեան. այլ մաի ի զօրութիւնս Տեառն. եւ Տէր՝ յիշեցի զարդարութիւնս քո միայն:

18. Ընտուած իմ ուսուցեր զիս ի մանկութենէ իմմէ. եւ ցայդ եւս պատմեցից զարդարութիւնս քո:

19. Մինչեւ յաւետրել եւ ի ծերանալ, Ընտուած իմ մի թողուր զիս:

20. Մինչեւ պատմեսցի բազուկ քո ազգի ամենայնի որ գալոցն է:

21. Զօրութիւնս քո եւ զարդարութիւնս մինչ ի բարձունս, զոր արարեր մեծամեծս. Ընտուած ո՞ նմանէ քեզ:

22. Սրչափ ցուցեր ինձ նեղութիւնս բազումս եւ չարչարանս. դարձեալ եւ մխիթարեցեր զիս, եւ ի խորոց անդընդոց երկրէ հաներ զիս:

23. Յաճախեցեր ի զօրութիւնս քո. դարձեալ մխիթարեցեր զիս, եւ ի խորոց երկրէ միւսանգամ հաներ զիս:

24. Ամէն եւ ես խոստովան եղէց քեզ տէր ի պատրաստութիւն սաղմոսաց ճշմարիտ Աստուած. սաղմոս ասացից քեզ օրհնութեամբ սուրբ Իսրայելի:

25. Յնծասցեն շրթունք իմ, յորժամ սաղմոս ասացից քեզ. եւ անձն իմ՝ զոր եւ փրկեցեր:

26. Նաեւ եւ լեզու իմ զօրհանապազ խօսեցի զարդարութիւնս քո:

27. Ի ժամանակի որպէս յամօթ լինին եւ ամաչեսցեն որք խորհէին ինձ չար:

1. Ի հոգւոջ սաղմոս է Սողոմոն. ՃԼ:

2. Աստուած զկրաւունս քո արքայի տուր, եւ զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի:

3. Դատել զժողովուրդս քո արդարութեամբ, եւ զաղքատս քո իրաւամբք:

4. Ընցեն լերինք զխաղաղութիւն ժողովրդեան, եւ բլուրք զարդութիւն:

5. Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեան, եւ կեցուսցէ զորդիս անանկաց, եւ խոնարհեցուսցէ զամբարտաւանս:

6. Պայցէ եւ ճնասցէ ընդ արեւու, յաւուրս քան զլուսին, յազգէ մինչեւ յազգ:

7. Ելցէ որպէս զանձրեւ ի վերայ գեղեման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր:

8. Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն, բազում խաղաղութիւն մինչեւ կատարեսցի լուսին:

9. Տիրեսցէ նա ի ծովէ մինչեւ ի ծով, ի գետոց մինչեւ ի ծագս աշխարհի:

10. Ընդաջի նորա նախ Ընդիկք անկցին. եւ թշնամիք նորա հող կերիցեն:

11. Թագաւորք Թարսեայ եւ կղզեաց պատարագս մատուսցեն նմա. Թագաւորք Ընդեայ եւ Սաբայ պատարագս բերցեն նմա:

12. Երկիրպադցեն նմա ամ Թագաւորք երկրի, եւ ամ ազգք ծառայեսցեն նմա:

13. Ող ի փրկեաց զաղքատն ի հզօրէն, զաղքատն եւ զանանկն՝ որոյ ոչ է իւր օգնական:

14. Ընկալցէ նա յաղքատն եւ ի անանկ. զանձինս անանկաց կեցուսցէ, եւ ի վաշխէ չարաց փրկեսցէ զանձինս նոցա:

15. Պատուական է անուն նորա առաջի նոցա. կեցցէ եւ տացի նմա յոսկւոյն Ընդեացւոց:

16. Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ, եւ զօրհանապազ օրհնեսցեն զնա:

17. Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր, եւ ի վերայ գլխոց լերանց:

18. Բարձրացի քան զԼիբանան պտուղ

նորա. ծագկեցի ի քաղաքի Տեառն որպէս խոտ երկրի:

19. *Աղեղի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարեւ է անուն նորա:*

20. *Ի նա օրհնեցին ամենայն ազգք երկրի. եւ ամենայն ազինք երանիցեն նմա:*

21. *Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի որ առնէ զքաջութիւնս միայն. եւ օրհնեալ է անուն սրբ փառաց նր յաւիտեան. լցցի փառօք նորա զամ երկիր. եղիցի եղիցի:*

Աղօթ Աննայի մօրն Սամուէլի: Ա. Թագաւորաց Ա.

1. *Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր. եւ բարձրացաւ եղջիւր իմ յԱստ փրկիչ իմ:*

2. *Ընդարձակեցաւ բերան իմ ի վերայ թշնամեաց իմոց. ուրախ եղէց ի փրկութեան քումմ:*

3. *Ոչ է ոչ գոյ սուրբ որպէս զՏէր, եւ ոչ արդար որպէս զԱստուած մեր. եւ չիք սուրբ բաց յԱստուծոյ մերմէ:*

4. *Մի պարծիք եւ մի խօսիք զամբարտաւանս. եւ մի ելցէ ընդ բերանս ձեր բան հպարտ մեծաբանութեան:*

5. *Աստուած գիտութեանց, Տէր Աս-*

ուսած պատրաստէ իւրով իմաստութեամբ զգիտութիւն յարարածս իւր:

6. *Ընդդէմ հասս աղեղունք թուլացան, եւ սկաւք վաւելցան զօրութեամբ:*

7. *Կեալք հացիւ նուաղեցան. եւ քաղցեալք լցին զերկիր:*

8. *Ընդն ծնաւ եօթն, եւ բազմածինն նուաղեաց ի ծննդոց:*

9. *Տէր մեռուցանէ եւ Տէր կեցուցանէ. իջուցանէ ի դժոխս եւ հանէ:*

10. *Տէր աղքատացուցանէ եւ Տէր մեծացուցանէ. խոնարհ առնէ զամբարտաւանն մինչեւ յերկիր, եւ բարձր առնէ զաստուածեալս յաղբեւաց:*

11. *Կանգնացանէ զնոսա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան, եւ զաթոռ փառաց ժառանգեցուցանէ նոցա:*

12. *Կառարէ զսխտս ուխտարարաց, եւ օրհնեաց զամն արդարոց:*

13. *Օվ ոչ թէ իւրով զօրութեամբ զօրանայ հզօր. այլ Տէր տկար առնէ զհակառակորդս իւր. Տէր տուրբ է:*

14. *Մի պարծեսցի խորհրդականն ի խորհուրդս իւր. մի պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր. եւ մի պարծեսցի մեծն ի մեծութեան իւրում:*

15. *Այլ որ պարծին, ի Տէր պարծեա-*

ցի. ի խորհուրդս գիտութեան զՏէր ճանաչել:

16. Առնել զկրաւունս, եւ գործել զարդարութիւն, ի վերայ երեսաց երկրի:

17. Տէր եւ յերկինս եւ որոտաց. եւ ինքն գաւառ առանց բարբառելոյ:

18. Տայ զօրութիւն թագաւորաց մերոց. եւ բարձր առնէ զեղջիւր օծելոյ իւրոյ:

Մաղմոս:

Հարձրացաւ եղջիւր իմ ի Տէր ծաւալեցաւ բերան իմ. հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր՝ Տերամբ եւ հաւատով: Մարդասէր Տէր՝ վասն սրբութեան անարատ մօրքոյ եւ կուսի եւ վասն խաչի քո պատուականի ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Քառօղ Ողբերգային ես ի Նեղութեան:

Ա ւ գտանելոյ մեզ զչնորհս եւ զողորմութիւն ի բարերար Տէնէ մերմէ՝ զՏէր աղ:

Ա ւան փրկելոյ զմեզ ի զսպարտութենէ մարդկան եւ յորոգայթից սատանայի՝ զՏէր աղա:

Ա՝ւան ամենայն անձանց քրիստոնէից եւ տանց հաւատացելոյ՝ զՏէր:

Վ՚ան որք ի լերինս, յայրս եւ ի փա-
պարս բնակեալ են սուրբ հարքն մեր՝
զՏէր:

Վ՚ան որք սաղմոսիք եւ օրհնութեամբ
կատարեն զամենայն ժամանակս կենաց
իւրեանց՝ զՏէր:

Վ՚ան հոգւոցն հանգուցելոց՝ որք: Նո-
եա եւ վան միաբանութեան ՃշմարիտՀ:
Օ՚անձինս: Ողորմեաց:

Աղօթ:

Պ՚ոհանամք զքէն Տէր Ա՚ստուած մեր,
որ զարթուցեր զմեզ ի հանգստեանէ քնոյ
շնորհիւ ողորմութեան քո: Օ՚արթո
զմիտս մեր արդարութեամբ առ քեզ Տէր
Ա՚ծ մեր, զի տեսցեն աչք մեր զփըր-
կութիւն քո: Նկեսցէ եւ բնակեսցէ առ
մեզ աստուածութիւն քո. եւ ողորմու-
թիւն քո հովանի եւ պահապան լինի ի
վերայ պաշտօնէից քոց: Նո զմեզ զծա-
ռայքս քո արժանի արա ի տուէ եւ ի
գիշերի եւ յամենայն ժամու միշտ խոր-
հել ի սէր պատուիրանաց քոց: Նո զո-
հանալով փառաւորել զՀայր եւ զորդի
եւ զսուրբ Հոգիդ. այժմ եւ միշտ եւ յաւ-
իտեան յաւիտենից. Ա՚մէն:

Պենդանարար զօրութիւն եւ աղբիւր անմահութեան դու ես, Քրիստոս Աստուած փրկիչ մեր: Որ շնորհեցեր մեզ ի մէջ գիշերի յառնել եւ խոստովանել քեզ առ քեզ՝ վասն լրատանց եւ արդարութեան քո: Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր Աստուած մեր, ապա զմեզ արթուն եւ պատրաստս ի ժամ առաւօտու ընդ առաքս քո: Եւ ընդ նոսին զոհանալով փառաւորեացուք զքեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից. Ամէն:

Զոհութեամբ եւ ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեմք զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից. Ամէն:



Տես զՅուսիփ ծոռայ իմ, եւ խաղայ սրտով իմով ծնի զնա: ած. ԻԲ:

Ի կապտած Սաղմոս յԱսափ. ՀՐ:

1. Իբրեւ զի բարի է Իսրայելի Աստուած, եւ որք ուղիղ են սրտիւք:

2. Բայց զի իմ փոքր մի եւս սասանեալ էին ոտք. սակաւիկ մի եւ դայթապղեալ էին գնացք:

3. Նախանձեցայ ես ընդ անօրէնս, զխաղաղութիւն մեղաւորաց որպէս տեսանէի, զի ոչ գոյր վրէպ մահու նոցա:

4. Հաստատուն էին տանջանք նոցա. ի վաստակս մարդկան չեն նոքա. եւ ընդ մարդկան ոչ տանջեացին:

5. Վասն այսորիկ կալաւ զնոսա ամբարտաւանութիւն. արկան զիւրեամբք զամբարշտութի՛ւն եւ զանիրաւութի՛ւն իւրեանց:

6. Եկն որպէս ի ճարպոյ անիրաւութիւն նոցա. զի գնացին նոքա ընդ խորհրդոյ սրտից իւրեանց:

7. Խորհեցան եւ խօսեցան զչարութիւն. զամբարտաւանութիւն ի բարձունս խօսեցան:

8. Եդին յերկինս զբերանս իւրեանց, եւ զլեզուս իւրեանց աճէին զերկիր:

9. Վասն այսորիկ ժողովուրդ իմ դարձ-

ցի այսէն. եւ աւուրք իմ լի կատարեալ գոցին ի նոսա:

10. Ասացին զնա՛րդ գիտաց Ասուածոյ. կամ գուցէ այդեօք գիտութիւն առ ի բարձրելոյն:

11. Ահա մեղաւորք են, եւ յաջողեալ է այ. կան եւ ունին զմեծութի աշխարհի:

12. Ասացի ի զուր ուրեմն արդարացուցի զսիրտ իմ. լուացայց սրբութեամբ զձեռս իմ. եղէ ես խոշտանգեալ զօրհանապազ, եւ կշտամբանք իմ ընդ առաւօտս:

13. Թէպէտ եւ ասէի Թէ այսպէս պատմեցից. ահաւադիկ յազգ որդւոց քոց, որոց եւ ուխտեցի:

14. Ի մտի եդի Թէ սակայն եւ այս ջան է առաջի իմ, մինչեւ մտից ի սրբութի Ա՛յ, եւ ի վախճան առից զկատարած նո՛ց:

15. Սակայն վասն նենգութեան նոցա տարակոյր արասցես զնոսա, եւ կործանեսցես զնոսա յանդրանկութեան իւրեանց:

16. Իսկ զնա՛րդ եղեն աւեր յանկարծակի՝ սատակեցան, պակասեցան, կորեան վասն անբարոյականութեան իւրեանց. եւ եղեն որպէս երազ զարթուցելոյ:

17. Տէր ի քաղաքի քում զպատկերս նոցա անարգեցի ես. զի հուր բորբոքեցաւ

ի սրտի իմում, եւ երիկամունք իմ այլա-
դունեցին:

18. Եւս արհամարհեալ եղէ, եւ ոչ
դիտացի. ոչ զանաւուն համարեցայ առա-
ջի քո, եւ ես յամ ժամ ընդ քեզ եմ:

19. Վասն զայլ ձեռանէ իմմէ. ի
խորհուրդ քո առաջնորդեցեր ինձ եւ
փառօք ընկալար զիս:

20. Ո՞վ ինչ կայ իմ բնաւ յերկինս, կամ
ի քէն զի՞նչ եւս կանդրեցից յերկրի:

21. Նուաղեաց սիրտ իմ եւ մարմին իմ.
Ած սրտի իմոյ, բաժին իմ Ած յաւիտեան:

22. Ահաւասիկ ոչք հեռի արարին զան-
ձինս իւրեանց ի քէն՝ կորիցեն. աւասկես-
ցին ամենեքեան ոչք պոռնկեալք եղեն ի քէն:

23. Ինձ մերձենալ առ Աստուած բա-
րի է, եւ դնել առ Տէր զյոյս իմ:

24. Պատմել զամենայն օրհնութիւնս
քո ի դրունս դստերն Սիոնի:

Ի կոտորած. Սաղմոս ՃԱՀԴ. ՀԶ:

1. Ընդէ՞ր մերժեցեր Աստուած ի
ապառ. բարկացաւ սրտմտութիւն քո ի
վերայ խաշնի արօտի քո:

2. Յիշեա զժողովուրդ քո՝ զոր ստա-
ցար ի սկզբանէ. փրկեցեր զվիճակ ժա-
ռանգութեան քո:

3. Լեառն Սիոն այս՝ ուր բնակեցեր դու ի սմա. ամբարձ զձեռն քո ի վերայ ամբարտաւանութեան նոցա իսպառ:

4. Որ ինչ անիրաւեցաւ թշնամին ի սրբութեան քում, պարծեցան առելիք քո ի մէջ բարեկենդանութեան իւրեանց:

5. Նշին զնշանս իւրեանց ի նշան. եւ ինքեանք ոչ ծանեան զնշս ի վերուստ:

6. Որպէս յանտառի փայտատօք կոտրեցին զդրունս նորա. ի միասին փայտատօք եւ մրճօք կոտծանեցին զնա:

7. Արկեցին ի հուր զսրբութիւն քո յերկրի, պղծեցին զխորան անուան քո:

8. Ասացին ի սիրտս իւրեանց ազգք նոցա ի միասին. եկայք ընդհատցուք զամենայն տօնս Աստուծոյ յերկրէ:

9. Նշանս մեք ինչ ոչ տեսաք. եւ ոչ եւս գոյ մարգարէ. եւ զմեզ ինչ ոք ոչ ճանաչեցէ:

10. Մինչեւ յե՞րբ Աստուած, նախատէ թշնամին՝ բարկացուցանէ հակառակորդն զանուն սուրբ քո:

11. Ընդէ՞ր դարձուցանես զձեռն քո, եւ զաջ քո ի միջոյ ծոցոյ քումէ իսպառ:

12. Աստուած թագաւոր մեր յառաջ քան զյաւիտեանս, որ արարեր զփրկութիւն ի մէջ երկրի:

13. Եւ հաստատեցեր զօրութեամբ քով զծով. դու խորտակեցեր զգլուխս վիշապաց ի վերայ ջուրց:

14. Եւ փշրեցեր զգլուխս վիշապին, եւ եառուր զնա կերակուր զօրացն Եթովպացւոց:

15. Եւ բղխեցուցեր զաղբիւրս եւ զվտակս, դու ցամաքեցուցեր զգետս սաստիկս:

16. Քո է տիւ եւ քո է գիշեր. զլոյս եւ զարեւ դու ատարեր, եւ դու հաստատեցեր զամենայն սահմանս երկրի. զգառն եւ զամառն դու ստեղծեր:

17. Այս յուշ լեցի քեզ՝ զի թշնամին նախատեաց զՏէր. ժողովուրդ անզգամ բարկացոյց զանուն սուրբ քո:

18. Մի մատներ զաղաւնեաց զանձն որ խոստովան առնի առ քեզ. եւ զանձինս աննակաց քոց մի մոռանար ի սպառ:

19. Հայեաց յուխտ քո, զի լցան տունք ախշելոց յերկրի անիրաւութեամբ:

20. Մի դարձցի անանկն ամաչեցեալ, այլ աղքատն եւ անանկն օրհնեսցեն զանուն սուրբ քո:

21. Եւ մի Ասուած, եւ դատեա զդատաստանս քո. յիշեա զնախատինս որ յանզգամէն զօրհասապատ:

22. Մի մոռանար զձայն պաշտօնէից

քոյ. ամբարտաւանութիւն առելեաց քոց վերացի հանապազ:

1. Ի կատարած մի ապականել. Սպրծս յԱստ. Ը՛Գ:

2. Խոստովան եղիցուք առ քեզ Աստուած. խոստովան եղիցուք եւ կարդացուք զանուն քո:

3. Պատմեցից զամ պանչելիս քո, յորժամ ժամ առից՝ ես ուղիղս դատեցայց:

4. Մաշեցաւ երկիր եւ ամենայն բնակիչք նորա. ես հաստատեցի զսիւնս նորա:

5. Ասացի անօրինաց, թէ մի անօրինիք. մեղաւորաց, թէ մի բարձրացուցանէք զեղջիւրս ձեր:

6. Մի համբառնայք ի բարձուն զեղջիւրս ձեր. եւ մի խօսիք զՏէր անիրաւութիւն:

7. Զի ոչ յարեւելից եւ ոչ յարեւմտից եւ ոչ յանապատէ լերանց. այլ Աստուած դատաւոր է:

8. Զայս խոնարհ առնէ, եւ զայն բարձրացուցանէ. բաժակ ի ձեռին Տեառն, պինդ լի անապակ արկեալ. եւ խոնարհեցուցանէ յայսմանէ յայս:

9. Սակայն մրուր նորա ոչ սպառեցի. եւ արբցեն զնա ամենայն մեղաւորք երկրի:

10. Եւ ցնծացայց յաւիտեան յաւիտենից. առիմս առացից Աւ Յակոբայ:
11. Ջնաւ եղջիւրս մեղաւորաց փշրեացես. եւ բարձր եղիցի եղջիւր արդարոյ:

1. Ի կատարած. Սաղմոս յԱսափ. երգ առ Աստուածն. Հն:

2. Յայտնի է ի Հրէաստանի Աստուած. եւ յԻսրայէլ մեծ է անուն նորա:
3. Եղեւ խաղաղութիւն առեղի նորա. եւ բնակութիւն նորա Սիովն:
4. Անդ խորտակեաց զերս զզօրութիւն աղեղան. զվէն, զսուր եւ զձակատամարտս:
5. Լուսաւոր ես դու աքանչելապէս լերանցն յաւիտենից. խռովեցան ամենեքեան որ անմիտ են սրտիւք. ննջեցին զքունս իւրեանց՝ եւ ինչ ոչ գտին:
6. Ամենայն արք ի մեծութիւն ձեռաց իւրեանց. ի սաստ քումդ Աստուած Յակոբայ՝ ննջեցին, որք հեծեալ էին ի ձիս:
7. Դու ահաւոր ես՝ եւ ո՞ կարէ կալ առաջի քո. որպէս երեւեցար դու յերկնից, յայնժի եղեւ բարկութիւն քո:
8. Երկիր երկեաւ եւ սարսեաց ընդ յառնելն Աստուծոյ ի դատաստան. ընդ ապրեցուցանել զամենայն հեզս երկրի:
9. Խորհուրդք մարդկան խոստովան

առնին առ քեզ. եւ ծածկեալք իմաստութեամբ օրհնեցեն զքեզ:

10. Ուխտս դիք եւ կատարեցէք Տ՚ն Ա՚յ մերոյ, ամենեքեան որ շուրջ էք զնովաւ:

11. Ա՚ստուցէք պատարագս ահաւորին. ո քաղէ զոգիս իշխանաց, ահաւոր է նա քան զամենայն թագաւորս երկրի:

1. Ի հպատակ Իդիպտոսայ: Սաղմոս յԱսափ. Ո՚Ը:

2. Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով առ Ա՚ստուած, եւ նայեցաւ առ իս:

3. Յաւուր նեղութեան իմոյ զՈ՚ստուած խնդրեցի ձեռօք իմովք, գիշերի առաջի նորա ոչ խաբեցայ:

4. Ոչ կամէր մխիթարել անձն իմ. յիշեցի զՈ՚ստուած եւ ուրախ եղէ. հոգայի, եւ նուաղէր ոգի իմ:

5. Յամանեցին պահուց աչք իմ. խռովեցայ եւ ոչ խօսեցայ. խորհեցայ զաւուրան զառաջինս եւ զամս յաւիտենից յիշեցի:

6. Խօսեցայ ի գիշերի ընդ սրտի իմում. հոգայի եւ ստուգեր ոգի իմ:

7. Մի՞թէ յաւիտենից մերժեսցէ՞ զիս Տէր. եւ ոչ եւս յաւելցու ի հաճել եւ եւս:

8. Կամ խափան արգելլել զողորմութիւն իւր յինէն. կամ կատարեաց զբան իւր յայլմէ միոջէ յայլ:

9. Կամ մոռացի զթալ Աստուած իմ եւ եւս, կամ արգելլի զգթութիւն իւր բարկութեամբ իւրով:

10. Ասացի այժմ սկսայ. այս է նորո- գումն աջոյ բարձրելոյ:

11. Յիշեցի զգործս Տեառն ի սկզբա- նէ. յիշեցի զքանչելիս նորա:

12. Խորհեցայ յամենայն ի գործս քո, եւ ի ձեռագործս քո խորհեցայ:

13. Աստուած ի սրբութեան են ճա- նապարհք քո. ո՞վ է Աստուած մեծ ոպէս Աստուած մեր. դու ես Աստուած որ առնես զքանչելիս:

14. Յուցեր ժողովրդեան քումմ զզօրու- թիւն քո. փրկեցեր բազկաւ քով զժողո- վուրդս քո, զորդիսն Յակոբայ եւ Յով- սեփու:

15. Տեսին զքեզ ջուրք Աստուած՝ տեսին զքեզ ջուրք եւ երկեան. եւ խորք խռովեցան ի ձայնէ ջուրց բազմաց:

16. Ձայն եռուն ամպք, քանզի եւ նետք քո գնան՝ ի ձայնէ որոտալոյ քո ա- նուն:

17. Երեւեցան փայլատակունք քո տիե- զերաց, խռովեցաւ եւ դողաց երկիր:

18. Ի ծով ու են ձանապարհք քո. շաւիղք քո ի ջուրս բազում. եւ հետք քո ոչ երեւին:

19. Առաջնորդեցեր որպէս խաշին ժողովրդեան քո, ի ձեռն Մովսեսի եւ Ահարոնի:

Ի հոտոյ: Սաղմոս ՃԱ. ՃԽ:

1. ՀԱՅԵՑԱՐՈՒԿ ժողովուրդք յօրէնս իմ. խոնարհեցուցէք զունկն ձեր ի բանս բերանոյ իմոյ:

2. Բացից առակս զբերան իմ. խօսեցայց զառակս ի սկզբանէ:

3. Որպէս լուաք եւ ծանեաք զայս, եւ հարքն մեր պատմեցին մեզ:

4. Ոչինչ ծածկեցաւ յորդւոց նոց յազգ յայլ. պատմել զօրհնութիւնս Տեառն, զզօրութի՛ւն եւ զքանչելիս իւր՝ զորս արար:

5. Հաստատեաց զվկայութիւն իւր առ Յակոբ, եւ օրէնս եդ ի վերայ Իսրայէլի:

6. Որ ինչ միանգամ պատուիրեաց հարցն մերոց, յուցանել զայս որդւոց իւրեանց, զի ծանիցեն յազգ յայլ:

7. Որդիք որ ծնանին՝ յարիցեն եւ պատմեսցեն զայս որդւոց իւրեանց, զի դի-

ցեն առ Աստուած զյոյս իւրեանց, եւ մի մոռացին զգործս Աստուծոյ:

8. Ըպատուիրանն նր խնդրելով խնդրեցեն, եւ մի եղիցին ոչ եւ հալքն իւրեանց:

9. Ազգ չար եւ դառնացող. ազգ՝ որ ոչ ուղեաց զսիրտ իւր, եւ ոչ հաստատեաց առ Աստուած զոգի իւր:

10. Որդիք Եփրեմի լծադիրկք եւ պնդադիպք, յաւուր պատերազմի կապարձս դարձուցին:

11. Ոչ կացին նոքա յուխտի Տեառն. եւ քան իրաւանց նորա ոչ կամեցան գնալ:

12. Մոռացան զերախտիս նորա, եւ զքանչելիսն՝ զոր եցոյց նոցա:

13. Առաջի հարց նոցա զոր արար զքանչելիս յերկրին Եգիպտացւոց եւ ի դաշտին Տայանու:

14. Լերձ զծովն եւ անցոյց զնոսա. կացոյց զջուրսն որպէս ի տիկս:

15. Առաջնորդեաց նոցա ամպով ի տուէ, եւ զամենայն գիշեր ի լոյս հրոյ:

16. Լերձ զվէմն յանապատի, եւ եւս ընդել նոցա որպէս ի խորոյ մեծէ:

17. Ւան զջուրսն ի վխմէն. եւ հոսեաց որպէս գետս զջուրսն:

18. Սակայն յաւելին մեղանչել. եւ եւս բարկացուցին զբարձրեալն յանջրդի:

19. Փորձեցին զԱՃ ի սիրտս իւրեանց. ի խնդրել զկերակուր անձանց իւրեանց:

20. Տրանջեցին զԱստուծոյ եւ ասացին. միթէ կարող իցէ Աստուած պատրաստել սեղան յանապատի:

21. Քանզի հարկանէր զվէմն եւ հոսէին ջուրք, եւ վտակք խաղային ինձանէ:

22. Ընդէ, հաց եւս կարասցէ տալ նա մեզ. կամ պատրաստեսցէ զսեղան ժողովրդեան իւրոյ:

23. Ա՛ստ այսորիկ լուաւ զայս Տէր, եւ յատեաց. հուր բորբոքեցաւ ի Յակոբ, եւ բարկութիւն ել ի վերայ Իսրայէլի:

24. Զի ոչ հաւատացին Աստուած, եւ ոչ յուսացան ի փրկութիւն նորա:

25. Հրամայեաց եւս ամպոց ի վերուստ. զդրունս երկնից եբաց՝ եւ տեղեաց ի նոսա մանանայ ի կերակուր:

26. Զհաց երկնից եւս նոցա. զհաց հրեշտակաց կերան մարդիկ եւ ի զոյց ի նոսա կերակուր ի լիութիւն:

27. Հան զհողմն հարաւոյ. եւ ած զօրութեամբ իւրով զհիւսիսի:

28. Տեղեաց ի նմա մին ոչխար, ոչ զաւազ ծովու զթռչունս թեւաւորս:

29. Ընկ ի մէջ բանակի նոցա, եւ շուրջ զվրանօք նոցա:

30. Վերան եւ յապեցան յոյժ. զցանկութիւն նոցա եւս նոցա. եւ ոչինչ կարօտ եղեն ի ցանկութենէ իւրեանց:

31. Ընդէռ կերակուրք ի բերանս իւրեանց էին, բարկութիւն Աստուծոյ ել ի վերայ նոցա:

32. Սպան զբազումս ի նոցանէ. եւ զընտիր ընտրս Իսրայելէ տապակեաց:

33. Յայսմ ամենայնի մեղան եւ եւս. եւ ոչ հաւատացին սքանչելեացդ նորա:

34. Պակասեցան յունայնութեան աւուրք նոցա. եւ ամք նոցա փութապէս անցին:

35. Յորժամ սպանանէր զնոսա խընդրէին զնա. դառնային եւ առաւօտ առնէին առ Աստուած:

36. Յիշեցին զի Աստուած օգնական էր նց. Եւ բարձրեալ փրկիչ էր նոցա:

37. Սիրեցին զնա բերանօք իւրեանց. եւ լեզուօք իւրեանց ստեցին նմա. սիրտք նոցա ոչ էին ուղիղ ընդ նմա, եւ ոչ հաւատացին ուխտի նորա:

38. Եւլ նա ինքն գթած էր, քաւէր զմեղս նոցա եւ ոչ սպականէր:

39. Յաճախէր դարձուցանել զբարկութիւն իւր, եւ ոչ բորբոքէր զամենայն սրտմտութիւն իւր:

40. Յիշեաց թէ մարմին են, հոգի որ ելանէ՝ եւ ոչ եւս դառնայ:

41. Կանի՞ց անգամ դառնացուցին զնա յանապատի, բարկացուցին զբարձրեալն յանջրդի:

42. Դարձան եւ փորձեցին զԱստուած. եւ զսուրբն Իսրայելի զայրացուցին:

43. Ոչ յիշեցին զձեռն նո՝ յաւուր յորում փրկեաց զնա ի ձեռաց նեղչաց նոյ:

44. Որպէս արար զնշանս եւ զարուեստս իւր յերկրին Եգիպտացւոց եւ ի դաշտին Տայանու:

45. Դարձոյց յարիւն զգետս նոցա, եւ զանձրեւ նոցա՝ զի մի արբցեն:

46. Առաքեաց ի նոսա շանաճանճ, եւ եկեր զնա. եւ գորտիւ ապականեաց զնա:

47. Եւ ժանկոյ զպտուղ նոցա. եւ զվաստակ նոցա մարախոյ:

48. Եհար կարկտիւ զայգիս նոցա. եւ զթզենիս նոցա եղեմամբ:

49. Ետուն եւ կարկուտ զանասունս նոցա. եւ զստացուածս նոցա հրով դաւեցաւ:

50. Առաքեաց ի նոսա զբարկութիւն բարկութեան իւրոյ. եւ զբարկութիւն, բարկութիւն եւ զնեղութիւն:

51. Առաքեաց ի նոսա տանջանս ի ձեռն

հրեշտակի չարի, եւ դիմեցոյց ի նոսա զպատմութիւն բարկութեան իւրոյ:

52. Ոչ անխայեաց իմանել զանձինս նոցա, եւ զանաստուն նոցա ի մահ մատնեաց:

53. Ընդ զամենայն անդրանիկս Եգիպտացւոց. զսկիզբն ամենայն վաստակոց նոցա ի յարկս Քամայ:

54. Ընդուն եւ որպէս խաշին ժողովրդեան իւրոյ, եւ եհան զնոսա որպէս հօտ յանապատս:

55. Առաջնորդեաց նոցա յուսով, եւ ոչ երկեան. եւ զթշնամիս նոցա ծով ծածկեաց:

56. Ընդան զնս ի լեառն սրբութե իւրոյ. լեառն այն՝ զոր ստացեալ էր աջ նորա:

57. Վերժեաց յերեսաց նոցա զհեթանոս. վիճակեցոյց ի նոսա զվիճակ ժառանգութեան իւրոյ. եւ բնակեցոյց ի յարկս նոցա զազգն Իսրայէլ:

58. Փորձեցին զառնացուցին զԸնծ բարձրեալ. եւ զվկայութիւն նորա ոչ պահեցին:

59. Դարձան խոտորեցան որպէս եւ հարքն իւրեանց. դարձան եւ եղեն որպէս զաղեղն թիւր:

60. Դարձեալ բարկացուցին զնա ի բագինս իւրեանց, եւ զպօշելովք իւրեանց նախանձ արկին նմա:

61. Լուաւ Ընծ եւ ապհամարհեաց զնոսա, եւ անարգեաց յոյժ զկարայել:
62. Մերժեաց յիւրմէ զկորանն ի Սեւ-լով. խորան՝ զոր բնակեցոյց ի մէջ մարդկան:
63. Տառնեաց ի գերութիւն զզօրութիւն նոցա, եւ զգեղս նոցա ի ձեռս թշնամեաց նոցա:
64. Ընդել ի սուր զժողովուրդ իւր. եւ զժառանգութիւն իւր անտես արար:
65. Օգիտասարդս նոցա եկեր հուր. եւ վանն կուսանաց նոցա ոչ ոք սգացաւ:
66. Քահանայք նոցա անկան ի սուր, եւ զայրիս նոցա ոչ ոք էր որ լայր:
67. Օձալթեաւ որպէս ի քնոյ Տէր, որպէս հզօր զի թաւիւ զգինի:
68. Էտար յետս զթշնամիս իւր, նախատինս յաւիտենից արար զնոսա:
69. Մերժեաց նա զկորանն Յովսեփու. եւ զազգն Եփրեմի ոչ ընտրեաց:
70. Այլ ընտրեաց նա զազգն Յուդայ, եւ զլեառն Սիոն, զոր եւ սիրեաց:
71. Շինեաց որպէս միեղջերոյ զարբուժիւն նորա. յերկրի հաստատեաց զնա յաւիտեան:
72. Ընտրեաց զՎաւիթ ծառայ իւր, եւ ընկալաւ զնա ի հօտէ խաշանց. ի վերջին ծնելոցն ընկալաւ զնա:

73. Հովուել զՅակոբ ծառայ իւր. եւ զխրատել ժառանգութիւն իւր:
74. Ընծեր զնոսա խնամոութեամբ սրտի իւրոյ. յանձեղութիւն ձեռաց իւրոց առաջնորդէր նոցա:

Ի կատարած: Սաղմոս ՃԱՀԶ. Հ:

1. Ընտուն՝ մոլն հեթանոսք ի ժառանգութի քո. պղծեցին զտաճար սբ քո:
2. Ընարին զերուսաղէմ որպէս հիւղս մրգապահաց, սրկին զդիակունս ծառայից քոց զէշ թռչնոց երկնից, եւ զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի:
3. Հեղին զարիւն նց ոպ ջուր շուրջ զերուսաղեմաւ, եւ ոչ ոք էր որ թաղէր զնս:
4. Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց, ծաղր եւ այպն կատականաց այնոցիկ որ շուրջ էին զմեզ:
5. Մինչեւ յե՞րբ Տէր բարկանաս դու ի սպառ. բորբոքեսցի ոպ Հուր նախանձ քո:
6. Հեղ զբարկութիւն քո ի վերայ ազգաց՝ որ զքեզ ոչ ճանաչեցեն, ի վերայ թագաւորաց որ զանուն քո ոչ կարդային. զի կերան զՅակոբ, եւ զտեղի նր աւերեցին:
7. Մի յիշեր զմեղս մեր զառաջինս,

վաղվաղեացէ առ մեզ ողորմութիւն քո, զի աղքատացաք յոյժ:

8. Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր, վասն մեծի փառացդ անուան քո:

9. Տէր փրկեա զմեզ եւ քաւեա զմեզ մեր վասն անուան քո:

10. Ո՞ւր երթեք ասացեն ի հեթանոսս, թէ ո՞ւր է Աստուած նոցա:

11. Եալ յայտնի ինչ լինի ի վերայ հեթանոսաց, առաջի աչաց մերոց. առ ի խնդրել զվրէժ արեան ծառայից քոց ուր եւ հեղաւ:

12. Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոց. ըստ մեծութեան բազկի քո շահեա դու զորդիս սպանելոց:

13. Եւ առ դրացեաց մերոց եօթնապատիկ ի ծոց նոցա, նախատինս զոր նախատեցին զքեզ Տէր:

14. Մեք ժողովուրդք եւ խաշն արօտի քոյ. խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան, ազգէ յազգ պատմեցուք զօրհնութիւնս քո:

1. Ի կատարած ի վերայ շուշանիցն Սղմոս յԱսափ ի վերայ ենովզաց. Ձ(ծ):

2. Ո հովուեսդ Իսրայէլի նայեաց. որ առաջնորդես որպէս խաշին Յովսեփու:

3. Ար նախիտ ի քրովբէս՝ յայտնեաց առաջի Նփրեմի, Բենիամինի եւ Մանասէի:

4. Զարթո զզօրութիւն քո, եւ եկ կեցուցանել զմեզ:

5. Աստուած զօրութեանց, դարձո զմեզ. երեւեցո զերեսս քո ի մեզ եւ կեցցուք:

6. Տէր Աստուած զօրութեանց մինչեւ յե՞րբ բարկանաս յաղօթս ծառայից քոց:

7. Զամբեցեր մեզ հաց արտասուաց. եւ արբուցեր մեզ արտասուս չափով:

8. Եդեր զմեզ նախատինս դրացեաց մերոց. այսն կատականաց թշնամեաց մերոց:

9. Աստուած զօրութեանց, դարձո զմեզ. երեւեցո զերեսս քո ի մեզ եւ կեցցուք:

10. Այգի յԵգիպտոսէ փոխեցեր. հաներ զհեթանոսս՝ եւ զնոսա տնկեցեր, եւ առաջնորդեցեր նոցա:

11. Տաստատեցեր զարմատս նորա, եւ ելից երկիր. ծածկեաց զլերինս հովանի նորա, եւ բարուձակ նո՛ր զմայրս Աւյ:

12. Ձգեաց զորթ իւր մինչեւ ի ծով, մինչեւ ի գետս են շառաւիղք նորա:

13. Ընդէ՞ր քակեցեր զպանկնորա. կթեն զնա անցաւորք ճանապարհի:

14. Ապականեաց զնա խոզ անտառի. երէ վայրի ապաճեցաւ ի նմա:

15. Եւ զօրութիւն՝ դարձ, հայեաց յերկինս եւ տես. այլ արա այդպէս այսմիկ. դարման տալ ամա, զոր ունիցաց աչ քո:

16. Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա ի քեզ. այրեցեալ ի հուր եւ աւերեալ ի սասոէ քումէ կորիցէ:

17. Եղիցի ձեռն քո ի վերայ առն, աչ քո ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա ի քեզ:

18. Ոչ եւս ի բացեայ եղիցուք մեք ի քէն, կեցուացես դու զմեզ. եւ զանուն քո Տէր կարդասցուք:

19. Եասուաճ զօրութեց դարձո զմեզ. երեւեցո զերեսս քո ի մեզ եւ կեցցուք:

1. Ի կատարած է վերայ հնչանացն: Սաղմոս յԱսոփ հինգերորդ շաբաթու. Չ:

2. Յնծացէք առ Եասուաճ օգնական է մեր. ազաղակեցէք առ Եվ Յակոբայ:

3. Առէք սաղմոս եւ տուք օրհնութիւն. սաղմոս ասացէք նմա ի ձայն քաղցրութեան:

4. Փող հարէք ի զլուխս ամսոյ, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց:

5. Իրաման է այս Իսրայելի, եւ իրաւունք Եասուաճայ Յակոբայ:

6. Ի կայութիւն Յովսեփու զոր եդ ընդ

նմա, որպէս եւանէր նա յերկրէն Եգիպտացւոց. զնեզու զոր ոչ գիտէր լսաւ:

7. Ի բաց արա ի բեռանց զթիկունս նո՛ր, եւ զձեռն նո՛ր յորթ եւ ի թի ծառայելոյ:

8. Ի նեղութեան կարդացեր առ իս՝ եւ փրկեցի զքեզ. լսայ քեզ ի գաղտնութեանէ մրրկին, եւ փորձեցի զքեզ ի վերայ ջուրցն հակառակութեան:

9. Լո՛ւր ժողովուրդ իմ եւ վկայեմ քեզ. եւ Իսրայէլ, թէ լսիցես ինձ:

10. Մի եւս եղիցին քեզ Աստուածք առաջանդիք, եւ մի երկիրպագանիցես դու Աստուծոյ օտարի:

11. Ես եմ Տէր Աստուած քո՝ որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց. բաց զբերան քո եւ լցից զդա:

12. Ժողովուրդ իմ ոչ լսաւ ձայնի իմում, եւ Իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ:

13. Արձի թողի զնոսա երթալ զկետ կամաց սրտից իւրեանց. զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց:

14. Օ՜ի թէ ժողովրդեան իմոյ լսեալ էր ինձ, կամ Իսրայէլ զձանապարհս իմ գնացեալ էր:

15. Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նորա, եւ ի վերայ նեղչաց նորա արկեալ էր զձեռն իմ:

16. Թշնամիք Տեառն ստեցին նմա. եւ
ղեցին ժամանակք նոցա յաշխարհի:
17. Կերակրեաց զնա ի պարարտութէ
ցորենոյ. եւ ի վխմէ մեղր յատգոյց նոցա:

ՍՂՄՈՍ ՃԱՓ. ՀԱ:

1. Ընտուած եկաց ի ժողովս աստու-
ծոց. եւ ի միջի նոցա դատէր զնոսա:
2. Մինչեւ յե՞րբ դատիք անիրաւու-
թեամբ, եւ անձն առնուք մեղաւորաց:
3. Դատ արարէք որբոյն եւ այրւոյ. ի-
րաւունս արարէք տնանկին եւ խոնարհի:
4. Ընկերացուցէք զաղքատն եւ զտնանկ.
ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա:
5. Ոչ իմացան եւ ոչ ի միտ առին. ի
խաւարի գնացին, եւ շարժեցան ամենայն
հիմունք աշխարհի:
6. Ես ասացի թէ աստուածք իցէք. եւ
որդիք բարձրելոյ ամենեքեան:
7. Դուք աւասիկ որպէս մարդիկ մեռա-
նիք, եւ որպէս զմի իշխանաց անկանիք:
8. Արի Աստուած եւ դատեա զերկիր.
զի դու ժառանգեսցես զամ հեթանոս:

1. Օրհնութիւն սաղմոսաց յԱստուածընկալ Դաւթի. ՃՐ:

2. Ընտուն ո՞ք քեզ նմանիցէ. մի լռեր եւ մի դադարեր Ընտուած:

3. Օ՛ն ահա թշնամիք քո գոչեցին, եւ առելիք քո ամբարձին զգլուխս իւրեանց:

4. Ի վերայ ժողովրդեան քո խորհրդական կեցին զգիտութիւն. խորհեցան ի վերայ սրբոց քոց եւ ասացին:

5. Նկայք առանձնացուք զնոսա յազգացն, եւ մի յիշեսցի անուն Իսրայելի եւս:

6. Խորհեցան միաբանութեամբ ի միասին. վասն քո ուխտ արարին:

7. Բանակք Եդոմացւոց եւ Իսմայելացիք, Մովաբ եւ Հագարացիք:

8. Գեբաղ, Ամմոն, Ամաղէկ. եւ այլազգիք ամենայն բնակչօքն Հանդերձ Ծուրայ:

9. Զա եւ Ասուր եկեալ էր ընդ նոսա. ամենեքեան սքա զօրավիգն էին որդւոցն Լովտայ:

10. Արա զնոսա որպէս Մադիամ. որպէս զՍիսարայ, որպէս զՅաբին՝ ի ձորձորան Կիսոնի:

11. Սառանեցան նոքա յաչս Լեռնոյ, եւ եղեն որպէս զաղբ երկրի:

12. Արա զնոսա նոցա որպէս զԱրէբն,

զՆէն, զՕՀԷԼԻ, զԱաղմանա. եւ զամենայն իշխանս նոցա:

13. Ամք ասացին, ժառանգեացուք ի մեզ զերկրութիւնն Ցառուածոյ:

14. Ցառուած իմ արա զնոսա որպէս զանիւ. որպէս զեղէգն առաջի հողմոյ:

15. Որպէս հուր զի այրէ զանտառս. որպէս բոց զի կիզու զլեռինս:

16. Ցայսպէս հալածեացես զնոսա մրրկաւքով. եւ բարկութեամբ քով խռովեցուսցես զնոսա:

17. Լից զերեսս նոցա անարգանօք. եւ խնդրեացեն զանուն քո Տէր:

18. Ամաչեացեն եւ խռովեացին յաւիտեան յաւիտենից, եւ ամօթալից կորիցեն:

19. Ծանիցեն զի անուն քո Տէր է, եւ դու միայն բարձրեալ ես ի վերայ ամ երկրի:

1. Ի կատարած վասն հնձանաց որդւոցն Կորխայ. Սաղմոս է Դաւիթ. ՀԶ:

2. Որպէս սիրելի են յարկք քո Տէր զօրութեանց. ցանկայ եւ վախճայէ անձն իմ ի գաւիթս քո:

3. Սիրտ իմ եւ մարմին իմ ցնծասցեն առ Ցառուած կենդանի:

4. Վասնզի ճնճղուկ եգիտ իւր տուն. տատրակ զբոյն, ուր դիցէ զձագս իւր:

5. Աեղան քո Տէր զօրութեանց, թագաւոր իմ եւ Ընտուած իմ:

6. Երանի ամենեցուն՝ որ բնակեալ են ի տան Տեառն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ:

7. Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն ի քէն է. ելս եդ ի մտի իւրում ի հովտէս արտասուաց, ի տեղւոջ յորում ուխտեաց:

8. Օրհնութիւն առցէ որ օրէնս դնէ. գնասցէ նա ի զօրութիւն ի զօրութիւն, եւ երեւեսցի Ընտուած աստուծոց ի Սիոն:

9. Տէր Ընտուած զօրութեանց լուր աղօթից իմոց. ունկն դիր Ընծ Յակոբայ:

10. Ընդունելի ես դու վեր, տես Ընտուած, եւ նայեաց յերեսս օծելոյ քոյ:

11. Վասն զի լաւ է ինձ մի օր ի դաւիթս քո, քան զհազարս:

12. Ընտրեցի ես ընդ աղբ գալ ի տան Ընտուծոյ. առաւել քան զբնականալ ի յարկս մեղաւորաց:

13. Զի զողորմութիւն եւ զճշմարտութիւն սիրէ Տէր Ընտուած վեր. զշնորհս եւ զփառս տացէ:

14. Տէր ոչ պակաս առնէ զողորմութիւն իւր յայնցանէ, որք գնան յանմբծութիւն:

15. Տէր Ընտուած զօրութեանց, երանեալ է այր որ յուսայ ի քեզ:

1. Ի խոտոր ոտս՝ ոչ՝ կոչեաց: Սաղմոս է Դաւիթ. Զ՚Կ:

2. ՚Ականջս Տէր ընդ երկիր քո, եւ դարձուցեր զգերութիւն Յակոբայ:

3. Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քոյ. ծածկեցեր զամ մեղս նոցա:

4. Լուեցուցեր զամ սրտմտութիւն քո. դարձար ի բարկութէ սրտմտութե քո:

5. Դարձ առ մեզ Աստուած փրկիչ մեր. եւ դարձո զսրտմտութիւնա քո ի մէնջ:

6. Ո՞ի յաւիտեան բարկանար մեզ Տէր, եւ ո՞ի ձգեր զբարկութի քո ազգէ մինչեւ յազգ:

7. Աստ դու դարձեալ կեցուսցես զմեզ. ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ:

8. Ցոյց մեզ Տէր զողորմութիւնա քո. եւ զփրկութիւնա քո տուր մեզ:

9. Լուայց զի՞նչ խօսի Տէր Աստուած մեր. խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր, եւ առ այնոսիկ որ դարձեալ են առ նա սրտիւք:

10. Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա. բնակել փառաց նորա յերկրի մերում:

11. Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեացին. արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեացին:

12. Աշմարտութիւն յերկրէ բուսաւ. արդարութիւն յերկնից երեւեցաւ:

13. Տէր տացէ զքաղցրութիւն իւր, եւ երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ. դիցէ ի ճանապարհի զդնացս իւր:

Աղօթ Դաւթի ոտքաց Յեսուեայ. Սաղմոս. ՁԶ:

1. ԽՈՆԱՐՀԵՑՈ Տէր զունկն քո, եւ լուր ինձ, զի աղքատ եւ անանկ եմ ես:

2. Պահեա զանձն իմ ւր Տէր. փրկեա զծառայս քո Ընծ իմ որ ի քեզ յուսացեալ:

3. Ողորմեա ինձ Տէր զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ Տէր համբարձի զաչս իմ:

4. Օի դու Տէր քաղցր եւ ուղիղ ես, բազումողորմ առ ամենեսեան որ կարդան առ քեզ:

5. Ունկն դիր Տէր աղօթից իմոց. եւ նայեա ի ձայն խնդրուածոց իմոց:

6. Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ՝ եւ լուար ինձ:

7. Ոչ ոք է նման քեզ Յաստուածս Տէր. եւ ոչ ոք է որպէս զգործս քո:

8. Զամենայն ազգս զորս արարեր՝ եկեսցեն եւ երկրպագցեն առաջի քո. փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան:
9. Մեծ ես դու Տէր. եւ առնես սքանչելիս, եւ դու միայն ես Աստուած:
10. Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քումմ. եւ գնացից ի ճշմարտութեան քումմ. եւ ուրախ եղիցի սիրտ իմ երկրչել յանուանէ քումմէ:
11. Խոստովան եղէց առ քեզ Տէր Աստուած իմ բոլորով սրտիւ իմով. փառաւոր արարից զանուն քո յաւիտեան:
12. Մեծ եղեւ ի վերայ իմ ողորմութիւն քո. փրկեցեր զանձն իմ ի ժժոխոց ներքնոց:
13. Աստուած՝ անօրէնք յարեան ի վերայ իմ, եւ ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ. եւ ոչ համարեցան զքեզ Աստուած՝ առաջի իւրեանց:
14. Եւ դու Տէր Աստուած իմ, գթած ես եւ ողորմած, երկայնամիտ բազումողորմ եւ ճշմարիտ. նայեա առ իս եւ ողորմեա ինձ:
15. Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո. եւ արա առ իս նշան բարութեան:
16. Տեսցեն առելիք իմ եւ ամաչեսցեն, զի դու Տէր՝ օգնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս:

1. Ի կոպրած սպանա զդեռն կռիսոյ. ՁՕ:

2. Հիմունք նորա ի լեառն սուրբ նո-
րա, սիրէ Տէր զդրունս Սիոնի, առաւել
քան զամենայն յարկան Յակոբայ:

3. Փառաւորեալն խօսեցաւ վասն քո.
ահաւադիկ քաղաքդ Ընաուճոյ:

4. Յիշեցի զՌահաբ եւ զԲաբելոն՝ որք
ճանաչեն զիս. ահա այլազգիք եւ Ծուր
եւ Ժողովուրդք Նուկայ, սոքա եղեն անդ:

5. Մայր զՍիոն ասէ մարդ, եւ մարդ
ծնաւ ի նմա. եւ ինքն իսկ Հիմունա արկ
նմա, բարձրեալն:

6. Տէր պատմեսցէ զդրովք ժողովրդեան
իւրոյ, իշխանաց այսոցիկ որ եղեն ի սմա:

7. Այլ զի ուրախ լինիցին ի քեզ ամենե-
քեան, որոց բնակութիւն իւրեանց ի քէն է:

1. Օբհնաւէին սպանաց որդւոցն Կորխոյ. վասն
Մաղաղէնոյ. նմասպաւէին՝ զի եւ պատարեանի
եմման եղբօրեցուքն: Սաղմոս. ՁԱ:

2. Տէր Ընաուած փրկութեան իմոյ.
ի տուէ կարդացի, եւ գիշերի առաջի քո:

3. Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր.
խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ:

4. Ոչ լցաւ չարչարանօք անձն իմ, եւ
կեանք իմ ի դժոխս մերձեցան. եւ հա-
մարեցայ ես ընդ այնորիկ որ իջանեն ի գուբ:

5. Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, եւ ի մեռեալս ազատ:

6. Ոչ վկայեսցես ընկերին ի գերեզմանս:

7. Զոր դու ոչ յիշեցեր, նոքա ի ձեռանէ քումէ մերժեցան:

8. Եղիր զիս ի զբի նեղբնուամ. ի խաչարի եւ ի տուեբս մահու:

9. Յիս հաստատեցար արտմտութիւն քո. զիա՞ զբօսանս քո ածել ի վերայ իմ:

10. Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, եւ եղին զիս նշաւակ իւրեանց:

11. Ստանեցայ եւ ոչ եղանէի. աչք իմ տկարացան յաղքատութենէ:

12. Ընդդակեցի առ Տէր զօրհանապազ. եւ հարբարձի առ քեզ զձեռս իմ:

13. Միթէ մեռելոց առնիցե՞ս զքանչելիս. կամ բժիշկք յարուցանիցե՞ն, խոստովան առնիցեն առ քեզ:

14. Միթէ պատմեսցի ոք երբեք ի գերեզմանի զողորմութիւնս քո. կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան:

15. Միթէ ճանաչեցի՞ն ի խաւարի զքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ:

16. Ես առ քեզ Տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեացեն առ քեզ:

17. Ընդէր ՏԷր մերժես զանձն իմ. կամ դարձուցանես զերեսս քո յինէն:
18. Տնանկ եւ վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ. ի բարձրութենէ խոնարհեցայ եւ ապշեցայ:
19. Յիս հասանեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս:
20. Է՛ր ըմբեցան զինեւ որպէս ջուր. զօր ամենայն պաշարեցին զիս ի միասին:
21. Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ, եւ զծանօթս իմ վասն թշուառութեան իմոյ:

1. Խոտորուիւն եմանոյ եղբայելացւոյ. ՀԱ:

2. ՕՂՈՐՄՈՒԹԻՒՆ քո Տէր յաւիտեան օրհնեցից. յազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով:
3. Ասացեր թէ աշխարհս ողորմութեամբ շինեսցի. յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո:
4. Դիր ուխտ ընտրելոյ իմոյ. երդուայ Դաւթի ծառայի իմոյ:
5. Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո, եւ շինեցից աղգէ յազգ զաթոռ քո:
6. Խոստովան եղիցին երկինք սքանչե-

լեաց քոց Տէր, եւ ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց:

7. Ո՛վ է յամպս, որ հաւասարէ քեզ. կամ ո՞վ նմանիցի Տեառն յորդիս Աստուծոյ:

8. Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց. մեծ եւ ահաւոր է վերայ այնոցիկ՝ որ շուրջ են զնովաւ:

9. Տէր Աստուած զօրութեանց՝ ո՞ նմանէ քեզ. հզօր ես դու Տէր, եւ ճշմարտութիւն քո շուրջ է զքեզ:

10. Դու տիրես զօրութեանց ծովու, եւ զխռովութիւն ալեաց նորա դու ցածուցանես:

11. Դու խոնարհեցուցանես որպէս վիրաւորս զամբարտաւանս. ի զօրութիւն բազկի քոյ ցրուեցեր զթշնամիս քո:

12. Քո են երկինք եւ քո է երկիր. զաշխարհս լից իւրով դու հաստատեցեր. զհիւսիս եւ զկարաւ դու արարեր. Թաբոր եւ Հերմոն յանուն քո ցնծասցեն:

13. Քո է բազուկ եւ քո է զօրութիւն. զօրացի աջ քո, եւ բարձր եղիցի ձեռն քո:

14. Յարդարութիւն եւ յիրաւունս հաստատեալ է աթոռ քո. ողորմութիւն եւ ճշմարտութիւն գնասցէ առաջի երեսաց քոց:

15. Երանի ժողովրդեան որ գիտեն զօրհնութիւնս քո Տէր. ի լոյս երեսաց քոց գնասցեն, եւ յանուն քո ցնծասցեն զօրհանապազ, եւ յարդարութեան քումմ բարձր եղիցին:

16. պարծանք զօրութեանց մերոց դու ես Տէր, եւ ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր:

17. Ի Տեառնէ է օգնութիւն սրբոյն Իսրայելի թագաւորին մերոյ:

18. Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո, եւ ասացեր. եդից զօգնութիւն իմ ի վերայ հզօրին. եւ բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ:

19. Գտի զԴաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա:

20. Ձեռն իմ ընկալցի զնա, եւ բազուկ իմ զօրացուսցէ զնա:

21. Ոչ ի մեղանչէ նմա թշնամի, եւ որդի անօրէնութեան ոչ չարչարեսցէ զնա:

22. Ջարից առաջի նր զթշնամիս նորա. եւ զատելիս նր ի պարտութիւն մատնեցից:

23. Ճշմարտութիւն իմ եւ ողորմութիւն իմ ընդ նմա. եւ յանուն իմ բարձր եղիցի եղջիւր նորա:

24. Եդից ի ծովս զձեռն նորա, եւ ի վերայ գետոց զաջ նորա:

25. Եւ կարդասցէ առ իւր հայր իմ եւ դուս, Ընծ ընդունելի վրկութիւն իմոյ:
26. Եւ անդրանիկ արարից զնա. եւ բարձր քան զամենայն թագաւորս երկրի:
27. Յաւիտեան պահեցից նմա զողորմութիւն իմ. եւ ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա:
28. Լաստատեցից յաւիտեան յաւիտենից զզաւակ նորա. եւ զաթոռ նորա որպէս զաւուրս երկնից:
29. Եթէ թողցեն որդիք նորա զօրէնս իմ, եւ չիրաւունս իմ ոչ կամեցին գնալ:
30. Եթէ զարդարութիւնս իմ անարգեացեն, եւ զպատուիրանս իմ ոչ պահեացեն:
31. Լարից գաւազանաւ զանօրէնութիւնս նց, ամենայնօք զանիրաւութիւնս նց:
32. Բայց զողորմութիւն իմ ոչ արգելից ի նոցանէ. եւ ոչ նենգեցից ճշմարտութեան իմոմէ. եւ ոչ անարգեցից զուխտ իմ, եւ ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ զայն ոչ արհամարհեցից:
33. Միանգամ երդուայ ի սրբութիւն իմ, թէ Դաւթի ես ոչ սուտից:
34. Զաւակ նորա յաւիտեան կացցէ. եւ աթոռ նորա որպէս արեգակն առաջի իմ. որպէս լուսին, զի հաստատեալ է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս:

35. Յակ արդ դու ժերժեցեր եւ անարգեցեր, եւ ընդ վայր հարեր զօձեալ քո:
36. Պատձուցեր զուխտ ի ծառայէքուն. պղծեցեր յերկրի զարբունին նորա:
37. Պակեցեր զամենայն պարիսպս նորա. եւ եդիր զամուրս նորա ի դողումն:
38. Յափշտակեցին զնա անցաւորք ճանապարհի. եղեւ նա նախատ դրացեայց իւրոց:
39. Պատձր արարեր զաջ նեղչաց նորա, եւ ուրախ արարեր զամ թշնամիս նորա:
40. Պատձուցեր զօգնութիւն ի սրոյ նորա, եւ ոչ ընկալար զնա ի պատերազմի:
41. Ընարգեցեր զարբունին նորա. եւ զաթոռ նորա յերկիր կործանեցեր:
42. Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նորա, եւ հեղեր զնովաւ զամօթ:
43. Մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո խափան. բորբոքեսցի որպէս հուր բարկութիւն քո:
44. Յակ արդ յիշեա եւ տես՝ թէ ո՞վ է իմ հանգիստ. մի թէ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան:
45. Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ եւ ոչ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց:
46. Ո՞ւր են ողորմութիւնք քո Տէր ա-

ասջինք, զոր երդուար Դաւթի ճշմարտութեամբ քով :

47. *Յիշեա զնախատինս ծառայի քո. զոր ընկալայ ի ծոց իմ յազգաց բազմաց :*

48. *Զոր նախատեցին թշնամիք քո Տէր. նախատեցին փոխանակ օծելոյ քոյ :*

49. *Օրհնեալ Տէր Աստուած յաւիտեան յաւիտենից, եղիցի եղիցի :*



Օրհնութիւն երաժշտապետութեան Ամվեսոյ : երաժ. Ի.Օ. :

1. *Ի դիշերայ կանխէ, հոգի իմ առաւօտ առնել առ քեզ Աստուած :*

2. *Վասն զի լոյս են հրամանք քո ի վերայ երկրի. ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի :*

3. *Կարկեցի ամպարիշտն եւ այլ ոչ ետես ուզի առնել յերկրի զարդարութիւն ճշմարտութեան :*

4. *Բարձի ամբարիշտն յերկրէ. եւ մի տեսցէ զփառս Աստուծոյ :*

5. *Տէր բարձր ես եւ բազուկ քո հզօր. եւ նոքա ոչ գիտացին :*

6. *Նախանձին, ամաչեցին, եւ նախանձ արկցի անխրատ ժողովրդեան. եւ այժ հուր զթշնամիս քո կրկէ :*

7. Տէր Աստուած մեր՝ տուր մեզ զնաւ-
ղաղութիւն քո. զի ըստ ամենայն գոր-
ծոց մերոց հաստուցաւ մեզ:
8. Տէր Աստուած մեր՝ ստացիր զմեզ.
զի բաց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք. եւ
զանուն քո անուանեմք զօրհանապազ:
9. Խակ արդ մեռեալք կենդանութիւն
այլ ոչ տեսանիցեն. եւ ոչ բժիշկք յա-
րուցանիցեն:
10. Վասն այսորիկ աճել, հարեր, աս-
տակեցեր եւ ջնջեցեր զամենայն արու-
մանուկ նոցա:
11. Յաւել Տէր ազ ի վերայ ազի նո-
ցա. եւ աճ ազ ի վերայ անօրինաց երկրի:
12. Տէր ի նեղութեան յիշեցաք զքեզ. զի
փոքր ի նեղութիւն է խրատ քո ի վերայ մեր:
13. Որպէս երկունք յղւոյ զի հասեալ
իցեն ի ժամանակս ծննդեան. եւ առ
ցաւս իւր ձչիցէ:
14. Այսպէս եղաք սիրելոյ քում Տէր.
յահ եւ յերկիւղ քո յղացեալ երկնե-
ցաք. եւ ծնաք զՀոգի փրկութեան քոյ:
15. Ո՛չ եւս կործանեսցուք մեք. այլ
կործանեսցին բնակիչք երկրի:
16. Յարիցեն մեռեալք. եւ կենդա-
նասցին ամենեքեան, որ եղեալ են ի գե-
բեզմանս:

17. Ոչլթիցեն, ցնծացեն, եւ ուրախ եղիցին դատաւորք երկրի:

18. Ոչ ան զի ցօղդ որ ցօղէ ի քէն, այդ բժշկութիւն է նոցա. բայց երկիրն ամբարշտեալ սատակեցի:

19. Խոյս տուր ժողովուրդ իմ. գնա մեւս ի շեմարանս քո. եւ փակեա զդրունս քո առաջի երեսաց քոց:

20. Փախիր եւ թաքիր առ ժամանակ մի, մինչեւ անցցէ բարկութիւն Տեառն:

Մաղմոս:

Խաղաղութեանց տուող Իսրաէլոս, զհաղաղութիւն եւ զողորմութիւն քո պարգեւեա մեզ: Մարդասէր Տէր, վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ եւ կուսի. եւ վասն խաչի քոյ պատուականի, ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Զփոքոյն ի ձեզ եղեալն գոցէ. ՀՂ 31:





Բարկացոյցին զՏէր ի գործս խրեանց, եւ յաձախեաց ի վերայ նոցա չեղոտիւն: սգ. ձ:

Աղօթ է Մովսէս յայրն Սինայ: Սաղմ. ՃԱ:

1. Տէր ապաւէն եղեր մեր յազգէ մինչեւ յազգ. մինչեւ լերինք հաստատեալ էին, մինչեւ ստեղծեալ զերկիր եւ զաշխարհս:

2. Յաւիտենից մինչեւ յաւիտեան դու ես. եւ մի դարձուցաներ զմարդ ի տառապանս. եւ ասացեր, դարձարուք որդիք մարդկան:

3. Զի հազար ամ յաչս Տեառն որպէս օր երեկի, զի անց. որպէս պահ մի գիշերոյ. եւ ամք նոցա անարգութեամբ եղեցին:

4. Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցին. ընդ առաւօտս որպէս դալարի զուարձացին եւ ծաղկեացին. ընդ երեկոյս թարշամեացին, չորացին եւ անկցին:

5. Նուաղեցաք մեք ի բարկութենէ քումմէ. եւ ի սրտմտութենէ քումմէ խռովեցաք:

6. Եդեր զմեղս մեր առաջի քո. եւ զկեանս մեր ի լոյս երեսաց քոց:

7. Ընդեան աւուրք մեր նուաղեցան. եւ ի բարկութենէ քումմէ խռովեցաք:

8. Ժամանակ ամաց մերոց անդադար

որպէս ասիցի, եւ թէ աւուրց ամաց մերոց ի նոսա եւթանասուն ամ:

9. Ապա թէ առաւել եւս՝ ութսուն ամ. որ ինչ աւելի է քան զայն ցաւօք եւ հեծութեամբ:

10. Անկն ի վերայ մեր հեծութիւն, եւ խրատեցաք. իսկ արդ՝ ո դիտասցէ զզօրութիւն բարկութեան քո, կամ յահէ քումմէ զսրտմտութիւնս քո հանդիպեցի:

11. Եյտպէս ցոյց ինձ զաջ քո, եւ զբ խոնարհ են սրտիք զիմաստութիւն քո:

12. Դարձ Տէր մինչեւ յե՞րբ. մխիթարեա ի ծառայս քո:

13. Լցաք առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք եւ ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց:

14. Ուրախ եղաք փոխանակ աւուրցն յորս խոնարհ արարեր զմեզ. եւ ամացն յորս տեսաք զչարչարանս:

15. Հայեա Տէր ի ծառայս քո եւ ի գործս ձեռաց քոց. առաջնորդեա որդւոց նոցա, եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր:

16. Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր. զգործս ձեռաց մերոց աջողեա մեզ:

Օրհնութիւն գովութիւն է Տեառն: Անվերնագիր:
Սաղմոս. Գ:

1. Ո՛վ բնակեալ ի յօդնութի՛ բարձրելոյ, ընդ հովանեաւ Աստուծոյ երկինս հանդիպեսջիք:
2. Ասասցէ Տեառն. ընդունելի իմ ես, ապաւէն իմ Աստուածս, եւ ես յուսամ ի նա:
3. Զի նա փրկեացէ զքս յորոգայթէ որսողին, եւ ի բանից խառնուածեանէ:
4. Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. ի հովանի թեւուց նորա յուսացիս:
5. Վահէս զէն շուրջ եղիցի զքեւ ճշմարտութիւն նորա:
6. Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերւոյ. եւ ոչ ի նետէ որ թռչի ի տուէ:
7. Յիրէ որ շրջի ի խաւարի, ի գայթակղութիւնէ զիւի ի հասարակ աւուր:
8. Ընկիցին ի կողմանէ քումէ հազարք եւ բիւրք ընդ աջմէ քումէ. որ առ քեզ ինչ ոչ մերձեսցին:
9. Բայց միայն աչօք քով հայեսցիս դու, զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու Տէր յոյս իմ ես:
10. Ցօդարձեսցէն արարեր քեզ ապաւէն. ոչ հասցեն առ քեզ չարք, եւ տանջանք մի մերձեսցին ի յարկս քո:
11. Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ ի վերայ քո. պահել զքեզ յամենայնի ճանապարհս քո:

12. Ի բազում իւրեանց ընկալցին զքեզ. զի մի երբեք հալցես զքարւի զոն քո:

13. Ի վերայ իժից եւ քարւոյ գնասցես դու. առ ոն կոխեսցես զառիւծն եւ զվիշապն:

14. Վասնզի յիս յուսացաւ եւ փրկեցից զնա. հովանի եղէց նմա զի ծանեաւ զանուն իմ:

15. Կարդասցէ առ իս՝ եւ ես լուայց նմա. եւ առ նմա եղէց ի նեղութեան:

16. Փրկեցից եւ փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, եւ ցուցից նմա զփրկութիւն իմ:

1. Սաղմոս օրհնութեան յաւուր շաբաթուց. ՁՂ:

2. Բարի է խոստովան լինել Տեառն. սաղմոս ասել անուան քում բարձրեալ:

3. Պատմել առաւօտու զողորմութիւնս քո եւ զճշմարտութիւնս ի գիշերի:

4. Տասնաղեաւ սաղմոսարանաւ ի ձայն օրհնութեան գովել:

5. Ուրախ արարեր զիս Տէր յարարածս քո, եւ ի գործս ձեռաց քոց ցնծացայց:

6. Որպէս զի մեծ են գործք քո Տէր. եւ յոյժ խոր են խորհուրդք քո:

7. Այր անզգամ զայս ոչ ծանիցէ. եւ անմիտն զայս ոչ առնու ի միտ:

8. Ի բուսանել մեղաւորաց որպէս խոտ, ի ծաղկել այնոցիկ զոր գործեն զանօրէնութիւն:

9. Սատակեացին յաւիտեան յաւիտենից. եւ դու բարձրեալ ես յաւիտեան Տէր:

10. Զի ահա թշնամիք քո Տէր, զի ահա թշնամիք քո կորիցեն. զրուեսցին ամենեքեան որ գործեն զանօրէնութիւն:

11. Բարձր եղիցի որպէս միեղջերոյ եղջիւր իմ. եւ ծերութիւն իմ ի ձէթ պարարութեան:

12. Նայեաւ աչն իմ ի թշնամիս իմ, զի յարուցեալ են ի վերայ իմ չարութեամբ. եւ ի նոսա լուաւ ունկն իմ:

13. Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեացին. որպէս մայրքն Լիբանանու, բազմք եղիցին:

14. Տնկեալք եղիցին ի սան Տեառն, եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեացին:

15. Եւ եւս բազմք եղիցին ի ծերութիւն պարարութեան. զիրգք եւ փափուկք եղիցին ի պատմել. ուղիղ է Տէր Աստուած մեր, եւ ոչ գոյ ի նմա անիրաւութիւն:

Յաւուրն աւուրց շաբաթու. յորում հաւատարեցաւ երկիր: Սաղմոս. Գ՚Ի:

1. Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն՝ ընդ մէջ իւր ածաւ:

2. Հաստատեաց զաշխարհ զի մի տատանեսցի. պատրաստ է աթոռ քո. ի սկզբանէ յաւիտեանս դու ես:

3. Ամբարձան գետք Տէր. ամբարձին գետք զձայնս իւրեանց. յարիցեն գետք ի գնացս իւրեանց:

4. Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչելի եղեն զբօսանք ծովու:

5. Սքանչելի ես դու Տէր ի բարձունս. վկայութիւնք քո մեք յոյժ հաւատացաք:

6. Տան քում վայելէ սրբութիւն Տէր՝ ընդ երկայն աւուրս:

Սաղմոս ի Դաւիթ ընդ+շաբաթու. Գ՚Դ:

1. Ընտուն ծ վկայիմդիր. Տէր Ընտուած վկայիմդիր յայտնեցաւ:

2. Բարձր լեր որ դառիս զերկիր. հաստ զհաստուցումն ամբարտաւանից:

3. Մինչեւ յե՞րբ մեղաւորք Տէր, մինչեւ յե՞րբ մեղաւորք պարծեսցին:

4. Խարխատեալ խօսեցան զանիրաւութիւն. խօսեցան ամենեքեան որ գործեն զանօրէնութիւն:

5. Օձ ժողովուրդս քո Տէր խոնարհ արարին. եւ զժառանգութիւն քո չարչարեցին:

6. Օչխարին եւ գայլին ապանին. զորբն կոտորեցին, եւ ասացին. ոչ տեսանէ զայս Տէր, եւ ոչ իմիտ առնու Ած Յակոբայ:

7. Խնդացարուք անզգամք ժողովրդոց եւ անմիտք, մինչեւ յե՞րբ ոչ առնուք ի միտ:

8. Որպէս զի թէ որ անկեաց զունկն՝ ինքն ո՞չ լուիցէ. կամ որ ստեղծ զակն՝ ինքն ո՞չ տեսանիցէ:

9. Որ խրատէն զազգինս. որպէս թէ ոչ յանդիմանեսցէ. ո՞ ուսուցանէ մարդոյ գիտութիւն. Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան զի են ընդունայն:

10. Երանի մարդոյ՝ զոր խրատես դու Տէր, եւ յօրինաց քոց ուսուցանես դու նմա:

11. Յանծուցանես դու նմա զաւուրսն չարութեան, մինչեւ փորեցցի խորխորատ մեղաւորի:

12. Ոչ մերժէ Տէր զժողովուրդ իւր, եւ զժառանգութիւն իւր ոչ առնէ անտես:

13. Մինչեւ դարձցին իրաւունք յարդարութիւն. ընկալցին զնա ամենեքեան որ ուղիղ են սրտիւք:

14. Ո՞ յարիցէ ընդ իս ի վերայ չարացո-
ւսեամ ո՞ հաւատասիցէ ինձ ի վերայ այնո-
ցիկ որ գործեն զանօրէնութիւն:
15. Թէ ոչ Տեառն օգնեալ էր ինձ, փոքր
միւս եւս բնակեալ էր անձն իմ ի դժոխս:
16. Թէ ասէի թէ սահա սասանեցան ոտք
իմ, ողորմութիւն քո Տէր օգնէր ինձ:
17. Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխի-
թարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ:
18. Ո՞ի հաւատասիցի քեզ աթոռ ա-
նօրէնութեան, ո՞ պատճառէ զվաստակս
ընդդէմ հրամանի:
19. Որսային զանձն արդարոյ, եւ զա-
րիւն ամբիծ պարտաւոր առնէին:
20. Եղեւ Տէր ապաւէն իմ. Ըստուած
օգնական յուսոյ իմոյ:
21. Հատուսցէ նոցա Տէր ըստ անօրէ-
նութեան նոցա. ըստ չարութեան նոցա
կործանեսցէ զնոսա Տէր Ըստուած մեր:

Օրհնութիւն քահանայութեան ի Տէր: Սաղմոս. Ղ՟Վ:

1. Եկայք ցնծացուք ի Տէր, աղաղա-
կեացուք առ Ըստուած փրկիչ մեր:
2. Կանխեացուք առաջի նո՛ր խոստովանու-
թիւ. սաղմոսիւք աղաղակեացուք առ նա:
3. Ըստուած մեծ է. Տէր թագաւոր
մեծ ի վերայ ամենայն երկրի:

4. Ի ձեռս նորա են ամենայն սիեզերք երկրի, եւ բարձրութիւնք լերանց նորա են:
5. Նորա է ծով՝ եւ նա արար զնա. եւ զցամաք ձեռք նորա առեղծին:
6. Նկայք երկիրպագցուք նմա, անկցուք եւ լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ:
7. Նա ինքն է Տէր Ած մեր. մեք ժողովուրդք ձեռին նր եւ խաշն արօտի նորա:
8. Եւթէ ձայնի նր լսիցէք, մի խըստացուսանէք զսիրտս ձեր ոպ ի դառնութիւն:
9. Յաւուրն փորձութեան յանապատին. ուր փորձեցին զիս հարքն ձեր. քննեցին զիս եւ տեսին զգործս իմ զքառասուն ամ:
10. Տաղտկացայ ազգաւն այնուիկ. եւ ասացի. միշտ մոլորեալ են սրտիւք. եւ նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ:
11. Որպէս երդուայ ի բարկութեան իմում, թէ մտցեն ի հանգիստ իմ:

Սաղմոս է Դաւիթ. ի ձառնաւոյն յորում պատճառն ընդեցաւ. Գ:

1. Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնեցէք զՏէր ամենայն երկիր:
2. Օրհնեցէք զՏէր եւ օրհնեցէք զանուն նորա. աւետարանեցէք օրըստօրէ զփրկութիւն նորա:

3. Պատմեցէք ի հեթանոս փիլատոնոյա. յամենայն ժողովուրդս զքաջանչելիս նորա:

4. Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ. ահարկու է նա ի վերոյ ամենայն կռոց:

5. Ամենայն կուռք հեթանոսաց դեւք են. այլ Տէր զերկինս արար:

6. Խոստովանութիւն եւ վայելչութիւն է առաջի նորա, սրբութիւն եւ մեծվայելչութիւն ի սրբութեան նորա:

7. Պատուցէք Տեառն տոհմք ազանց, մատուցէք Տեառն զփառս եւ զպատիւ. մատուցէք Տեառն զփառս անուան նորա:

8. Առէք պատարագ եւ մտէք ի սրահս նո՛ր. երկրպագէք Տ՚ն ի գաւիթս սրբութե՛ն նո՛ր. եւ խռովեսցի յերեսաց նո՛ր ամ՛ երկիր:

9. Ասացէք ի հեթանոս թէ Տէր թագաւորեաց. հաստատեաց զաշխարհ՝ զի մի սասանեսցի. եւ դատի զժողովուրդ իւր ուղղութեամբ:

10. Ուրախ լիցին երկինք եւ ցնծասցէ երկիր. զուարճասցի ծով լիւ իւրով. ցնծասցեն դաշտք եւ ամենայն որ ի նոսա:

11. Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք անտառի յերեսաց Տեառն՝ զի գայ, եւ գայ նա ի դատել զերկիր:

12. Դատի զտիեզերս իրաւամբք. եւ զժողովուրդս ամ՛ ճշմարտութե՛ իւրով:

1. Սաղմոս է Դաւթի. է ժամանակէ զի երկիր հաս-
պասիցես. Ղ՚Օ՚:

2. Տէր թագաւորեաց զգեցաւ երկիր. ուրախ եղիցին կղզիք բազումք:

3. Ամպ եւ մէգ շուրջ են զնովաւ. յիրաւունս եւ յարդարութիւն ուղղեալ է աթոռ նորա:

4. Հուր առաջի նորա զնասցէ. այրեսցէ շուրջ զթշնամիս նորա:

5. Երեւեցան փայլատակունք նորա սիեզերաց. տեսս եւ սասանեցաւ երկիր:

6. Լերինք որպէս մոմ հալեցան յերեսաց Տեառն, յերեսաց Տեառն ամենայն երկիր:

7. Պատմեացեն երկինք զարդարութիւն նո՛. տեսցեն ամենայն ժողովուրդք զփառս նորա:

8. Ամաչեսցեն ամենեքեան որ երկիրսպասանեն կռոց. եւ որ պարծին ի դիւոցեալս իւրեանց:

9. Երկիրսպագեն նմա ամենայն հրեշտակք նորա. զի լուաւ եւ ուրախ եղեւ Սիոն. եւ ցնծացեն դստերք Յուդայ վասն իրաւանց քոց Տէր:

10. Զի դու բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի. յոյժ բարձրացար ի վերայ ամենայն կռոց:

11. Որք սիրէք զՏէր ատեցէք զչարու-

թիւն. պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց, ի ձեռաց մեղաւորի փրկեացէ զնոսա:

12. Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտիւք երել ուրախութիւն:

13. Ուրախ եղերուք արդարք ի Տէր. խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա:

Սաղմոս ի դաւիթ. ՃԼ:

1. Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւնն նոր, զի սքանչելիս արար:

2. Փրկեաց նմա աջ իւր, եւ բազուկ սուրբ իւր:

3. Եցոյց Տէր զփրկութիւն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր:

4. Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ. ճշմարտութեամբ իւրով զտունն Իսրայէլ. եւ տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

5. Ընդալակեցէք առ Տէր ամ երկիր. օրհնեցէք ցնծացէք եւ սաղմոս ասացէք:

6. Սաղմոս ասացէք Ա.Յ մերոյ օրհնութիւն. օրհնութիւն եւ ի ձայն սաղմոսաց:

7. Ի ձայն օրհնութեան կռածոյ փողոյ. օրհնութեամբ ցնծութեամբ՝ եւ ի ձայն եղջեր փողոյ աղաղակեցէք առաջի թագաւորին Տեառն:

8. Խոովեցի ծով լուիւ իւրով. սիեզերք եւ ամենայն բնակիչք նորա, եւ զեամք ծախս հարցեն ի միասին ձեռամբ:

9. Լերինք ցնծացեն առաջի Տեառն, զի գայ եւ հատեալ է Տէր ի դատել զերկիր:

10. Դատի զաշխարհս արդարութեամբ եւ զժողովուրդս իւր ուղղութեամբ:



Սաղմոս է Դաւիթ. ՂՀ:

1. Տէր թագաւորեաց բարկացան ժողովուրդք, որ նստեալ ի քերովբէս, սասանեացաւ երկիր:

2. Տէր ի Սիոն մեծ է. եւ բարձր է ի վերայ ամենայն ժողովրդոց:

3. Խոստովան եղիցուք անուան քումմեծի, զի սուրբ է, եւ պատիւ թագաւորի զնիւաւունս սիրէ:

4. Դու պատրաստեցեր զուղղութիւն. զերաւունս եւ զարդարութիւն Յակոբայ դու արարեր:

5. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկրպագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

6. Մովսէս եւ Ահարոն երիցունք նորա. Սամուէլ ընդ այնոսիկ, որ կարդան զանուն նորա:

7. Կարկային առ Տէր եւ նա լսէր նո-
ցա. եւ ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա:
8. Պահէին զվկայութիւնս նորա, եւ
զհրամանս զոր ետ նոցա:
9. Տէր Աստուած մեր դու լսէիր նոցա.
Աստուած՝ դու քաւիչ լինէիր, վրէժխըն-
դիր ի վերայ ամենայն գործոց նոցա:
10. Խարճ արարէք զՏէր Աստուած
մեր. երկիրպագէք ի լեառն սուրբ նորա.
զի սուրբ է Տէր Աստուած մեր:

Սաղմոս խոստովանութեան է Դաւիթ. Ղ՟Թ:

1. Ընդղանեցէք առ Տէր ամենայն
երկիր. ծառայեցէք Տեառն ուրախու-
թեամբ:
2. Մտէք առաջի նորա ցնծութեամբ.
ծաներուք զի նա է Տէր Աստուած մեր:
3. Նա արար զմեզ եւ ոչ մեք էաք.
մեք ժողովուրդք եւ խաշն արօտի նորա:
4. Մտէք ընդ դրունս նորա խոստովա-
նութեամբ. եւ օրհնութիւք ի յարկս նորա:
5. Խոստովան եղերուք Տեառն, եւ օր-
հնեցէք զանուն նորա:
6. Քաղցր է Տէր, յաւիտեան է ողոր-
մութիւն նորա. յազգէ մինչեւ յազգ է
ճշմարտութիւն նորա:

1. ՅՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ եւ յիրաւունս օրհնեցից զքեզ Տէր. սաղմոս ասացից, եւ ի միտ առից:

2. Հանապարհ ամբիծ միտնչեւ եկեսցէ առ իս. զի գնայի ես յանբծութեան սրտի իմոյ եւ ի մէջ տան իմոյ:

3. Ոչ եդի առաջի աչաց իմոց իրս անիրաւութեան. որք առնէին զանօրէնութիւն՝ ատեցի:

4. Ոչ մերձեցաւ առ իս որ թիւրն էր սրտիւ. խոտորեալ յինէն անզգամին, եւ ես ինչ ոչ գոյթ առնէի:

5. Որ խօսէր գաղտ զընկերն իւրմէ. զնա բայէ ի բաց հալածէի:

6. Որ ամբարտաւան էր աչօք եւ ագահ սրտիւ, ընդ նմա հաց ոչ ուտէի:

7. Աչք իմ ի հաւատացեալս երկրի, զի նստցին նոքա ընդ իս:

8. Որ գնայր ի ճանապարհ ամբիծ, նա պաշտէր զիս:

9. Ոչ բնակէր ի մէջ տան իմոյ, որ առնէր զամբարտաւանութիւն. որ խօսէր զանօրէնութիւն՝ չէր յաջողեալ նմա առաջի աչաց իմոց:

10. Ընդ առաւօտս սպանանէի զամենայն

Ձեզաւրս երկրի. սատակեցից ի քաղաքի Տեառն զամենեսեան որք գործէին զանօրէնութիւն:

1. Ականի ուրուք յորժամ յանդիպեսցի, սուրբ Տեառն պիտանացի պիտի լինիցի նա: ՃԱ:

2. Տէր լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. մի դարձուցաներ զերեսս քո յինէն:

3. Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ:

4. Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ. եւ ոսկերք իմ որպէս խոհ չորացան:

5. Ջարդեալ որպէս խոտ եւ ցամաքեաց սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ:

6. Նմանեցաւ ոսկր իմ ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալուտն յանապատի:

7. Նմանէ ես ոչ բու յաւերակի. ոչնեցայ, եւ եղէ ես ոչ ճնճղուկ միայն ի տանիս:

8. Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհասնապատ, եւ գովիչք իմ ինեւ երդնուին:

9. Ոչմխիր որպէս հաց կերայ. եւ զըմպելի իմ արտասուօք խառնեցի:

10. Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո. զի դու բարձրացուցեր եւ խոնարհեցուցեր զիս:

11. Ուրուք իմ որպէս հովանի անցին. եւ ես որպէս խոտ ցամաքեցայ:

12. Դու Տէր յաւիտեան կաս. եւ յիշատակ քո յազգէ մինչեւ յազգ:

13. Դու յարուցեալ ողորմեսցիս ի վերայ Սիոնի. ժամանակ ողորմելոյ նորա հասեալ է ժամ:

14. Ամենայն ծառայք քո ընդ քարինս նորա. եւ ի հողս նորա ողորմեսցին:

15. Երկիցեն հեթանոսք յանուանէ քումէ, եւ ամենայն թագաւորք երկրի ի փառաց քոց:

16. Զի շինէ Տէր զՍիոն, եւ երեւեսցի փառօք իւրովք ի նմա:

17. Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, եւ ոչ արհամարհեաց զինդրուածս նոցա:

18. Գրեսցի այս յազգ յայլ. ժողովուրդ, զոր ստացեալ է՝ օրհնեսցէ զՏէր:

19. Հայեցաւ նա ի բարձանց իւրոց երկնից. Տէր յերկինից յերկիր հայեցաւ:

20. Լսել զհեծութիւն կապելոց, եւ արձակել զորդիս մահապարտաց:

21. Պատմել ի Սիոն զանուն Տեառն. եւ զօրհնութիւնս նորա յԵրուսաղէմ:

22. Ժողովել ժողովրդոց ի միասին, եւ թագաւորաց ծառայել Տեառն:

23. Պատասխանի եւ նմա ի ճանապարհի զօրութիւն իւրոյ. զնուազութիւն աւուրց իմոց ասա ինձ, եւ մի հաներ զիս ի կէս աւուրց իմոց, զի յազգէ յազգ են ամք քո:

24. Ի սկզբանէ Տէր զհիմունս երկրի հաստատեցեր, եւ գործք ձեռաց քոց երկինք են:

25. Նոքա անցանեն, եւ դու կաս եւ ճնաս յաւիտեան:

26. Ամենեքեան ոպ զձորձս մաշեսցին. ոպ զվերարկուս փոխեսցես զնա եւ փոխեսցին:

27. Բայց դու նոյն իսկ ես, ամք քո ոչ անցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցեն ի նմա. եւ զաւակի նորա յաւիտեան աջողեսցի:

Սաղմոս ի Դաւիթ. ՃՐ:

1. Օրհնեա անձն իմ զՏէր, եւ ամենայն սակեւիք իմ զանուն սուրբ նորա:

2. Օրհնեա անձն իմ զՏէր, եւ մի մոռանար զամենայն տուրս նորա:

3. Ո քաւէ զամեղս քո. բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո:

4. Ո փրկէ յապականութենէ զկեանս քո. պսակէ զքեզ ողորմութիւբ եւ զթութիւբ:

5. Ո՞վ ընդ ի բարութենէ զթանկութիւն
քո. նորոգեացի որպէս արծուոյ մանկու-
թիւն քո:
6. Ընդէ՞ ողորմութիւնս Տէր. եւ իրաւ-
ունս ամենայն զկնի:
7. Ծանոյց Տէր զձանապարհս իւր Մովսե-
սեի. եւ որդւոցն Իսրայելի զկամս իւր:
8. Գթած ողորմած է Տէր, երկայնա-
միտ եւ բազումողորմ:
9. Ո՛չ ի հատոյ բարկանայ մեզ Տէր. եւ
ոչ յաւիտեան պահէ ոխս:
10. Ո՛չ ըստ մեղս մեր արար մեզ, եւ ոչ
ըստ անօրէնութեանս մերում հատոյց մեզ:
11. Զի՛ որպէս բարձր են երկինք յեր-
կրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն
իւր ի վերայ երկիւղածաց իւրոց:
12. Որչափ հեռի են արեւելք յարե-
մտից, այնչափ հեռի արար ի մէնջ զա-
նօրէնութիւնս մեր:
13. Ո՛րպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւ-
րոց, այնպէս գթացեալ Տէր յերկիւղածս իւր:
14. Զի՛ նա գիտաց զստեղծուածս մեր,
եւ յիշեաց թէ հող եմք:
15. Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր.
որպէս ծաղիկ ի վայրի՝ այնպէս ծաղկէ:
16. Զի՞նչէ ի նմա հոգի, եւ ոչ է. եւ
ոչ եւս ներեւի տեղի նորա:

17. Բայց ողորմութի՛ն տո՛ւ յաւիտեանս յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց. եւ արդարութի՛ն նո՛ր յորդւոց մինչեւ յորդիս:

18. Ո՛յք պահեն զուխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա եւ առնեն զնա:

19. Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. թագաւորութի՛ն նորա ամենեցուն տիրէ:

20. Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն հրեշտակք նորա հզօրք զօրութեամբ, որ առնէք զբան նորա ի լսել ձայնի պատգամաց նորա:

21. Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն զօրութիւնք նորա. պաշտօնեայք եւ արարողք կամաց նորա:

22. Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն գործք նորա. ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա. օրհնեա անձն իմ զՏէր:

Սաղմոս Դաւթի ի վերայ աշխատհաքուծ արտա-
ձոց. ՃՀ:

1. Օրհնեա անձն իմ զՏէր. Տէր Աստուած իմ մեծ եղեր յոյժ:

2. Խոստովանութիւն եւ մեծվայելչութիւն զգեցար. արկար զլոյս որպէս զօթոց. ձգեցեր զերկինս որպէս խորան. եւ արկար ի վերայ ջուց զվերնայարկս նորա:

3. Ո դնէ յամպս զդնացս իւր եւ շրջի նա ի վերայ թեւոց հողմոյ:

4. Ո արար զհրեշտակս իւր յոգիս. եւ զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ:

5. Հաստատեաց զերկիր ի վիր հաստատութիւն իւրոյ, զի մի սասանեսցի յաւիտեան:

6. Խոռոչ որպէս զգեստ վերարկու է նա. ի վերայ լերանց կացցեն ջուրք:

7. Ի սաստ քումէ փախիցեն, եւ ի ձայնէ որոտալոյ քումէ սարսեսցին:

8. Ելանեն լեռնանան, եւ իջանեն դաշտանան, ի տեղի յոր հաստատեցեր զնոսա:

9. Սահման եդեր եւ ոչ անցանեն. եւ ոչ եւս դառնան ի ծածկել զերկիր:

10. Առաքեցեր զաղբերս ընդ ձորձորս. ի մէջ լերանց գնասցեն ջուրք:

11. Արբուցանել զամենայն գազանս վայրի. յագեսցին ցիւք ի ծարաւս իւրեանց:

12. Ընդ թռչունս երկնից բոյնս ցիցեն. եւ ի միջոյ վիմաց տացեն զձայնս իւրեանց:

13. Արբուցանել զլերինս ի շտեմարանաց իւրոց. ի պտղոյ գործոց լցցի երկիր:

14. Խոտս ցիս զնոսա ի լերինս. զգազալն ի ծառայութիւն մարդկան:

15. Հանել զհաց յերկրէ. գինի ուրախ առնէ, իւղ զուարթ, եւ հաց հաստատէ զսիրտ մարդոյ:

16. Յարեացին ծառքն անտառի. եւ մայրքն Լիբանանու՝ զոր դու անկեցեր:
17. Ընդ թռչունք երկնից ձագս հանցեն. եւ բոյն արագիլ ապաւէն է նոցա:
18. Լերինք բարձունք են եղջերուաց, եւ վէմք ապաւէն նապաստակաց:
19. Արարեր զլուսին վասն ժամանակի. արեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ:
20. Արարեր զխաւար՝ եւ եղեւ գիշեր. ի նմա գնան ամենայն գազանք անտառի:
21. Կորիւնք առիւծուց մռնչեն եւ յափշտակեն. եւ խնդրեն Աստուծոյ զկերակուր իւրեանց:
22. Ի ծագել արեւու ժողովին. եւ ի մուխս իւրեանց դադարեն:
23. Ելանէ մարդ ի գործս իւր, եւ ի վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ:
24. Որպէս զի մեծ են գործք քո Տէր. եւ զամենայն ինչ իմաստութեամբ արարեր. եւ լցաւ երկիր ստեղծուածովք քովք:
25. Այս ծով՝ մեծ եւ անդորր, ի նմա են սողունք որոց ոչ գոյ թիւ, գազանք մեծամեծք եւ մանունք. իմա եւ նաւք գնան, վիշապն զոր ստեղծեր խաղալ նովաւ:
26. Ամենեքեան քեզ ապասեն, եւ դու տաս նոցա կերակուր ի ժամու:
27. Տաս դու նոցա եւ կերակրին. բա-

նաս զձեռն քո եւ լցուցանես զամենեսեան քաղցրութեան կամօք քո:

28. Վարձուցանես զերեսս քո ի նոցա նէ եւ խառնվին. հանես զոգի քո ի նոցա նէ, պակասին եւ ի հող դառնան:

29. Առաքես զոգի քո եւ ստեղծանին զնոսա. եւ նորոգես զերեսս երկրի:

30. Եղեսին փառք Տեառն յաւիտեան. Տէր ուրախ եղիցի յարարածս իւր:

31. Ո հայի յերկիր եւ սոյ դողալ սմա. մերձի ի լերինս եւ ծխեսցին:

32. Օրհնեցից զՏէր ի կեանս իմ. սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես:

33. Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ, եւ ես ուրախ եղէց ի Տէր:

34. Պակասեսցին մեղաւորք յերկրէ, ամբարիշտ մի եւս գոյի ի սմա. օրհնեա անձն իմ զՏէր:

Ընդ-ի: Սաղմոս. ՃՐ:

1. Խոստովան եղերուք Տեառն եւ կարդացէք զանուն նորա. պատմեցէք ի հեթանոսս զգործս նորա:

2. Օրհնեցէք եւ սաղմոս ասացէք նմա. պատմեցէք զամենայն սքանչելիս նորա. եւ գովեցարուք յանուն սուրբ նորա:

3. Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որ

խնդրեն զՏր. խնդրեցէք զՏր եւ հզօրք եւ զերեսք. խնդրեցէք զերեսս նո՛ր յամ ժամ:

4. *Յիշեցէք զքանչելիս նորա զոր արար. զարուեստս եւ զնշաւունս բերանոյ նորա:*

5. *Ծառայ արբրահամեան ծառայք նորա. եւ որդիք Յակոբայ ընտրեալք նորա:*

6. *Նա Տէր Աստուած մեր. յամենայն երկրի են իրաւունք նորա:*

7. *Յիշեաց յաւիտենից զուխտ իւր. եւ զբանն, զոր պատուիրեաց մինչ ի հազար ամ:*

8. *Զոր եդ ընդ Աբրահամու, եւ զերդումն իւր ընդ Սահակայ:*

9. *Հաստատեաց առ Յակոբ զհրաման իւր, եւ առ Իսրայէլ զուխտ իւր յաւիտենից:*

10. *Եւ ասէ՝ ձեզ տացի զերկիրն Քանանու. զվիճակ ժառանգութեան ձերոյ:*

11. *Ոչ էին նոքա թուով սակաւ. նուազք եւ պանդուխտք ի նմա:*

12. *Եւնգին նոքա ազգէ յազգ. ի թագաւորութենէ ի ժողովուրդ յայլ:*

13. *Ոչ եթող մարդկան վնասանել նոցա. կշտամբեաց զթագաւորս վասն նոցա:*

14. *Մի մերձենայք ասէ՝ յօծեալս իմ. եւ ի մարգարէս իմ մի վնասէք:*

15. *Կոչեաց սով յերկիր նոցա, եւ զամենայն զօրութիւն հացի եբեկ:*

16. Առաքեաց առաջի նոցա այր. ի ծառայութիւն վաճառեցաւ Յովսէփ:
17. Խոնարհ արարին ի կապանս զոտս նորա. եւ անց ընդ երկաթ անձն նորա:
18. Մինչեւ եկեսցէ բան նորա. եւ բան Տեառն փորձեաց զնա:
19. Առաքեաց թագաւորն եւ ելոյծ զնա. իշխան ժողովրդեան եթող զնա:
20. Կացոյց զնա Տէր տան իւրոյ. իշխան ի վերայ ամենայն ստացուածոց իւրոց:
21. Խրատել զիշխանս նր որպէս զինքն. եւ զծերս նոցա իմաստուն արասցէ:
22. Եմուտ Իսրայէլ Եգիպտոս. Յակոբ պանդխտեցաւ յերկրին Քամայ:
23. Աճեցոյց զժողովուրդ իւր յոյժ. եւ զօրացոյց զնոսա քան զթշնամիս իւր:
24. Դարձոյց զսիրտ նոցա յատել զժողովուրդ իւր. եւ իննդիր լինել ծառայս իւր:
25. Առաքեաց զՄովսէս ծառայ իւր. եւ զՀարոն ընտրեալ իւր:
26. Եդ նոցա զբան նշանաց իւրոց, եւ զարուեստս իւր յերկրի Քամայ:
27. Առաքեաց զխաւար, եւ խաւարեցոյց զնոսա. զի դառնացուցին զբան նորա:
28. Դարձոյց յարիւն զգետս նոցա. եւ սպան զամենայն ձկունս նոցա:

29. Եւ աւաց յերկիր նոցա գորտ, ի շուրմարան թագաւորաց նոցա:
30. Եւ ասաց՝ եւ եկն շանաճանճ, եւ մժեխ ընդ ամենայն սահմանս նոցա:
31. Վարձոյց զանձրեւս նոցա ի կարկուտս. եւ հուր յերկիր նոցա բորբոքեցաւ:
32. Եհար զայգիս եւ զթզենիս նոցա. եւ փշրեաց զամենայն ծառս սահմանաց նոյ:
33. Ասաց՝ եւ եկն մարախ եւ խաւնիճ, զի ոչ գոյր թիւ:
34. Եկեր զամենայն խոտ երկրի նոյ. եւ ապառեաց զամենայն պտուղ անդոյ նոցա:
35. Եհար զամենայն անդրանիկս եգիպտացւոց, զսկիզբն ամ վաստակոց նոցա:
36. Եհան զնոսա ոսկւով եւ արծաթով. եւ ոչ գոյր յազգի նոցա հիւանդ:
37. Ուրախ եղեւ եգիպտոս ընդ ելանել նոցա. զի անկաւ ահ Տեառն ի վերայ նոցա:
38. Պատեաց ամպ՝ հովանի առնել նոցա խոտէ. եւ հրով լոյս տայր նոցա ի գիշերի:
39. Խնդրեցին եւ եկն լորամարդի. եւ հացիւ երկնից լցոյց զնոսա:
40. Եհար վէմն եւ բղխեցին ջուրք. եւ գնացին գետք ընդ անջրդիս:
41. Յիշեաց զբան իւր սուրբ, որ ընդ Աբրահամու ծառայի իւրոյ:
42. Եհան զժողովուրդն իւր ցնծու-

թեամբ. եւ զընտրեալս իւր ուրախութեամբ:

43. Եւ տոյա զգաւառս հեթանոսաց. ի վաստակս ժողովրդոց ժառանգեցոյց զնոսա:

44. Զի պահեսցեն զվկայութիւնս նորա. եւ զօրէնս նորա խնդրեսցեն:

Ալէլուիա: Սաղմոս. ՃՆ:

1. Խոստովանեցարուք Տեառն, զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

2. Ո՞ խօսեսցի զզօրութիւնս Տեառն. լսելի արասցէ զամենայն օրհնութիւնս նորա:

3. Երանի որք պահեն զկրաւունս. եւ առնեն զարդարութիւն յամենայն ժամ:

4. Յիշեա զմեզ Տէր ընդ հաճոյս ժողովրդեան քո. եւ այց արա մեզ ի փրկութեան քում:

5. Տեսցուք մեք զքաղցրութիւն ընտրելոց քոց. ուրախ եղիցուք մեք յուրախութիւն ազգի քո. եւ գովեսցուք մեք ի ժառանգութեան քում:

6. Մեղաք մեք եւ հայրն մեր. անօրինեցաք եւ յանցեաք:

7. Հայրն մեր Յերիսաղէմ ոչ իմացան

զաքանչելիս քո. եւ ոչ յիշեցին զբազումս ողորմութիւնս քո:

8. Խարկացուցին զքեզ յանցանեն իւրեանց ընդ ծով կարմիր. վրկեաց զնոսա վասն անուան իւրոյ՝ զի ծանիցեն զզօրութիւն նորա:

9. Սաստեաց ի ծով կարմիր, եւ ցամաքեցաւ. առաջնորդեաց նոցա ընդ անդունդս՝ որպէս ընդ անապատս:

10. Կեցոյց զնա ի ձեռաց ատելեաց նոյ. եւ փրկեաց զնա ի ձեռաց թշնամեաց նոյ:

11. Ծածկեաց ծով զնեղիչս նոցա. եւ մի ի նոցանէ ոչ ապրեցաւ:

12. Հաւատացին բանի նորա. եւ օրհնեցին զօրհնութիւնս նորա:

13. Վաղվաղեցին եւ մոռացան զգործս նորա. եւ ոչ անասցին խորհրդոյ:

14. Յանկացան զցանկութիւն յանապատի, եւ փորձեցին զԱստուած յանկրկի:

15. Եւ նոցա զխնդրուածս նոցա. աքեաց զկշութիւն յանձինս նոցա:

16. Խարկացուցին զՄովսէս ի բանակի. եւ զԱհարոն սուրբ Տեառն:

17. Բացաւ երկիր եւ եկաւ զԴաթան. եւ ծածկեաց զբանական զԱբիրոնի:

18. Հուր վառեցաւ ի ժողովս նոցա. եւ բոց մաշեաց զմեղաւորս:

19. Ելանէին որթ ի Քորեբ, եւ երկիր-
պագին պատկերի. եւ վոխեցին զփառս ի-
րեանց ի նմանութիւն որթու խոտակերի:
20. Մոռացան զԱստուած կենդանւոյ
իւրեանց. որ արար զմեծամեծս յԵգիպ-
տոս. զքաջանչելիս իւր յերկիր Քամայ. եւ
զահ իւր ի վերայ կարմիր ծովուն:
21. Ասաց սատակել զնոսա. թէ ոչ
Մովսէս ընտրեալ կայր առաջի նորա:
22. Դարձաւ առ Տէր եւ անցոյց զբար-
կութիւն նորա. զի մի սատակեացին նոքա:
23. Ընդդեցին զերկիրն ցանկալի. եւ
ոչ հաւատացին բանի նորա:
24. Տրտնջեցին ի բանակս իւրեանց, եւ
ոչ լսան ձայնի Տեառն:
25. Յամբարձ զձեռն իւր ի վերայ նո-
ցա. հարկանել զնոսա յանապատի:
26. Յուսեացի զսերմ նոցա ընդ հեթա-
նոսս. ցրուեացի զսերմ նոցա ընդ դաւառս:
27. Պղծեցան նոքա ի Բէելփեգովր.
կերան զպղհեալ եւ զմեռելսն:
28. Բարկացուցին զնա ի գործս իւ-
րեանց. յաճախեաց ի վերայ նոց բեկումն:
29. Եպա եկաց ի մէջ փենէհէս, քա-
ւեաց եւ արգելաւ մահ. համարեցաւ նմա
յարդարութիւն ազգէ յազգ մինչեւ յա-
ւիտեան:

30. Խարկացուցին զնա ի վերայ Յուդայ հակառակութեան. յայնժամ Մովսէս ասէ նոցա, զի գառնացուցին զտէր նորա:
31. Ի բանալեաց շիմամբք իւրովք. եւ ոչ սատակեցին զայրգան զոր ասաց նոցա Տէր:
32. Խառնակեցան ընդ հեթանոսս, եւ ուսան զգործս նոցա. ծառայեցին կռոց նոցա. եւ եղեւ նոցա ի գայթակղութիւն:
33. Զոհեցին զորդիս եւ զդստերս իւրեանց դիւաց. եւ հեղին արիւն ամբիծ:
34. Արիւն որդւոցց եւ դստերաց նոցա, զոր զոհեցին կռոցն Քանանու:
35. Է աղախնեցաւ երկիր յարենէ նոցա, եւ պղծեցաւ ի գործոց նոցա. զի պոռնկեցան ի գնացս իւրեանց:
36. Խարկացաւ սրտմտութեամբ Տէր ի վերայ ժողովրդեան իւրոյ. եւ գարշեցոյց զժառանգութիւն իւր յոյժ:
37. Մատնեաց զնոսա ի ձեռս հեթանոսաց. տիրեցին նոցա ատելիք իւրեանց. եւ թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա. եւ խոնարհ եղեն ի ներքոյ ձեռաց նոցա:
38. Եւ բազում անգամ փրկեաց զնա, եւ նոքա դառնացուցին զնա ի խորհուրդս իւրեանց, եւ կորացան յանօրէնութիւնս իւրեանց:
39. Էայեցաւ Տէր ի նեղութիւնս նոցա ի լսել ձայնի աղօթից նոցա:

40. Յիշեաց զուխտ իւր, եւ զղջացաւ ըստ բազում ողորմութե՛ւ իւրում. եւ զնա՛ ի պատուխս առաջի տա՛ր զերչաց նոցա:

41. Փրկեա զմեզ Տէր Աստուած մեր. եւ ժողովեա զմեզ ի հեթանոսաց:

42. Խոստովան եղիցուք անուան քում սրբոյ. եւ պարծեցուք յօրհնութիւն քո:

43. Օրհնեալ Տէր Աստուած Խրայէ՛լ. յաւիտեանս յաւիտենից:

44. Եւ ասացէ ամենայն ժողովուրդն. եղիցի եղիցի:

Աղօ՛թ եղեկեցի սրբոյն Հրեշտակապետի. ի ձառագիւղ յորում հիւանդացաւ. եւ յաբեա՛ ի հիւանդութենէ իւրմէ. եւ ՀԱ:

1. Եւ ասաց տասն ի վերանալ յինէն աստուծոյ խոսց, թէ գնացի ես ի դրունս դժոխոց:

2. Ծառն զամենայն գլխովին իմ եւ ասացի թէ այլ ոչ եւս տեսից զփրկութիւն Տեառն յերկրին կենդանեաց. եւ ոչ եւս տեսից զմարդ բնակչաց իւրով՛ք հանդերձ:

3. Պահասեցայ ես յաղգատոհմէ իմմէ. այսուհետեւ Ծողն լքի զնա՛ զկեանս իմ:

4. Եւ գնաց մեկնեցաւ յինէն հոգի իմ, ոչ զայն որ քակէ զտաղաւար. եւ եղէ ես ոչ զտան աստուծոյ մերձ ի հաստանել:

5. Զաւուր յայնմիկ մատնեցայ ես յառաւօտէ որպէս ի ձեռս առիւծու. այնպէս խորտակեաց մանրեաց զոսկերս իմ. զի յառաւօտէ մինչեւ ի գիշեր մատնեցայ:

6. Որպէս ծիծառն այնպէս ճչեցի. եւ որպէս զաղաւնի այնպէս միչեցի. զինուածեցան աչք իմ ի տեսանելոյ:

7. Հայեցայ ի բարձունս առ Տէր Աստուած իմ, որ փրկեաց զիս. եւ փարատեցոյց յինէն զպատս անձին իմոյ:

8. Տէր վասն այսորիկ պատմեցաւ քեզ. զարթուցեր զանձն իմ, դարձուցեր զհոգի իմ, մխիթարեցայ եւ կեցի:

9. Ահա ի խաղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ. փրկեցեր զանձն իմ զի մի կորեայց. եւ ընկեցեր յետոյ զամենայն զմեղս իմ:

10. Զի ոչ թէ ոք ի դժոխս են խոստովան առնին առ քեզ. եւ ոչ մեռեալք օրհնեացեն զքեզ. եւ ոչ յուսացին ի ճշմարտութիւնս քո ամենեքեան որ իջանեն ի դժոխս:

11. Ողջ կենդանիքս օրհնեացուք զքեզ Տէր. որպէս եւ ես այսու հետեւ մանկունս ծնայց, որ պատմեացեն զարդարութիւնս քո, Տէր փրկութեան իմոյ:

12. Ես ոչ եւս դադարեցից օրհնել

զքեզ յօրհնութիւն նոր, զամենայն ա-
ւուրս կենաց իմոց յանդիման տաճարիդ
Ընտուծոյ:

Մաղմոս:

Յոյս կենդանութեան, յոյս եւ ապա-
ւէն փրկութեան Տէր Յիսուս. փրկեա եւ
փարատեցո զցաւս անձին իմոյ: Ա՛ւրդասէր
Տէր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ եւ
կուսի. եւ վասն խաչի քոյ պատուականի
ընկալ զաղաչանս մեր, եւ կեցո զմեզ:

Հ+ՈՒՐՈՒՆ Ի ՎԵՐՉ ԵՒԿԻՆ+ ՊՈՊՐԵՆԻՆ ԳՈՑԵՑ.
ԷՋ 67:

Ա՛Ո՛Ր։ Ս՚ՂՈՒ. Ա՛Ո՛Ր։

1. Խոստովան եղերուք Տ՚ն զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

2. Ասացեն վրկեալք Տեառն, զորս վրկեաց ի ձեռաց թշնամւոյն։

3. Յամենայն գաւառաց ժողովեաց զնոսա. յարեւելից եւ յարեւմտից, ի հիւսիսոյ եւ ի ծովէ։

4. Մոլորեցան նոքա յանապատի յանջրդի ճանապարհի. քաղաք բնակութեան ոչ գտին։

5. Քաղցեան եւ ծարաւեցան. եւ անձինք նոցա ի նոսին նուաղեցին։

6. Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւրեանց, ի վշտաց նոցա վրկեաց զնոսա։

7. Առաջնորդեաց նոցա ի ճանապարհ ուղիղ. զի երթիցեն ի քաղաք բնակութեան իւրեանց։

8. Խոստովան եղիցին Տ՚ն ողորմութիւք նորա. սքանչելեաց նորա որդւոք մարդկան։

9. Զի յագեցոյց զանձինս քաղցեալս, եւ զանձինս կարօտեալս լի արար բարութեամբ։

10. Որք նստէին ի խաւարի եւ ի



Հայեի յանգղրուածն եւ մարդեի, զի գրուատիրուածն ոչ ոք պահեցին: ՅՈՎ. ԺԲ:

առաքս մահու. կապեալ էին յաղքատութեան որպէս յերկաթ:

11. Ո՛վ զառնացուցին զբանն Աստուծոյ. եւ զխորհուրդս Բարձրելոյն բարկացուցին:

12. Խոնարհ եղեն ի ցաւոց սիրտք նոցա. ախտացան, եւ ոչ ոք էր որ օգնէր նոցա:

13. Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւրեանց. ի վշտաց նոցա եհան զնոսա:

14. Փրկեաց զնա ի խաւարէ եւ ի սառեալ մահու. եւ խզեաց զկապանս նոցա:

15. Խոստովան եղիցին Տեր ողորմութիւնք նորա. պատմելեաց նորա որդիք մարդկան:

16. Ո՛վ ի վշտեաց զլուսնա պղնձիս, եւ զնիգս երկաթիս խորտակեաց:

17. Օգնեաց նոցա ի ձանապարհի անօրէնութեան. զի վասն մեղաց իւրեանց խոնարհ եղեն յոյժ:

18. Յամենայն կերակրոց գարշէին սիրտք նոցա. մերձենալն մինչեւ ի դրունս մահու:

19. Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւրեանց, եւ ի վշտաց նց ապրեցոյց զնս:

20. Առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զնոսա. եւ փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց:

21. Խոստովան եղիցին Տեր ողորմութիւնք նորա. պատմելեաց նորա որդիք մարդկան:

22. Պատուցեն նմա պատարագ օրհ-

նութեան. եւ պատմեացին զգործս նորա ընծութեամբ:

23. Ելք իջանէին ի ծով նաւուք. եւ առնէին զգործս ի ջուրս բազումս:

24. Նոքա տեսին զգործս Տեառն, եւ զքանչելիս նորա ի խորս անդնդոց:

25. Ասաց՝ եւ յարեաւ հողմ եւ մրրիկ. եւ բարձրացան ալիք նորա:

26. Ելանէին յերկինս եւ իջանէին յանդունդս. եւ անձինք նոցա յանձինս իւրեանց մաշեցան:

27. Խռովեցան, սասանեցան որպէս արբեալք. եւ ամ իմաստութիւն նց ընկաւ:

28. Ընդարձակեցին առ Տէր իննդութեան իւրեանց. ի վշտաց նոցա կեցոյց զնոսա:

29. Դարձոյց զմրրիկն յօդ, եւ դադարեցին ալիք նորա. ուրախ եղեն զի դադարեցին. եւ առաջնորդեաց նոցա ի նաւահանգիստ կամաց իւրեանց:

30. Խոստովան եղիցին Տն ողորմութիւք նորա. պանչելեաց նորա որդիք մարդկան:

31. Բարձր արասցեն զնա ի ժողովս ժողովրդոց. եւ յաթոռս ծերոց օրհնեսցեն զնա:

32. Ջի դարձոյց զգետն ի ցամաք, եւ զդնացս ջուրց յերկիր ծարաւուտս:

33. Աւար զերկիրն պտղաբեր՝ յաղտաղտուկս, վասն չարութեան բնակչաց նոցա:

34. Ելար զանապատն ի ձահիճս ջուրց. եւ զերկիրն ծարաւուտ ի դնացս ջուրց:
35. Ընակեցոյց ի նմա քաղցեալս. եւ շինեցին քաղաք բնակութեան իւրեանց:
36. Ա՛րեցին արտս եւ անկեցին այգիս. եւ արարին պտուղ արմտեաց իւրեանց:
37. Օրհնեաց զնոսա եւ բազմացան յոյժ. եւ անասուն նոցա ոչ նուազեցաւ:
38. Նուազեցան նոքա եւ չարչարեցան ի նեղութենէ չարեաց, եւ ի վշտաց:
39. Եհն անարգութիւն ի վերայ իշխանաց նոցա. մոլորեցոյց զնոսա յանապատի եւ ոչ ի ճանապարհի:
40. Օգնեաց անանկին յաղքատութենէ. առաջնորդեաց որպէս խաշին ազգի նոցա:
41. Տեսին ուղիղք, եւ ուրախ եղեցին. եւ ամենայն անօրէն խցցէ զբերան իւր:
42. Ո՞վ է իմաստուն, որ պահեսցէ զայս. եւ ի միտ առցէ զողորմութիւնս Տեառն:

1. Օրհնութիւն սաղմոսոց ի Դաւիթ. ՃԼ:

2. Պատրաստ է սիրտ իմ Ա՛ստուած. պատրաստ է սիրտ իմ օրհնել եւ սաղմոս ասել քեզ փառք իմովք:
3. Յարիր փառք իմ, զարիր սաղ-

մահիք եւ օրհնութեամբ, եւ ես զարթեայց առաւօտուց:

4. Խոտովան եղէց քեզ ի ժողովուրդս Տէր, եւ սաղմոս ասացից քեզ յազինս:

5. Արձ եղեւ միտքն յերկինս ողորմութի՛ քո. միտքն յամպս ճշմարտութի՛ քո:

6. Բարձրեալ եւ դու յերկինս Աստուած. եւ յամենայն երկրի են փառք քո:

7. Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո աջով քո եւ լուր մեզ:

8. Աստուած խօսեցաւ ի սրբութի՛ իւրում. ցնծացայց, բաժանեցայց զԱիւքէմ. եւ զհովիտն յարկաց չափեցից:

9. Իմ է Գաղաադ եւ իմ է Մանասէ. Եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ:

10. Յուդա թագաւոր իմ. Մովաբ աւազան յուսոյ իմոյ:

11. ՅԵդոմ ուղեցից զկնացս իմ եւ ինձ այլազգիք հնազանդ եղեն:

12. Ո՞ տարցէ զիս ի քաղաք ամուր. կամ ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչեւ յԵդոմ:

13. Եթէ ոչ դու Աստուած՝ որ մերժեցեր զմեզ. եւ ոչ ելեր Աստուած՝ ընդ զօրս մեր:

14. Տուր մեզ օգնութիւն ի նեղութեան. զի սուտ է փրկութիւն մարդոյ:

15. Աստուծով արարցուք զօրութիւն. եւ նա յամօթ արասցէ զթշնամիս մեր:

1. Ի հպարտս. Սպրծո է Դաւէն. ՃՐ:

2. Ընտուն՝ օրհնութեան իմոյ մի լռել. զի բերան մեղաւորի բերան նենգաւորի բացաւ ի վերայ իմ:

3. Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ. եւ բանիւատելութեան պատերազմեցին զիս:

4. Փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի:

5. Հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ:

6. Կացո ի վերայ նորա մեղաւոր. սատանայ կացցէ ընդ աջմէ նորա:

7. Ի դատաստանի իւրում ելցէ դատապարտեալ. եւ աղօթք նո՛ր ի մեղս դարձցին:

8. Լինիցին աւուրք նորա նուազ. եւ պաշտօնութիւն նորա զայն՝ այլ տարցի:

9. Լինիցին որդիք նորա որբ, եւ կին նորա այրի. սահեսցին փոխոխեսցին, որդիք նորա մուրացք եղիցին, եւ ելցեն ի բնակութենէ իւրեանց:

10. Պնեսցէ փոխատու զամենայն ինչս նո՛ր. յափշտակեսցեն օտարք զվաստակս նո՛ր:

11. Մի զոցի օգնական նմա. եւ մի ոք ողորմեսցի ի վերայ որբոց նորա:

12. Եղեցին որդիք նորա ի աստակուծն, եւ յազդէ Ջնջեացի անուն նորա:

13. Յիշեացին մեղք հօր նորա առաջի Տեառն. եւ մեղք մօր նորա ոչ ջնջեցին. եւ եղեցին առաջի Տեառն յամենայն ժամ:

14. Աստակեացի յերկրէ յիշատակ նորա. փոխանակ զի ոչ յիշեաց առնել ողորմութիւն:

15. Ժալածեաց զայր աղքատ եւ զընչանկ. սպանանել զայն, որ խոնարհ է սրտիւ:

16. Սիրեաց զանէծս՝ եւ եկն նմա. ոչ կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղեցի ի նմանէ:

17. Զգեցաւ զանէծս որպէս հանդերձ. մտցի որպէս ջուր ի փոր նորա՝ որպէս ձէթ ընդ ոսկերս նորա:

18. Եղեցի նմա որպէս հանդերձ զի ածցի զանի. որպէս գօտի զի ածի հանապազ ընդ մէջ:

19. Այս գործ է այնոցիկ, որ չարախօս կային զինէն առ Տէր. եւ որք խօսէին չար զանձնէ իմմէ:

20. Եւ դու Տէր Տէր արա ընդ իս ըստ անուան քումմ, զի քաղցր է ողորմութիւն քո. եւ փրկեա զիս՝ զի աղքատ եւ անանկ եմ ես:

21. Սիրտ իմ խռովեցաւ ի փորի իմում.

*եւ ես որպէս ստուեր ի խուսափել իմում պակասեցայ. եւ թօթափեցայ որպէս մա-
րախ:*

22. *Նա՛ւնկք իմ տկարացան ի պահոց. եւ մարմին իմ այլագունեաց յիւղոյ:*

23. *Եղէ ես նախատո նոցա. տեսին զիս եւ շարժեցին զգլուխս իւրեանց:*

24. *Օգնեա ինձ Տէր Աստուած իմ. եւ փրկեա զիս ըստ ողորմութեան քումմ:*

25. *Գիտեցեն զի ձեռն քո այս է. եւ դու Տէր արարեր զայս:*

26. *Նզովեսցեն անիծանեն, եւ դու օրհնեսցես. որք յարուցեալ են ի վերայ իմ՝ զամօթ կրեսցեն. այլ ծառայ քոյ ուրախ եղիցի ի քեզ:*

27. *Զգեցցին զամօթ որք չարախօս կային զանձնէ իմմէ. եւ արկցեն որպէս կրկնոց զամօթ իւրեանց զինքեանք:*

28. *Այլ ես խոստովան եղէց առ Տէր յոյժ, բերանով իմով. ի մէջ բազմաց օրհնեցից զքեզ:*

29. *Զի եկաց նա ընդ աջմէ անանկիս, փրկել զիս յայնցանէ, որ հալածեն զանձն իմ:*

Ի հատած. Սպան ի դա-էն. ՃՀԹ:

1. Ընդ տէր ցտէր իմ. նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց:

2. Գաւազան զօրութեան առաքեացէ քեզ Տէր ի Սիոնէ. եւ տիրեացես դու ի մէջ թշնամեաց քոց:

3. Ընդ քեզ է ինձ սկիզբն աւուրն զօրութեն. ի վայելչութի սրբոց քոց, յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

4. Երդուաւ Տէր եւ ոչ եւս զղջասցի. թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ Տէր ընդ աջմէ քումմէ:

5. Խորտակեացէ յաւուր բարկութեան զթագաւորս. դատեացի զհեթանոսս, եւ բազում արասցէ զհարուածս, եւ խորտակեացէ զգլուխս բազմաց յերկրի:

6. Ջուրս ի ճանապարհի արբուսցէ, վասն այնորիկ եւ բարձր արասցէ զգլուխս:

Ալէլուիա. Ալէլուիա: Սաղմոս. ՃԺ:

1. Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով, ի խորհուրդս ուղղոց ի ժողովս. մեծ են գործք Տեառն, եւ քննեալ են յամենայնի կամք նորա:

2. Խոստովանութիւն եւ վայելչութիւն են գործք նորա. արդարութիւն նորա մնայ յաւիտեան յաւիտենից:

3. Յիշատակ արար սքանչելեաց իւրոց ողորմած եւ ողորմած Տէր, կերակուր տայ երկիւղածաց իւրոց:

4. Յիշեաց յաւիտենից զուխտ իւր. զօրութիւն գործոց իւրոց պատմիցէ ժողովրդեան իւրում:

5. Տալ նոցա ժառանգութիւն հեթանոսաց. եւ գործք ձեռաց նորա արդարութիւն եւ իրաւունք են:

6. Հաստատեալ են ամենայնի պատուիրանք նորա. հաստատեալ են յաւիտեան յաւիտենից. արարեալ են ճշմարտութեամբ եւ ուղղութեամբ:

7. Փրկութիւն առաքեաց Տէր ժողովրդեան իւրում. պատուիրեաց յաւիտենից զուխտ իւր. սուրբ եւ ահեղ է անուն նորա:

8. Սկիզբն զգօնութեան երկիւղ Տեառն. խոհականութիւն բարի ամենեցուն որ առնեն զնա. եւ օրհնութիւն նորա մնայ յաւիտեան յաւիտենից:

Աբեղա. Սաղմոս. ՃԺԴ։

1. Երանելի է այր՝ որ երկնչի Տեառնէ. զպատուիրանս նորա նա կամի յոյժ։

2. Հզօր եղիցի յերկրի զաւակ նորա. եւ աղբ ուղղոց օրհնեսցի։

3. Փառք եւ մեծութիւն են ի տան նորա. արդարութիւն նորա միայ յաւիտեան յաւիտենից։

4. Ծագեաց ի խաւարի լոյս ուղղոց. ողորմած զթած եւ արդար է Տէր։

5. Բարի այր ողորմի եւ տայ փոխ. յօրինէ զբանս իւր ի դատաստանի. զի յաւիտեան նա մի սասանեսցի։

6. Յիշատակ յաւիտենից եղիցի արդար. ի համբաւոյ չարէ նա մի երկիցէ։

7. Պատրաստ է սիրտ նորա յուսալ առ Աստուած։

8. Հաստատեալ է սիրտ նորա եւ նա մի երկիցէ, մինչեւ տեսցէ ի թշնամիս իւր։

9. Սփռեաց՝ եւ ետ աղքատաց. արդարութիւն նորա միայ յաւիտեան յաւիտենից. եւ եղջիւր նորա բարձր եղիցի փառօք։

10. Մեղաւորն տեսցէ եւ բարկասցի. զսամունս իւր կրճտեսցէ եւ հալեսցի. եւ ցանկութիւն մեղաւորաց կորիցէ։

Աղէքսիոս Սոլոմոն. ՃԻԴ։

1. Օրհնեցէք մանկունք զՏէր. եւ օրհնեցէք զանուն Տեառն։
2. Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչեւ յաւիտեան։
3. Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու՝ օրհնեալ է անուն Տեառն։
4. Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր. եւ յերկինս են փառք նորա։
5. Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր ի բարձունս բնակեալ. եւ զխոնարհս տեսանել յերկինս եւ յերկրի։
6. Յարուցանէ զաղքատս յերկրէ. եւ բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց։
7. Նստուցանէ զնոսա իշխանաց՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։
8. Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախասիրտ, որպէս մայր որդւովք բերկրեալ։

Աղէքսիոս. Սողմոս. ՃԻԿ։

1. Յեւանեն Իսրայէլ յԱզիպտոսէ. տանն Յակոբայ ի ժողովրդենէ այլազգեաց։
2. Եղեւ Հրէաստան սրբութիւն նր եւ Իսրայէլ իշխանութիւն նորա։
3. Ծով եւեթ եւ փախեաւ. եւ Յորդանան անդրէն դարձաւ։

4. Լերինք ցնծացեն որպէս խոյք. եւ բլուրք որպէս գառինք մաքեաց:

5. Ո՞ւր է քեզ ծով, զի տեսցէ եւ փախցէ. կամ դու Յորդանան՝ զի դարձար անդրէն:

6. Լերինք՝ ցնծացէք որպէս խոյք. եւ բլուրք որպէս գառինք մաքեաց:

7. Յերեսաց Տեառն սասանեցաւ երկիր. յերեսաց Աստուծոյ Յակոբայ:

8. Ո դարձոյց զվէմն ի վտակս ջրոյ. եւ զապառաժն յաղբերակունս:

9. Մի մեզ Տէր, մի մեզ. այլ անուան քում տուր փառս, վասն ողորմութեան եւ ճշմարտութեան քոյ:

10. Մի երբեք ասացեն ի հեթանոս. թէ ո՞ւր է Աստուած նոցա:

11. Աստուած մեր յերկինս եւ յերկրի, զամենայն զոր ինչ կամեցաւ եւ արար:

12. Կուռք հեթանոսաց ոսկի եւ արծաթ են. ձեռագործ որդւոց մարդկան:

13. Բերան ունին, եւ ոչ խօսին. աչս ունին, եւ ոչ տեսանեն:

14. Ականջս ունին, եւ ոչ լսեն. ունչս ունին, եւ ոչ հոտոտեն:

15. Ձեռս ունին, եւ ոչ շօշափեն. ոտս ունին՝ եւ ոչ գնան. եւ ոչ գոյ բարբառ ի կոկորդս նոցա:

16. Նման նոցա եղիցին, որք արարին զնոսա, եւ ամենեքեան որ յուսացեալ են ի նոսա:

17. Տուն Խարայելի յուսացաւ ի Տէր. օգնական ընդունելի է նոցա:

18. Տուն Ահարոնի յուսացաւ ի Տէր. օգնական ընկերելի է նոցա:

19. Երկիւղածք Տեառն յուսացան ի Տէր. օգնական եւ փրկիչ է նոցա:

20. Յիշեաց զմեզ Տէր եւ օրհնեաց զմեզ. օրհնեաց Տէր զտունն Խարայելի, օրհնեաց Տէր զտունն Ահարոնի:

21. Օրհնեաց Տէր զերկիւղածս Տեր. զփոքրկունս եւ զմեծամեծս:

22. Յաւելցէ ի ձեզ Տէր. ի ձեզ եւ յորդիս ձեր:

23. Օրհնեալ էք դուք ի Տեառնէ. որ արար զերկինս եւ զերկիր:

24. Երկինք երկնից Տեառն են, եւ զերկիրս ետ որդւոց մարդկան:

25. Ոչ թէ մեռեալք օրհնեացեն զքեզ. եւ ոչ ամենեքեան՝ որ իջանեն ի գժոխս:

26. Եւ կենդանիքս օրհնեացուք զՏէր յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Աբել-ից. Սաղմ. ՃԻԲ:

1. Սիրեցի՝ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. ի՛ւնարհեցոյց զունկն իւր առ իս, եւ ես յաւուրս իմ կարդասցի առ նա:

2. Ե՛ղջեցան զինեւ երկունք մահու. եւ վիշտք դժոխոց գտին զիս:

3. Զնեղութիւն եւ զանձկութիւն գտի. եւ զանուն Տեառն կարդասցի:

4. Ո՛ Տէր փրկեա զանձն իմ. ողորմած Ընդ մեր, ողորմի եւ պահէ զաղքատս Տէր:

5. Ես խոնարհ եղէ եւ Տէր կեցոյց զիս. դարձ անձն իմ ի հանգիստ քո, զի Տէր օգնեաց քեզ:

6. Փրկեաց զանձն իմ ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, եւ զոտս իմ ի գայթակղութենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց:

Աբել-ից. Սաղմ. ՃԻՆ:

1. Ձ՛ԱՒԱՏԱՑԻ զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

2. Ես ասացի ի զարմանալ իմում. թէ ամենայն մարդ սուտ է:

3. Ո՞ի՛նչ տացից տիրոջս Տեառն, ընդ ամենայնի զոր եւ ետ ինձ:

4. Ո՛չ ժամակ փրկութեան ընկալայց, եւ զանուն Տեառն կարդացից:

5. Ո՛ղջոյն իմ Տեառն տայց առաջի ամենայն ժողովրդեան նորա:

6. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

7. Լուաւ զկապանս իմ, քեզ մատուցից պատարագս օրհնութեան, եւ զանուն Տեառն կարդացից:

8. Ո՛ղջոյն իմ Տեառն տայց առաջի ամենայն ժողովրդեան նորա. ի գաւիթս տան Տեառն եւ ի մէջ քո Երուսաղէմ:

Ալէլուիա. Սաղմոս. ՃԺԱ՛.

1. Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք, գովեցէք զնա ամենայն ժողովուրդք:

2. Ո՛ղորմութիւն նորա ի վերայ մեր. ճշմարտութիւն Տեառն մնայէ յաւիտեան:

Ալէլուիա. Սաղմոս. ՃԺԲ՛:

1. Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

2. Ասացէ տուն Իսրայելի՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

3. Ասացէ տուն Ահարոնի զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

4. Ասացեն երկիւղածք Տեառն զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

5. Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ լուաւ ինձ յանդորր:

6. Տէր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ:

7. Տէր է իմ օգնական. եւ ես տեսից ի թշնամիս իմ:

8. Բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ յիշխանս:

9. Ամենայն ազինք շրջեցան զինեւ, եւ անուամբ Տեառն յաղթեցի նոցա:

10. Շրջելով շրջեցան զինեւ, պաշարեցին զիս ի միասին. եւ անուամբ Տեառն վանեցի զնոսա:

11. Շուրջ եղեն զինեւ որպէս մեղուք. վառեցան, բորբոքեցան որպէս փուշք ի հուր. եւ անուամբ Տն մերժեցի զնոսա:

12. Ի մերժելն զրդուեցայ, եւ եղէ ձեռն ի գլուխ. եւ Տէր ընկալաւ զիս:

13. Զօրութիւն իմ եւ օգնութիւն իմ Տէր, եւ եղեւ ինձ ի փրկութիւն:

14. Ձայն ցնծութեան փրկութեան ի յարկս արդարոց:

15. Ընդ Տեառն արար զօրութիւն, ընդ Տեառն բարձր արար զնա. եւ ընդ Տեառն արար զօրութիւն:

16. Ընդ մեռելոյդ, այլ կեցից եւ պատմեցից զգործս Տեառն:

17. Խրատեալով խրատեաց զիս Տէր. եւ ի մահ ոչ մատնեաց:

18. Բացէք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն եւ խոստովան եղէց Տեառն:

19. Այս դուռն Տեառն է. եւ արդարք մտանեն ընդ սա:

20. Խոստովան եղէց քեզ Տէր, զի լուար ինձ. եւ եղեր ինձ ի փրկութիւն:

21. Վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան:

22. Ի Տեառնէ եղեւ այս. եւ է սքանչելի յաչս մեր:

23. Այսօր է զոր արար Տէր. եկայք ցնծացուք եւ ուրախ եղիցուք ի սմա:

24. Ո՛ Տէր փրկեա, ո՛ Տէր առաջնորդեա. օրհնեալ որ գալոյ ես անուամբ Տեառն, եւ օրհնեցուք զքեզ ի տանէ Տեառն:

25. Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ, մինչեւ յանկիւնս սեղանոյ:

26. Ընտուած իմ ես դու, եւ խոստովան եղէց քեզ. Ընտուած իմ ես դու, եւ բարձր արարից զքեզ:

27. Խոստովան եղէց քեզ Տէր՝ զի լաւ ինձ ի փրկութիւն:

28. Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Աքեաւ: Սաղմոս. ՃԻԲ:

Ա. ԱԼՖ. 1:

1. Երանեալ են ամբիծք ի ճանապարհի. եւ որք գնան յօրէնս Տեառն:

2. Երանի որք քննեն զվկայութիւն նորա բոլորով սրտիւ խրատից խնդրեացեն զնա:

3. Ոչ թէ որք գործեն զանօրէնութիւն ի ճանապարհս նորա գնացեն:

4. Դու պատուիրեցեր զպատուիրանս քո ի պահել ինձ յոյժ:

5. Օ՜ զի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ, ի պահել ինձ զարդարութիւնս քո:

6. Յայնժամ ես ոչ ամաչէի ի դիտանալ ինձ ի պատուիրանս քո:

7. Խոստովան եղէց քեզ Տէր յուղղու-

թիւն սրտի իմոյ. որպէս ուսայց զերա-
ւունս արդարութեան քո:

8. Ջխրատուն քո պահեցի. մի թողուր
զիս մինչեւ խապար:

Ր. ՒՆՑԹ. 2:

9. Ի՞նչ ուղիւքն երիտասարդ զձանա-
պարհս իւր, այլ ի պահել զբանս քո:

10. Ողորմով սրտիւ իմով խնդրեցի
զքեզ մի մերժեր զիս ի պատուիրանաց
քոց:

11. Ի սրտի իմում թաղուցի զբանս
քո, որպէս զի մի մեղայց քեզ:

12. Օրհնեալ ես դու Տէր. ուսո ինձ
զարդարութիւն քո:

13. Ե՛ր[ի]մբք իմովք պատմեցից զա-
մենայն իրաւունս բերանոյ քո:

14. Ի ճանապարհս վկայութեանց քոց
զուարճացայ, որպէս յամենայն հա-
րուստի:

15. Ի պատուիրանս քո հոգացայ, եւ
ջգուշացայ ի ճանապարհս քո:

16. Ջխրատուն քո խոսեցայ. եւ ոչ
մոռացայ զբանս քո:

Գ. ԳԻՄՐ. 3:

17. Հատո ծառայի քում, զի կեցից,
եւ պահեցից զբանս քո:

18. Ջարթո զաչս իմ, եւ նայեցայց ի
պանչելիս օրինաց քոց:

19. պանդուխտ եմ ես յերկրի. մի թաքցուցաներ յինէն զպատուիրանս քո:
20. փափագեաց անձն իմ ի ցանկալ ինձ յիրաւունս քո յամենայն ժամ:
21. Պատուիրեր սպարտաւանից. անիծեալ գոք խոտորեցան ի պատուիրանաց քոց:
22. Ի բաց արա յինէն զնախատինս եւ զարհամարհանս, զի զվկայութիւնս քո խնդրեցի:
23. Նստան իշխանք եւ չարախոսէին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո:
24. Օ՛ի վկայութիւնք քո խոսք իմ էին. եւ խորհուրդ իմ արդարութիւն քո:

Դ. ԴԱԼԵԹ. 4:

25. Մերձեցաւ անձն իմ ի հող, ՏԷր կեցո զի ըստ բանի քում:
26. Օ՛ճանապարհս իմ պատմեցի քեզ, եւ լուար ինձ. ուս ինձ զարդարութիւնս քո:
27. Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստուն արա զիս, եւ քննեցից զքանչելիս քո:
28. Տքնեցաւ անձն իմ առ ի ձանձրանալ. հաստատեա զիս ի բանս քո:
29. Օ՛ճանապարհս մեղաց ի բաց արա յինէն. եւ յօրէնս քո ողորմեա ինձ:

30. Զչանապարհս ձշմարտութեան քո ընտրեցի. եւ զիրաւունս քո ես ոչ մոռացայ:

31. Մերձեցայ ես ի վկայութիւնս քո, Տէր՝ մի յամօթ առներ զիս:

32. Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, զի անդորր արարեր սրտի իմոյ:

Ե. ՀԻ. 5:

33. Օրէնադէտ արա զիս Տէր ի ճանապարհս իրաւանց քոց, եւ խնդրեցից զնա յամենայն ժամ:

34. Խրատուն արա զիս եւ քննեցից զօրէնս քո. եւ պահեցից զնա բոլորով սրտիւ իմով:

35. Առաջնորդեա ինձ ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ:

36. Խոնարհեցո զսիրտ իմ ի վկայութիւնս քո, եւ մի յարգահութիւն:

37. Դարձո զաչս իմ, զի մի տեսից զնանրութիւն. ի ճանապարհս քո կեցո զիս:

38. Հաստատեա ծառայի քում զբան քո յերկիւղ քո:

39. Հան յինէն զնախատինս զոր եւ կարծեցի. զի դատաստանք քո քաղցր են:

40. Ահա ցանկացայ պատուիրանաց քոց. յարդարութեան քում կեցո զիս:

Ը. ՎԱՒ. 6:

41. Նկեսցէ ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր. եւ փրկութիւն քո ըստ բանի քում:

42. Տաց պատասխանի ոչք նախատեն զիս բանիւք. զի ես ի բանս քո յուսացայ:

43. Մի ի բացեայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ:

44. Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան եւ յաւիտենից:

45. Գնայի ես յանդորրութ. զի զպատուիրանս քո խնդրեցի:

46. Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, եւ ոչ ամաչէի:

47. Խորհէի ի պատուիրանս քո, զոր սիրեցի:

48. Յամբարձի զձեռս իմ ի պատուիրանս քո զոր սիրեցի. եւ խորհէի յարդարութեան քում:

49. Յիշեա զբան ծառայի քո, յոր եւ յուսացուցեր զիս:

Ւ. ՕՁ. 7:

50. Սա մխիթարեցեալ զիս ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս:

51. Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ:

52. Յիշեցի զերաւունս քո յաւիտենից Տէր՝ եւ մխիթարեցայ:

53. Տրտմութիւն կալաւ զիս ի մեղաւորաց. եւ այք թողին զօրէնս քո:

54. Գովելի են ինձ իրաւունք քո ի տեղւոջ պանդխտութեան իմոյ:

55. Յիշեցի ի գիշերի զանուն քո. եւ պահեցի զօրէնս քո:

56. Այս եղեւ ինձ ձանապարհ ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի:

Ը. ԽԷԹ. 8:

57. Բաժին իմ ես դու Տէր. ասացի պահել ինձ զօրէնս քո:

58. Ընդունեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քումմ:

59. Խորհեցայ ի ձանապարհս իմ. եւ դարձուցի զոտս իմ ի վկայութիւնս քո:

60. Պատրաստեցայ եւ ոչ խռովեցայ զի պահեցի զպատուիրանս քո:

61. Տուընք մեղաց պատեցան զիս եւ. այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ:

62. Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ, վասն իրաւանց եւ արդարութեան քո:

63. Ւաղոլ էի ես առ երկիւղածս քոց. որոց պահել է զպատուիրանս քո:

64. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր. զարդարութիւնս քո ուսո ինձ:

Թ. ՏԻՒԹ. 9:

65. Բարեգործութիւն արարեր ընդ ծառայի քում Տէր, ըստ բանի քում:

66. Ըղբարեգործութիւն, զիմաստ եւ զգիտութիւն ուսո ինձ. զի ի պատուիրանս քո ես հաւատացի:

67. Մինչեւ խոնարհեալ էի ես մեղայ. վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ:

68. Բարեգործ ես դու Տէր. եւ քարեգործութիւք քով ուսո ինձ զարդարութիւնս քո:

69. Բազմացան յիս անիրաւութիւնք ամբարտաւանից. այլ ես բոլորով սրտիւ իմով քննեցի զպատուիրանս քո:

70. Մածան որպէս կաթն սիրտք նոցա. այլ ես զօրէնս քո խօսեցայ:

71. Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս. որպէս ուսցայց զարդարութիւնս քո:

72. Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան զհազարս ոսկւոյ եւ արծաթոյ:

Ժ. ՅՕԴ. 10:

73. Ձեռք քո արարին եւ ստեղծին զիս. իմաստուն արա զիս եւ ուսցայց զպատուիրանս քո:

74. Երկիւղածք քո տեսցեն զիս եւ ուրախ եղիցին. զի ես ի բանս քո յուսացայ:
75. Ծանեայ Տէր զի արդարութիւն են դատաստանք քո. յիրաւի խոնարհեցուցեր զիս:
76. Եղիցի ողորմութիւն քո ի մխիթարել զիս ըստ բանի քում, ծառայ քո:
77. Եկեսցեն յիս գթութիւնք քո եւ կեցից. զի օրէնք քո խօսք իմ էին:
78. Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որ ի սպրդումս անիրաւեցան յիս յոյժ. այլ ես հոգայց ի պատուիրանս քո:
79. Խրատեսցեն զիս երկիւղածք քո, եւ որք ճանաչեն զվկայութիւնս քո:
80. Եղիցի սիրտ իմ ամբիծ յարդարութեան քում, զի մի ամաչեցից:

Ի. ՎԱՒ. 11:

81. Կարօտացաւ անձն իմ ի փրկութիւնս քո. զի ես ի բանս քո յուսացայ:
82. Սպասեցին աչք իմ բանի քում. ասացի ե՞րբ մխիթարեսցես զիս:
83. Եղէ ես որպէս սիկ ի պարզի, զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ:
84. Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո. ե՞րբ արասցես ինձ իրաւունս ի հալածչաց իմոց:
85. Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս. այլ ոչ որպէս զօրէնս քո:

86. Ամենայն պատուխրանք քո ճշմարիտ են. ի նանիր հալածեցին զիս, օգնեա ինձ:

87. Փոքր մի եւս եւ կորուսանէին զիս յերկրի. այլ ես ոչ թողի զպատուխրանս քո:

88. Ըստ ողորմութեան քում կեցո զիս. եւ պահեցից զվկայութիւնս բերանոյ քոյ:

Լ. ԼԱՄԵԹ. 12:

89. Յաւիտեան Տէր բան քո կայ յերկինս. յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն քո:

90. Ստատուցեր զերկիր, եւ կայ:

91. Ըստ բանի քում ճնայ աիւ. զի ամենեքեան ծառայք քո են:

92. Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին, կանխաւ եւս ապրեաք կորուսեալ էի ի խոնարհութեան իմում:

93. Յաւիտեան ոչ մոռասցայց զարդարութիւնս քո, զի նովաք կեցուցեր զիս:

94. Քո եմ ես եւ կեցո զիս. զի զարդարութիւնս քո խնդրեցի:

95. Ինձ սպասեցին մեղաւորք ի կորուսանել. զի զվկայութիս քո ես ի միտս առի:

96. Յամ կատարած ի սահման զվախճան. յոյժ անդորր էին ինձ պատուխրանք քո:

Մ. ՄԻՒՄ. 13:

97. Որպէս սիրեցի զօրէնս քո. զօրհնաբան խօսք իմ էին:

98. Ոչ զի շնամիս իմ իմաստուն առնել զիս ի պատուիրանս քո. զի յաւիտեան իմ էին:

99. Ոչ զամենայն ուսուցիչս իմ իմաստուն եղէ. զի վկայութիւնք քո խոսք իմ էին:

100. Ոչ զծերան իմաստուն եղէ. զի զպատուիրանս քո քննեցի:

101. Յամենայն ճանապարհաց չարաց արգիլի զոտս իմ, որպէս զի պահեցից զբանս քո:

102. Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ, զի դու օրէնսդէտ արարեր զիս:

103. Որպէս զի քաղցր են ի քիմս իմ բանք քո, քան զմեղր բերանոյ իմոյ:

104. Ի պատուիրանաց քոց իմացեալ առեցի զամենայն ճանապարհս չարաց. զի դու օրէնսդէտ արարեր զիս:

Ն. ՆՈՒՆ. 14:

105. Ջրատ են բանք քո ոտից իմոց, եւ լոյս ոտն շաւղաց իմոց:

106. Երդուայ եւ հաստատեցի, թէ պահեցից զդատ իրաւունս արդարութեան քո:

107. Խոնարհ եղէ մինչեւ յոյժ. Տէր կեցո զիս ըստ բանի քում:

108. Ընդ կամն բերանոյ իմոյ հաճեաց Տէր. եւ զիրաւունս քո ուս ինձ:

109. Ընձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ. եւ զօրէնս քո ես ոչ մոռացայ:

110. Եդին ինձ մեղաւորք որոգայթ. այլ ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ:

111. Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան, զի ցնծութիւն է սրտի իմոյ:

112. Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո յաւիտեան, վասն հատուցման:

Կ. ՍԱՄԵՔ. 15:

113. Չանօրէնս ատեցի. եւ զօրէնս քո սիրեցի:

114. Օգնական եւ վրկիչ իմ ես դու. եւ ես ի բանս քո յուսացայ:

115. Ի բաց եղերուք ինձնէն չարք. եւ քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ:

116. Օգնեա ինձ ըստ բանի քում, եւ կեցո զիս. եւ մի յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ:

117. Օգնեա ինձ, եւ ապրեցո զիս. եւ խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ:

118. Ընարձակեր զամենեսեան որք աւրասանք եղեն յարդարութեանց քոց. զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա:

119. Յանցաւորս համարեցայ զամենայն

Մեղաւոս եմբի. վան այսորիկ սիրեցի զպատուիրանս քո:

120. *Ռեւեռա ընդ երկիւղ քո զմարմին իմ. զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ:*

Ե. ՑԻՒՆ. 16:

121. *Ընարի իրաւունս եւ արդարութիւն. մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց:*

122. *Ընկալ զծառայս քո ի բարի. զի մի ամբարտաւանք պղտեացեն զիս:*

123. *Սպասեցին աչք իմ փրկութեան քում Տէր. եւ բանից արդարութեան քո:*

124. *Ընդ ծառայի քում ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուս ինձ:*

125. *Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, եւ ծանեայց զվկայութիւնս քո:*

126. *Ժամ է պաշտել զՏէր, խափանեցին զօրէնս քո:*

127. *Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո՝ քան զոսկի եւ զտպազիոն:*

128. *Ընդեանայն պատուիրանք քո յաջողեցան ինձ. զի ատեցի ես զճանապարհս չարաց:*

Ձ. ՓԼ. 17:

129. Ականչել են վկայութիւնք քո. վասն այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ:

130. Յայտնութիւն բանից քոց լուսաւոր է. եւ իմաստուն առնէ զտղայս:

131. Ջերան իմ բացի, եւ առի զհոգի. ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ:

132. Նայեաց առ իս եւ ողորմեա ինձ, ըստ իրաւունս սիրողաց անուան քո:

133. Ջձանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում. եւ մի տիրեացեն ինձ ամենայն մեղք:

134. Փրկեա զիս ի զրպարտութենէ մարդկան. եւ պահեցից զպատուիրանս քո:

135. Երեսս քո զերեա քո ի ծառայ քո, եւ ուսո ինձ զարդարութիւնս քո:

136. Վտակք ջուրց իջին յաչաց իմոց. զի ոչ պահեցին զօրէնս քո:

Կ. ԱԼԹ. 18:

137. Ուղիղ ես դու Տէր, եւ ուղիղ են դատաստանք քո:

138. Պատուիրեցեր զարդարութիւն վկայութեանց քոց. եւ ճշմարիտ են յոյժ:

139. Ծաշեաց զիս նախանձ քո. զի մոռացան զբանս քո թշնամիք իմ:

140. Ընտրեալ են բանք քո յոյժ. եւ ծառայ քո սիրեաց զսա:

141. Ա՛նուկ եմ ես եւ արհամարհեալ. եւ զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ:
142. Արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից. եւ օրէնք քո ճշմարիտ են:
143. Նեղութիւնք եւ վիշտք գտին զիս, եւ պատուիրանք քո խօսք իմ էին:
144. Արդարութեամբ են վկայութիւնք քո յաւիտեան. իմաստուն արա եւ կեցո զիս:

Ա՛. ԿՈՓ. 19:

145. Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով. լուր ինձ Տէր, զի զարդարութիւնս քո խնդրեցի:
146. Ընդակեցի առ քեզ եւ փրկեա զիս. եւ պահեցից զվկայութիւնս քո:
147. Կանխեցի տարաժամու աղաղակեցի. եւ ես ի բանս քո յուսացայ:
148. Կանխեցին աչք իմ առաւօտուց ի խօսել ինձ զբանս քո:
149. Զայնի իմում լուր Տէր ըստ ողորմութեան քումմ. Տէր յիրաւունս քո կեցո զիս:
150. Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէնութիւն, զի յօրինաց քոց հեռի եղեն:
151. Մերձ ես դու Տէր, եւ ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են:

152. Խնդրեմք ծանեայ ի վկայութեանց քոց, զի յաւետեան հաստատեցեր զնոսա:

Ո. ԲՆՈՒ. 20:

153. Տես զնոտարհութիւն իմ, եւ փրկեա զիս. զի զօրէնս քոես ոչ մոռացայ:

154. Դատեա զդատաստան իմ, եւ փրկեա զիս. եւ բան բանի քում կեցո զիս:

155. Հեռի է ի մեղաւորաց փրկութիւն, զի զկրաւունս քո ոչ պահեցին:

156. Գթութիւնք քո բազում են Տէր, բան իրաւանց քոց կեցո զիս:

157. Բազում են որ հալածեն եւ նեղեն զիս. ի վկայութենց քոց ես ոչ խոտորեցայ:

158. Հայեի յանօգուտս եւ մաշէի, զի զպատուիրանս քո ոչ պահեցին:

159. Տես զի զպատուիրանս քո սիրեցի. Տէր ողորմութեամբ քո կեցո զիս:

160. Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է. յաւետեան են ամենայն իրաւունք արդարութեան քո:

Յ. ՍԻՆ. 21:

161. Իշխանք հալածեցին զիս ի նանիր. այլ ի բանից քոց երկեաւ սիրտ իմ:

162. Ցնծացայ ես ի բանս քո, որպէս այն՝ որ գտանէ աւար բազում:

163. Ատեաց ատեցի եւ անարգեցի, եւ զօրէնս քո սիրեցի:

164. Նեղն անգամ յաւուր օրհնեցից զքեզ, վասն իրաւանց եւ արդարութեան քոյ:

165. Խաղաղութիւն բազում է այնոցիկ՝ որ սիրեն զօրէնս քո. եւ ոչ գոյ ի նոսա գայթակղութիւն:

166. Սպասեցի փրկութեան քում Տէր. եւ զպատուիրանս քո սիրեցի:

167. պահեաց անձն իմ զվկայութիւնս քո. եւ սիրեաց զսոսա յոյժ:

168. պահեցից զպատուիրանս եւ զվկայութիւնս քո, զի ամենայն ճանապարհք իմ առաջի քո են:

Ն. ԹԱՒ. 22:

169. Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր. ըստ բանի քում խրատուն արա զիս:

170. Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. եւ բանիւ քո փրկեա զիս:

171. Ղրկեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո. յոյժ ուսուցես ինձ զարդարութիւնս քո:

172. Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են:

173. Ունկի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի:

174. Յանկացայ վրկութեան քում Տէր. եւ օրէնք քո խօսք իմ էին:
175. Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ:
176. Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Օրհնութիւն ետուին, հայծաքնամատուր առաքն տոքգաբէին: Եսայ. 42. 10:

1. Օրհնեցէք զՏառուած յօրհնութիւն նոր. զի հիանութիւնս արար ի բարձունս փառաւորի:
2. Եւ անուն նորա փառաւորեալ է, ի ծագայ մինչեւ ի ծագս երկրի:
3. Ոյք իջանէին ի ծով նաւուք. կղզիք եւ ամենայն բնակիչք նոցա ընդ նոսա:
4. Ուրախ եղիցի անապատն եւ ամենայն բնակիչ իւր. ուրախ եղիցին բանակք եւ բակք Կեդարու. եւ ուրախ եղիցին բնակիչք վէմին:
5. Ի գլխոց լերանց գոչեսցեն. տացեն զփառս Տառուծոյ, եւ զքաջութիւն նորա կղզիք պատմեսցեն:
6. Տէր Տառուած զօրութեանց դիմեալ

զայ զարթուցանել զպատերազմն, յա-
րուցանել զնախանձ. վող հարկանել եւ
գոչել ի վերայ թշնամեաց իւրոց զօրու-
թեամբ բազմաւ:

7. Ուրախ եղեցին երկինք ի վերուստ,
եւ ամենք յօղեսցեն զպարծութիւն:

8. Ուղիեսցէ երկիր զողորմութիւն, եւ
զարդարութիւն առ հասարակ բղխեսցէ:

Աղօթ Յոբելեանս տարեբերին: Յոբելեան 2. 3:

1. Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ *իմում* եւ առ **Տէր**
կարդացի, եւ լուաւ Ումուած *յանդղոց*
գժոխոց ապստակի իմում:

2. Ա՛ռ **Տէր** ձայնի իմում, զի ընկեցեր
զիս ի խորս ծովու, եւ շրջանք գետոց պա-
շարեցին զիս:

3. Ամենայն զբօսանք քո եւ ալիք քո ան-
ցին ի վերայ իմ. եւ ասացի Թէ մերժե-
ցայ ուրեմն յերեսաց աչաց քոց:

4. Ապ՝ լցի Թէ յաւելից հայել ի տա-
ճար սուրբ քո. զի հեղան զինեւ ջուրք
մինչեւ յանձն իմ. եւ անդունդք անհնա-
րինք պաշարեցին զիս:

5. Համաս գլուխ իմ ընդ փոսարս լե-
րանց. իջի ես ի խորս երկրի, եւ առեալ զնիզս

նորա, զի էին որպէս աղնք յաւխտենից· եւ ելցեն յապականութենէ կեանք իմ:

6. Ա՛ր քեզ Տէր Աստուած իմ, ինուա-ղել անձին իմոյ կարդալն, եւ զքեզ Տէր յիշելն, եւ մտցեն աղօթք իմ ի տաճար սուրբ քո:

7. Օ՛ն զոք պահէին զանձնայնութիւն եւ զաստութիւն, յողորմութենէ իւրեանց մերժեցան:

8. Ելլ ես ի ձայն օրհնութեան խոստովան եղէց քեզ. մատուցից պատարագս Տեառն եւ կատարեցից զուխտ իմ ի վերկութեան:

Մաղմոս:

Անկեցեն աղօթք մեր ի տաճար սուրբ քո, խոնարհեցի՛ր ունկն քո ի խնդրուածս մեր: Պարգեւեր Տէր՝ վասն որոյ ես անարատ մօր քո եւ կուսի. եւ վասն խոստի՛ր քո պատուականին, ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Ufrwrh ylw h kowk fwzwkg, ka od ylw joðnudfi
hnpj jnpnj: vqv. ðar:

Եւթ ասպիճանաց: Սաղմոս. ՃԻԶ:

1. Ի նեղութեան իմում եւ առ Տէր կարդացի, եւ լուաւ ինձ. Տէր փրկեաց զանձն իմ ի շրթանց նենգաւորաց եւ ի լեզուէ չարէ:

2. Ո՞վ տացի քեզ, կամ զի՞նչ յաւելցի քեզ, ի լեզու նենգաւոր:

3. Նետս նեռք հզօրի. զի մխեալ են կայծակամբք կաղնւոյ:

4. Վա՛յ ինձ՝ զի ընդ երկար եղեւ պանդխտութիւն իմ. զի բնակեցայ եւ ի վրանս Կեդարու:

5. Բազում անգամ բնակեաց անձն իմ ընդ այնոսիկ, որք ատէին զողջոյն:

6. Ես էի խաղաղարար. յորժամ խօսէի մարտանէին ընդ իս:

Եւթ ասպիճանաց: Սաղմոս. ՃԻ:

1. Համբարձի զաչս իմ ի լերինն՝ ուստի եկեսցէ ինձ օգնութիւն:

2. Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս եւ զերկիր:

3. Մի տար ի սասանութիւն զոտն քո. եւ մի ննջեսցէ պահապան քո:

4. Որպէս ոչ ննջէ եւ ոչ ի քուն երթայ պահապանն Իսրայելի:

5. Տէր պահեսցէ զքեզ, եւ Տէր ընկալցի աջով ձեռամբ իւրով:

6. Արեգակն ի տուէ քեզ մի մեղցէ, եւ մի լուսինն ի գիշերի:

7. Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ, պահեսցէ Տէր զանձն քո:

8. Տէր պահեսցէ զմուտս եւ զել քո՝ յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Եբէ ասպիճանաց: Սաղմոս. ՃԻԵ:

1. Ուրախ եղէ եա՝ ոչք ասէին ցիս, ի տուն Տեառն երթիցուք մեք:

2. Էասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ:

3. Ո՛Երուսաղէմ շինեալ որպէս քաղաք, եւ բնակութիւն իւր շուրջ զնովաւ:

4. Ընդ ելին ազգ ազգ Տ՚ն. վկայութիւն Իսրայելի. խոստովան լինել անուան Տ՚ն:

5. Ընդ արկեալ են աթոռք դատաստանի. աթոռք արկեալ են ի տան Դաւթի:

6. Էարցէք զողջունս զԵրուսաղեմի, եւ շինութենն ոչք սիրէք զՏէր:

7. Եղիցի խաղաղութիւն ի զօրութեան քում, եւ շինութիւն յաշտարակս յոյսդ քո:

8. Վ՚ան եղբարց եւ ընկերաց իմոց խօսեցայ զխաղաղութիւն. վան քո եւ վան անուան Տեառն Աստուծոյ մերոյ խնդրեցաք զբարութիւն ի քէն:

Օրհնութիւն ասպետանոց: Սաղմոս. ՃԻՐ:

1. Ած քեզ Տէր համբարձի զաչս իմ. որ բնակեալդ ես ի յերկինս:

2. Որպէս աչք ծառայի ի ձեռն Տեառն իւրոյ. որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ:

3. Այնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր, մինչեւ ողորմեսցիս ի վերայ մեր:

4. Ողորմեաց մեզ Տէր, ողորմեաց մեզ. զի բազում լցաք արհամարհանօք:

5. Զի առաւել լցան անձինք մեր նախատանօք որ նախատէին զմեզ. եւ արհամարհանօք ամբարտաւանից:

Երգ ասպետանոց: Սաղմոս. ՃԻԳ:

1. Եթէ ոչ Տէր էր առ մեզ, ասացէ Իսրայէլ. եթէ ոչ Տէր էր առ մեզ:

2. Ընդ յառնել մարդկան ի վերայ մեր. կենդանւոյն կամեցան կլանել զմեզ:

3. Ի բարկանալ սրտմտութեամբ նոցա ի վերայ մեր. ապա եւ ջուրք ուրեմն ընկղմեցին զմեզ:

4. Ընդ ուղիս անցին անձինք մեր. անցին անձինք մեր ընդ Ջուրս անդադարս:

5. Օրհնեալ է Տէր, որ ոչ եւս զմեզ յորս առնուն նոցա:

6. Ընձինք մեր սպրեցան որպէս ճնճղուկք յորոգայթէ որսողաց:

7. Որոգայթք նոցա փշրեցան, եւ մեք սպրեցաք:

8. Օգնութիւն է մեզ յանուանէ Տեառն, որ արար զերկինս եւ զերկիր:

Օրհնութիւն ասպիճանաց: Սաղմոս. ՃԻԲ:

1. Ո յուսայ ի Տէր՝ որպէս լեառն Սիոն, մի սասանեսցի յաւիտեան՝ որ բնակեալն է Երուսաղէմ:

2. Լերինք շուրջ են զնովաւ. Տէր շուրջ է զժողովրդեամբ իւրով՝ յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

3. Ոչ թողու Տէր զգաւազան մեղաւորացդ ի վիճակս արդարոց. բայց արդարք մի ձգեսցեն զձեռս իւրեանց յանիրաւութիւն:

4. Բարի առնէ Տէր բարեաց. եւ այնոցիկ՝ որք ուղիղ են սրտիւք:

5. Իսկ զթիւրեալսն ի յաւիշտակութիւն, տանի զնոսա Տէր ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն. խաղաղութիւն ի վերայ Իսրայէլի:

Եւթ ասպնջանաց: Սաղմոս. ՃԻԵ:

1. Ի ԴԱՐՁՈՒՑԱՆԵԼ Տեառն զգերութիւն Սիոնի, եւ եղաք մեք մխիթարեալք:
2. Յայնժամ լցան բերանք մեր խնդութեամբ, եւ լեզուք մեր ցնծութեամբ:
3. Յայնժամ ասացին ի հեթանոսս, մեծ արար Տէր զառնել իւր ընդ նոսա. մեծ արար Տէր զառնել իւր ընդ մեզ. եւ մեք եղաք բերկրեալ:
4. Դարձո Տէր զգերութիւնս մեր՝ որպէս զուղիս ի հարաւոյ. որք վարէին արտասուօք, ցնծութեամբ հնձեացեն:
5. Երթալով երթային եւ լային, որք բարձեալ տանէին զսերմանիս իւրեանց:
6. Գալով եկեսցեն եւ ցնծասցեն, որք առեալ բերիցեն զորայս իւրեանց:

Եւթ աղաչանաց: Սաղմոս. ՃԻԹ:

1. Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա:
2. Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդունայն սքնին պահապանք նորա:
3. Ի նանիր է ձեզ յառնել կանխաւ. արդ արիք վինչեւ էք ննջեցեալք, որք ուսէք զհայց ցաւոց:

4. Ի ժամանակի, որպէս տացի՞ քուն սիրելեաց իւրոց. ժառանգութիւն առն որդիք են. որոյ վարձք իւր են, այն է պտուղ որովայնի իւրոյ:

5. Որպէս նետք ի ձեռս հզօրի. այնպէս են որդիքն թօթափելոց:

6. Երանի որ եղից զգանկութիւն իւր ի նոցանէ. մի ամաչեսցեն յորժամ խօսեսցին թշնամիք նոցա ընդ նոսա առ դրանն:

ԵՐԿ ԱՂՔԱՆԱՑ: ՍԱՂՄՈՍ. ՃԻԵ:

1. Երանի՛ ամենեցուն՝ որք երկնչին ի Տեառնէ. եւ գնան ի ճանապարհս նորա:

2. Վաստակս ձեռաց քոց կերիցես. երանի է քեզ, եւ բարի եղիցի:

3. Կին քո որպէս այգի վայելուչ յանկիւնս սան քո. որդիք քո որպէս նորատունկ ձիթենւոյ, շուրջ զսեղանով քո:

4. Այսպէս օրհնեսցի ամենայն մարդ որ երկնչի ի Տեառնէ. օրհնեսցէ զքեզ Տէր ի Սիոնէ:

5. Եւ տեսցես դու զբարութիւն Երուսաղէմ զամենայն աւուրս կենաց քոց:

6. Տեսցես դու զորդիս որդւոց քոց. խաղաղութիւն ի վերայ Իսրայէլ:

1. Ինձ ՈՒՏ անգամ մարտեան ընդ իս
ի մանկութենէ իմմէ, ասացէ Իսրայէլ:
2. Բազում անգամ մարտեան ընդ իս ի
մանկութենէ իմմէ, եւ ինձ ոչ յաղթեցին:
3. Օթիկուն իմ հարին վերատրք.
ընդ երկար արարին զանօրէնութիւնս իւ-
րեանց:
4. Տէր արդար է. եւ խորտակէ զուբն
մեղաւորաց:
5. Ամաչեցին եւ յետս դարձցին ամե-
նեքեան՝ որատեան զՍիոն:
6. Եղիցին նոքա որպէս խոտ տանեաց.
որ մինչեւ ի բուռն եկեալ՝ չորացաւ:
7. Ասաի ոչ ելից զբուռն իւր հնձողն.
եւ ոչ զգիրկս՝ որ զորայն ժողովէր:
8. Ոչ ասացին ամենեքեան որ անցա-
նէին առ նոքօք, թէ օրհնութի Տն ընդ
ձեզ. եւ օրհնեցաք զձեզ յանուանէ Տն:

1. Ի ԽՈՐՈՑ կարդացի առ քեզ Տէր,
Տէր լուր ձայնի իմում:
2. Եղիցին ականջք քո ի լսել ձայնի ա-
ղօթից իմոց:
3. Եթէ զանօրէնութիւնս քննես Տէր

Տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո. զի է քէն է քաւութիւն:

4. Վա՜յն անուան քո համբերի Տէր. համբեր՝ անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ ի Տէր:

5. Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ. ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ ի Տէր:

6. Ի Տեառնէ է ողորմութիւն բազում. ի նմանէ է փրկութիւն, եւ նա փրկեաց զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա:

Օբհնութիւն Շաւոց: Սաղմոս. ՃՁ՝:

1. Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ. եւ ոչ զբօսան աչք իմ:

2. Ոչ գնացի ես ընդ մեծամեծս. եւ ոչ ընդ այնոսիկ որ սքանչելի եղեն քան զիս:

3. Այլ թէ խոնարհեցայ ես որպէս մանուկ հատուցեալ ի տանէ մօր իւրոյ. եւ դարձ նորա անդրէն ի նոյն:

4. Ելլ թէ հպարտացուցի արդեօք զանձն իմ, այսպէս եղիցի հատուցումն անձին իմոյ. յուսացաւ Իսրայէլ ի Տէր, յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

եւթ Շաբաթ: Սաղմոս. ՃՁ.:

1. Յուշեա տէր զվաւրէն. եւ զամենայն հեզութիւն նորա:

2. Որպէս երդուաւ Տեառն. եւ ուխտս եղ Ընտրեցելոյ Յակոբայ:

3. Թէ ոչ մտից ի յարկս տան իմոյ. թէ ելից յանկողինս մահճաց իմոց:

4. Թէ տացից քուն աչաց իմոց, կամ նինջ արտեւանանց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց. մինչեւ գտից զտեղի յարկի Տեառն Ընտրեցելոյ Յակոբայ:

5. Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ. եւ գտաք զնա ի դաշտս մայրեաց:

6. Մտցուք ի յարկս նորա. երկիրպագցուք ի տեղւոջ՝ ուր կացեալ են ոտք նո՛ր:

7. Արի տէր ի հանգիստ քո, դու եւ տապանակ կտակի սրբութեան քո:

8. Երիցունք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

9. Վասն Դաւթի սիրելոյ քո. մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ:

10. Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեսցի նմա. ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

11. Եւ պահեացեն որդիք քո զօրէնս իմ, եւ զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:
12. Որդիք նոցա նացեն յաւիտեան յաւիտենից յամօտս քո:
13. Հաճեցաւ Տէր ընդ Սիոն, եւ ընտրեաց բնակել ի նմա. ասէ, այս է հանգիստ իմ յաւիտեան յաւիտենից. ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա:
14. Օրհն սորա օրհնելով օրհնեցից. եւ զաղքատս սորա լցուցից հացիւ:
15. Ներքինացս սորա զգեցուցից փրկութիւն. եւ սիք սորա ցնծալով ցնծասցեն:
16. Ընդ ծաղիկից զեղջիւր ի Դաւիթ, պատրաստ արարից զքրիստ օծելոյ իմոյ:
17. Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ ի վերն նմ ծաղկեսցի սրբութիւն իմ:

Եբէ Շաբաթ: Սաղմոս. ՃՁՐ:

1. Օ՜ի՛ բարի կամ զի՞նչ վայելուչ. զի բնակին եղբարք ի միասին:
2. Որպէս իւղ զի ելանէ ի գլուխ եւ ի մորուսն Ահարոնի, եւ ի մորուսն ելանէ ի պատանս զգեստուս նորա:
3. Որպէս ցօղ զի ցօղէ Ա՛ն հերմոնի ի վերայ լերին Սիոնի:
4. Տէր անդ պատրաստեաց զօրհնութիւն եւ զկեանս յաւիտենից:

Երէք Շաբաթ։ Սաղմոս. ՃՁԲ։

1. Ընտ օրհնեցէք յամենայն ծառայք Տեառն զՏէր. ո կայք ի տան Տեառն եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ։

2. Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, եւ օրհնեցէք զՏէր։

3. Օրհնեսցէ զձեզ Տէր ի Սիոնէ. որ արար զերկինս եւ զերկիր։

Օրհնութիւն եւից։ Սաղմոս. ՃՁԲ։

1. Օրհնեցէ՛ք զանուն Տեառն. օրհնեցէք ծառայք Տեառն զՏէր. ո կայք ի տան Տեառն, ի գաւիթս տան ԱՅ մերոյ։

2. Օրհնեցէք զՏէր զի բարի է. եւ սաղմոս ասացէք անուան նորա զի քաղցր է։

3. Զամենայն ընտրեաց իւր Տէր. եւ զԻսրայէլ ժառանգութիւն իւր։

4. Զի ծանեաւ զի մեծ է Տէր. եւ Տէր մեծ է քան զամենայն կուռս։

5. Զամ զոր ինչ կամեցաւ եւ արար Տէր. յերկինս եւ յերկրի, ի ծով եւ յամ խորս։

6. Հանէ զամպս ի ծագաց երկրի. զփայլատակունս իւր յանձրեւս արար. եւ հանէ զհոդմ ի շտեմարանաց իւրոց։

7. Զհար զամենայն անդրանիկս Եգիպտացւոց ի մարդոյ մինչեւ յանասունն։

8. Առաքեաց զնշանս եւ զարուեստս իւր ի մէջ քո Եգիպտոս. ի փարաւոն եւ յամենայն զօրս իւր:

9. Եհար զազգս բազումս. եւ սպան զթագաւորս հզօրս:

10. Զհեհոն թագաւոր Ամուրհացւոց. զՈվգ թագաւոր Բասանու, եւ զամենայն թագաւորս Քանանացւոց:

11. Եւ զերկիր նոցա ի ժառանգութիւն. ժառանգութիւն Իսրայէլի ժողովրդեան իւրում:

12. Տէր անուն քո յաւիտեան. Տէր՝ յիշատակ քո յազգէ մինչեւ յազգ:

13. Զի դատի Տէր զժողովուրդ իւր, եւ ի ծառայս իւր մխիթարի:

14. Կուռք հեթանոսաց արծաթ եւ ոսկի են. ձեռագործք են որդւոց մարդկան:

15. Բերան զոյ եւ ոչ խօսին. աչք են եւ ոչ տեսանեն:

16. Ականջք են եւ ոչ լսեն. եւ ոչ զոյ շունչ ի բերանս նոցա:

17. Նմանին նոյն եղիցին որք արարին զնս. եւ ամենեքեան որ յուսացեալ են ի նս:

18. Տուն Իսրայէլի օրհնեցէք զՏէր. տուն Ահարոնի օրհնեցէք զՏէր:

19. Տուն Լեւեայ օրհնեցէք զՏէր. երկիւղածք Տեառն օրհնեցէք զՏէր:

20. Օրհնեալ Տէր ի Սիոնէ. որ բնակեաւն ի Երուսաղէմ:

Ալէլուիա, Ալէլուիա: Սաղմոս. ՃՀ:

1. Խոստովանեցարուք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

2. Խոստովանեցարուք Աստուծոյն աստուծոց. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

3. Խոստովանեցարուք Տեառն տերանց. զի յաւ:

4. Որ զքանչելիս մեծամեծս միայն. զի յաւ:

5. Որ երկինս արար իմաստութեամբ իւրով, զի յաւ:

6. Որ ամուրեաց զերկիր ի վերայ ջուրց. զի յաւ:

7. Որ զլուսաւորս մեծամեծս միայն. զի յաւ:

8. Որ արեգականն արար իշխանական տուընջեան. զի յաւ:

9. Որ լուսին եւ զաստեղս իշխանական գիշերոյ. զի յաւ:

10. Որ հար զերկիրն Եգիպտացւոց անդրանկօք իւրովք հանդերձ. զի յաւ:

11. Եւ եհան զնարայէլ ի միջոյ նորա. զի յաւ:

12. Ի ձեռն բարձր եւ ի բազուկ իւր հզօր. զի:

13. Ընկեր զծոցին մեծ, եւ բաժանեաց յերկուս մասունս. զի:

14. Եւ անցոյց զնարայէլ ընդ միջ նի. զի:

15. Ընկղմեաց զփարաւոն եւ զզօրս իւր ի ծով կարմիր. զի յաւ:

16. Եւ եհան զժողովուրդ իւր յանապատ. զի յաւ:

17. Ընդ զաղջս մեծամեծս. զի յաւ:

18. Եւ սպան զթագաւորս հզօրս. զի յաւ:

19. ԶՕգեհան թագաւոր Բմուրհացւոց. զի յաւ:

20. ԶՕգվգ թագաւոր Բասանու. զի:

21. Եւ զերկիր նոցա ի ժառանգութիւն. զի յաւ:

22. Ժառանգութիւն Նարայելի ծառայի իւրոյ. զի յաւ:

23. Յիշեաց զմեզ Տէր ի խոնարհութեան մերում. զի յաւ:

24. Եւ փրկեաց զմեզ ի ձեռաց թշնամեաց մերոց. զի յաւ:

25. Ո տայ կերակուր ամենայն կենդանեաց. զի յաւ:

26. Խոստման եղերութ Աստուծոյ երկնաւորի. զի յաւ:

Սաղմոս ի դաւիթ յետեփոյ. Անվերնագիր յետոյեցոց. ՃԼՕ:

1. Ած զեռս Տարեկացւոց անդ նատէաք եւ լայաք, որպէս յիշեցաք մեք անդ զՍիովն:
2. Ի միջ ուռեաց նոցա կախեցաք զկտակարանս մեր:
3. Անդ հարցանէին զերիչք մեր զբանս օրհնութեան, զերեվարք մեր ասէին զմեզ եւ ասէին:
4. Երգեցէք մեզ յերգոյն Սիոնի. իսկ զիա՞րդ օրհնեացուք զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար:
5. Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի զես աջ իմ:
6. Այեսցի լեզու իմ ի քիմն իմ, թէ ոչ յիշեցից զքեզ. թէ ոչ նախ նուագեցից զքեզ Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ:
7. Յիշեա Տէր զորդիսն Եդոմայ. յաւուրն Երուսաղեմի:
8. Որք ասէին քակեցէք քակեցէք. մինչեւ ի հիմն հասուցէք:
9. Դուստր Տարեկացւոց թշուառանան, երանի որ հատցէ զհատուցումն քո, զոր դու մեզ հատուցեր:

10. Երանի որ կալաւ զմանկունս քո, եւ եհար զքարի:

Սաղմոս Դաւթի. ՃՀԶ:

1. Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ:

2. Չի լուար զբանս բերանոյ իմոյ, երկիւղիցդ ի տաճար սուրբ քո. եւ խոստովան եղէց անուան քում վասն ողորմութեան եւ ճշմարտութեան քո:

3. Վասն արարեր յամենայնի զանուն սուրբ քո. յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ. եւ բազում արասցես զօրութիւնս յանձն իմ:

4. Խոստովան եղիցին առ քեզ ամենայն թագաւորք երկրի. զի լուան զբանս բերանոյ քո եւ օրհնեացեն զճանապարհս քո:

5. Վասն են փառք Տեառն. բարձր է Տէր, զխոնարհս տեսանէ. եւ զբարձունս ի հեռաստանէ ճանաչէ:

6. Թէ գնացից ես ի մէջ նեղութեանց, կեցուսցես զիս ի բարկութենէ թշնամեացն:

7. Ձգեցեր զձեռն քո եւ փրկեաց զիս աջ քո. եւ Տէր հատուսցէ ընդ իմ:

8. Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առներ:

Ի կատարած: Սաղմոս է Դաւթին. ՃՀԱ:

1. Տէր փորձեցեր զիս եւ ծանեար զիս.
2. դու ծանեար զնստել իմ եւ զյառնել իմ:
3. Ի միտ առեր զխորհուրդս իմ ի հեռաստանէ. զշաւիղս իմ եւ զվիճակս դու քննեցեր, եւ զամենայն ճանապարհս իմ
4. յառաջագոյն տեսեր. զի ոչ գոյ նենգութիւն ի լեզուի իմում:
5. Ահա դու Տէր ծանեար զյետինն իմ եւ զառաջինն իմ. դու ստեղծեր զիս. եւ եդիր զձեռն քո ի վերայ իմ:
6. Սքանչելի եղեւ զիտութիւն քո յինէն. զօրացաւ եւ ոչ հանդարտեմ ամա:
7. Յո՞ երթայց ես յոգւոյ քումէ. կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց:
8. Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես. թէ իջանեմ ի դժոխս, եւ անդ մօտ ես:
9. Թէ առից զթեւս իմ ընդ առաւօտս. եւ բնակեցայց յեզերս ծովու:
10. Սակայն եւ անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ. եւ աջ քո ընկալցի զիս:
11. Ասացի, խաւար ուրեմն արդեօք ծածկեսցէ զիս. կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութեան իմոյ:
12. Խաւարն քեզ ոչ խաւարանայ. եւ

զիշերն որպէս զտիւ լուսաւոր եղիցի. եւ խաւար նորա որպէս զլոյս նորա:

11. *Զոր առացար զերիկամունս իմ. եւ ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ:*

12. *Խոստովան եղէց քեզ Տէր, զի առհեղ եւ սքանչելի ես. սքանչելի են գործք քո եւ անձն իմ սիրեաց յոյժ:*

13. *Ոչ թաղեաւ ոսկր իմ ի քէն զոր արարեր ի ծածուկ. եւ կար զօրութեան իմոյ ընդ առրինս երկրի:*

14. *Անդործս իմ տեսին աչք քո. եւ ի գիրս քո ամենեքեան գրեցան:*

15. *Ի տուէ մոլորեցան, եւ ոչ ոք էր որ առաջնորդէր նոցա:*

16. *Ինձ յոյժ մեծարոյ եղեն բարեկամք քո Ած. եւ յոյժ զօրացան իշխանք նոցա:*

17. *Յաուելի զնոսա, եւ քան զաւազ բազմացան. զարթեայ, եւ արդ ընդ քեզ եմ:*

18. *Եհէ ապանանես զմեզաւորս Ած, արք արեան ի բաց եղերուք յինէն:*

19. *Ի հակառակութիւն եւ ի նախանձ առցեն ի նանիր զքաղաքս քո:*

20. *Ատելս քո Տէր ատեցի. եւ ի վերայ թշնամեաց քոց մաշեցայ:*

21. *Յատելութիւն կատարեալ ատեցի զնոսա, եւ եղեն ինձ ի թշնամիս:*

22. *Փորձեա զիս Աստուած եւ ծանիր*

զկիրտ իմ. քննեա զիս եւ ծանիր զշաւիղս իմ. եւ տես թէ իցեն անօրինութիւնք ի ճանապարհս իմ. եւ առաջնորդեա ինձ ի ճանապարհս քո յաւիտեանից:

1. Ի կատարած: Սպանս է դաւիթ. ՃՁԻ:

2. Ընդունի զիս Տէր ի մարդոյ չարէ. յառնէ անիրաւէ փրկեա զիս:

3. Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց. զօր ամենայն պատրաստեցան ի պատերազմ:

4. Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի. եւ թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա:

5. Պահեա զիս Տէր ի ձեռաց մեղաւորի, եւ ի մարդոյ չարէ փրկեա զիս:

6. Խորհեցան խափանել զգնացս իմ. թաղուցին ամբարտաւանք որոգայթ ինձ:

7. Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց. շուրջ զշաւղաք իմովք եդին ինձ գայթակղութիւն:

8. Ասացի՝ Տէր Աստուած իմ ես դու. ունկն դիր Տէր ձայնի աղօթից իմոց:

9. Տէր Տէր զօրութիւն փրկութեան իմոյ. հովանի զլխոյ իմոյ յաւուր պատերազմի:

10. Մի մատներ զիս Տէր ի ցանկութիւն մեղաւորաց, զոր խորհեցան վասն իմ, ընդ վայր հարկանել զիս:

11. Զի մի երբեք բարձրասցին, եւ խորհուրդք նոցա մի կատարեսցին, վախճան կատարած ի նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա:

12. Ընկեաց ի վերայ նոցա կայծակունս հրոյ. եւ կործանեսցես զնոսա, ի տառապանաց մի կարասցեն կեալ:

13. Ատրճոյ լեզուանոյ մի աջողեսցի ի վերայ երկրի. զայր մեղաւոր չարիք իւր որսացեն ի կորուստ:

14. Գիտեայ զի առնես Տէր դատաստան աղքատի. եւ իրաւունս տնանկի:

15. Արդարք դոհասցին զանուանէ քումմէ. եւ բնակեսցեն ուղիղք առաջի երեսաց քոց:

Ի կոպրոճ: Սաղմոս է Դաւիթ. ՃԽ:

1. Տէր կարդասցի առ քեզ եւ լսեր ինձ, նայեա ի ձայն աղօթից իմոց՝ ի կարդալ իմում առ քեզ:

2. Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի:

3. Դիր Տէր պահապան բերանոյ իմոյ եւ դուռն ամուր շրթանց իմոց. զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան:

4. Պատճառել զպատճառս մեղաց ընդ

մարդս՝ որ գործեն զանօրէնութիւն. ոչ եղէց կցորդ ընտրելեաց նոցա:

5. Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ եւ յանդիման արասցէ. իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխս իմ, այլ աղօթք իմ ի կամս նորա:

6. Ընդեղան մերձ առ վիմին դատաւորք նոցա, լուիցեն բանից իմոց եւ քաղցրասցին:

7. Որպէս թանձրութիւն հողոյ զի սփռեալ է ի վերայ երկրի. ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս:

8. Ընդ քեզ **Տէր Տէր**, են աչք իմ. ի քեզ յուսացայ, մի հաներ զհոգի յինէն:

9. Պահեա զիս յորոգայթէ՝ որ թաղուցաւ ինձ. ի դայթակղութենէ գործողին զանօրէնութիւն:

10. Ընկղկին ի ցանցս նորա մեղաւորք, միայն եմ ես մինչեւ անցից:

1. Սաղմոս ի դաւիթ. ի ժամանակի զի էր նա յայրն: Սաղմոս. ՃԽԱ:

2. Ձայնիւ իմով ես առ **Տէր** կարդացի. ձայնիւ իմով զ**Տէր** աղաչեցի:

3. Սփռեցից առաջի **Տեառն** զաղօթս իմ, եւ զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից:

4. Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ դու

Տէր ծանեալ զշաւիղս իմ. ի ձանապարհ յոր եւ գնայի, թաղուցաւ ինձ որոգայթ:

5. Հայէի յաջմէ տեսանէի, եւ ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ ինէն փախուստ իմ, եւ ոչ ոք խնդրող անձին իմոյ:

6. Ընդակեցի առ քեզ Տէր եւ ասացի, դու ես յոյս եւ բաժին իմ յերկրին կենդանեաց:

7. Նայեա Տէր յաղօթս իմ, զի եմ խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ի հալածողաց իմոց, զի հզօր եղեն քան զիս:

8. Տէր հան ի բանտէ զանձն իմ. դոհանամ զանուանէ քումմէ:

9. Ինձ սպասեն արդարք քո՝ մինչեւ հատուցցես ինձ:

1. Սաղմոս ի Դաւիթ, ի ճամանակի զի հալածէր զնա որդի նորա Աբիսողոմ: ՃԽԲ:

2. Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով:

3. Լուր ինձ արդարութեամբ քով, եւ մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քոյ ամենայն մարդի:

4. Հալածեալ թշնամին զանձն իմ.

խոնարհ արար յերկիր զկեանս իմ. նաոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

5. Ձանձրացաւ յիս հոգի իմ, եւ սիրտ իմ խռովեցաւ յիս:

6. Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամենայն գործս քո. յարուածս ձեռաց քոց խորհեցայ, եւ համբարձի առ քեզ զձեռս իմ:

7. Ընձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ Տէր, զի նուաղեաց յինէն հոգի իմ:

8. Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանիցեմ այնոցիկ որ իջանեն՝ի գուբ:

9. Լսել ինձ յառաւօտս զողորմութիւնն քո, զի ես ի քեզ Տէր յուսացայ:

10. Յայց ինձ ճանապարհ յոր եւ գնացից. զի առ քեզ համբարձի զանձն իմ:

11. Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

12. Ուս ինձ առնել կամս քո. զի դու ես Աստուած իմ:

13. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ:

14. Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ:

15. Ողորմութեամբ քով սատակեսցես

զԹշնամիս իմ. եւ կորուսցես զամենայն
նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:

Ի կատարած, սաղմոս է Դաւթին առ Գողիաթն:

ՃԽԻԶ:

1. Օրհնեալ Տէր Աստուած իմ որ ուս-
ոյց զձեռս իմ ի պատերազմ, եւ զմատունս իմ ի ճակատամարտս:

2. Ողորմութիւն իմ եւ ապաւէն իմ. օգնական իմ եւ փրկիչ իմ. ապաւէն իմ, եւ ես յուսամ ի նա. ո հնազանդէ զժողովուրդս ընդ ինեւ:

3. Տէր ի՞նչ է մարդ՝ զի յայտնեցար դու նմա, կամ որդի մարդոյ՝ Թէ համարիս ինչ զնա:

4. Մարդ նմանեցաւ նմանեաց. եւ աւուրք նորա որպէս հովանի անցին:

5. Տէր, խոնարհեցո զերկինս եւ էջ, մերձեաց ի լերինս եւ ծխեացին:

6. Փայլատակեա զփայլատակումն քո եւ խռովեա զնոսա. առաքեա զնետս քո եւ ցրուեա զնոսա:

7. Առաքեա զձեռն քո ի բարձանց. եւ փրկեա զիս ի ջուրց բազմաց, եւ ի ձեռաց որդւոց օտարաց:

8. Որոց բերանք խրնանց խօսեցան զնաՀպատութիւն, եւ աջ նոցա աջ է մեղաց:

9. Ընտուած՝ յօրհնութիւն նոր օրհնեցից զքեզ. տանջանքեաւ տաղմոսարանաւ տաղմոս տացից քեզ:

10. Ո տայէ զիրկութիւն թագաւորաց մերոց. որ փրկեցոյն լոյէ զԴաւիթ ծառայ իւր ի սրոյ չարէ:

11. Փրկեա զիս եւ տպրեցո զիս ի ձեռաց որդւոց օտարաց:

12. Որոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութիւն. եւ աջ նոցա աջ է մեղաց:

13. Որոց ուսանելք իւրեանց որպէս նոքա բառնալ հաստատուն են ի մանկութենէ իւրեանց, դասելք նոցա զարդարեալ եւ պաճուճեալ ի նմանութիւն տաճարի:

14. Շ տեմարանք նոցա լի են եւ բղխեն ի միմեանս. խաշինք նոցա բազմածինք են եւ բազմանան ի գնացս իւրեանց. եւ անդեայք նոցա պարարտք են:

15. Ոչ գոյ խրամատութիւն ցանկոյ նոցա. եւ ոչ աղաղակ ի հրապարակս նոցա:

16. Ընդ՝ երանեցի՛ց ժողովրդեան՝ որոյ այս այսպէս լոյէ. նա՝ երանի ժողովրդեան, որոյ Տէր Ընտուած է նոցա:

ՃԻԱԳ։

1. ԲՆԱՐՀ առնեմ զքեզ Աստուած իմ եւ թագաւոր իմ. եւ օրհնեմ զանուն քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից։

2. Ամենօրհնասպաս օրհնեցից զքեզ. եւ գովեցից զանուն քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից։

3. Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ. եւ մեծութեան նորա ոչ գոյ չափ։

4. Ազգ եւ ազգ գովեսցեն զգործս քո. եւ զզօրութիւնս քո պատմեսցեն։

5. Ամենվայելչութիւն փառաց սրբութեան քո խօսեսցին. եւ զքաջութիւնս քո պատմեսցեն։

6. Ամենզօրութիւն ահի քո ասասցեն, եւ զմեծութիւնս քո պատմեսցեն։

7. Ամենհիշատակ բազում քաղցրութեան քո բղխեսցեն. եւ արդարութիւն քո ցնծասցեն։

8. Գթած ողորմած է Տէր. երկայնամիտ եւ բազումողորմ։

9. Քաղցր է Տէր առ ամենեսեան. եւ գթութիւն նորա ի վերայ ամ ստեղծոց իւրոց։

10. Խոստովանեսցին առ քեզ Տէր ամ գործք քո. եւ սրբք քո օրհնեսցեն զքեզ։

11. Ամենփառս արքայութեան քո ասասցեն. եւ զզօրութիւնս քո պատմեսցեն։

12. Ա՛նանչել որդւոց մարդկան զգօրութիւնս քո. եւ զփառս մեծվայելչութեան ազգայութեան քո:

13. Ընդայութիւն քո ազգայութիւն ամենայն յաւիտենից. եւ տէրութիւն քո ազգէ ազգ մինչեւ յազգ:

14. Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

15. Հաստատէ Տէր զամենայն գայթակղեալս. եւ կանգնէ զամենայն գլորեալս:

16. Աչք ամենեցուն ի քեզ յուսան, եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու:

17. Բանաս զձեռն քո, լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամաց քոց:

18. Արդար է Տէր յամենայն ճանապարհս իւր, եւ սուրբ է յամենայն գործս իւր:

19. Մերձ է Տէր առ ամենեսեան՝ որ կարդան առ նա. առ ամենեսեան՝ որ կարդան առ նա ճշմարտութեամբ:

20. Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր. աղօթից նոցա լսէ եւ կեցուցանէ զնոսա:

21. Պահէ Տէր զամենեսեան զոք սիրեն զնա. զամենայն մեղաւորս սատակէ Տէր:

22. Զօրհնութիւն Տեառն խօսեցցի բերան իմ. օրհնեսցէ ամենայն մարմին զանուն սրբոյ նորա յաւիտեան, եւ յաւիտենից:

1. Օրհնեա անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր ի կեանս իմ. սաղմոսասացից Աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես:

2. Մի յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան. զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա:

3. Ելցէ հոգի ի նոցանէ եւ դարձցին անդրէն ի հող. եւ յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա:

4. Երանի ազգի՝ որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա. եւ յոյս նորա ի Տէր Աստուած է:

5. Որ արար զերկինս եւ զերկիր, զծով եւ զամենայն որ է ի նոսա:

6. Ո պահէ զճշմարտութիւն յաւիտեան. եւ առնէ իրաւունս զրկելոց:

7. Տայ հաց քաղցելոց. եւ արձակէ զկապեալս Տէր:

8. Տէր բանայ զաչս կուրաց, եւ կանգնէ զվայրեալս Տէր:

9. Տէր սիրէ զարդարս, Տէր պահէ զպանդուխտս. զորբս եւ զայրիս ընդունի Տէր. եւ զճանապարհս ամբարշտաց կորուսանէ:

10. Ծառաւորեցէ Տէր յաւիտեան, Ասուած քո Սիոն յազգէ մինչեւ յազգ:

Ալէլուիա, Անգեայ ե՛ Զաքարիայ: Սաղմոս.

ՃԾԽԱ:

1. Օրհնեցէք զՏէր՝ զի բարի են սաղմոք. Ընդ մերոյ քաղցր եղիցի օրհնութիւն:
2. Շինէ զԵրուսաղէմ Տէր. եւ զքրուեալսն Իսրայելի ժողովէ:
3. Բժշկէ զբեկեալ սիրտս, եւ պատէ զվէրսն նոցա:
4. Ո թուէ զբազմութիւն աստեղաց, եւ զամենեսեան զնոսա յանուանէ կոչէ:
5. Մեծ է Տէր մեր, եւ մեծ է զօրութիւն նր, եւ իմաստութեան նր ոչ գոյ թիւ:
6. Ընդունի զհեզս Տէր. եւ խոնարհ առնէ զամբարտաւանս մինչեւ յերկիր:
7. Օրհնեցէք զԱստուած խոստովանութեամբ. սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ:
8. Ո զգեցոյց զերկինս ամպովք. պատրաստ արար զանձրեւ իւր յերկիր:
9. Բուսոյց զխոտ ի լերինս. զդալարն ի ծառայութիւն մարդկան:
10. Ո տայ անասնոց կերակուր. ձագուց ագռաւուց՝ որ կարդան առ նա:
11. Ոչ թէ ընդ զօրութիւն ձիոյ կամե-

ցաւ Տէր. եւ ոչ ընդ իրանս առն սկայի հաճեցաւ:

12. *Ալ հաճեցաւ Տէր ընդ երկիւղած իւր. եւ ընդ այնոսիկ՝ որք յուսան յողորմութիւն նորա:*

Ալէլուիա, Անգեայ ես Զաքարիայ: Սաղմոս.

ՃԽԷ:

1. *Գովեն ներսաղէմ զՏէր:*
2. *Եւ օրհնեա զՍտուած քո Սիոն:*
3. *Զի զօրացոյց զնիգս դրանց քոց. եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ:*
4. *Ո՛եղ զսահմանս քո ի խաղաղութիւն, պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ:*
5. *Առաքէ զբան իւր յերկիր. վազվազ ընթանան պատգամք նորա:*
6. *Տնէ զձիւն որպէս զաստր. եւ զմէգ որպէս փոշի ցանեաց:*
7. *Ձրկանէ զսառն որպէս պատառս. առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կենալ:*
8. *Առաքէ զբան իւր եւ հալէ զնոսա. շնչեացեն հողմք եւ զնաացեն ջուրք:*
9. *Պատմէ զբան իւր Յակոբայ. զարդարութիւն եւ զկրաւունս Իսրայելի:*
10. *Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր. եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա:*

1. Տէր զլուր քո լուայ եւ երկեայ. Տէր նայեցայ ի գործս քո եւ զարհուրեցայ:
2. Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու. ի մերձենալ ամաց յայտնեացիս. եւ ի հասանել ժամանակին երեւեացիս:
3. Ի խառնել անձին իմոյ՝ ի ժամանակի բարկութեան ողորմութիւն յիշեացես:
4. Աստուած ի հարաւոյ եկեսցէ. եւ սուրբն ի փառան լեռնէ:
5. Յայտնեացեն երկինք զվայելչութիւն փառաց նորա, եւ օրհնութեամբ նորա լցան տիեզերք:
6. Հառագայթք ունի ի լուսոյ հասան ի նմանէ. եւ եղջիւրք ի ձեռին նմա զտան. եւ անդ հաստատեցաւ զօրութիւ փառաց նմա:
7. Յերեսաց նմա երթեն հարուածք. եւ զհետ շաւղաց նմա երթիցեն մեծամեծք ի թռչնոց:
8. Նկաց եւ չափեաց զերկիր. հայեցաւ եւ դիտեաց զհեթանոսս:
9. Լերինք հալեսցին, եւ անուանք վատնեսցին. ճանապարհք՝ որք ի սկզբանէն կուբացին. եւ ի նմանի դողացի ամ երկիր:
10. Տեսի զբանակս Քուշացւոց. խռովեցան բնակիչք վրանացն Մադիամու:

11. Մինէ ի վերայ գետոց բարկացիս դու Տէր. կամ սրտմտութիւն քո ի վէր գետոց. կամ բարկութիւն քո ի վէր ծովու:

12. Նէլը դու ի կառս քո. հեծելութիւն քո վրկութիւն եղեւ յեսանելն քո:

13. Ջարթեաւ աղեղն քո. զնեաս կապարճից քոց արբուցեր, զգեաս ցրուեցեր, զերկիր գողացուցեր ի սաստկութենէ անձրեւի, որ անցանեն ընդ սա:

14. Ընդունէք աղաղակեցին մեծապէս. լոյս վայլման արեգականն արձեալ, եւ ծագումն լուսնին դադարեցաւ:

15. Արդեօ ի նշոյլս սլաքաց քոց գնասցես. եւ որպէս ի լոյս փայլատակման սրոյ քո:

16. Խարկութեամբ զարթիցես ի վերայ երկրի. եւ գողութիւ կացես զհեթանոս:

17. Ելեւեցար ի վրկութիւն ժողովրդեան քոյ. ի վրկել զընտրեալս քո:

18. Եաւաձիգ եղեր ի գլուխս մարդկան ամբարտաւանից. եւ մինչեւ յանդունդս ծովու ընկղմեցան:

19. Խնդրեցեր զվէմ զօրութեամբ քովք ի զօրադլխացն մեղաւորաց, որք յուսացեալ էին յանդգնութիւնս իւրեանց. զի կերիցեն զաղբատան ի գաղանիս:

20. Առաքեցեր ի վերայ ծովու զերիվարս քո, եւ խառվեցան յաղի ջուրք անդնդոց:

21. Կացի ես եւ զերան աղիք իմ ի ձայնէ բերանոյ իմոյ. եմուտ դողումն յոսկերս իմ. եւ ես յանձն իմ խոռվեցայ:

22. Ջայս պահեացես յաւուր նեղութեան. աճել ի վերայ ազգի ամենայնի, որք մարտանչեն ընդ ժողովրդեան քում:

23. Ծռենի ոչ տացէ զպատուղ իւր, եւ յայգւոջ՝ բեր մի գտցի. ձիթենիք անասցին եւ երկիր մի բուսուսցէ զպտղարին:

24. Պահասեցին հօտք ի ձարակաց. եւ եղինք մի գոցին առ մսուրս:

25. Ես ի Տէր յուսացայ, ցնծացայց եւ ուրախ եղէց Ողորմած վրկիչ իմ:

26. Տէր Տէր եա՛ ինձ զօրութիւն եւ կացցէ զոս իմ ի հաստատութեան. ի վերայ պարանոցի թշնամեացն կացցէ զիս եւ հանդցէ զիս երագ երագ:

Մաղմոս:

Լուր մեզ Տէր, լուր մեզ ածային ողորմութիւն. եւ զմոռութիւն քոխնայեա յարարածս քո: Ա՛րդեաւեր Տէր՝ վա՛յ արբուհւոյ անարբուածս քո: Ա՛րդեաւեր Տէր՝ վա՛յ խաչի քոյ պատուականի ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Ալէլուիա, Անգեաց եւ Ջուարթից: Սաղմոս.

ՃԻԿ:

1. Օրհնեցէք զՏէր յերկնից. օրհնեցէք զնա ի բարձանց:

2. Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նր. օրհնեցէք զնա ամ զօրութիւնք նորա:

3. Օրհնեցէք զնա արեգակն եւ լուսին. օրհնեցէք զնա ամենայն աստեղք եւ լոյս:

4. Օրհնեցէք զնա երկինք երկնից. ջուք՝ որ ի վերոյ քան զերկինս օրհնեցէք զանուն Տեառն:

5. Զի նա ասաց եւ եղեն, հրամայեաց եւ հաստատեցան:

6. Կացոյց զնս յաւիտեան յաւիտենից. սահման եդ եւ ոչ անցանեն:

7. Օրհնեցէք զՏէր յերկրէ վիշապք, եւ ամենայն խորք:

8. Հուր եւ կարկուտ, ձիւն եւ սառն, հողմ եւ մրրիկ. որ առնէք զբան նորա:

9. Լերինք եւ ամենայն բարձունք, ծառք պտղաբերք եւ ամենայն մայրք:

10. Գազանք եւ ամենայն անասունք. սողունք եւ ամենայն թռչունք թեւաւորք:

11. Թագաւորք երկրի եւ զօրք իւրեանց. իշխանք եւ ամենայն դատաւորք երկրի:

12. Երիտասարդք եւ կուսանք. ծերք եւ տղայք՝ օրհնեցէք զանուն Տեառն:
13. Յարձրացաւ անուն նորա միայն. խոստովանութիւնն նմա յերկինս եւ յերկրի:
14. Յարձր առնէ Տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ. օրհնութիւն նմա յամենայն սրբոց նորա, յորդւոցն Իսրայէլի ժողովրդոյն որ մերձ է առ Տէր:

Ա՛լէլուիա: Սաղմոս. Ա՛ւետ:

1. Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:
2. Ուրախ եղիցի Իսրայէլ յարարիչ իւր, որդիք Սիոնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց:
3. Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ. սաղմոսիւք եւ օրհնութեամբ սաղմոս ասասցեն նմա:
4. Զի ամբի Տէր ընդ ժողովուրդս իւր եւ բարձր առնէ զհեզս ի փրկութիւն:
5. Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցընծասցեն ի հանդիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զՔաւուածծ բերանօք իւրեանց:
6. Սուր երկայրի ետ ի ձեռս նոցա. առնել հատուցումն ի հեթանոսաց. յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց:
7. Կապել զթագաւորս նոցա կապանօք,

զզօրավարս նոցա ձեռնակապօք երկաթեօք:

8. Առնել ի նոսա զդատաստանն գրեալ. փառք այս են ամենայն սրբոց նորա:

Ալէլուիա: Սաղմոս. Ճ՛Օ:

1. Օրհնեցէ՛ք զՏէր ի սրբութեան նորա. օրհնեցէ՛ք զնա ի հաստատութեան զօրութեան նորա:

2. Օրհնեցէ՛ք զՏէր ի զօրութիւնս նորա. օրհնեցէ՛ք զնա ի բազում մեծութեան նորա:

3. Օրհնեցէ՛ք զնա ի ձայն օրհնութեան. օրհնեցէ՛ք զնա սաղմոսիւք եւ օրհնութիւք:

4. Օրհնեցէ՛ք զնա ցնծութեամբ. գովեցէ՛ք զնա ուրախութեամբ:

5. Օրհնեցէ՛ք զնա ի բանս քաղցր. գովեցէ՛ք զնա ի բարբառ լանլի:

6. Օրհնեցէ՛ք զնա ի ձայն գոհութեան. ամենայն հոգի՛ք օրհնեցէ՛ք զՏէր:

Այս սաղմոս ինձեանս ասէ, սրտառոյց ձեռաց. ի ժամանակի որ եւ նա նահատակ ընդդէմ գողգոթայի, առաջի Սատանայի:

1. Փո՛ւթր էի ես յերկրպագս իմ, եւ կրակեր ի տան հօր իմոյ. արտաքին զիսաշինս հօր իմոյ:

2. Զեռք իմ արարին սաղմոսարան. եւ մատունք իմ կապմեցին զործի օրհնութիւն:
3. Լաւ արդ՝ ո պատմեացէ զայս Տեառն իմում. ինքնին Տէր ամի լուիցէ զնմա:
4. Եւ առաքեաց Տէր զհրեշտակս իւր. եւ ամբարձ զնս ի հօտէ խաշանց. եւ օծ զնս յօծութիւն իւղոյ իւրոյ:
5. Աղբատք իմ մեծամեծք եւ զեղեցիկք. եւ ոչ հաճեցաւ ընդ նոսա Տէր:
6. Ելի ես ընդ առաջ այլազգւոյն, եւ նզովեցի զկուռս նորա. հանի զառւաներն ի նմանէ. եւ հատի զղլուխս նորա, եւ բարձի զնախատինս յորդւոցն Իսրայելի:

Օրհնութիւն եղիցի Տանկանցն: Դանիէլ. 3:

Օրհնեալ ես Տէր Ընտուած հարցն մերոց. օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան:

Յիրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ մեզ, արդար ես դու Տէր, եւ ամենայն գործք քո ճշմարիտ են:

Ճանապարհք քո ուղիղ են, եւ ամենայն դատաստանք քո արդար են:

Դատաստան արդարութեան ածեր ի վերայ մեր ըստ ամենայնի. եւ զոր ինչ ա-

ծեր ի վերայ մեր. եւ քաղաքի սրբոյ հարցն մերոց Երուսաղեմի:

Ընդարուեսցեմք եւ յիւրաքանչիւր ազգ ամենայն ի վերայ մեր, վասն մեղաց մերոց:

Ընծրինեցայք եւ յանցեաք առաստաւ լինել ի քէն. մեղաք յամենայնի եւ առաստուխրանաց քոց մեք ոչ անսացաք:

Ող պահեցաք եւ ոչ արարաք որպէս պատուիրեցեր դու մեզ. զի զբարիս գըրացուք մեք ի քէն:

Ընդ՝ զամենայն զոր արարեր եւ զոր ինչ ածեր ի վերայ մեր, արդար դատաստանաւ արարեր:

Մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց, անօրինաց, խստաց եւ ապստամբ բողաց:

Ւ ձեռս թագաւորի անօրինի եւ չարի քան զամենայն երկիր մատնեցեր զմեզ:

Եւ արդ՝ ոչ զոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր. զի ամօթ եւ նախատինք եղաք ծառայից քոց եւ պաշտօնէից:

Ընդ մի մատներ զմեզ խոպան վանանուան քո. մի ցրեր զուխաս քո եւ մի ի բացեայ առներ զողորմութիւնս քո ի մէնջ:

Վասն Աբրահամու սիրելւոյ քո, Հակոբ ծառայի քո եւ Խորայելի սրբոյ քո:

Խոստացար նոցա եւ ասացեր, բազմա-

ցուցից զզաւակ ձեր ոչ զաստեղս երկնից բազմութիւն, եւ ոչ զաւազ ա՛ռ եզր ծովու:

Եւ արդ Տէր Նուաղեցաք մեք քան զամենայն ազգս. եւ եմք տառապեալ յամենայն երկրի այսօր վասն մեղաց մերոց:

Ոչ գոյ ի ժամանակիս յայսմիկ իշխան մարգարէ եւ առաջնորդ, ոչ ողջակէզք պատարագաց, ոչ խունկք օրհնաց, եւ ոչ տեղի պատարագս մատուցանելոյ առաջի քո եւ ողորմութիւն գտանել ի քէն:

Այլ անձամբք խոնարհեալ եւ հոգւովք առաւպանաց ընդունելի լինիլ մեք որպէս ողջակէզս խոյոց եւ զուարակաց. եւ որպէս բիւրաւորս գառանց պարարտաց:

Այնպէս ընդունելի լինիցին պատարագք մեր այսօր առաջի քո. զի կատարեալ գոցուք զկնի քո. եւ չեք ամօթ յուսացելոց ի քեզ:

Եւ արդ՝ զամբ զկնի քո ամենայն սրտիւք մերով, երկնչիմք ի քէն, եւ խնդրեմք զերեսս քո Տէր՝ մի յամօթ առներ զմեզ:

Այլ արա առ մեզ ըստ հեզութեան քումմ եւ ըստ բազում ողորմութեան քումմ. փրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց Տէր. եւ փառաւորեցի անուն քո յաւիտեան:

Յամօթ լիցին ամենեքեան որ չարչա-

բեն զձառայս քո. ամաչեցեալ լիցին բրո-
նութիւնք նոցա. եւ ամենայն զօրու-
թիւնք նոցա խորտակեցին:

Եւ ծանիցեն զի դու ես Տէր Ասուած
միայն՝ որ փառաւորեալ ես ի վերայ ա-
մենայն սիեզերաց:

Օրհնեալ ես դու Տէր Ասուած
հարցն մերոց. գովեալ եւ առաւել բար-
ձրացեալ յաւիտեան:

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց
քոց. գովեալ եւ առաւել բարձրացեալ
յաւ:

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբ-
բութեան քո. գովեալ:

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ ար-
քայութեան քո. գովեալ:

Օրհնեալ ես որ նայիս ի քրովբէս եւ
հայիս յանդունդս. գովեալ:

Օրհնեալ ես ի վերայ հաստատու-
թեան երկնից. գովեալ:

Օրհնեցէք ամենայն գործք Տեառն՝
զՏէր. օրհնեցէք եւ բարձր արարէք զնա
յաւիտեան:

Օրհնեցէք երկինք զՏէր. օրհնեցէք
եւ բարձր արա:

Օրհնեցէք հրեշտակք Տեառն եւ
ջուք որ ի վերոյ երկնից՝ զՏէր. օրհնեցէք:

Օրհնեցէք զօրութիւնք Տեառն, աւրհնեցէք եւ լուսին՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք աստեղք երկնից անձրեւք եւ ցօղք՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք ամենայն հողմք, հուր եւ ջեր զՏէր. օրհ:

Օրհնեցէք ցուրտ եւ ոսկի, ցօղ եւ ձիւնապեր՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք սառն եւ պարզ, եղեամն եւ ձիւն՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք սիւք եւ դիշերք, լոյս եւ խաւար՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք ամպք եւ փայլատակունք եւ երկիր՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք լերինք եւ բլուրք. եւ ամենայն բոյսք երկրի՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք աղբիւրք, ծովք եւ գետք՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք կէտք եւ ամենայն կայտառք՝ որ ի ջուրս. եւ թռչունք երկնից՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք գազանք եւ անասունք եւ որդիք մարդկան զՏէր. օրհ:

Օրհնեսցէ Իսրայէլ զՏէր. օրհնեսցէ եւ բարձր արասցէ:

Օրհնեցէք քահանայք զՏէր. օրհ:

Օրհնեցէք ծառայք Տեառն զՏէր. օրհ:

Օրհնեցէք անձինք եւ շունչք ամբա-
րոց՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք սուրբք եւ խոնարհք սրտիւք՝ զՏէր. օրհ:

Օրհնեցէք Ընանիա, Ազարիա եւ Միսայէլ զՏէր. օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Աղջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո Յս. սրբուհի Մարիամ մայր Աշ, բարեխօսեա վնր մեղաւորացս, այժմ եւ ի ժամու մահուան մերոյ. ամէն:

Օրհնութիւն Մարմնոյ Աստուածածնին: Ղ-ի. Ա:

Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Աչք ապար ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք:

Արար ընդ իս ծնունդս նշոյլ, եւ առաքէ ի անուն նորա : գՅհ. ե :

Ընդ ընդ իս մեծամեծս հզօրն. եւ սուրբ է անուն նորա:

Ողորմութիւն արար յազգաց յազգս երկիւղածաց իւրոց. եւ արար զզօրութիւն բազկաւ իւրով:

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից. եւ քակեաց զհզօրս յաթոռոց:

Հանդարտիս բարձրացոյց, զկարօտս եւ լից բարութեամբ. եւ զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց Իսրայէլ ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր:

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր, ընդ Աբրահամու եւ զաւակի նորա յաւիտեան:

Օրհնութիւն Հօրն Հոգւովն Սրբովք
Պօ՛ղ. Ա:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, որ յայց եւ. եւ արար վրկութիւն ժողովրդեան իւրոյ:

Յարոյց մեզ զեղջիւր փրկութե՛ի ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ, ոյ խօսեցաւ բերանով սրբոցն՝ որ յաւիտենից մարգարէքն էին:

Փրկութիւն ի թշնամեաց մերոց. եւ ի ձեռաց ամենայն առնելոց մերոց:

Առնել ողորմութիւն առ հարս մեր, եւ յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ:

Երբումն զոր երդուաւ Աբրահամու հօր մերոյ. տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն ի թշնամեաց մերոց:

Պաշտել զնա արդութեամբ եւ արդարութեամբ առաջի նորա, զամենայն աւուրս կենաց մերոց:

Եւ զու մանուկ մարգարէ բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն, պատրաստել զճանապարհս նորա:

Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա. ի թողութիւն ամենայն մեղաց մերոց:

Վասն գթոյ ողորմութեան Տեառն Աստուծոյ մերոյ. որով երեւեցաւ մեզ արեգականն ի բարձանց, լուսաւոր առնել զնստաւարս մեր:

Ծագել լոյս ի վերայ այսոցիկ՝ որք նստէաք ի խաւարի եւ ի ստուերս մահու, ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութե:

Աղօթ Սիմեոնի ծերոյն. Ղուկ. Բ:

Երդ արձակես զծառայս քո Տէր՝ ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց:

Լոյս յայտնեցեալ հեթանոսաց, եւ փառք ժողովրդեան քում Իսրայէլի:

Աղօթք Առաքելի ընթացուցին:

Տէր ամենակալ Հաստատած Երկրահաստատուն, Յահհակայ, Յակոբայ եւ զաւակին նոցա արդարոյ. ամենակալ Տէր՝ թող զմեզս իմ:

Որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զամենայն զարդ նոցա. ամեն:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քոյ. փակեցեր զխորս, ինքեցեր ահաւոր եւ փառաւորեալ անուամբ քով. ամե:

Որ ամենայն ինչ ստիպի եւ դողայ յերեսաց ահի զօրութեան քո. ամե:

Ընդառ ի մեծվայելչութիւն փառաց արքութեան քոյ. եւ առաքիկ ի բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեզաւորաց. անչափ եւ անքնին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամե:

Դու Տէր բարձրեալ զմեծ, երկայնամիտ, բազումողորմ եւ զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամե:

Դու Հաստատ՝ ոչ եղիր ապաշխարութիւն ի վերայ ապականացն Երկրահաստատուն, Յահհակայ եւ Յակոբայ, որ ոչ մեզան քեզ. ամե:

Եւ եղիր ապաշխարութիւն վասն իմ

մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, եւ բազմացան անօրէնութիւնք իմ. ամե:

Չեմ արժանի հայել եւ տեսանել զբարձրութիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամե:

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց երկաթից, եւ ոչ գոյ ինձ հանդիման. ամե:

Խարկացուցի զբռնութիւն եւ զչար առաջի քոյ արարի. կանդնեցի պատկեր եւ բազմացուցի զցասումն. ամե:

Եւ արդ Տէր՝ խոնարհեցուցանեմ ըզծունր սրտի իմոյ եւ հայցեմ ի քաղցրութենէ քումէ. ամե:

Մեղայ Տէր, մեղայ. եւ զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամե:

Ընկալեմ եւ խնդրեմ ի քէն՝ թող ինձ Տէր, թող ինձ. եւ մի կորուսաներ զիս քան անօրէնութեան իմոյ. ամե:

Մի յաւիտեան բարկանար ինձ Տէր. եւ մի յիշեր զչարիսն իմ, եւ մի պարտաւորեր զիս ընդ լծեալն ի ներքոյ երկրի չարեօք. ամե:

Օ՜ի դու Աստուած՝ Աստուած ապաշխարողաց ես. յիս ցոյց զբարերարութիւնդ քո, որ անարժան եմ. ամե:

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քումդ. եւ ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. ամէն:

Օ՜ քեզ Տէր օրհնեն ամենայն գործք երկնից, եւ քո են փառք յաւիտեան, ամէն:

փառք ի՛ւր եւ Որդւոյ եւ ի՛ սրբոյն սրբոց:

Ընկալեա՛ եւ խնդրեմ ի քէն Տէր, թող ինձ զամեն իմ:

Բազումողորմ Տէր, ողորմեաց ինձ:

Աստուա՛ծ՝ քաւեա զիս զմեղաւորս:

Ընդունի՛ր իմ եւ յոյս Աստուա՛ծ, զթա յիս ի մեղուցեալ ծառայս, եւ ողորմեա ինձ բազմամեղիս:

Ամէնօրհնեալ սրբուհի եւ միշտ կոյս Աստուածածին Մարիամ. բարեխօսեա առ Տէր վասն իմ մեղաւորիս:

Ամենայն սուրբք Աստուծոյ բարեխօսեցէ՛ք առ ի՛մայր ի յերկինս վասն մերմեղաւորացս:

Արիաոս որդի Աստուծոյ անոխակալ. ընկալ զաղաչանս մեր, զի ի քեզ են ապաւինեալ անձինք մեր:

Յաղթող զօրութեամբ սուրբ եւ կեանդանարար եւ պատուական խաչիդ քո Տէր՝ պահպանեա զմեզ:

Ուսքեա Տէր զհրեշտակ խաղաղու-

թեան քո, որ եկեալ պահեցէ զմեզ անխոտոր ի տուէ եւ ի գիշերի։

Եւ մարդասիրութեամբ քո յիշեա զմեզ Տէր, յիշեա զմեզ յորժամ գաս արքայութեամբ քով եւ ողորմեայ մեզ։

Աղօթ+ ԷրատանէՒր անձին Հաւատացելոյ է Քրիս-տոս. ըր արաբեալ է Տէառն Նեբոեսի Հայոց կա-ղնուղիոսէ։

Ա՛ԱՒԱՏՈՎ խոստովանիմ եւ երկիր-պագանեմ քեզ Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնութիւն, ա-րարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամե-նայն եղելոց. եւ ողորմեա քո արարածոցս։

Ա՛աւտով խոստովանիմ եւ երկիր-պագանեմ քեզ անբաժանելի լոյս, միա-նական սուրբ Երրորդութիւն եւ մի Աս-տուածութիւն, արարիչ լուսոյ եւ հալա-ծիչ խաւարի, հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեան. եւ լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի քէն զխնդրուածս իմ. եւ ողորմեա ինձ բազմամեղիս։

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ,

որ առաքեցեր զՄովսէս քո սիրել ի նմանէր մեծութեալ ոչնարին, մեզայ յերկինս եւ առաջն քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին եւ զքեզ հինձ զպատմուճանն զառաջինն՝ զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա քո արարածոց եւ հինձ բազմամեղիս:

Ողի Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ, վանն մերոյ փրկութեան. խաչեցար եւ թաղեցար եւ յարեար ի մեռելոց եւ համբարձար առ Հայր. մեզայ յերկինս եւ առաջն քո. յիշեա զիս որպէս զաւազակն յորժամ զաս ապաշխարութեամբ քով. եւ ողորմեա:

Հոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ ելեր ի Յորդանան եւ ի վերնատունն, եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեզայ յերկինս եւ առաջն քոյ, մաքրեա զիս վերստին աստուածային հրով քո՝ որպէս հրեղէն լեզուօք զառաքեալն. եւ ողորմեա:

Ընդ բնութիւն, մեզայ քեզ մօտ ի մովք, հոգւով եւ մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս, վանն անուանդ քում սրբոյ. եւ ողորմ:

Տեսող ամենայնի մեզայ քեզ խորհրդո-

դով, բանիւ եւ գործով. զնջկաս զձեռաս
զիր յանցանաց իմոց, եւ զրկաս զանուն
իմ ի գպրութեան կենաց. եւ ողոր:

Զննող զաղանեաց, մեղայ քեզ կա-
մաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգի-
տութեամբ. թողութիւն շնորհեա մեզա-
ւորիս, զի ի ծննդենէ աւազանին մինչեւ
ցայսօր մեղուցեալ եմ առաջի Ստուա-
ծութեանդ. քոյ զգայարանօք իմովք եւ
ամենայն անդամօք մարմնոյս. եւ ողոր:

Ամենախնամ Տէր՝ զիր պահապան ա-
ջոց իմոց զերկիւղ քո առնուլ՝ ոչ եւս հայել
յարատս. եւ ականջաց իմոց ոչ ախորժել
լսել զբանս չարութեան. եւ բերանոյ իմոյ
ոչ խօսել զառութիւն. եւ սրտի իմոյ ոչ
խորհել զչարութիւն. եւ ձեռաց իմոց ոչ
գործել զանիրաւութիւն. եւ ոտից իմոց՝
ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան.
այլ ուղիս զքարժուծն սոցա լինել քան
զառաքինութեանց քոց յամենայնի. եւ ողոր:

Ո՛ւր կենդանի Աստուած՝ զհուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն
իմ. զի այրեցէ զփուշ հոգւոյ իմոյ, եւ
սրբեցէ զկիզիչ մոաց իմոց, եւ մաքրեցէ
զմեղս մարմնոյ իմոյ. եւ վառեցէ զլոյս գի-
տութեան քոյ ի սրտի իմում. եւ ողոր:

Խոնարհութիւն Ո՛ր Յիսուս, տուր ինձ

զնմանատուԹիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի ք՛ս յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողոր:

Կամեցող բարեաց Տէր կամարար՝ մի Թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեխրատց. եւ ողոր:

Ընդայ երկիւղ՝ տուր ինձ զարքայուԹիւն ք՛ս, զոր խոստացար սիրելեաց քոց. եւ զօրացո զսիրտ իմ առնել զՔեզ, եւ սիրել զքեզ միայն, եւ առնել զկամս քո. եւ ողոր:

Խնամող արարածոց՝ պահեա նշանաւ խաչի քոյ զհոգի եւ զմարմին իմ, ի պատրանաց մեղաց, ի փորձուԹեանց դիւաց, եւ ի մարտից անիրաւաց, եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողոր:

Պահապան ամենայնի Աստուած՝ աջ ք՛ս հովանի լեր ի վերայ իմ, ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան եւ ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել. զի մի երբեք սասանեցայց. եւ ողոր:

Ընտուած իմ, որ բանաս զձեռն ք՛ս եւ ընդ ամենայն արարածս ողորմուԹեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա եւ պատրաստեա զկեաս

հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայտնէիւտէ միւնչեւ յաւիտեան. եւ ողորմ:

Պարձուցիչ մտորելոց՝ պարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն. եւ բեւեռեա ի հոգի իմ զսոսկալն օր մահուն, եւ զերկիւղ դեհենին, եւ զչէր ապքայութեան. զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմ:

Ընծայիչ անմահութեան՝ ազերսագո ի սուրբ իմիկ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. եւ ողորմ:

Պարգեւիչ ողորմութեան՝ պարգեւեա ինձ ուղղախոհ հաւատով, եւ բարի գործով, եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդութեամբ զալ առ քեզ. եւ ողորմ:

Խաչելեալ Տէր՝ հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս, քաղցրութեամբ առանել զհոգի իմ եւ անխոտոր անցուցանել ընդ չարութիւն այսոցիկ՝ որ են ի ներքոյ երկնից. եւ ողորմ:

Լոյս ճշմարիտ՝ Քո՝ արժանաւորեա զհոգի իմ ուրախութիւն տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման առաւքն, եւ հանդչել լուսով բարեաց յօթեւանս արդարոց միւնչեւ յօր մեծի գալստեան քոյ. եւ ողորմ:

Գաւառաւր արդալ՝ յորժամ գաս փառաւք ՚ի գաւառ վկենդանիս եւ զմեռեալս, մի մոռանար ի գաւառատան ընդ ծառայի քո, այլ վրկեա զիս ի յաւիտենական հրոյն, եւ լսել արա ինձ զերանելեաւքն կոչումն արդարոյ յերկինից արքայութիւդ. եւ ողորմ:

Ընծեղորմ Տէր՝ ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց՝ զողորմութիւն որ առ իս յանցանաց. եւ դարձո զնոսա ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին. եւ ողորմ:

Փառաւորեալ Տէր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո եւ կատարեա ի բարի զկենդրուածս իմ. բարեխօսութեամբ սրբուհոյ Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ սրբոյն Սահակայ նահապետին, եւ սրբոյն Գրիգորի մեծի լուսաւորչին. եւ սրբոց առաքելոց եւ մարգարէից եւ վարդապետաց եւ մարտիրոսաց եւ սրբոց Հայրապետաց, ճգնաւորաց եւ կուսանաց եւ ամ սրբոց քոց, երկնաւորաց եւ երկրաւորաց. եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անպատժանելի սր Երրորդութեդ՝ յաւիտեան յաւիտենից. Ամէն:

Մաղիան զբատուդ վան արհուրց գիշերայնոց,
գրիգորի նարեկացւոյ ասացեալ: Բան. ԾԲ:

Ընկան քաղցրութեամբ ՏԵՐ Ածուած հզօր զգաստացուցիս զաղաչանս. մատիր զթութեամբ առ պատկառելս զիմօք. փարատեա աներեսպարծիս զամօթ ախտից. բարձ լինէն ողորմած՝ զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս. աւարեա միշտ յաղթող՝ զնաբոլէն հաճութիւնս. բացադրեա վերնային զմոլեցոյն մառախուղ. կնքեա կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս. ցրուեա ծածկաւեա՝ զմշ բրունոլին չար գումունս. խորտակեա անքինին՝ զմարտոլին դիմեցմունս. տեառնապրեա քո անուամբ՝ զլուսանցոյց երդ յարկիս: Պարսիակեա քո ձեռամբ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո պեսամբ զմուտ սեմոյ սենեկիս. կերպացո զքո նշանդ՝ ի հետս երից մաղթողիս. ամրացո քո աջովդ՝ զհանգստեանս խշտի. մաքրեցես ի հաղելոյ զծածկարան անկողնոյս. պահեցես քո կամօքդ զտառապեալ անձն հոգւոյս. անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուցես

ջջմփակ զպար զօրուդ երկնայնոց. կար-
գեացես ի դիմի ընդդէմ դիւացն դասու:
Տուր հանդիստ բերկրութեան մահկանա-
դոյն նկրտման, ի խորութեան դիշերիս.
բարեխօսութիւք եւ հայցուածովք սրբու-
հուդ Աստուածածնին եւ ամենայն ընտրե-
լոց. ամփոփեալ պարսպաբեր զպատուհան
աեսութեացս, զպայպանացս խնամոդ, ան-
զարհուրելի զեռեղմամբ, ի ծփական խոռ-
վութեց, կենցաղական զբաղմանց, անըն-
ջական երազոց, խօլականաց ցնորից. յիշա-
տակաւք յուսոյդ, անվնասել պաշտպա-
նեալ, եւ սմփափեալ վերսին ի ննջմանէ
ծանրութեց, ամենազգաստ արթնութիւ՝
հոգենորոգ զուարթութիւք լքեզ արձանա-
գեալ: Օգայս ձայն մաղթանաց, բուրմամբ
հաւատոց, քեզ ամէնօրհնեալ թագաւոր
փառաց՝ անճառից փառաբանողաց, երկ-
նապարմանք խմբից երդակցեալ յերկինսա-
ռաքել: Օ՛ի դու փառաւորեալ ես յամե
ապրածոյ՝ յաւիտեան յաւիտենից. Ամէն:

Աղօթ ջրաւորք սբ Գրիգորէ Նարեկացւոյ:
Բան. ԻԱ:

Որդի Աստուծոյ կենդանւոյ, օրհնեալդ
յամենայնի. Օրդ ահաւորի անքնին ձր-

նունդ, որ ակարանայ առ ի քէն եւ ոչ ինչ. որ ի ծագել անառաւել նշուլից ողորմութեան քո փառաց՝ հալէն մեղք. հալածին դեւք. ջնջին յանցանք. խլին կապանք. խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիւնք. առղի ման ախտութիւնք. նահանջին հիւծութիւնք. փախիցեն խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մուայլն. ապաւի աղջամուղջն. վերանայ մոլին. գնայ դիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնքն. եւ թագաւորէ ձեռն քո ամենակալ, քաւէզ ամենայնի. որ ոչ եկիր կորուսանել զմարդկան հոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկինի անճառ, եւ յերկրի անզնին. ի տարր գոյից եւ յեղբ ծագաց աշխարհի. սկիզբն առնայնի եւ յառնայնի, առնայն լսեմք օրհնելոյ ի բարձունս. եւ քեզ ընդ Հօր եւ Հոգւոյդ սրբոյ վայել փառք յաւիտեան. Ամէն:

Ցանկ առմոտց՝ կարգա- այբու-բենից:

Աղաղակեցէք առ Աստուած. կե.
Աղաղակեցէք առ Տէր. ղթ.
Ապրեցս զիս Տէր. զի նուաղեաց. ժԱ.
Ապրեցս զիս Տէր ի մարդոյ. ճԼթ.
Առ զեռս Բաբելացւոց. ճԼջ.
Առ քեզ Տէր կարդացի, Աստուած. իէ.
Առ քեզ Տէր համբարձի զանձն. իԳ.
Առ քեզ Տէր համբարձի զաչս. ճիբ.
Ասաց անզգամն ի սրտի. ԺԳ.
Ասաց անզգամն ի սրտի. ԾԲ.
Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ. ճթ.
Ասացի Թէ պահեցից. ԼԸ.
Ասէ անօրէնն ի մեղանչել ընդ. Լե.
Աստուած ականջօք մերով. խԳ.
Աստուած Աստուած իմ ես առ քեզ. կԲ.
Աստուած Աստուած իմ նայեաց առ իս. իԱ.
Աստուած Աստուծոյ Տէր խօսեցաւ. խթ.
Աստուած եկայց ի ժողովս. ՁԱ.
Աստուած զիրաւունս քո արքայի. ՀԱ.
Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն. խե.
Աստուած մերժեցեր եւ ամերսեցեր. ԾԹ.
Աստուած մոխն հեթանոսք ի. ՀԸ.
Աստուած յանուան քումմ կեցո. ԾԳ.
Աստուած յօդնել ինձ նայեաց. կթ.
Աստուած ողորմեա մեզ եւ օրհնեա. կՁ.
Աստուած ո քեզ նմանիցի, մի. ՁԲ.
Աստուած վրէժխնդիր, Տէր Աստուած. ՂԳ.
Աստուած օրհնութեան իմոյ մի. ճԸ.

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք. ՃԼԿ.
Բազում անդամ մսրտեան. ՃԻԸ.
Բայց միայն՝ Աստուծոյ հնազանդ. ԿԱ.
Բանից իմոց ունկնդիր Տէր. Ե.
Բարի է խոստովան լինել. ՂԱ.
Բարձր առնեմ զքեզ Աստուած. ՃԽԿ.
Բարձր առնեմ զքեզ Տէր. ԻԹ.
Բղխեաց սիրտ իմ բան. ԽԿ.
Գոհացայց զքէն Տէր. Թ.
Գովեա երուսաղէմ զՏէր. ՃԽԷ.
Դատ արա ինձ Աստուած. ԽԲ.
Դատ արա ինձ Տէր, զի. ԻԵ.
Դառեա Տէր զայնոսիկ՝ ոյք. ԼԿ.
Եթէ ոչ Տէր էր առ մեզ. ՃԻԿ.
Եթէ ոչ Տէր շինէ զտուն. ՃԻԶ.
Եկայք ընծայուք ի Տէր. ՂԿ.
Երանեալ են ամբիծք ի. ՃԺԸ.
Երանեալ է այր, որ երկնչի. ՃԺԱ.
Երանեալ է այր, որ ոչ գնաց. Ա.
Երանի ամենեցուն, ոյք. ՃԻԷ.
Երանի որ խորհի զաղքատն. Խ.
Երանի ում թողութիւն. ԼԱ.
Երկինք պատմեն զփառս. ԺԸ,
Ջի բարի, կամ զինչ վայելուչ. ՃԼԲ.
Ջի պարծի ի չարութեան. ԾԱ.
Ջողորմութիւնս քո Տէր յաւ. ՁԸ.
Ընդէր խռովեցան հեթանոսք. Բ.
Ընդէր մերժեցեր Աստուած. ՀԳ.
Ծնէ արդարեւ զարդարութիւն. ԾԷ.
Իբրեւ զի բարի է Իսրայէլի. ՀԲ.
Ի դարձուցանել Տեառն զգերութիւն. ՃԻԵ.
Ի խորոց կարդացի առ քեզ. ՃԻԹ.

Ի կարդալ իմում լսար. Դ.
Ի նեղութեան իմում կա առ. ՃԺԹ.
Ի Տէր յուսացայ, որպէս. Ժ.
Ի քեզ Տէր յուսացայ՝ մի. Լ.
Ի քեզ Տէր յուսացայ՝ մի. Հ.
Լուարուք զայս՝ ամենայն ազգք. ԽԸ.
Լսէից քեզ Տէր յաւուր. ԺԹ.
Լուր Աստուած ազօթից իմոց եւ. Կ.
Լուր Աստուած ազօթից իմոց յաղաչել. ԿԳ.
Լուր Տէր արդարութեան. ԺԶ.
Խոնարհեցո Տէր զունկն քո. ՁԵ.
Խոստովան եղերուք Տեառն եւ. ՃԳ.
Խոստովան եղերուք Տեառն՝ զի բարի. ՃԺԷ.
Խոստովան եղերուք Տեառն՝ զի բարի. ՃԼՆ.
Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր. ՃԵ.
Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր. ՃԶ.
Խոստովան եղէց քեզ Տէր. ՃԺ.
Խոստովան եղէց քեզ Տէր. ՃԼԷ.
Խոստովան եղիցուք աս. ՀԳ.
Ծառիս Հարէք ամենայն հեթանոսք. ԽԶ.
Կեցո զիս Աստուած, զի հասին. ԿԸ.
Լաճեցար Տէր ընդ երկիր քո. ՁԳ.
Համբարձի զաչս իմ. ՃԻ.
Համբերեալ համբերի Տեառն. ԼԹ.
Հաւատացի զոր եւ խօսեցայ. ՃԺԲ.
Հիմունք նորա ի լեառն սուրբ. ՁԶ.
Ձայնիւ իմով ես առ Տէր. ՀԶ.
Ձայնիւ իմով ես առ Տէր. ՃԽԱ.
Մատուցէք Տեառն որդիք Աստուծոյ. ԻԸ.
Մեծ է Տէր եւ օրհնեալ է. ԽԷ.
Մի նախանձիր ընդ չարս. ԼԶ.
Մինչեւ յերբ Տէր մոռանաս. ԺԲ.

Յայտնի է ի Հրէաստանի. ՀԵ.
Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին. ԿԻ.
Յելանելն Իսրայելի յԵգիպտոսէ. ՃԹԳ.
Յիշեա Տէր զԴաւիթ եւ զամենայն. ՃԼԱ.
Յողորմութիւն եւ յիրաւունս. Ճ.
Նայեցարուք ժողովուրդք. ՀԻ.
Ողորմեա ինձ Աստուած, զի կոխեաց. ՝ԾԻ.
Ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի. ՝Ծ.
Ողորմեա ինձ Աստուած, ողորմեա. ՝ԾԶ.
Ո յուսոյ ի Տէր՝ որպէս լեառն. ՃԻԳ.
Ո բնակեալ ի յօգնութիւն. Ղ.
Ո հովուեալ Իսրայելի. ՀԹ.
Որպէս սիրելի են յարկք. ՉԳ.
Որպէս փափաքէ եղջերու. ԻԱ.
Ունկն դիր Աստուած աղօթից. ՝ԾԳ.
Ուրախ եղէ ես, զի ասէին. ՃԻԱ.
Պահեա զիս Աստուած իմ, զի. ԺԵ.
Պատրաստ է սիրտ իմ. ՃԻ.
Սիրեցի զի լսիցէ Տէր. ՃԺԳ.
Սիրեցից զքեզ՝ Տէր զօրութիւն. ԺԻ.
Տեառն է երկիր լիս. ԻԳ.
Տէր ապաւէն եղեր մեր. ՉԹ.
Տէր Աստուած իմ ի քեզ յուսացայ. Ի.
Տէր Աստուած փրկութեան իմոյ. ՉԻ.
Տէր՝ զի բազում եղեն. Գ.
Տէր թագաւորեաց, բարկացան. ՂԸ.
Տէր թագաւորեաց, վայելչութիւն. ՂԲ.
Տէր թագաւորեաց, ցնծասցէ. ՂԶ.
Տէր՝ ի զօրութեան քում. Ի.
Տէր լոյս իմ եւ կեանք իմ. ԻԶ.
Տէր լսեր աղօթից իմոց, ունկն դիր. ՃԻՍ.
Տէր լսեր աղօթից իմոց, աղաղակ. ՃՆ.

Տէր կարդացի առ .քեզ· ՃԻ·
Տէր Հովեւեցէ զիս եւ ինձ. ԻՒ·
Տէր՝ մի սրտմտութեամբ .քոյ· ԼԻ·
Տէր՝ մի սրտմտութեամբ .քոյ· Զ·
Տէր ոչ բարձրացաւ· ՃԼ·
Տէր՝ ով կացցէ ի խորանի· ԺԳ·
Տէր Տէր մեր, զի սքանչելի է· Ը·
Տէր փորձեցեր զիս եւ ծանեար· ՃԼԸ·
Ցնծացէք՝ առ Աստուած· Չ·
Ցնծացէք արդարք ի Տէր· ԼՒ·
Փրկեա զիս ի թշնամեաց· ԾԸ·
Պնդ վայելէ օրհնութիւն· ԿԳ·
Օրհնեա անձն իմ զՏէր, Տէր· ՃԳ·
Օրհնեա անձն իմ զՏէր եւ ամենայն· ՃՒ·
Օրհնեա անձն իմ զՏէր, օրհնեցից· ՃԽԵ·
Օրհնեալ Տէր Աստուած իմ, որ· ՃԽԳ·
Օրհնեցէք զանուն Տեառն· ՃԼԳ·
Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան· ՃԾ·
Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք· ՃԺԶ·
Օրհնեցէք զՏէր, զի բարի է· ՃԽԶ·
Օրհնեցէք զՏէր յերկինից· ՃԽԸ·
Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր· ՂԻ·
Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր· ՂԻ·
Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր· ՃԽԹ·
Օրհնեցէք մանկունք զՏէր· ՃԺՒ·
Օրհնեցից զՏէր յամենայն ժամ· ԼԳ·

Ընդ՝ արձակեա զծառայս· 294
Եւ ասացի ի վերանալ· 211
Զի հուր բորբոքեցաւ· 103
Ի գիշերայ կանխէ հոգի իմ· 178
Ի նեղութեան իմում էս առ· 251

Հաստատեցաւ սիրտ իմ. 138
Մեծացուսցէ անձն իմ. 292
Նայեցարուք երկինք. 64
Տէր ամենակալ Աստուած. 295
Տէր զլուր ձոյ լուայ. 281
Փոքր էի ես յեղբարս. 286
Օրհնեալ ես Տէր Աստուած. 287
Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի. 293
Օրհնեացուք զՏէր, զի. 29
Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն. 248

Ելոյն սաղմոս սպաշխարհական:

Տէր՝ մի սրտմտութեամբ քով. Զ.
Երանի ումի թողութիւն եղեւ. ԼՆ.
Տէր՝ մի սրտմտութեամբ քով. ԼԻ.
Ողորմեա ինձ Աստուած, ըստ. Ծ.
Տէր՝ լուր աղօթից իմոյ. ՃՆ.
Ի խորոց կարդացի առ քեզ. ՃԻԹ.
Տէր՝ լուր աղօթից իմոյ. ՃԽԲ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում
им. А. Мясникяна
в Республике Армения

2506

2433